



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1913

1914

1915

1916

zin-9-12

84

---

760



2011

84  
7-60

Այ Ս. ՏԻԻՄԱ

# ԳՐԱԺԼՈՆ ԴԵՐԿՈՄՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ  
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՀԱՏՈՐ ԻՆՆԵՐՈՐԴ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ



ԶՄԻՒՆԻՍ.  
ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ  
— 1874 —

434

# ՊՐԱԹԼՈՆ ԳԵՐԿՈՄՍ

Ա.

ԵՐԱՅԻ ԼԻՆ ԲԱՐԵԿԱՄԲ

Մինչդեռ արբունիքն ամէն որ իր գործոց կ'ըսալէր, մարդ մը գաղանուզողի կրէվի հրապարակին ետեւը կ'երթար, և առն լը կ'զիտէր որ մեզի ծանօթ է, վասն զի խռովութեան օր մը տեսանք զայն ա'Արղանեանի կողմէ պաշարեալ:

Այս տան գլխաւոր մտաբը Պատասխէ հրապարակին վրայ կը նայէր:

Բաւական մեծ և պարտէզներով շրջապատուած էր, Սէն-Յան փողոցին մէջ՝ հետաքրքիր աչքերէ պահպանող դարբիններու խանութները չորս զին բռնած՝ փակուած էր այս տանը քարերու, աղմիկ և խռակերու եռապատիկ պատնէշի մէջ, իբրև հաստատակամիա մ'իւր եռապատիկ սուփին մէջ:

Մեր խօսած մարդերէն մին հաստատ քայլով մը կ'ըսալէր, թէ և շիտասարգութեան մէջ չէր:

Պատնի գոյն վերաբերու և երկայն սուրը տեսնողը պիտի հասկընար խիտոյն որ բաղդակնայիր մէկն էր, և եթէ լաւ մը քննէր այն վէր ցցուած պիտը, այն նուրբ և ողորկ մարմն որ կրկնային ներքև կ'երևէր, անկասկած պիտի հաւատար որ կնային արկածներու ետեւէ կ'դանուէր:

Արդարև՝ հազիւ թէ ասպետը տան մէջ մտաւ որ ՚ի Սէն-Յէր վէ ժամացոյցն ու թ զարկաւ:

Եւ ասան վայրկեան ետք՝ ախիլին մը, որու առջևէն զինուոր սողաւոր մը կ'երթար, այն գրան եկաւ զարնելու, և պատասխանաբար մ'իսկոյն զայն բացաւ:



2189  
39 9

20 63



Այս կինն իր քօղը վերցուց ներս մանեւու ատեն : Թէև զեղեցիկ չէր , բայց զարձեալ կին մ'էր . նորահասակ չէր թէև , բայց զեռ արագաշարժ և բաւական մարմնեղ : Նա կ'ծածկէր , պերճ և ճաշակաւոր հաղուտին ներքև , տարիք մը զոր Նինօն ար լ'Անքլօ միայն զիմադրաւեց ժպտելով :

Այն ինչ ներքնադարիժը մատու նա , որ ասպեար , որու միայն արտաքին կերպարանն ու բուսականեցինք , զանի գիմաւորեց ձեռքն անոր կարկառելով :

— Սիրելիդ իմ գ.քսուհի — ըստ նա — բարի լըյս :

— Բարի լըյս , սիրելիդ իմ Արամիս — սրտաստանեց գ.քսուհին :

Ասպեար զանի վայելուչ կահեալ սրահիկ մը սարաւ , որու բարձր սրատահաններն արևուն վերջին ճառագայթներէն կ'կարմրէին՝ քանի մ'երգելիններու սև կատարներէն ձաղուելով :

Երկուքնին ալ մօտ առ մօտ նստան :

Ո՛չ մին ոչ միւսը միտք չըբաւ լըյս խնդրելու , և այսպէս ստուերի մէջ թաղուեցան որպէս թէ կ'ուզէին փոխադարձաբար մոռացման մէջ թաղուիլ :

— Ասպեար — ըստ գ.քսուհին — Գծողէնպիսի տեսակցութենէ ետք՝ կենդանութեան նշան մը ցոյց չտուիր ինձ , և կ'խոստովանիմ որ քու ներկայութիւնդ , Գրանչիսկեան կրօնաւորին մահուան օրը , կ'խոստովանիմ որ քանի մը գաղանկաց հաղորդ լինելը ինձ այնպիսի զարմանք սրածաւեցին որ կենացս մէջ չէի զգացած :

— Կարող եմ իմ ներկայութիւնս քեզի մեկնել , կարող եմ իմ բնծայութիւնս քեզի բացատրել — ըստ Արամիս :

— Բայց ամեն բանէ առաջ — սրտաստանեց գ.քսուհին աշխոթիլ — մեր վրայ խօսինք : Ահա երկար ժամանակէ հետէ լաւ բարեկամներ ենք :

— Այո՛ , ախիկն , և եթէ Աստուած կամենայ , պիտի նոյնը մնանք եթէ ոչ ընդ երկար , զեթ միշտ :

— Այդ ստոյգ է , ասպեար , և իմ այցելութիւնս ասոր մէկ ապացոյցն է :

— Տիկին գ.քսուհի , այժմ մի և նոյն շահերը չունինք ինչ որ ունէինք երբեմն — ըստ Արամիս ժպտելով անբիւղ նոյն կիսա-

ստուերին մէջ , վասն զի չէր կարելի գուշակել թէ իր յայտն առաջուանէ նուազ հաճելի և նուազ թարմ էր :

— Այսօր , ասպեար , ուրիշ շահեր ունինք : Ամէն ժամանակ իր շահերը կ'բերէ , և որովհետև այսօր իրարու միտք կ'խմանանք , խօսակցելով , ինչպէս որ կ'ընէինք երբեմն առանց խօսելու , խօսակցինք . կ'ուզէն :

— Գ.քսուհի , քու հրամանիդ պատրաստ եմ : Ա՛հ , ներում կ'խնդրեմ , բայց իմ հասցէս ինչպէս գտար : Եւ ինչո՞ւ համար :

— Ինչո՞ւ համար , արդէն ըսի : Հետաքրքրութենէ : Ա՛ռդէի իմանալ թէ ինչ յարաբերութիւն ունիս այս Գրանչիսկեանին հետ , որու հետ զորձ ունէի , և որ յանկարծակի մուտ : Գիտես որ մեր տեսութեան ժամանակ ՚ի Գծողէնպիսի , այն գերեզմանատան մէջ , այն նոր գոցուած շիրմին ծայրը , միասին այլայլեցանք այն ստոխձան որ իրարու բան մը չըսինք :

— Այո՛ , ախիկն :

— Լա՛ւ , այն ինչ քեզնէ հեռացայ որ զգջացի : Միշտ սաստիկ բաղձանք ունեցած եմ՝ բան սորվելու . գիտես որ ախիկն Լօնկվիլ փոքր ինչ ինձի պէս է , այնպէս չէ :

— Չգիտեմ — ըստ Արամիս խոհեմութեամբ :

— Յիշեցի ուրեմն — շարունակեց գ.քսուհին — որ իրարու բան մը չըսինք այն գերեզմանատան մէջ , և ոչ այն Գրանչիսկեանին հետ ունեցած յարաբերութեանդ վրայ , որու թաղման կ'հակէիր , և ոչ իմ անոր հետ ունեցած յարաբերութեանս վրայ : Աւտի այս ամենը մեզի սէս լաւ բարեկամաց մասին անարժան երեցաւ ինձ , և քեզի մօտենալու առիթը փնտռեցի , փորձով հաստատելու որ ես քուկդ եմ , և թէ Մարի-Միշօն , ողորմելի վախճանեալը , յիշատակներով լի ստուեր մը թողաց երկրիս վրայ :

Արամիս գ.քսուհոյն ձեռքին վրայ ծռեցաւ և անոնց վրայ համբոյր մը գրաւեց :

— Անտարակոյս զիս գաննելու համար նեղութիւն քաշած ես — ըստ անոր :

— Այո՛ — ըստ նա , զժկամակելով Արամիսին զխնալ ուզածին բերելուն խօսքը — բայց ես Պ . Գուքէի բարեկամը կարծէի քեզ , և Պ . Գուքէի տունը գացի քեզ հարցուցի :



— Բարեկամ. ս՛հ — գոչեց աստեար — չտիկն աւելի կ'լսօսիս, աիկին: Ես խեղճ քահանայ մ'եմ որ այս վեհանձն պաշտպանին շաքը կ'վայելեմ, երախտադիտութեամբ և հաստատութեամբ լի սիրտ մը, ահա այս է միայն Պ. Գաբէլի նկատմամբ:

— Քեզ եպիսկոպոս ըրաւ:

— Այո, գ. քստ. հի:

— Բայց զեղևցիկ հրայանակիր, այս է քու սպառնիչ:

— Ինչպէս որ քեզի համար քաղաքական խորհուրդներն է — մտածեց Արամիս: — Արդ — յարեց նա — Պ. Գաբէլի ամուն հարցոս փորձ ըրիր իմ վրայ:

— Շատ զիրու: Անոր հետ Գծնդէնպո գացեր էիր, քութեմը գնալու համար պղտիկ ճամբորդութիւն մ'ըրեր էիր, որ է Պէլ-Իսլ-ան-Մէր, կարծեմ:

— Ա՛հ ընաւ, ս՛հ ընաւ, աիկին — ըսաւ Արամիս — իմ թեմս վանն է:

— Ես ալ այդ ըսել կ'ուզէի: Կ'կարծէի միայն որ Պէլ-Իսլ-ան-Մէր ամրացած էր. արդ՝ քեզ իբրև պատերազմի մարդ կ'ճանչեմ, բարեկամ:

— Ես ամէն բան մտցայ քանի որ եկեղեցոյ պաշտօնեայ դարձայ — ըսաւ Արամիս նեղանալով:

— Բաւական է . . . : Աստի իմացայ որ վաննէն դարձեր էիր, և մարդ զրկեցի բարեկամի մը, այս է Լա Ֆէր կոմսը:

— Ա՛հ — ըրաւ Արամիս:

— Այն խորհրդապահ մարդ է, պատասխան զրկեր էր որ հասցեդ չգիտէր:

— Միշտ Աթոս — մտածեց եպիսկոպոսը — այն որ բարի է միշտ բարի է:

— Աւրեմն . . . զիտես որ չեմ կարող այս կողմերն երեկ, և մայր թաղուհին միշտ ինձի գեմ բան մ'ունի:

— Բայց իբաւ, և ես կ'զարմանամ:

— Ա՛հ, այդ սեսակ սեսակ սրտաճառներ ունի: Բայց անցինք . . . : Ստիպուած եմ թաղելու, հետեապէս՝ Պ. ա'Արգանեանի հանդիպեցայ բարեբաղչօրն, քու հին բարեկամներէդ մին, այնպէս չէ:

— Իմ ներկայ բարեկամներէս մին, գ. քստ. հի:

— Նա ինձ պէտք եղած տեղեկութիւնները տուաւ. զիս Պ. Պէզմօի զրկեց, որ է Պասղիլի կառավարիչը:

Արամիս սարսուռ մ'զգաց, և իր աչերն այնպիսի բոց մ'արձակեցին որ չկրցաւ պահել իր սրտես բարեկամահիէն:

— Պ. Պէզմօ — ըսաւ նա — և ինչո՞ւ համար ա'Արգանեան Պ. Պէզմօի կ'զրկէ քեզ:

— Ա՛հ, չգիտեմ:

— Ի՞նչ կ'նշանակէ այս — ըսաւ եպիսկոպոսն իր մտաւոր ոյժն ամփոփելով սայքարն արժանապէս շարունակելու համար:

— Պ. Պէզմօ քեզի շնորհապարտ բարեկամ մ'է եղեր — ըսաւ ինձ ա'Արգանեան:

— Իբաւ է:

— Եւ մարդ միշտ պարտապահանջի ինչպէս նաև պարտատէրի մը հասցէն շտաով կ'իմանայ:

— Արդ ալ ստոյգ է: Աւրեմն, Պէզմօ ցցոյց քեզի իմ տեղը:

— Սէն-Մանտէ, ուր քեզի նամակ մը զրկեցի:

— Եւ այն նամակը քուս է, ինձի անդին գիր մ'է — ըսաւ Արամիս — քանի որ անոր պարտաւոր եմ քեզ սեսնելու հաճոյքս:

Գ. քստ. հին՝ գոհ լինելով որ ասանց գժբաղդութեան կարող եղաւ այս փափակ յայտարարութեան բոլոր դժուարութեանց վրայէն սահելու, շունչ առաւ:

Արամիս շունչ չառաւ:

— Մեր խօսքը Պէզմօի ըրած այցելութեանդ վրայ էր:

— Ա՛հ — ըսաւ նա ծիծաղելով — աւելի հեռու:

— Աւրեմն մայր թաղուհոյն գեմ ունեցած ոխդ էր մեր խօսակցութեան նի թը:

— Աւելի հեռու — վրայ բերաւ նա — աւելի հեռու. տեղեկութեանց վրայ ենք: Այս պարզ է — վրայ բերաւ գ. քստ. հին իր արշուձն ընելով — զիտես որ Պ. Լէքի հետ կ'ապրիմ:

— Այո, աիկին:

— Կէս ամսօին մը:

— Այդպէս կ'ըսեն:



- Ի Պրոքսէլ :
- Այո :
- Գիտես որ զաւակներս զիս կործանեցին և կազարեցին :
- Ա՛հ, ինչ թշուառութիւն, դքսուհի :
- Ստեղծի է. պէտք եղաւ որ սպրեւու համար հնար գտնեմ և մանաւանդ չքուսնիմ :
- Այդ կ'ըմբռնեմ :
- Ատելութիւններ ունէի որոցմէ օգուտ քաղելու էր, բարեկամութիւններ ունէի որոց պէտք էր ծառայել. այլ ևս վարկ չունէի, և ոչ պաշտպաններ :
- Գու որ այնչափ մարդկան պաշտպան կեցած ես — ըսաւ առնու թեամբ Արամիս :
- Միշտ այսպէս է, սաստեմ : Նոյն ժամանակը Սպանիոյ թագաւորը տեսայ :
- Ա՛հ :
- Որ այն ինչ ժեզվիդներու զօրապետ մ'ընտրեց էր, ըստ սովորութեան :
- Ա՛հ, այդ է սովորութիւնը :
- Միթէ չգիտէիր :
- Ներէ, անուշազիր էի :
- Արգարե՛ պէտք է որ զիմեան այս բանս, դու որ այնչափ մտերմութիւն ունէիր Քրանչիսկեանին հետ :
- Թեզվիդներու զօրապետին հետ ըսել կ'ուզես :
- Ճիշտ այդպէս . . . : Արդ՝ Սպանիոյ թագաւորը տեսայ : Իմ բարիքս կ'ուզէր և չէր կարող ընել : Սակայն զիս Քլանարի մէջ բարեկամներու յանձնարարեց, ես և Լէքը, և Միարանութեան ստակէն թուշակ մը կապել տուաւ :
- Թեզվիդներուն միաբանութեան :
- Այո : Զօրապետը, ըսել կ'ուզեմ Քրանչիսկեանը զրկուեցաւ :
- Հաստ լաւ :
- Եւ որովհետեւ՝ պէտք էր Միարանութեան կանոնաց համեմատ՝ հաշիւները կանոնաւորել, այնպէս որոշեցին որ Միարանութեան ծառայողներէն եմ : Գիտես որ այս է կանոնը :

- Զգիտի :
- Տիկին Շէվրեօզ լուեց Արամիսին նայելու համար, բայց մտութիւնը սաստիկ էր :
- Լաւ ուրեմն, այս է կանոնը — վրայ բերաւ նա — ուստի պարտաւոր էի օգտակար երեկը Միարանութեան : Առաջարկեցի որ անոր համար ճամբորդեմ, և զիս ճամբորդ անդամոց կարգը դրին : Քաջ կ'հասկրնաս որ այս արտաքին ցոյց մը, ձեւ մ'էր :
- Աքանջելի է :
- Այսպէս թուշակ ընդունեցայ, որ բաւական դումար մ'էր :
- Աստուած իմ, դքսուհիս, այդ ըսածդ ինձի համար զաշունի հարուած մ'է : Այսպէս պիտի տեսնէի քեզ ժեզվիդներու ձեռք թուշակ տանելու ստիպուիս :
- Ա՛հ, սաստեմ, Սպանիոյէն :
- Ա՛հ, ի բայ տուեալ խղճի կէտը, դքսուհի, պարտիս խոստովանիլ որ մի և նոյն բանն է :
- Ա՛հ, ո՛չ, բնաւ :
- Բայց վերջապէս, այն աղւոր հարստութենէդ, զիս ևս բան մը կ'մնայ . . . :
- Միայն Տանրիէր մնացած է, և այլ ոչ ինչ :
- Գարձեալ աղւոր բան է :
- Այո, բայց Տանրիէր զբաւի զբուած, Տանրիէր իր կալուածատիրութեան պէս քիչ մը կործանած է :
- Եւ միթէ մայր թագուհին այս ամենը չա՞ր աչքով կ'նայի — ըսաւ Արամիս հետաքրքիր նայուածքով մ'որ միայն խաւարին հանդիպեցաւ :
- Այո, ամէն ինչ մտցաւ նա :
- Կարձեմ թէ փորձ փորձեցիր զարձեալ անոր առջև շնորհ գտնելու :
- Այո, բայց այնպիսի եղական զիպուածով մ'որ անուն չունի. կարծես թէ փոքրիկ թագաւորն ինձի գէմ իր հօրն ունեցած հակահրութիւնը կ'տածէ : Ա՛հ, պիտի ըսես, հիմակ ատելի էզող կանանց դասէն եմ, այլ ոչ սիրելի եզող գասէն :
- Սիրելի դքսուհի, շուտ խօսելու սկսէ թէ ինչ պատճառ



ուս ինձի այցի եկար, վասն զի կարծեմ թէ իրարու կրնանք օգտակար լինիլ:

— Ես ալ այդպէս մտածեցի: Ուստի Փօնդէնսլլօ կ'դայի կրկին նորատակով: Նախ՝ Ֆրանչիսկեանը, զոր կ'ճանչես, զիս կանչեր էր . . . : Ազէկ միտքս ընկաւ, ինչպէս դու կ'ճանչէիր զանի, վասն զի ես իմ պատմութիւնս պատմեցի, բայց դու քուկը չպատմեցիր:

— Շատ բնական կերպով ծանօթացայ անոր հետ, գ.քսուհի: Ի Բարձն՝ անոր հետ Աստուածաբանութիւն սորվեցայ. բարեկամ եղանք իրարու, և երբեմն դործերը, երբեմն ուղևորութիւնները, երբեմն պատերազմը մեզ իրարմէ զատեր էին:

— Քաջ գիտէիր անշուշտ որ ժէզվիզներու զօրապետն էր:

— Ես ալ կ'կատկածէի:

— Բայց, վերջապէս՝ ինչ տարօրինակ դիպուածով դու ևս կ'գիտէիր այն նպատակն որ ուղևոր անդամները կ'դուժարուէին:

— Ո՛հ — ըսաւ Արամիս հանդարտ ձայնով մը — սարդապէս գիպուածը տարաւ զիս այն տեղ: Ես՝ Փօնդէնսլլօ կ'երթայի Պ. Ֆուրէի տունն որպէս զի թաղաւորին հետ տեսակցիմ, ես կ'անցնէի, ևս անձանօթ էի. ճամբուն վրայ այն խեղճ հոգեվարը տեսնելով ճանչեցի: Մնացած պատմութիւնը գիտես, իմ թևերուս մէջ հոգին փչեց:

— Այո՛, բայց երկնից մէջ և երկրիս վրայ այնպէս մեծ զօրութիւն մը թողլով՝ որ անոր անուամբ վեհապետական հրամաններ տուիր:

— Արդարև՝ քանի մը յանձնարարութիւններ ըրաւ ինձ:

— Հապա ինձի՞ համար:

— Արդէն ըսի: Հազար երկու հարիւր Փրանքի դումար մը հրամայեց վճարել քեզի: Կարծեմ՝ թէ այն դումարը ստանալու համար պէտք եղած ստորապրութիւնը տուի: Միթէ տակաւին չստացար:

— Ի հարկէ, ՚ի հարկէ: Ո՛հ, սիրելիւ իմ հայր, ըսին թէ այս հրամաններն այնպէս գաղանի և վեհապանծ կերպով կ'տաս, որ քեզ սիրական հանդուցելոյն յաջորդը կարծեցին:

Արամիս անհամբերութենէ կարմրեցաւ: Գ.քսուհին շարունակեց.

— Ես տեղեկացայ — ըսաւ նա — Սպանիոյ թագաւորէն, և այս կիսիս վրայ կատկածներս փարատեց: Ամէն ժէզվիզներու զօրապետ, երբ այս սաշտօնին հասնի, պարտաւոր է սպանիացի լինիլ, Միաբանութեան օրինաց համեմատ: Գու սպանիացի չես, և Սպանիոյ թագաւորին կողմէ չկարգեցար:

Արամիս միայն սա խօսքը պատասխանեց.

— Կ'նայիս, գ.քսուհի, որ քիչ մ'առաջ կ'սխալէիր, քանի որ Սպանիոյ թագաւորն այսպէս ըսեր է քեզի:

— Այո՛, սիրական Արամիս, բայց ուրիշ բան մը մտածեցի ես:

— Ի՞նչ մտածեցիր:

— Գիտես որ ամէն բանի քիչ շատ խեղք կ'հասցնեմ:

— Ո՛հ, այո՛, գ.քսուհի:

— Գիտես սպանիացի լեզուն:

— Ամէն գաղղիացի որ Պարսաւոր եղած է, իր սպանիական լեզուն գիտէ:

— Միթէ Ֆլանսար չմնայիր:

— Երեք տարի:

— Մտորիս չկեցար:

— Տասն հինգ ամիս:

— Արեւմն կարող ես սպանիացի հարտակ գառնալ երբոր կամենաս:

— Այդպէս կարծես — ըսաւ Արամիս միամտութեամբ մ'որ գ.քսուհին խորտեցաւ:

— Անտարակոյս . . . : Երկամիայ բնակութիւն և լեզուն զիտութիւնն անհրաժեշտ պայմաններ են: Երեք ու կէս տարի . . . տասն հինգ ամիս աւելի:

— Ի՞նչ պիտի հետեցնես, սիրելի տիկին:

— Սա պիտի հետեցնեմ. Սպանիոյ թագաւորին հետ յարաբերութիւնս աղէկ է:

— Ես ալ հեռը գէշ չեմ — մտածեց Արամիս:

— Կուզես — շարունակեց գ.քսուհին — որ թագաւորէն Ֆրանչիսկեանի յաջորդութիւնը խնդրեմ քեզի համար:



- Ո՛Տ, գքսուհի՛ :
- Կարելի է որ արդէն ստացած էս — ըստ նա :
- Ո՛Տ, հաւատն խօսքիս :
- Լան, այդ ծառայութիւնը կարող եմ ընել :
- Ինչո՞ւ համար Պ, Լէքի չբրիր, գքսուհի : Տաղանդաւոր մարդ մ'է զոր կ'սիրես :
- Այո՛, անտարակոյս, բայց այդ բանին չմտածեցի : Վերջապէս, պատասխանէ, Լէքը կամ ոչ Լէք, կ'ուզես :
- Գքսուհի, ս'չ, շնորհակալ եմ :
- Գքսուհին լռեց :
- Արդէն անուանած է — մտածեց նա :
- Եթէ այդպէս մերժես — վրայ բերաւ արիկին Շէվրէօլ — համարձակութիւն սուած չես լինիր ինձի համար բան մը խնդրել :
- Ի՛Տ, խնդրէ՛, խնդրէ՛ :
- Ինչո՞րե՛մ . . . չեմ կարող, եթէ շնորհելու իշխանութիւնը չունիս :
- Որչափ իշխանութիւնս քիչ է, կարձեալ դու խնդրէ :
- Տանրիէրը նորոգել սալու համար դու մարի մը պէտք ունիմ :
- Ա՛Տ — պատասխանեց Արամիս պաղութեամբ — ստամ . . . : Նայինք, գքսուհիս, ս'րչափ կ'ուզես :
- Ո՛Տ, կ'ընր դու մար մը :
- Չախո՞րդ բան. դիտես որ հարուստ չեմ :
- Գու չես, բայց Միաբանութիւնը : Եթէ զօրապետ եղած լինէիր . . . :
- Գիտես որ զօրապետ չեմ :
- Ուրեմն, բարեկամ մ'ունիս որ անշուշտ հարուստ է, Պ. Փուքէն :
- Պ. Փուքէն, արիկին, կիսովին կործանած է :
- Այդպէս կ'ըսես, բայց չէի ուզեր հաւատալ :
- Ինչո՞ւ համար, գքսուհիս :
- Վասն զի Մազարէն կարտինալէն քանի մը նամակներ ունիմ, այսինքն Լէքին քոմն են, որ սարօրինակ հաշիւներ կ'այցանեն :

- Ի՞նչ հաշիւներ :
- Այսինքն եկամուտներու վաճառման, եղած փոխառութեանց վերաբերեալ և ուրիշ բաներ զոր չեմ յիշեր : Այս իրաւ է որ փոխ-պաշտօնեայն՝ Մազարէնի ստորագրած զիրերուն համեմատ՝ պետութեան արկղերէն երսուն միլիօնի չափ գրամ քաղեր է : Այս խնդիրը շատ ծանրակշիւ է :
- Արամիս իր ըզունը ձեռաց մէջ մղեց :
- Ի՞նչ — ըսաւ — այդպիսի զիրեր ունիս ձեռքդ և Պ. Փուքէի չհաղորդեցիր :
- Ա՛Տ — պատասխանեց գքսուհին — ատնք պահուի բաներ են որ ժամանակին կ'այստնուին : Երբ պէտքը զգացուի այն ատեն պահարանն կ'հանուին :
- Պիտոյից օրն եկած է — ըսաւ Արամիս :
- Այո՛, սիրելիք իմ :
- Եւ այդ զիրերը Պ. Փուքէի պիտի երթաս ցուցնես :
- Լաւ ևս կ'սեպեմ քեզի խօսիլ այս մասին :
- Ա՛րեւի թէ ստակի շատ պէտք ունիս, խեղճ բարեկամուհիս, որ այս տեսակ բաներու վրայ միտք կ'յուզնեցնես, դու որ Պ. Մազարէնի զիրերուն արժէք մը չէիր տար :
- Արդարե՛ գրամի պէտք ունիմ :
- Ասկէ զատ — շարունակեց Արամիս պաղ կերպով մը — անտարակոյս ակամայ կամօք այս հնարը զորձածելու զիջար : Անգու թ միջոց մ'է :
- Ո՛Տ, թէ որ բարիքի տեղ չարիք հասցնել կամենայի — ըսաւ արիկին Շէվրէօլ — փոխանակ ժեզվիլներու զօրապետէն կամ Փուքէէն հինգ հարիւր հազար Փրանքը խնդրելու, որոցմէ պէտք ունիմ . . . :
- Հինգ հարիւր հազար Փրանք :
- Ո՛Տ աւելի : Միթէ կարծես թէ շատ է : Գէթ այսչափ պէտք է Տանրիէրը նորոգելու համար :
- Այո՛, արիկին :
- Ուստի կ'ըսեմ թէ փոխանակ այս դու մարը խնդրելու, հին բարեկամուհի մը, մայր թագուհին պիտի դնայի գտնելու . . . իր



ամուսնոյն, «էբը Մաղարինիի գիւրերը՝ իբրև ներկայացման գրեթէ կրնային ինձ օգտել, և այս չնչին գումարն իբմէ պիտի պահանջէի, անոր ըսելով. «Տիկին, Ձեր Աւհատիատ թիւնն ՚ի Տանքիէր ընդունելու պատիրը կ'ուզեմ ունենալ, ներկեցէք ինձ որ Տանքիէրը վերանորոգեմ» :

Արամիս բառ մ'անդամ չսրատասխանեց :

— Լաւ ուրեմն — ըսաւ նա — ի՞նչ բանի վրայ կ'մտածես :

— Գումարս մենք կ'ընեմ — ըսաւ Արամիս :

— Եւ Պ. Ֆուքէ Տանումներ կ'ընէ : Իսկ ես, բազմապատկելու կ'ջանամ : Ի՞նչ ընտիր հաշտագէտներ ենք, ի՞նչպէս կրնայինք իրարու միար հասկընալ :

— Կ'ուզես ներել ինձ որ քիչ մը խորհիմ — ըսաւ Արամիս :

— Ո՛չ . . . այսպիսի առաջարկութեան մը համար, մեզի պէս մարդոց մէջ, պէտք է այն կամ ո՛չ պատասխանել, և իսկոյն պատասխանել :

— Որոգայթ մ'է այս մտածեց եպիսկոպոսը — կարելի չէ որ այսպիսի կին մ'ունկնորութիւն գտնէ Աննա թաղուհոյն կողմէ :

— Լաւ ուրեմն — ըսաւ Պ. քսուհին :

— Լաւ ուրեմն, տիկին, ինձ անհատաւոր կ'երեւի որ Պ. Ֆուքէ այս ժամուս հինգ հարիւր հազար ֆրանք համրելու կարող լինի :

— Ուրեմն պէտք է խօսքը դոյրել — ըսաւ Պ. քսուհին — և Տանքիէրը կարելի եղածին չափ կ'նորոգենք :

— Ո՛հ, կարծեմ թէ այն աստիճան գրամի նեղութիւն չունիս :

— Ո՛չ. երբէք ես այս մտտին նեղութիւն չեմ քաշեր :

— Եւ գանձուց պաշտօնէն ընել չկրցածն ՚ի հարկէ թաղուհոյն քեզի համար պիտի ընէ — շարունակեց եպիսկոպոսը :

— Ո՛հ, բայց այն . . . ըսէ ինձ, արդեօք չես ուզեր որ այն գրեթուն վրայ ես անձամբ խօսիմ Պ. Ֆուքէին :

— Գ. քսուհի, այս մասին ինչ որ կամիս ըրէ, բայց Պ. Ֆուքէ յանցաւոր է կամ ոչ. եթէ յանցաւոր է, յիտեմ որ հպարտ է միանգամայն և չպիտի խոստովանի յանցանքը, եթէ յանցաւոր չէ, այդ սպասնալիքէն շատ պիտի վերադուրի :

— Գուհի հրեշտակի պէս կ'ըմանագատես միշտ :

Եւ գ. քսուհին ոտք ելաւ :

— Այսպէս ուրեմն Պ. Ֆուքէն մայր թաղուհոյն առջև ամբաստանելու պիտի երթնայ — ըսաւ Արամիս :

— Ամբաստանեմ . . . ո՛հ, այդ ի՞նչ անշահ բառ է : Սիրելի բարեկամ, չպիտի ամբաստանեմ. դու քաջ զիտնալով քաղաքականութիւնը զիտես նաև թէ այս տեսակ բաներ ինչպէս կ'կատարուին. մինակ Պ. Ֆուքէի դէմ պիտի երեւիմ, և այլ ոչ ինչ :

— Ճիշտ է :

— Եւ, կուսակցական մարտի մը մէջ, զէնք մը միշտ զէնք է :

— Անտարակոյս :

— Երբ մի անգամ մայր թաղուհոյն հետ հաշտուիմ, կրնամ վտանգաւոր դառնալ :

— Այդ քու իրաւունքդ է, գ. քսուհի :

— Ես ալ այդ իրաւունքը պիտի գործադրեմ, սիրելի բարեկամ :

— Բայց քաջ զիտես որ Պ. Ֆուքէ Սպանիոյ թագաւորին շատ բարեկամն է, գ. քսուհի :

— Ո՛հ, ես ալ այդպէս կարծեմ :

— Եթէ կուսակցական կուլու մը բանաս Պ. Ֆուքէի դէմ, Պ. Ֆուքէ ալ քեզի դէմ կրնայ նոյնն ընել :

— Ա՛հ, ի՞նչ բնեմ :

— Այս ալ իրաւունքը պիտի լինի, այնպէս չէ :

— Անտարակոյս :

— Եւ որովհետև Սպանիոյ հետ հաշտ է, այս բարեկամութիւնն իբրև զէնք պիտի գործածէ քեզի դէմ :

— Ըսել կ'ուզես որ թէզվիղներու միաբանութեան զօրապետին հետ բարեկամ պիտի լինի, սիրելիդ իմ Արամիս :

— Այդ կրնայ պատահիլ, գ. քսուհի :

— Եւ այն ատեն իմ ստացած թոշակս կրնայ դադարեցնել տալ :

— Կ'վախնամ որ կ'դադարեցնէ :

— Ես ալ փոյթ չեմ ընեք : Ե՛հ, սիրելիդ իմ, Ռիշլիէօն, Պարտատիկը, աքսոր անանելէն ետև՝ միթէ տիկին Շէվրէօլի համար ուրիշ վախնալիք բան կ'մնայ :



- Գիտես որ թողալիք քառասուն ութ հազար ֆրանք է :
- Ափսո՛ս , քաջ գիտեմ :
- Ասիկէ զամ' երբ կուտակցու թեան կուխ կ'ընէ մարդ , գիտես որ թշնամոյն բարեկամաց ալ կ'զարնէ :
- Ա՛հ , ըսել կ'ուզես որ այն խեղճ Ա.բին ալ կրնան վնաս հասցնել :
- Գրեթէ անխուսելի է , գ.քսուհի , այդ բանը :
- Ո՛հ , միայն տասն երկու հազար ֆրանք թողալ կ'ստանայ :
- Այո՛ , բայց Ապանիոյ թագաւորն ազդեցու թիւն ունի , Պ. Գուքէ անոր խորհուրդ հարցնելով կրնայ Պ. Ա.բը բերդի մը մէջ բանտարկել :
- Ես այդ բանէն շատ չեմ վախնար , իմ բարի բարեկամն , վասն զի Աննա թագուհւոյն հետ ընելիք հաշտութեանն շնորհիւ , պիտի յաջողիմ՝ Գրանտայի միջնորդութեամբ Ա.բի սղատութիւնը ձեռք ձգել :
- Իրաւ է : Այն ասին ուրիշ բանէ վախնալու անդի պիտի ունենաս :
- Ի՞նչ բանէ — ըսաւ գ.քսուհին զարմանք և երկիւզ կեղծելով :
- Պէտք է գիտնաս և գիտես որ երբ մի անգամ Միաբանութեան անգամ գրուի մարդ , անկից առանց զժուարտ թեան գարս չէ կարող ելնել : Այն գազանիւն որոց հազարք լինելու յաջողած ևս վատաւոր չեն , իրենց հետ կ'ըրեան այն ազէտից սրովը զայն յայտնողին համար :
- Գ.քսուհին սրահ մը խորհեցաւ :
- Ահա այդ առելի ծանրակշիւ է — ըսաւ նա — պէտք է որ լաւ մտածեմ :
- Եւ խոր մթութեան շնայելով՝ Արամիս հրաշէկ երկաթի պէս կիզել ախարի մ'ողաց որ բարեկամուհւոյն աչքերն ելնելով և կաւ իր սրաին մէջ մտաւ :
- Ամիտփենք մեր խօսքը — ըսաւ Արամիս , որ նոյն պահուն գգու շաթիւն ըրաւ և իր ձեռքը կրկնօցին ներքե սպրդեց ուր պահած գաշնակ մը կար :

- Այդպէս է , ամիտփենք , լաւ հաշիւները լաւ բարեկամներ կ'ընեն :
- Քու թողալիք բարձու մը . . . :
- Քառասուն ութ հազար ֆրանք , և Պ. Ա.բին ալ տասն երկու հազար , ընդ ամենը վաթսուն հազար ֆրանք . արդ այս ըսել կ'ուզես , այնպէս չէ :
- Ճիշտ այդպէս , և ստոր հակակշիւր կ'փնտուեմ :
- Հինգ հարիւր հազար ֆրանք զոր թագուհւոյն ձեռք պիտի ստանամ :
- Կամ չպիտի ստանաս :
- Ես դանտք ձեռք ձգելու միջոցը գիտեմ — ըսաւ գ.քսուհին անխուսելու թեամբ :
- Այս խօսքը լսելուն՝ ասպեան ականջները անկից : Հակառակորդին այս սխալմունքէն ՚ի վեր՝ իր միտքն այնպէս զգուշութիւններ ըրաւ , որ իրեն օգտեցին միշտ , և հետեւապէս գ.քսուհին առաւելութիւնը կորցոյս :
- Կ'ենթադրեմ որ այդ գումարը պիտի ստանաս — վրայ բերաւ նա — բայց կրկնապատիկը պիտի կորուսնես , քանի որ հարիւր հազար ֆրանք պիտի ունենաս ստանալու իբրև թողալ փոխանակ վաթսուն հազարի , և այս ալ տասն տարի :
- Ո՛հ , վասն զի եկամտաւոր այդ նուազումը միայն Պ. Գուքէի պաշտօնութեան օրովը պիտի կրեմ , արդ՝ այդ պաշտօնութեան անողութիւնը միայն երկու ամիս կ'հաշուեմ :
- Ա՛հ — ըրաւ Արամիս :
- Կ'նայիս թէ որչափ համարձակ կ'խօսիմ :
- Շնորհակալ եմ քեզի , գ.քսուհի , բայց մեծապէս կ'սխալես եթէ կարծես թէ Պ. Գուքէի պաշտօնանկութենէ ետք՝ Միաբանութիւնն այդ թողալը քեզի վճարելու պիտի շարունակէ :
- Ես Միաբանութեան գանձուն օղտակար լինելու միջոցը գիտեմ , ինչպէս որ գիտեմ մայր թագուհւոյն վճարել տալու միջոցը :
- Արեմն , գ.քսուհիս , մենք ամենքս քու առջև խնայեցելու պարտաւոր ենք : Յաղթութիւնը քո՛ւկդ է , քո՛ւկդ է յաղթանակը : Գլխաւորաւ եղիք , կ'աղաչեմ : Հնչեցէք , փողեր :

2190  
39





— Ի՞նչպէս քեզ կարելի է — վրայ բերաւ դ. քսուհին, առանց հեղնութեան ուշ դնելու — հինգ հարիւր հազար ողորմելի գումարի մ'առջև ընկրկիլ, մինչդեռ ասով կարող ես հեռացնել քեզնէ, կ'ուզեմ ըսել բարեկամէդ, ներէ՛, պաշտպանէդ, անախորժ բան մ'ինչպէս կրնայ պատճառել կուսակցութեան կռիւ մը :

— Դ. քսուհի, ահա սլատառաւ. հինգ հարիւր հազար ֆրանքէն ետք՝ Պ. Լէքն ալ իր մասը պիտի պահանջէ. քու Պ. Լէքի մասէն ետք՝ զաւակացդ բաժինը պիտի դայ, նոյնպէս քու աղքատացդ բաժինը, ամենուն բաժինը, և ակնարկած նամակներդ որչափ վտանգաւոր լինին, երեք չորս միլիօն ֆրանք չեն արժեր : Ճշմարիտ վկայ, դ. քսուհի, Ֆրանսայի թագուհւոյն ասղիկներն աւելի կ'արժէին քան թէ Մաղարէն ստորագրութեամբ ջնջանները, և սակայն քեզի համար պահանջած գումարին քառորդն անդամ չարժեցին :

— Ա՛հ, իրաւ է, իրաւ է. բայց վաճառականն ուզածին պէս կ'զնհատէ իր պարանքը. գնողին կ'իյնայ ծախու առնուլ կամ մերժել :

— Ահա կ'ուզեն որ ըսեմ քեզի, դ. քսուհիս, թէ ինչո՞ւ համար նամակներդ չպիտի գնեմ :

- Ըսէ՛ :
- Այդ քու Մաղարէնի գիրերդ շինծու են :
- Օ՛ն անդր :
- Անտարակոյս. վասն զի գէթ տարօրինակ պիտի թուի որ Պ. Մաղարէնի միջոցաւ թագուհւոյն հետ աւրուելով, Մաղարէնի հետ մտերմական յարաբերութիւն մ'ունեցած լինիս, անոր տակէն, սէր, լրտեսութիւն, կամ . . . ճշմարիտը, չեմ ուզեր բուն բառն արտասանել :
- Հող չէ, ըսէ՛ :
- Կամակատարութիւն :
- Այդ ամենը ճշմարիտ է. բայց այս ևս ճշմարիտ է որ նամակին մէջ ինչէր կան :
- Կ'երդնում, դ. քսուհի, որ թագուհւոյն չպիտի կարենաս ցոյց տալ և անկից օչտիլ :

— Ո՛հ, ի՞նչպէս չէ, ես կարող եմ ամէն բան գործածել թագուհւոյն մօտ :

— Լա՛ւ — մտածեց Արամիս : — Երգէ ուրեմն, ճիւղ, սուրէ՛ ուրեմն, ի՛ժ գու :

Բայց դ. քսուհին բաւականէն աւելի խօսեր էր. դէպ 'ի գուռն երկու քայլ առաւ :

Արամիս անոր ապաշնորհ բան մը կ'պահէր . . . յաղթողին կառքին ետեէն յաղթեալին արտասանած անէծքը :

Արամիս հնչակը շարժեց :

Արահին մէջ լոյսեր երեցան :

Այն ատեն եպիսկոպոսը լուսերու շրջանի մը մէջ դտնուցաւ որ դ. քսուհւոյն նկուն գիմայը վրայ կ'ըղային :

Արամիս երկայն և հեղնալի ակնարկ մը նետեց անոր դեղնածու չորրցած այտերուն վրայ, անոր աչաց վրայ, որու կայծն երկու լերկ արտեանունքէ կ'ելնէր, անոր բերնին վրայ որու շրթունքը խնամօք կ'պահէին սեցած և ցանցառ ակուններ :

Իսկ ինք Արամիս իր մաքուր և ջուտ սրունքով վայելուչ դիրք մը բռնելու կեղծեց, իր գլուխը լուսաւոր և հսպարա բունեց, ժպտեցաւ որպէս զի ցոյց տայ ակունները, որ, լուսին՝ տեսակ մը փայլ ունէին : Աշրատէր կիներ հասկըցաւ հեղնաբան իրապաշտար. ճիշտ մեծ հայլի մ'առջև կեցած էր որու մէջ իր ուշի ուշով պահած զառամութիւնը՝ հակապատկերով ակն յայտնի երեցաւ :

Այն ատեն առանց Արամիսն իսկ բարևելու, որ թեթևաշարժ և սիրուն կ'խոնարհէր հին ատենուան հրացանակրին պէս, արտորալէն զայթոտ և ծանրաշարժ քայլով մը մեկնեցաւ :

Արամիս զեփիւրի պէս օթոցին վրայ սահեցաւ որպէս զի իր հիւրը մինչև գուռն առաջնորդէ :

Տիկին Շէվրեօզ իր մեծ սպասաւորին նշան մ'ըրաւ, և այս ալ իր հին հրացանն առաւ : Ապա դ. քսուհին այս տունէն հեռացաւ ուր երկու խիստ փափուկ բարեկամներ բնաւ չէին ակնկալած որ այսպէս իրարու միտ դիւբաւ պիտի հասկընային :



Բ

ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆՔ ՈՐ ԵԹԷ ԸՆԿԱՐԿՈՒԹՒՒՆ ՄԸ ԸՍՈՐ ՀԵՏ  
ՉԼԻՆԻՄ ՄԻՒՄԻՆ ՀԵՏ ԿՐՆԱՅ ԼԻՆԻՄ

Արամիա ճիշտ գտ շահեր էր . այն ինչ Պօտուայէ հրապարակին վրայ նայող տունէն դուրս ելեր էր որ աիկին Շէվրէօզ իր սու- նը դարձեր էր :

Վ՛վախնար նա անտարակոյս , և այսպէս իր պտոյախն անմեղ կերպարանք մը տալ կ'ուզէր . բայց այն ինչ օձմեանը մտաւ , այն ինչ ասպաճով եղաւ որ իր ետեւէն մարդ մը չպիտի դար զինքն անհանդիսաւ ընելու , ու ըիշ փողոցի մը վրայ նայող պարտիզի մը դուռը բանալ տուաւ . Գրուա-տէ-Բըլի-Շան փողոցը զարկաւ , ուր կ'ընակեր Պ . Գօլպէր :

Ըսինք որ իրկունն հասեր էր . պէտք էր ըսել զիշերը , և թանձր զիշեր մը . Բարիլ՝ իր հանդարատ թիւնը գտնելով իր նե- ըողամիտ ստուերին ներքեւ կ'պահէր աղնիւ գ.քսու-հին որ իր քա- ղաքական գտնն առաջ տանի , և պարզ քաղաքաւորու հին , որ՝ քաղաքն ընթրիք ընելուն՝ տուն գառնալու ու շացեր էր , ամուս- նական յարկը գտնելու համար՝ իր սիրահարին թեւը մտած՝ եր- կարողոյն ճամբան կ'ըսներ :

Տիկին Շէվրէօզ զիշերային քաղաքապետութեան քաջ վարժ լինելուն՝ զիտէր որ պաշտօնեայ մը , նոյն իսկ իր տան մէջ՝ ե- ըսը չպահէր նորասի և գեղանի կանանց որ գիտաններու փոշիէն կ'երկնչին , կամ՝ պատաւ ու շատ գիտուն կանանց որ պաշտօնա- տանց անխոհեմ արձագանքէն կ'վախնան :

Սպասաւոր մը գ.քսու-հին ընդունեց սինապարդ գալթին մէջ , և պէտք է ըսել , որ շատ գեշ ընդունեց : Այս մարդը՝ անոր ե- ըսը նայելէն ետեւ՝ բացատրեց անգամ որ այնպիսի անպատեհ ժամուն և այն տարիքին մէջ անվայել է գալ և Պ . Գօլպէրի վերջին աշխատութիւնը վրդովել :

Բայց աիկին Շէվրէօզ՝ առանց սրդողելու՝ իր անունը գրեց թղթակալին մէկ թերթին վրայ , ազմկալեց անուն մը , որ ստէպ Լուի Ժ.Գին և մեծ կարտինալին ականջին անախորժ կերպով հնչեր էր :

Այս անունը գրեց նոյն ժամանակուան իշխանաց յատուկ մեծ ու անդէտ տասերով , իրեն մասնաւոր կերպով թուղթը ծալեց , և սպասաւորին յանձնեց առանց բառ մ'աւելցնելու , բայց այն- պիտի հրամայական դէմքով մը , որ չարամիտ սպասաւորը՝ մար- զիկը ճանչէրու մասին վարժ , գլուխը ծռեց և Պ . Գօլպէրին սե- նեակը վազեց :

Գիւրին է ըմբռնել որ պաշտօնեայն ճիկ մը հանեց թուղթը բանալով , և թէ այս ազաղակէն սպասաւորը բառական հասկընա- լով այս խորհրդաւոր այցելութեան տանելիք հոգը , գուրս ելաւ արտօրնօք որ գ.քսու-հին գտնէ :

Նոր ու գեղեցիկ տան սանդղէն ծանրաքայլ վեր ելաւ գ.քսու- հին և Պ . Գօլպէրի առջեւ երեցաւ , որ նոյն ինք գրան փեղկերը բանալով կ'սարսէր :

Գ.քսու-հին սեմին վրայ կեցաւ որ լաւ մը նայի այն մարդն ու- ըրու հետ գործ ունէր :

Առաջին տեսքին՝ գ.քսու-հին Պ . Գօլպէրի կէտը , ծանր ու թանձր զլուխը , խոշոր ունքը , անհնօրհ զիմաց ծառ թիւնն որ քահանա- յից հազած գգակին պէս խոյրի մը ներքեւ ճգմուած էր , այս բո- լոր կերպարանը տեսնելով , կարծեց թէ բանակցութիւնը զիւրաւ- ստաջ պիտի տանի , և պայմաններու վիճարանութիւնը հետա- քրքրական չպիտի լինի :

Վասն զի չէր երեւեր որ այս անուայ բնութիւնը նուրբ վրէժ- ինդրութեան կամ՝ պապակող փառասիրութեան հրապոյրներուն զգալի լինէր :

Բայց երբ գ.քսու-հին ՚ի մօտաւատ տեսաւ Պ . Գօլպէրին փոք- րիկ աչերը սե ու սուր , անոր գնտաձև և դժնեայ ճակատին երկայ- նաձիւք ծալքը , անոր շրթերուն աննշմարելի կծկումը , որոց վրայ դուրհիօրէն պարզմտութիւն տեսեր էր , աիկին Շէվրէօզ կարծիքը փոխեց և կարող եղաւ ըսել իւրովի , «Իմ ուղած մարդս գտայ» :



— Տիկին, ի՞նչ բանի պարտաւոր եմ այցելութեանդ պատիւը

— Հարցոյց զանձուց տեսուչը :

— Ձեզնէ ունեցած պէտքս, պարոն — վրայ բերաւ դքսուհին

— և ձեր իզնէ ունեցած պէտքը :

— Բաղդաւոր եմ, տիկին, ձեր խօսքին առաջին մասը լսելուս, բայց երկրորդ մասը . . . :

Տիկին Շէվրէօզ Գօլպէրին ցոյց տուած թիկնաթուին վրայ նստաւ :

— Պարոն Գօլպէր, միթէ զանձուց տեսուչ էր :

— Այո՛, տիկին :

— Եւ միթէ չէք բաղձար վերատեսուչ լինելու . . . :

— Տիկին :

— Մի ուրանաք, այդ կերպով մեր խօսակցութիւնը կրնայ երկարիլ. անօրուտ է :

— Սակայն, տիկին, սրչափ որ ձեր արժանիքն ունեցող կնկան մը կամայ հաճելի և քաղաքավար լինելու փափաքիմ իսկ, բան մը չէ կարող խոստովանել տալ ինձ որ իմ զլխաւորս պաշտօնէ ձդել և անոր տեղ անցնիլ կ'ուզեմ :

— Պ. Գօլպէր, ես բնաւ գլխաւորդ պաշտօնէ ձդելու խօսք չըրի : Արդեօք զիպուածով այդ բառն արտասանեցի՞. չեմ կարծեր : Յաջորդել բառը նուազ բուռն և քերականապէս աւելի յարմար է, ինչպէս որ Պ. Աուագիւր կ'ըսէր : Աւրեմն կ'ըսեմ թէ Պ. Ֆուքէի յաջորդելու կ'բաղձաք :

— Տիկին, Պ. Ֆուքէի բաղձն այնպիսի բաղձ մ'է որ ամէն բանի կ'ըիմադրէ : Պարոն վերատեսուչն այս դարուս մէջ Հռոդոսի կոթողին դերը կ'սաղայ. նաւերն անոր տակէն կ'անցնին և չեն տապալէր :

— Ես ինքս կրնայի այդ բաղձատութիւնը գործածել : Այո՛, Պ. Ֆուքէ Հռոդոսի կոթողին դերը կ'սաղայ, և Պ. Գօնրարէն լսելս կ'յիշեմ, Պ. Գօնրար որ Ակադէմիայի անդամ է. կարծեմ . . . թէ Հռոդոսի կոթողն ընկնելով, զայն վար նետել տուող վաճառականը, սոսկ վաճառական մը, Պ. Գօլպէր . . . իր բեկորներովը չորս հարիւր ուղո բեռնաւորել տուաւ : Վաճառա-

կան մը, և սակայն զանձուց տեսուչէ մը շատ փոքր մարդ է :

— Տիկին, ես կ'հաւատեմ ձեզ որ երբէք Պ. Ֆուքէն չպիտի տապալեմ :

— Լաւ ուրեմն, Պ. Գօլպէր, քանի որ իմ առջև փափկասրտութիւն ծախելու կ'յամառիք, որպէս թէ տիկին Շէվրէօզ կոչուիլս չդիտէք, և թէ պառաւ եմ, այսինքն ձեր գործն այնպիսի կնկան մը հետ է որ Պ. Ռիշլիէօի հետ քաղաքագիտութիւն ըրած է և որ ժամանակ կորուսելու փափաք չունի, որովհետեւ, կ'ըսեմ, այդ անխոհեմութիւնը կ'գործէք, երթամ պիտի աւելի մտացի և բաղձ շինելու փութացող մարդիկ գտնել և անոնց հետ խօսիլ :

— Ի՞նչ բանի մէջ, տիկին, ի՞նչ բանի մէջ :

— Պարոն, այսօրուան բանակցութեան մասին ողորմելի դաղափար մը կ'տաք ինձ : Ձեզի կ'երգնում ահա որ եթէ իմ ժամանակս կ'ին մ'երթար Պ. Սէն-Մարի մօտ, որ մեծ խելք չունէր իրաւ, կ'երգնում որ, եթէ կարտինալի մասին ըսէր անոր ինչ որ ես ըսի ձեզ Պ. Ֆուքէի մասին, Պ. Սէն-Մար՝ անմիջապէս գլխով ոտքով պիտի ընդունէր առաջարկութիւնը :

— Աղէ՛, տիկին, աղէ՛, քիչ մը ներողամիտ եղէք ինձի :

— Այսպէս կ'հաւանիք ուրեմն Պ. Ֆուքէի տեղն անցնելու :

— Եթէ թաղաւորը Պ. Ֆուքէն ճամբէ, անտարակոյս չեմ մերժեր :

— Այդ ալ աւելորդ խօսք մ'է. բացայայտ է որ եթէ տակաւին Պ. Ֆուքէն վունտել չտուիք, պատճառն այս է որ չկրցաք ընել : Այսպէս յիմար կենդանի մը պիտի լինէի, եթէ ձեզի դալովս՝ միասին չբերէի ձեզի պակասածը :

— Այցաւիմ պնդելու, տիկին — ըսաւ Գօլպէր՝ լուռ թեմէ մը ետք որ ժամանակ տուեր էր դքսուհոյն անոր խորունկ կեղծաւորութիւնը քննել — բայց պարտաւոր եմ կանխաւ յայտնելու ձեզ որ, վեց տարիէ՛ ի վեր, Պ. Ֆուքէի գէմ ամբաստանութիւն ամբաստանութեան կ'յաջորդեն առանց պարոն վերատեսուչին գիրքը փոխել կարենալու :

— Պ. Գօլպէր, ամէն բանի համար ժամանակ կայ. այս ամ-



բաստանա թիւններն ընողները տիկին Շէփրէօղ չէին կոչուեր և Պ. Մազարէնի վեց նամակներն իրենց ձեռաց մէջ չունէին, նամակներ որ խնդրոյ տակ եղող յանցանքը կ'հաստատեն:

— Յանցանք:

— Ոճիր բտեմ, եթէ լաւ ևս կ'ուզէք:

— Ոճիր մը Պ. Ֆուքէն գործէ:

— Այո, այդչափ միայն . . . : Ճշմարտար, այլանդակ բան է, Պ. Գօլպէր, գուք որ պող և փոքր ինչ նշանակական դէմք մ'ունիք, կ'տեսնեմ որ կ'վառիք:

— Ոճիր մը:

— Կ'զմայլիմ որ այս բանս քիչ մը սուղաւորութիւն կ'ընէ ձեր վրայ:

— Ո՛հ, վասն զի այդ խօսքը շատ շատ բաներ կ'պարունակէ, տիկին:

— Գանձուց վերատեսչի արտօնադիր մը կ'պարունակէ քեզի համար, և Պասկելը կամ արտօն զնալու նամակ մը Պ. Ֆուքէի համար:

— Ներեցէք ինձ, գրտուհիս, գրեթէ անյարկի է որ Պ. Ֆուքէն արտօնի, արդէն սրբաբն մեծ բան պիտի լինի եթէ բանտարկուի և երեսէ ընկնի:

— Ո՛հ, ևս ըսածս գիտեմ — պատանխանեց տիկին Շէփրէօղ պաղութեամբ: — Ես Բարիզէն այնքան հեռու չեմ սպրիր, որ անդ անցած գարձածը չցիանամ: Թագաւորը Պ. Ֆուքէն չսիրեր, և յօժարակամ Պ. Ֆուքէն պիտի կործանէ, եթէ սուիթ մը գտնէ:

— Պէտք է որ առիթը լաւ լինի:

— Բաւական լաւ: Ուստի, առիթ մ'է, զոր հինգ հարիւր հազար Ֆրանք կ'արժէ:

— Ինչպէս — ըստ Գօլպէր:

— Ըսեղ կ'ուզեմ, պարոն, որ այս առիթն իմ ձեռքս ունենալով, նոյնը ձեր ձեռքը չպիտի յանձնեմ առանց հինգ հարիւր հազար Ֆրանք առնլու փոխարէն:

— Շատ լաւ, տիկին, կ'իմանամ: Քայց քանի որ վաճառքիդ

դիր կ'որոշէք, նայինք թէ ձեր ծախած բանն ի՞նչ արժէք ունի:

— Ո՛հ, խիստ քիչ բան. վեց նամակ են, արդէն ըսի, Պ. Մազարէնի կողմէ գրուած. ինքնադիր նամակներ որ սուղ չեն անշուշտ եթէ անժխտելի կերպով հաստատեն որ Պ. Ֆուքէ մեծ գումարներ խորած և իրեն սեպհականած է:

— Անժխտելի կերպով — ըստ Գօլպէր արախութեամբ փայլուն աչօր:

— Անժխտելի. կ'ուզէք դիրքը կարգալ:

— Բոլորով սրտով: Անտարակոյս օրինակներն են:

— Անշուշտ այդպէս են:

Տիկին գրտուհին իր ծայէն փոքր ծրար մը հանեց որ իր թաշէ քրօնէն տափակցած էր:

— Կարգացէք — ըստ:

Գօլպէր այս թղթերուն վրայ բնկաւ անյապարար և զանոնք լափեց:

— Հրաշալի է — ըստ նա:

— Բաւական պարզ են, այնպէս չէ:

— Այո, տիկին, այո. կ'երեի թէ Պ. Մազարէն ստակ յանձնած է Պ. Ֆուքէի, և այս ալ նոյն ստակը պահած է. բայց ի՞նչ ստակ:

— Ո՛հ, տասիկ ի՞նչ ստակ: Աթէ միասին սակարկենք, այս նամակաց Եօթներորդ մ'ալ պիտի աւելցնեմ որ ձեզի վերջնական տեղիկս թիւնները կ'ընայ տալ:

Գօլպէր մտածեց:

— Հստա այս թղթերուն բնադիրները:

— Անօրտո հարցում մ'է այդ: Արդէս թէ ևս ալ ձեզի հարցնէի, Պ. Գօլպէր, ինձ տալիք գրամի պարկերը լեցուն պիտի լինին թէ ոչ գատարի:

— Քաջ է, տիկին:

— Այսպէս արշտած է:

— Ո՛չ բնաւ:

— Ինչո՞ւ:

— Բան մը կոյ որս վրայ ոչ գուք և ոչ ևս չմտածեցինք:



- Ըսէք նայիմ ի՞նչ է :
- Պ. Ֆուքէ այս պարագայիս մէջ միայն դատով մը կրնայ կորսնցնել :
- Այո՛ :
- Հասարակային գայթակղութիւն մը :
- Այո՛, ասո՛ւ :
- Լաւ, ո՛չ գատ կարելի է բանալ անոր դէմ և ոչ գայթակղութիւն գրղուել :
- Եւ ինչո՞ւ :
- Ինչու որ Բարլմէնդի մէջ ընդհանուր տեղապահ է, վասն զի՛ Ֆրանսայի մէջ, վարչութիւն, բանակ, արդարութիւն, առուտուր՝ իրարու հետ ընկերակցութեան օղակ ըսուած բանով փոխադարձաբար կապուած են : Այսպէս, տիկին, Բարլմէնդն երբեք չպիտի հանդուրժէ որ իր զլուխը դատաստանական աստնի մ'առջև քաշքշուի : Երբեք, եթէ արքունի հրամանաւ իսկ ներկայանայ, երբեք չպիտի գատապարտուի :
- Ա՛հ, ճշմարիտ վկայ, Պ. Գօլպէր, այդ իմ գիտնալիք բանս չէ :
- Գիտեմ, տիկին, բայց այդ իմ գիտնալիք բանս է, և ձեր քերած թղթերուն արժէքը կ'նուազեցնէ : Ի՞նչ բանի կրնայ օգտել ինձ ասպացոյց մ'առանց գատապարտութեան հնարաւորութիւնը լինելու :
- Եթէ մի անգամ կասկածի տակ ընկնի, Պ. Ֆուքէ իր վերատեսչի պաշտօնը պիտի կորուսէ :
- Աւասիկ մեծ բան մը — գոչեց Գօլպէր, որու մթին կերպարանը յանկարծ ասելութեան և վրէժխնդրութեան նշաններով փայլեցան :
- Հա՛, հա՛, Պ. Գօլպէր — ըսաւ դքսուհին — ներեցէք ինձ, չէի կարծեր որ այդչափ շուտով կ'զդածուիք : Լաւ, շատ լաւ : Արդ՝ քանի որ ձեռքս ունեցածէն աւելի կ'սլահանջէք, գոցենք խնդիրը :
- Ընդ հակառակն, տիկին, խօսինք միշտ : Միայն արժէթղթերդ իջնելուն, իջեցուցէք և ձեր սլահանջումները :

- Կ'տակարկէք :
- Հարկ մ'է հաւատարմութեամբ վճարել կամեցողին :
- Ո՞րչափ կ'ուզէք տալ :
- Երկու հարիւր հազար ֆրանք :
- Գքսուհին անոր քթին ծիծաղեցաւ, բայց յանկարծ .
- Կեցիք — ըսաւ :
- Կ'հասնիք :
- Գեու ո՛չ : Ուրիշ հնար մ'ունիմ :
- Ըսէք :
- Երեք հարիւր հազար ֆրանքը պիտի տաք :
- Ո՛չ, բնաւ ո՛չ :
- Ո՛հ, կամ կ'ընդունիք, կամ կ'մերժէք . . . բայց այս բաւական չէ :
- Ուրիշ ի՞նչ կայ . . . դքսուհի, երթալով գործն անհնարին կ'զարձնէք :
- Ձեր կարծածին չափ չէ, ինչրա՞ծս գրամ չէ բնաւ :
- Ի՞նչ է տրեմն :
- Ծառայութիւն մը : Գիտէք որ միշտ գործանօք սիրած եմ թագուհին :
- Ասո՞ւ :
- Ապա, Նորին Աւհափառութեան հետ տեսակցութիւն մը կ'ուզեմ ունենալ :
- Թաղուհոյն հետ :
- Այո՛, Պ. Գօլպէր, թագուհոյն հետ, որ հիմակ բարեկամուհիս չէ, իրաւ, և երկար ժամանակէ հետէ, բայց եթէ առիթ ընծայուի անոր կրնայ վերստին իմ բարեկամուհիս դառնալ :
- Տիկին, Նորին Աւհափառութիւնն այլ ևս մարդ չընդունիր : Շատ կ'տառայի : Գիտէք որ իր հիւանդութեան աւելի ստէպ ենթակայ կ'գտնուի :
- Ես ալ ճիշտ այդ բանին համար կ'ուզեմ տեսութիւն մ'ընել Նորին Աւհափառութեան հետ : Երևակայեցէք որ ՚ի ֆլանտրա, այս տեսակ հիւանդութիւններ շատ ունինք :
- Բժիշկներ : Սոսկալի, անբուժելի հիւանդութիւն :



— Այլպէս մի կարծէք, Պ. Գօլպէր: Ֆլամանտացի գեղացին քիչ մը բնութեան մարդ է, բան կին մը չունենար, այլ մատակ մը:

— Ան, ուրեմն, աիկին:

— Ատ ուրեմն, Պ. Գօլպէր, երբոր իր ծխափայտը կ'քաշէ, կինը կ'աշխատի. ջրհարէն ջուր կ'քաշէ, ջուրին կամ էջը կ'բեռնաւորէ, ինքն իսկ բեռ կ'կրէ: Կնքզինքը լաւ չնայելով՝ առդիս անդին կ'զարնուի, սակայ ալ ձեռք կ'ուտէ: Քաղցկեղ մը ճմլածէ ստաջ կ'գոյ:

— Իբրաւ է:

— Բայց Ֆլամանտացի կանայք այդ հիւանդութենէ չեն մեռնիր: Երբ շատ տատաղին գարմանը գտնելու կ'եննեն: Եւ Պրուժի կրօնուհիներն ամէն հիւանդութեանց համար զարմանալի բժիշկներ են: Թանկադին ջրեր ունին, ունին տեղական և սեպտական դեղեր. հիւանդ կնկան սրտակ մը և մոմ մը կ'տան, կղերին կոնակէն կ'ապրին և զԱստուած կ'պաշտեն այս երկու ապրանքէն օգուտ քաղելով: Աստի թաղուհոյն Պրուժի կրօնուհիներուն ջրէն պիտի բերեմ: Նորին Աւհարիստութեանը պիտի բժշկուի, և որչափ մոմ յարմար գտաի կրնայ վատել: Անայիք, Պ. Գօլպէր, որ արդիւիւղ զիս երթալ թաղուհին տեսնելու, գրեթէ արքայասպանութեան չափ յանցանք մ'է:

— Գրասհի, դուք շատ խելացի կ'ին մ'էք, զիս կ'շփոթէք, սակայն քաջ կ'գաշակեմ որ թաղուհոյն համար ցոյց տուած այդ ձեր զթասիրութիւնն անձնական թեթեւ շահ մը կ'ծածկէ:

— Միթէ ես ճիշդ կ'թափեմ սրահելու ձեզնէ այդ բանը, Պ. Գօլպէր: Կարծեմ թէ ըսիք որ անձնական թեթեւ շահ մ'ունիմ: Գիտցէք ուրեմն որ մեծ շահ մ'է, և խօսքս ամիրախելով պիտի հաստատեմ զայն: Եթէ զիս Նորին Աւհարիստութեան մօտ մըտցնէք, պահանջուած երեք հարիւր հազար ֆրանքով զո՞հ կ'լինիմ, թէ ոչ, թող թերս կ'սրահեմ, միայն թէ անմիջապէս հինգ հարիւր հազար ֆրանք տալու զիջանիք:

Այս վճռական խօսքին վրայ ոտք ելնելով, սրտաւ գրասհին անախորժ անձկութեան մէջ ձգեց:

Աերսաին սակարկել անկարելի եղեր էր, չսակարկել՝ չափազանց մեծ կորուստ ընել էր:

— Տիկին — ըսաւ նա — հարիւր հազար սկուտ ձեզի վճարելու պիտի հաճիմ:

— Ա՛հ — ըբաւ գրասհին:

— Բայց բուն թող թերն ինչպէս պիտի ստանամ:

— Խիստ պարզ կերպով մը, սիրելիդ իմ Պ. Գօլպէր . . . : Որո՞ւ կ'վստահիք:

Մանրագլուխ գանձագահը սկսաւ լսիկ մեջիկ ծիծաղել, այնպէս որ իր խոշոր սեւ աւնքը վեր կ'եննէին ու կ'իջնէին իբրև ջղջղի երկու թեւեր իր գեղին ճակատին խորունկ դժին վրայ:

— Եւ ոչ մէկուն — ըսաւ նա:

— Ա՛հ, բացատրութիւն մը պիտի ընէք անշուշտ ձեր անձին համար, Պ. Գօլպէր:

— Ինչպէս գրասհի:

— Ըսել կ'ուզեմ որ եթէ ինձի հետ գալու ծանրութիւնն աւնոք այն տեղ ուր կ'գտնուին նամակները, ձեզի անձամբ պիտի յանձնուին անոնք, և պիտի կարողանաք ստուգել և բազդատել:

— Ճշմարիտ է:

— Գուք ալ հարիւր հազար սկուտը մէկտեղ կ'տանուք, վասն զի՝ ես ալ արիշ մէկու մը չեմ վստահիր:

Պ. Գօլպէր տեսաւ չը մինչև ո՛նքը կարմրեցաւ: Թուարանական արուեստին մէջ գերազանց հանդիսացող մարդոց պէս էր, այսինքն լիրբ և թուարանական ողորթեան տէր:

— Հետո պիտի տուն մ, աիկին — ըսաւ նա — խոտացեալ դրամը՝ իմ արկղէս վճարելի երկու մորհակաւ: Միթէ այս ձեզ զո՞հ պիտի բնէ:

— Երանի թէ երկու միլիօն լինէին այդ ձեր արկղին մտրհակները, պարոն տեսաւ . . . : Աւրեմն, պէտք պիտի ունենամ ճամբան ձեզ ցոյց տալու:

— Ներնցէք ինձ որ ձիերս լծել տամ:

— Աւրը կաւք մ'ունիմ, պարոն:

Գօլպէր իբրև վարանեալ մարդ մը հազաց = Պահ մը կարծեց



Թէ դքսուհւոյն առաջարկութիւնը ծուղակ մ'էր, թէ կարելի է որ դուռը կ'սպասեն, թէ այս տիկինը, որու դադանիքը հարիւր հազար սկուտի ծախուած էր Գօլպէրին, թերևս Պ. Գոլպէրի ալ նոյն դադանիքն առաջարկած լինէր նոյն դումարին համար:

Արովհետև շատ կ'վարանէր, դքսուհին անոր աչաց մէջ նայեցաւ:

— Միթէ ձեր կառքը կ'նախագասէք — հարցուց նա:

— Այո:

— Կարելի է կ'երեւակայէք որ ձեզ ականաափ մը մէջ նետելու պիտի տանիմ:

— Գքսուհի, թեթև բնաորութիւն մ'ունիք, և ես, ըստ որում ծանր բնաորութիւն մ'ունիմ, թերևս ծաղու ենթարկիմ:

— Այո, վերջապէս, կ'վախնամք: Լաւ ուրեմն, ձեր կառքն առէք, որչափ սպասաորներ որ կ'ուզէք մէկտեղ բերէք. . . միայն լաւ մտածեցէք. . . ինչ որ մենք երկուքնիս կ'ընենք, միայն մենք գիտենք. եթէ երրորդ անձ մ'ալ տեսնէ, բոլոր աշխարհի իմացուցած պիտի լինինք: Իմ հոգս չէ բնաւ. իմ կառքս ձեր կառքին պիտի հետևի, և դո՛հ պիտի լինիմ ձեր կառքն հեծնելով թագուհւոյն երթալու:

— Թագուհւոյն:

— Միթէ արդէն մտցնը ելիք: Ի՛նչ, ինձի համար այդ կարեւորութիւնն ունեցող պայման մ'ի՛նչպէս կ'մտնաք: Ատուած իմ, որչափ աննշան բան մ'էր ձեզի համար: Եթէ գիտնայի, կրկնապատիկը պիտի պահանջէի ձեզնէ:

— Մտածեցի, դքսուհի, ձեզի ուղեկից չպիտի լինիմ:

— Իրան . . . ինչո՞ւ:

— Ղանն զի անսահման վստահութիւն ունիմ ձեր վրայ:

— Չափազանց շնորհապարտ կ'ընէք զիս . . . բայց հարիւր հազար սկուտն առնլու համար . . . :

— Աւասիկ:

Յետուջը թղթի մը վրայ քանի մը խօսք մըտտեց և դքսուհւոյն յանձնեց:

— Վճարեալ էք — ըսաւ նա:

— Այդ աղւոր գործ է, Պ. Գօլպէր, և ձեզ հիմակ պիտի վարձատրեմ այդ բանին համար:

Այս ըսելով սկսաւ ծիծաղել:

Տիկին Շէվրէօզի ծիծաղը չարագուշակ մըմունջ մ'էր. ամէն մարդ որ երիտասարդական աշխոյժ, հաւատ, սէր և սրտին մէջ կենսական ոյժ կ'ըզայ, նախապես կ'համարի արտօսք քան այս ողբալի ծիծաղը:

Գքսուհին իր շրջապատին վերի կողմը բացաւ, և իր կարմրցած ծոցէն հրազոյն ժապաւէնով կասրած թղթի կասրոյ մը հանեց: Գքսուհւոյն կաշին թղթերուն շփումէն ցաւատելով կ'երեւէին անպատկառ տեսչին աչաց, որ այս այլանդակ նախապատրաստութեանց վրայ շուարած կ'մնար:

Գքսուհին մըշտ կ'ծիծաղէր:

— Ահա — ըսաւ — Պ. Մագարէնի բուն գրերը: Ահա ձեռքէ են, և ասկէ զատ՝ Շէվրէօզ դքսուհին ձեր առջևը հանուեցաւ, որպէս թէ իրեն . . . լինէիք, չեմ ուզեր անուններ տալ որ կըրնան ձեր գուռօթիւնը կամ նախանձը գրուել: Այժմ, Պ. Գօլպէր — ըսաւ նա՝ իր շրջապատին իրանը շուտ մը կոճկելով — ձեր բաղլը յաջող ելք մ'ունեցաւ, հիմակ ուղեկից եղիք ինձ թագուհւոյն սենեակը գնալու:

— Ո՛չ, տիկին. եթէ վերստին Նորին Աւհափառութեան դժգոհութիւն գրդուէք, և Բալէ-Բուայալի մէջ իմանան որ ձեր ներկայացուցիչն եղեր եմ, թագուհին բնաւ չպիտի ներէ ինձ այդ ընթացքը: Ո՛չ, պալատին մէջ անձնուէր մարդիկ ունիմ, անոնք կրնան ձեզ առաջնորդել առանց զիս վտանգի մէջ դնելու:

— Ինպէս որ կ'ուզէք, բաւական է որ ներս մտնեմ:

— Պրո՞ծի կրծուհիները, որ հիւանդները կ'բուժեն, ի՛նչպէս կ'անուանէք:

— Ժառանգաւորութիւք:

— Գոք ժառանգաւորութի մ'էք:

— Թո՛ղ այդպէս լինի. բայց պէտք է որ ժառանգաւորութի լինելէն դադրիմ:

— Այդ ձեր գիտնալիք բանն է, տիկին: Նորին Աւհափա-



ու թիւան առաջին սենեկայանին պիտի հրամայեմ որ ժառանգաւորուհի մը ներս բնդունի, որ Նորին Աւետիասութեան հիւանդութիւնը բուժելու համար ազգու գեղեր կ'ընել: Նամակս կը տանիք, և գարման ու պէտք եղած բայտարտ թիւնները գուր ձեր վրայ կ'առնուք:

- Այդ հոգն իմ վրաս կ'առնում:
- Աւտիկ ներկայացման գիրը, աիկին:

Գ

ԱՐՋԱՆԻ ԳՐԱԺԵՂ

Գօլպէր այս նամակը գրատ հոգն տուտ, և կամայակ մը քաշեց ամուսն որտեալ ստատարեր էր:

Տիկին Շէվրեօզ թեթեւ մը բարեկեց և գուրս ելաւ:

Գօլպէր որ Յագարէնի գիրը ճանչեր և նամակները համրեր էր, իր քարտուղարը կանչեց հնչակոմի և անոր ստատարեց որ Բարլմէնդի խորհրդական Պ. Աւանէլն տունն երթայ զանի կանչելու: Քարտուղարը ստատարանեց որ խորհրդականը, իր ստորոտ թեանց հաւատարիմ մնալով, տուն գարձեր էր որպէս զի անսխն յայտնէ նոյն օրը Բարլմէնդի նստին մէջ անսնուած գործոց զխառնը պարագաները:

Գօլպէր կանթեղին մտեցաւ, հանդուցեալ կարտինալին նամակները կարգաց, քանի մ'անդամ ժպտեցաւ աիկին Շէվրեօզի իրեն յանձնած թղթերուն արժեքին վրայ, և շատ վայրկեաններ ին խոշոր գլուխը ձեռաց վրայ յենլով խորունկ մտածեց: Նոյն վայրկեաններուն խոշոր ու մեծ մարդ մը, ստիբուտ գէմբով, անքթիթ աչօք, ակիբուտը քթով Գօլպէրին գրտանեակը մտեր էր համեստ սպահազա թեամբ որ զխրաթիք և միանդամայն հատաա բնաւորութիւն մը կ'այայտներ, զխրաթիք՝ աիբոջը նկատմամբ որ կընար իր առջև որս նետել, հատաա՝ շանց նկատմամբ որ կըրնային այն կոզոպուսն իր ձեռքէն յափշտակելու ջանալ:

Պ. Աւանէլ ստուար պրակ մ'ունէր թեին ներքև. նոյն գրտանեակին վրայ գրաւ, որտ վրայ Գօլպէրի երկու արմուկները նեցուկ էին իր զլեին:

— Բարի լոյս, Պ. Աւանէլ — ըսաւ Գօլպէր իր խորհրդածութենէ սթափելով:

- Բարի լոյս, տէր իմ — ըսաւ Աւանէլ բնականապէս:
- Պէտք է պարոն ըսել — պատասխանեց Գօլպէր մեղմիկ:
- Տէր կ'անուանուին պաշտօնեաները — ըսաւ Աւանէլ անյողդոզ տանութեամբ մը — գուր ալ պաշտօնեայ էք:
- Չեմ տակալին:

— Իրօք ձեզ տէր իմ կ'անուանեմ, վասն զի իմ տէրս էք, և այս ինձ բաւական է. եթէ չէք կամիր որ ամենտն առջև ձեզ այսպէս կոչեմ, թոյլ տուէք որ աւանձինն այսպէս անուանեմ:

Գօլպէր իր գլուխը կանթեղներուն բարձրութեամբ վերցոց և կարգաց կամ ջանաց կարգալ Աւանէլի զխնայք վրայ թէ այս անձնուիրութեան ցոյցերուն մէջ ինչ ատարձան է անկեղծութիւնը:

Բայց խորհրդականը զիտէր ակնարկի մը ծանրութեան զիմուղրել, եթէ այս ակնարկը նոյն խնդր. Գօլպէրինը լինէր:

Գօլպէր հաւաչեց: Աւանէլի գէմբին վրայ բան մը չէր տեսած: Աւանէլ կընար անկեղծ լինիլ: Գօլպէր մտածեց որ այս ստորակարգեալը կընար իրմէ վեր լինիլ, սա նկատմամբ որ անհաւատարիմ կին մ'ունէր:

Այն միջոցին որ սոյն մարդուն վիճակին վրայ կ'աղձար, Աւանէլ պաղտ թեամբ հատուտ տունակ մը հանեց իր գրպանէն, որ Ստանիոյ կնքամուտ զմտած էր և Պ. Գօլպէրին կարկառեց:

- Ի՞նչ է այս, Աւանէլ:
- Անկանս կողմէ գիր մը, տէր իմ:

Գօլպէր հազաց: Նամակն առաւ, բացաւ, և կարգալէն ետե գրպանը գրաւ, մինչդեռ Աւանէլ անվրդով կ'ըզլտատէր իր ատենադրական մեծահատար թղթերը:

- Աւանէլ — ըսաւ յանկարծ պաշտպանն իր պաշտպանելոյն
- գու աշխատանքի մարդ մ'ես:
- Այո, տէր իմ:



- Տասն երկու ժամու աշխատանք քեզ չվախցնեք :
- Տասն հինգ ժամ կ'աշխատիմ օրը :
- Անկարելի բան : Խորհրդական մը Բարլմէնդի համար երեք ժամէն աւելի չկրնար աշխատիլ :
- Ո՛հ , հաշուեկալութեան սենեակն ունեցած մէկ բարեկամիս կշիռները կ'շինեմ , և որովհետեւ ինձ ժամանակ կ'մնայ , երբայեւրէն կ'սորվիմ :
- Վանէլ , Բարլմէնդի մէջ շատ յարգ ունիս :
- Աարծեմ թէ ունիմ , տէր իմ :
- Հիմակ ինչիրը խորհրդականի աթոռին վրայ չմաշիլն է :
- Ի՞նչ ընելու է այդ բանին համար :
- Պէտք է պաշտօն մը ծախու աւնուլ :
- Ի՞նչ պաշտօն :
- Մեծ բան մը : Փոքրիկ փառասիրութիւնները դո՛հ ընելն աւելի դժուարին է :
- Տէր իմ , փոքրիկ քսակները ընուլ աւելի դժուարին է :
- Ասկից զատ՝ ուրիշ ի՞նչ պաշտօն կ'տեսնես — ըսաւ Գօլպէր :
- Իբաւ է որ չեմ տեսներ :
- Սակայն կայ մէկ հատ , միայն թաղաւորը լինիլ պէտք է որ առանց նեղանալու ծախու աւնուի այն . արդ՝ կարծեմ թէ թաղաւորն ընդհանուր տեղապահի պաշտօնը զնելու խելքին չպիտի փչէ :
- Այս խօսքն ըսելով՝ Վանէլ Գօլպէրի վրայ խոնարհ և միանգամայն մարած ակնարկը նետեց :
- Գօլպէր ինքզինքին հարցուց թէ արդեօք այս մարդն իր միտքը դուշակեց թէ ոչ անոր միտքն իրենին համաձայն եկեր էր :
- Տէր իմ — ըսաւ Վանէլ — Բարլմէնդի մէջ ընդհանուր տեղապահի պաշտօնին վրայ ի՞նչ կ'խօսեք ինձ : Ես միայն Պ. Քուքէի տեղապահութիւնը զիտեմ և անկից զատ չկայ :
- Ես ալ այդ կ'ըսեմ , սիրելիք իմ խորհրդական :
- Տէր իմ , կ'նայիմ որ զըուած չէք . բայց սարանքը զնուելէն առաջ , պէտք չէ որ ծախու հանուի :
- Պ. Վանէլ , կարծեմ թէ այդ պաշտօնը քիչ ասանէն պիտի ծախուի . . . :

- Պիտի ծախուի՞ , Պ. Քուքէի տեղապահի պաշտօնը :
- Այոպէս կ'ըսեն :
- Այն պաշտօնն որ զինքն անբունարարելի կ'ընէ , ծախու է : Հօ , հօ :
- Եւ Վանէլ սկսաւ ծիծաղիլ :
- Միթէ այդ պաշտօնէն վախ կ'ղլաս — ըսաւ Գօլպէր ծանրութեամբ :
- Վախ , բնաւ :
- Հասցա բողձանք :
- Չիս կ'ծաղրէք , տէր իմ — պատասխանեց Վանէլ — ինչ պէս Բարլմէնդի խորհրդական մը ընդհանուր տեղապահ լինելու բողձանք չէ կարող ունենալ :
- Ուրեմն , Պ. Վանէլ . . . քանի որ կ'ըսեմ քեզի թէ այս պաշտօնը ծախուելու պիտի առաջարկուի :
- Տէր իմ , դուք կ'ըսէք :
- Այոպէս կ'ըսեն :
- Այդ ձայնը կ'պարտի :
- Կ'կրկնեմ որ անկարելի է : Երբէք մարդ մը վար չնետեր այն վահանն որու ետէն իր պատիւը կ'պատասպարէ , նոյնպէս իր ինչքն ու կեանքը :
- Պ. Վանէլ , կան յիմարներ որ երբեմն խոշոր ձախորդութեան դէպքէ ինքզինքնին վեր կ'դասեն :
- Այո , տէր իմ , բայց այս յիմարներն իրենց յիմարութիւններն աշխարհիս երեսը գտնուող խելճ՝ Վանէլներու ի նպաստ չեն ըներ :
- Ինչո՞ւ չէ :
- Վասն զի այն Վանէլներն աղքատ են :
- Իբաւ է որ Պ. Քուքէի պաշտօնը կրնայ սուղ արժէիլ : Ի՞նչ կ'տայիր այդ պաշտօնին համար , Պ. Վանէլ :
- Տէր իմ , բոլոր ունեցածս :
- Ի՞նչ կ'նշանակէ այդ :
- Այսինքն երբեքն մինչև չորս հարիւր հազար ֆրանք :
- Եւ պաշտօնն ի՞նչ կ'արժէ :



— Առ նուազն , մէկ ու կէս միլիօն : Գիտեմ մարդիկ որ մէկ միլիօն եօթ հարիւր հազար Ֆրանք կ'ընծայեն առանց Պ. Ֆուքէին միտքն ընելու : Արդ' եթէ այնպէս պատահէր որ Պ. Ֆուքէ ծախու հաներ պաշտօնը , թէև չեմ կարծեր , որչափ որ հասկառակը կ'սկսէին . . . :

— Ա՛հ , միթէ այդ մասին քեզի բան մ'ըսին . ո՞վ ըսաւ :

— Պ. Աուրվիլ . . . Պ. Բէլիսօն , ս՛հ , հովի խօսք :

— Լաւ ուրեմն , եթէ Պ. Ֆուքէ ծախել ուզէր . . . :

— Գարձեալ չպիտի կարենայի ծախու առնուլ , վասն զի պարոն վերատեսուչը կանխիկ գրամ ունենալու համար պիտի ծախէր , և ոչ որ մէկ ու կէս միլիօն չունի անմիջապէս համբելու :

Գօլպէր այս միջոցին խորհրդակիսան ընդմիջեց հրամայական միջկատակու թեամբ մը : Ա. Երստին խորհրդածելու սկսեց էր :

Իր տիրոջ ծանրակայ զիրքը տեսնելով՝ խօսակցութիւնն այս նիւթին վրայ դարձնելու յարատեւութիւնը տեսնելով , Պ. Աւանէլ լուծման մը կատարեց առանց զայն գրգռել իշխելու :

— Բացատրէ ինձ լաւ մը — ըսաւ այն ասան Գօլպէր — ընդհանուր տեղակալի պաշտօնին արտօնութիւնները :

— Իրաւունք ունի նա՝ իշխանագնէ դուրս՝ ամեն գաղղիացի հպատակ ամբաստանութեան ենթարկելու . իրաւունք ունի թագաւոր կամ իշխան չեղող գաղղիացիի մը դէմ եղած ամբաստանութիւն մը ջնջել : Անդհանուր տեղակալ թագաւորին աջ ձեռքն է յանցաւոր մը դարնելու , իր թեւն է նաև արդարութեան ջահը մարելու համար : Այսպէս Պ. Ֆուքէ իր կայտութիւնը պիտի կարենայ պահպանել Բարլմէնդներն ապաստանելով . ուստի թագաւորը՝ կանայ ակամայ Պ. Ֆուքէի հետ անուշտ թեամբ պիտի վարուի որպէս զի առանց ընդդիմութեան իր հրովարտակներն արձանագրել տայ : Անդհանուր տեղակալը կրնայ թէ՛ օլտակար և թէ՛ վտանգաւոր դորձիք մը լինիլ :

— Կ'ուզեն ընդհանուր տեղապահ լինիլ , Աւանէլ — ըսաւ յանկարծ Գօլպէր իր ակնարկն ու ձայնը մեղմելով :

— Ե՛ն — գոչեց Աւանէլ : — Բայց պատիւ ունեցայ ձեզ յայտնելու որ իմ արկղիս մէջ գէթ մէկ միլիօն հարիւր հազար Ֆրանք կ'պակսի :

— Այդ դումարը բարեկամներէդ կրնաս փոխ ուղել :

— Ես ինքզինքէս աւելի հարուստ բարեկամ մը չունիմ :

— Ուղի՞ղ մարդ մը :

— Եթէ ամէն մարդ ձեզի պէս խորհէր , տէր իմ :

— Ես կ'խորհիմ , այս բաւ է , և 'ի հարկին կրնամ քեզի համար պատասխանատու մնալ :

— Տէր իմ , զգուշացէք առածէն :

— Ո՞ր առածէն :

— Ո՞վ որ պատասխանատու կ'մնայ կ'վճարէ :

— Եթէ միայն դորձն այդ բանէն կախում ունենար՝ փոյթ չէր :

Աւանէլ ոտք ելաւ , բոլորովին այլայլած էր այս յանկարծական , անակնկալ առաջարկութենէ զոր ամենէն թեթեւ մարդիկ իբրև նուրբ բան մը կ'նկատէին :

— Տէր իմ — ըսաւ նա — զիս մի ծաղրէք :

— Շուա , շուա ընենք , Պ. Աւանէլ : Կ'ըսես թէ Պ. Աուրվիլ Պ. Ֆուքէի պաշտօնին վրայ քեզ խօսեցաւ :

— Նոյնպէս Պ. Բէլիսօն :

— Պաշտօնապէս թէ ոչ պաշտօնասիրապէս :

— Աւասիկ անոնց խօսքը . « Այս Բարլմէնդի մարդիկ փառասէր են և հարուստ . պարտաւոր էին հանդանակութիւն մը բանալ և Պ. Ֆուքէի երկու երեք միլիօն գտնել , որ իրենց պաշտպանն ու լոյսն է » :

— Եւ ի՞նչ պատասխան տուիր :

— Ես ըսի որ իմ կողմէս , 'ի հարկին , տասն հազար Ֆրանք կ'տամ :

— Ա՛հ , ուրեմն Պ. Ֆուքէն կ'սիրեն — գոչեց Պ. Գօլպէր տեղութեամբ լի ակնարկով մը :

— Ա՛չ . բայց Պ. Ֆուքէն մեր ընդհանուր տեղապահն է , պարտուց ներքև ընկած կ'իողդուի . պարտաւոր ենք մեր ժողովին պատիւն ազատել :

— Աւասիկ ասկից կ'հասկընամ թէ ինչու համար Պ. Ֆուքէ միշտ ողջ առողջ պիտի մնայ որչափ որ իր պաշտօնը կատարէ — պատասխանեց Գօլպէր :



— Ասոր մրայ — շարունակեց Վանէլ — Պ. կարվիլ յաւել-  
ցայ . « Պ. Քուքէի ողորմութիւն ընելու , միշտ նուաստացուցիչ  
ընթացք մ'է , որու մերժումով մը պիտի պատասխանէ . [Թո՛ղ  
Բարլմէնդը հանդանակէ իր ընդհանուր փոխանորդին պաշտօնն ար-  
ժանապէս գնելու , այն ատեն ամէն ինչ կարդին կ'լինի , ժողո-  
վին պատիւն անողարտ կ'մնայ , և Պ. Քուքէի գոռողութիւնը  
չփերաւորաւ իր » :

— Այդ ատշարկութիւն մ'է :

— Ես ալ այդպէս տաի գործը , տէր իմ :

— Լաւ ուրեմն , Պ. Վանէլ , երթաս պիտի անմիջապէս Պ.  
կարվիլը կամ Բելլիսօնը գտնելու . միթէ Պ. Քուքէին ուրիշ մէկ  
բարեկամը կ'ձանչէն :

— Շատ լաւ կ'ձանչեմ Պ. Լա Քոնդէնը :

— Բանաստեղծ Լա Քոնդէնը :

— Այո , նոյն ինք . իմ կնիկանս ոտանասերներ կ'շինէր , երբ  
Պ. Քուքէ մեր բարեկամաց գատնէր :

— Արեմն անոր զիմ , որպէս զի վերատեսչին հետ տեսակցու-  
թիւն մ'ընդունիս :

— Յօժարակամ , բայց գումարը :

— Արտչեալ օրն ու ժամուն , Պ. Վանէլ , գումարը պիտի ստա-  
նաս , այդ մասին անհոյ եղիք :

— Տէր իմ , այդպիսի առատաձեռնութիւն մը : Ա'գերազանցէք  
թագաւորն ու Պ. Քուքէն :

— Գործը լաւ հասկընանք . . . բառերու իմաստը ճշդեմք : Ես  
քեզի մէկ միլիօն շորս հարիւր հազար Փրանք չեմ տար , Պ.  
Վանէլ . գտակներ ունիմ :

— Ե՛հ , պարոն , փոխ կ'տաք , զիտեմ , այդ ըստական է :

— Այո , փոխ կ'տամ :

— Ինչ երաշխաւորութիւն , ինչ սոկոս որ կ'ուզէք պահանջե-  
ցէք , պատրաստ եմ ձեր փափաքները կատարելու , դարձեալ պի-  
տի կրկնեմ որ թագաւորներն ու Պ. Քուքէն կ'գերազանցէք ա-  
ռատաձեռնութեան կողմէ : Ի՞նչ են ձեր պայմանները :

— Ա՛յ ձորում ու թ տարուան մէջ :



— Ո՛հ , շատ աղէկ :

— Նոյն պաշտօնին վրայ գրաւ :

— Քաջ է . այսչափ միայն :

— Կեցի՛ր : Ինչ կ'վերապահեմ՝ պաշտօնը քեզնէ գնելու իրա-  
ւունքս հարիւր յիսուն հազար Փրանք շահով , եթէ՛ նոյն պաշտօ-  
նավարութեան ժամանակ , թագաւորին շահուց և իմ խորհրդոց  
համաձայն ընթացք մը չընես :

— Հո՛ւ , հո՛ւ — ըսաւ Վանէլ քիչ մ'այլայլած :

— Միթէ այս պայմանին մէջ քեզ ծանր երեցող բան մը կայ ,

Պ. Վանէլ — ըսաւ Գօլպէր պաղութեամբ :

— Ո՛չ , ո՛չ — պատասխանեց Վանէլ աշխուժի :

— Լաւ ուրեմն , երբոր կամենաս այդ պայմանագիրը կրնանք  
ստորագրել : Հիմակ Պ. Քուքէի բարեկամաց տունը վաղէ գնա՛ :

— Ահա կ'թռիմ . . . :

— Եւ վերատեսչէն տեսակցութիւն մը խնդրէ՛ սո . :

— Այո , տէր իմ :

— Զիջումներ ընելու արամադիր գտնուէ :

— Այո :

— Երբ մի անգամ պէտք եղած կարգադրութիւններն ընէք . . . :

— Պիտի փութամ՝ ստորագրել տալու :

— Զգուշացի՛ր այդ բանն . . . : Ստորագրութեան խօսք մի  
ընէր Պ. Քուքէի հետ , ոչ խօսք տուր և ոչ բան մը պահանջէ ,  
կ'իմանան , եթէ ոչ ամէն բան կ'կորուսես :

— Լաւ ուրեմն , տէր իմ , ի՛նչ ընեմ : Շատ դժուարին է . . . :

— Զանա՛ միայն որ Պ. Քուքէ ձեռքիդ դպի . . . գնա՛ :



ՄԱՅՐ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՍԵՆԵԱԿԸ

Մայր թագուհին իր ննջարանն էր 'ի Բալէ-Բաւայալ արկիւն



Մօտիկը և «Էնօր» (աիկին) Մօլինայի հետ : Թեև մինչև իրկուն թաղաօրին սպասեր էին, բայց չէր երևցած . թաղուհին բոլորովին անհամբեր, անոր վրայ լուրեր առնլու համար ստէս մարդ զրկեր էր :

Կարծես թէ փոթորիկ մը կ'սպարասուէր : Պալատականներն ու աիկինները նախասենեկաց մէջ իրարմէ կ'խորշէին որպէս զև փափուկ խնդիրներու վրայ խօսելու չստիպուին :

Իշխանը թաղաօրին մօտ դայեր էր առաւօտէն որսորդութեան ելնելու համար :

Իշխանուհին իր սենեակը մնացեր էր և զամենքը կ'յանդիմանէր :

Իսկ մայր թաղուհւոյն դալով՝ լատիններէն իր աղօթքն ընելէն ետև՝ կատարեան մարուր ոճով տան գործերու վրայ կ'խօսէր իր երկու բարեկամուհեաց հետ :

Տիկին Մօտիկը, որ այս լեզուն քաջ կ'իմանար, Ֆրանսերէն կ'սպաստախանէր :

Երբ երեք կանայք կեղծաորութեան և քաղաքալարութեան ամէն ձևերն ՚ի գործ գրին ըսելու համար միայն որ թաղաօրին բնթացքը թաղուհին մահու չափ կ'վշտացնէր, նոյնպէս մայր թաղուհւոյն և բոլոր սարաղանները, երբ, ընտրեալ բառերով՝ օրիորդ Լա Վալիէրի գէմ ամէն տեսակ անէճք թափեցին, մայր թաղուհին իր մեղադրանքը վերջացուց այս խօսքով՝ որ իր մտքին և բնաորութեան կնիքը կ'բերէին .

— Estos hijos! — ըսաւ Մօլինայի :

Այսինքն .

— Այս աղաքը :

Յօր մը բերնին մէջ խորիմաստ բառ մ'էր այս, ստակալի բառ մ'էր թաղուհւոյ մը բերնին մէջ, որ, Աննային պէս՝ իր մթին հոգւոյն մէջ եղական գաղանխքներ կ'սրահէր :

— Այն — սպաստախանեց Մօլինա — այս աղաք, որոյ ամէն մայր կ'զահուի :

— Արոյ — սպաստախանեց թաղուհին — մայր մ'ամէն ինչ զոհեց :

Եւ իր խօսքը չաւարտեց : Իրեն այնպէս երևցաւ, երբ ոտքի

վրայ կեցող դուռնաւ Լուի ԺԳԻ սրահներին վրայ իր աչքը վերցուց, որ իր անուսինը դարձեալ իր անփայլ աչաց մէջ լոյս կ'ընդունէր, և կառէ սնդուները բարկութենէ կ'ուռէին : Պատկերը կ'կենդանանար, չէր խօսէր, այլ կ'սպասնար : Խորին լուսութիւն մը յաջորդեց թաղուհւոյն վերջին խօսեց : Մօլինան սկսաւ լայն կողովի մը ժապուէններն ու տանթէնները խառնել : Տիկին Մօտիկը, զարմանալով այն փայլակին վրայ որ համամտութեամբ փոխադարձաբար վառեր էր մտերմութիւն և իր տիրութեան ակնարկը, աիկին Մօտիկը, ըսինք, իբրև խոհական կին աչքը վար առաւ, և տեսնելու անփոյթ մնալով՝ ջանաց փոյս մաիկ ընել : Միայն սարսիւղի խնամակալուհոյն բերնէն նշանակական «Տըմ» մը լսեց յանկարծ, կին մ'որ շրջապատութեան նկար մ'էր : Նոյնպէս գաղանխի գիտեց որ թաղուհւոյն սրտէն իբրև շունչ մը հառաչ մ'ելաւ :

Իսկոյն գլուխը վեր վերցուց :

- Միթէ անհանդիսաւ էք — ըսաւ նա :
- Ա՛չ, Մօտիկը, սէ . բայց ինչո՞ւ համար կ'հարցնես :
- Ձեր Անհատութիւնը հառաչեց :
- Արդարև, իբրուսնք ունիս, այժմ, քիչ մը կ'տառապիմ :
- Կարծեմ թէ՛ Պ. Ալալօ այս տեղ մօտ է, իշխանուհւոյն սենեակը :
- Իշխանուհւոյն, ինչո՞ւ համար :
- Իշխանուհին ջիղբուցաւ ունի :
- Աղմը հիւանդութիւն : Պ. Ալալօ իբրուսնք շունի բնաւ իշխանուհւոյն մօտ գտնուելու, երբ ուրիշ բժիշկ մը կրնայ իշխանուհին բուժել . . . :
- Տիկին Մօտիկը վերստին իր աչքը վերցուց զարմանօք :
- Պ. Ալալօն գաա բժիշկ մը — ըսաւ նա — ուրեմն ո՞վ :
- Աշխատութիւնը, Մօտիկը, աշխատութիւնը . . . : Ա՛հ, թէ որ իրօք հիւանդ մը կայ, այն ալ իմ խեղճ աղջիկս է :
- Նոյնպէս Ձեր Անհատութիւնը :
- Ա՛չ այնքան այս իրկուն :
- Տիկին, մի՛ վստահեք :



Երբ զի՝ տիկին Մօսվիլի այս սպառնալիքն անբասիր հանելու համար, կծու ցաւ մը թաղուհւոյն սիրտը կծեց, անոր գոյնը նետեց և յանկարծակիան նուաղումի ամէն նշաններով զանի թիկնաթուին վրայ տապալեց :

— Իմ՝ կաթիլնէ՛րս — մըմուայ թաղուհին :

— Հո՛ւտ, շո՛ւտ — պատասխանեց Մօլինա, որ առանց շտապելու՝ ոսկեզօծ խեցիէ պահարանի մը մէջէն բխրեղեայ սրուակ մը հանեց և մայր թաղուհւոյն բերաւ :

Թաղուհին մնլեղնարար քանի մ'անգամ հոտուրտաց և շնչեց, ու ապա մըմուայ .

— Աստուած այս ցաւով զիս պիտի սպաննէ : Թո՛ղ իր սուրբ կամօքը կատարուի :

— Մարդ չմեռնիր այդ ցաւէն — յաւելցուց Մօլինա սրուակը պահարանին մէջ զնելով :

— Ձեր Ալեհափառութիւնն աւելի աղէկ չէ՞ — հարցուց տիկին Մօսվիլի :

— Աւելի աղէկ :

Եւ թաղուհին մատը շրթերուն վրայ դրաւ իր մտերմուհւոյն խոհեմութիւն պատուիրելով :

— Տարօրինակ բան — ըսաւ տիկին Մօսվիլի՝ լռութենէ մ'ետք :

— Ի՞նչ կայ տարօրինակ — հարցուց թաղուհին :

— Ձեր Ալեհափառութիւնը կ'յիշէ՞ արդեօք այն օրն երբ այս ցաւն առաջին անգամ երևան ելաւ :

— Կ'յիշեմ, շատ շատ տխուր օր մ'էր, Մօսվիլի :

— Այդ օրը միշտ տխուր եղած չէ Ձեր Ալեհափառութեան համար :

— Ինչո՞ւ համար :

— Ասան զի, քան երեք տարի առաջ, տիկին, նորին Ալեհափառութիւնն իշխող թագաւորը, ձեր փառացի որդին, նոյն ժամուն ծնած էր :

Թաղուհին աղաղակ մ'արձակեց, ճակատը ձեռաց մէջ ծռեց և քանի մը մանրերկրորդ խոր թախծութեան մէջ ընկղմեցաւ :

— Յիշատակ էր թէ՛ խորհրդածուութիւն, միթէ՛ վիշտ էր :

Մօլինա տիկին Մօսվիլի վրայ զրեթէ զայրացին ակնարկ մը ձգեց, այնքան յանդիմանութեան կ'նմանէր, և արժանի կինը, անկից բան մը չըմբռնելով, իր խղճին հանդատութեան համար հարցութեամբ պիտի ընէր, երբ յանկարծ Աննա թաղուհին ոտը ելնելով,

— Աեպտեմբերի օրը — ըսաւ նա — այն, իմ ցաւ սեպտեմբերի օրն երևան ելաւ : Մեծ ուրախութիւն՝ օր մը, մեծ ցաւ՝ ուրիշ օր մը : Մեծ ցաւ — յարեց նա մեղմ ձայնով — խիստ մեծ ուրախութեան քաճում մը :

Եւ այն օրէն սկսեալ, Աննա թաղուհին, որ կարծես թէ բուլոր յիշողութիւնն ու խելքը սպառեր էր, անթափանցելի մնաց, միթին աչքով, անորոշ մտքով, ձեռներն առ ի կախ :

— Պէտք է որ անկողին մանեմք — ըսաւ Մօլինա :

— Քիչ ատենէն, Մօլինա :

— Թողունք թաղուհին — յաւելցուց յամառ Սպանուհին : Տիկին Մօսվիլի ոտը ելաւ. թաղուհւոյն սպիտակ այտերէն փայլուն և խոշոր արտաք, տղա մ'արտաքի նման կ'հասէին :

Մօլինա այս տեսնելով՝ Աննա թաղուհւոյն վրայ իր սև և արթուն աչքը նետեց :

— Այո՛, այո՛ — վրայ բերաւ խկոյն թաղուհին : — Առանձին թող մեզ, Մօսվիլի, և զնա՛ :

Այս Թեղ բառն անախորժ հնչեց զաղղկացի մտերմուհւոյն աղանջին : Անշանակէր որ փոխադարձ զաղանք և յիշատակներ իբրարու պիտի հաղորդուին : Անշանակէր որ այս կարևորագոյն վիճակին հասնող խօսակցութեան մէջ անձ մ'աւելորդ էր :

— Տիկին, Ձեր Ալեհափառութեան ծառայութեան համար Մօլինան կ'րաւ՞ — հարցուց զաղղկացուհին :

— Այո՛ — պատասխանեց Սպանուհին :

Եւ տիկին Մօլինան զլուխ ծռեց :

Յանկարծ պառաւ սենեկապանուհի մ'որ 1620ին Սպանիոյ արքունիքն ունեցած հազուսան հաղեր էր, դռնակները բացաւ, և յանկարծ թաղուհւոյն լացը, տիկին Մօսվիլի խոհական նահանջը և Մօլինան իր դիւանագիտութեան մէջ տեսնելով,



— Գեղը , գեղը — ստուաց նա ինդագին թագուհւոյն խմբին մտանալով համարձակութեամբ :

— Ի՞նչ գեղ , Շիրգա — հարցուց Աննա թագուհին :

— Ձեր վեհափառութեան հրահրութեան համար — սրտաստանեց սենեկապանուհին :

— Ո՞վ կ'ըսերէ այդ գեղը — հարցուց տիկին Մօտիլը աշխուժիւ — Պ . Վալճի :

— Ո՞չ , Ֆլանսարայի (Պէլճիա) կին մը :

— Ֆլանսարայի կին էր , Սպանուհի մը — հարցուց թագուհին :

— Չգիտեմ :

— Ո՞վ կ'ըրկէ զանի :

— Պ . Գօլպէրը :

— Ի՞նչ է անունը :

— Անունը չըստ :

— Ի՞նչ կայտ թիւն տնի :

— Նոյն ինք պիտի բռն :

— Իր գէմքը :

— Գիմակաւոր է :

— Նայէ անդամ մը , Մօլինա — գոչեց թագուհին :

— Անօգուտ է — սրտաստանեց հաստատուն և միանգամայն անուշ ձայն մը , վիժակներուն միւս կողմէն դալով , ձայն մ'որ միւս տիկինները դուր հանեց և թագուհւոյն սարսուռ ազդեց :

Նոյն պահուն՝ գիմակաւոր կին մը վարպետներուն մէջէն կ'երևէր :

Թագուհին բերանը բանալէն առաջ .

— Պրոժի կրօնուհիներէն եմ — ըստ անձանօթ կիներ — և իրօք Ձեր վեհափառութիւնը բռնեցու համար պէտք եղած գեղը կ'ըսեմ :

Ամէն ոք լուց : կրօնուհին քայլ մ'անդամ չըբառ :

— Խօսէ — ըստ թագուհին :

— Երբոր առանձին մնանք — յաւելցուց կրօնուհին :

Աննա թագուհին իր ընկերուհիներուն աչք մ'ըբառ , և ասոնք ալ քաշուեցան գացին :

Այն ատեն կրօնուհին երեք քայլ բրառ դէպ 'ի թագուհին և պատկառանք խոնարհութիւն մ'ըբառ :

Թագուհին անխտաճութեամբ կ'նայէր այս կնիկն , որ նոյնպէս փայլուն աչք կ'նայէր անոր իր գիմակին ծակերէն :

— Քրանսայի թագուհին ուրեմն շատ հիւանդ պիտի լինի — ըստ Աննա — որ նոյն իսկ Պրոժի կրօնուհիներն իմացեր են որ բժշկութեան պէտք ունի :

— Փառք Աստուծոյ , Ձեր վեհափառութիւնն անդարմանելի հիւանդ է :

— Վերջապէս , ուստի զիտես որ կ'ստառապիմ :

— Ձեր վեհափառութիւնը Ֆլանսարայի մէջ բարեկամուհիներ ունի :

— Եւ միթէ այս բարեկամուհիները քեզ զրկեցին :

— Այո , տիկին :

— Անուանէ զանոնք :

— Անկարելի է , տիկին , և անօգուտ , քանի որ արդէն Ձեր վեհափառութեան յիշողութիւնը սրտովը չարթնցառ :

Աննա թագուհին գլուխը վերցուց , և ջանայ գիմակին ստուերին ներքև և Պոստոլին խորհրդաւոր ձայնէն երևան հանել այն անձն որ այսպէս ընտանի անհոգութեամբ կ'իտակէր :

Այդ յանկարծ՝ ապառիանալով հետաքրքրութենէ մ'որ իր վէս բարուց ներհակ էր ,

— Տիկին — ըստ — կ'երևի թէ չգիտես որ արբունի անձանց հետ գիմակով չեն խօսիր :

— Շնորհ բրէք ինձ անմեղադիր լինելու , տիկին — սրտաստանեց կրօնուհին խոնարհարար :

— Ձեմ կարող անմեղադիր լինիլ քեզ , կրնամ ներել եթէ գիմակի վար առնուս :

— Տիկին , ուխտ բրի ցաւադար կամ տառապող անձանց օգնութեան հանիլ ստանց երբեք իմ գէմքս անոնց ցոյց տալու : Պիտի կարենայի ձեր մարմնոյն և հոգւոյն սփոփում բերել , բայց քանի որ Ձեր վեհափառութիւնը կ'արգիլէ , կ'քաշուիմ : Միայն բարեաւ , տիկին , մնար բարեաւ :



Այս խօսքն այնպէս շնորհալի և յարգական ներդաշնակութեամբ արտասանեց անձանօթ կլինը , որ թաղուհւոյն բարկութիւնն ու կասկածները փարատեցան առանց իր հետաքրքրութիւնը նուազելու :

— Իրաւունք ունիս — ըսաւ նա — տառապող անձանց չվայլելը որ Աստուծոյ զրկած մխիթարութիւնն արհամարհեն : Խօսէ , տիկին , և երանի թէ , ինչպէս որ քիչ մ'առաջ ըսիր , իմ մարմնոյս քիչ մը դարման բերէիր . . . : Ափսոս , կարծեմ թէ Աստուած անխնայ զիս փորձելու կ'արամադրուի :

— Ա՛ղաչեմ , քիչ մը հոգւոյ վրայ խօսինք — ըսաւ կրօնուհին — հոգւոյ վրայ , որ ստոյգ եմ թէ նոյնպէս կ'տառապի :

— Իմ հոգիս . . . :

— Մահատու քողցկեղներ կան որոց զարկն անտեսանելի է : Անոնք , թաղուհիս , փղտկրեայ սպիտակութիւն կ'տան մարմնոյն , իրենց կապտագոյն շողիով մարմինը շեն գունաւորեր . հիւանդին կուրծքին վրայ ծռող բծիշկը շլտեր այս անկուշտ հրէշներուն ակոսային կրճատելը ջիղերուն մէջ և արեան կոհակին ներքև . սրտին մէջ կ'բնակին և զայն կ'աղականեն . ահա , տիկին , թաղուհեայ դժուակ եղող ուրիշ քողցկեղներ . միթէ այս տեսակ ցաւեր չունիք :

Աննա ծանրութեամբ վեր վերցուց իր ձիւնափայլ սպիտակութեամբ և բարեձև թեն ինչպէս որ էր իր երիտասարդութեան ժամանակ :

— Այդ ըսած ցաւերդ — սրտասխանեց նա — մեր կենաց պայմանն են , մեր որ երկրի մեծերն ենք , և որոց Աստուած հողիներու պահպանութեան պաշտօնը կ'սայ : Այս ցաւերը , երբ շատ ծանր են , Տէրը կ'թեթեցնէ ասպաշխարութեան ատենին մէջ : Անդ կ'թողունք բեռն ու գողտնիքը : Բայց մի մոռնար որ այն վահագետ Տէրն իր արարածոց կարողութեան համեմատ փորձերը կ'կշռէ , և իմ կարողութիւնս ալ բեռէն վար չէ . այլոց զաղտնիքը , Աստուծոյ ինձ տուած խոհականութեամբ կ'պահեմ , իսկ իմ զաղտնիքիս համար , իմ խոստովանահօրս խոհականութեան չափ չունիմ :

— Տիկին , ինչպէս միշտ ձեզ արիւնքիբա կ'գաննեմ թշնամեացդ

դեմ , իսկ ձեր բարեկամաց համար ձեզ վստահ չեմ գտներ :

— Թաղուհիները բարեկամներ չունին . եթէ ուրիշ բան մը չունիս ինձ ըսելու , եթէ ինքզինքդ Աստուածուատ ներշնչեալ կը համարիս , իբրև մարգարէուհի մը , քաշուէ դնա՛ , վասն զի ապագայէն կ'երկնչիմ :

— Ես կարծէի թէ — ըսաւ արիւնքար կրօնուհին — աւելն անցեալէն կ'վախնայիք :

Այն ինչ այս խօսքն աւարտեց որ թաղուհին ձիւ կենալով ,

— Խօսէ — ըսաւ նա սուղ և մեծասաստ ձայնով մը — խօսէ : Բացատրէ միտքդ բացորոշ , յստակ և կատարեալ կերպով , թէ ո՛չ . . . :

— Մի սպառնար , թաղուհի — ըսաւ կրօնուհին անուշութեամբ — ևս ձեզի եկայ յարգանք և արդահատութեամբ լի , բարեկամուհւոյ մը կողմէ եկայ :

— Արե՛մն փորձով հաստատէ : Սփոփէ՛ փոխանակ գրողելու :

— Գիւրութեամբ , և Ձեր Ա.Ն.հափառութիւնը պիտի տեսնէ թէ իր բարեկամուհին ո՛նի :

— Նայինք :

— Գտան երեք տարիէ վեր ինչ գժբաղլութիւն հասաւ ձեզ . . . :

— Բայց . . . մեծ գժբաղլութիւններ . միթէ թագաւորը չկորուսի :

— Ես այդ տեսակ գժբաղլութեանց վրայ չեմ խօսիր : Անուշեմ հարցնել ձեզ թէ . . . թագաւորին ծննդե՞նէ վեր . . . բարեկամուհւոյ մ'անխոհեմութիւնն արդեօք Ձեր Ա.Ն.հափառութեան վիշտ մը պատճառեց :

— Ձեմ հասկընար ըսածդ — սրտասխանեց թաղուհին իր ակունները սեղմելով՝ որպէս զի այլայլութիւնը ծածկէ :

— Հիմակ պիտի հասկըցնեմ միտքս : Ձեր Ա.Ն.հափառութիւնը կ'յիշէ որ թագաւորը ԱՅՅՏ սեպտեմբերի 3ին ծնաւ , ժամը տասն մէկը քառորդ անցած :

— Այո՛ — թո՛թովեց թաղուհին :

— Ահ սօր կէս ժամ անցած — շարունակեց կրօնուհին — ար-



քայտրդին առանց եկեղեցական արարողութեան արդէն մկրտուելով Մօ եպիսկոպոսին կողմէ թաղաւորին և ձեր աչաց առջև, Ֆրանսայի թաղին ժառանգորդ ճանչցուեր էր: Թաղաւորը Սէն-Ժեռմէնի հին գղեակը գնաց որպէս զի ժամերգութիւնը մտիկ ընէ:

— Այդ ամենը ստոյգ են — մբնաց թաղուհին:

— Ձեր Աեհափառութեան ծննդարեւութիւնը հանդուցեալ արքայեղբոր, իշխանաց, արքունեաց տիկիններուն առջև տեղի ունեցաւ: Թաղաւորին բծիշկը, Պաւլար, և Լծնօրէ վերաբոյժը նախասենեակը կ'ստատէին: Ձեր Աեհափառութիւնը քնացաւ ժամերեքին մօտ գրեթէ մինչև ժամը եօթն, այնպէս չէ:

— Անտարակոյս, բայց այդ ըսածդ քիզի և ինձի պէս ամէն մարդ գիտէ:

— Ա՛գամ այն մասին, տիկին, զոր քիչ մարդ գիտեն: Քիչ մարդ կ'ըսէի, բա՛րէ, կրնամ ըսել միայն երկու մարդ գիտեն, վասն զի երբեմն հինգ հոգի էին միայն, և քանի մը տարիէ ՚ի վեր, գաղտնիքն անյայտ մնաց զլիաւոր խորհրդակիանաց մահաւորը: Մեր տէրը թաղաւորն իր նախահարց հետ կ'ննջէ, Բէրօն մանկաբարձ կիներ քիչ աստեղծն անոր հեանեցաւ, Լա Բօրդ արդէն մտցուած է:

Թաղուհին պատասխան տալու համար բերանը բացաւ, իր սառած ձեռներուն ներքեւ, որով իր երեսը կ'ըջէր, հրատապ բրբտինքի մը խիստ կայլակները գտաւ:

— Ժամն ութն էր — շարունակեց կրօնուհին — թաղաւորը մեծ ախորժակով կ'ընթերթ. իր չորս գին միայն արտաղկներ, ինչութեան ձայներ կ'ըստէին և բաժակներ կ'սպարպուէին. ժողովուրդը պատշգամներուն տակը կ'ուներ. հէլլէ տիպի սրահակները, հրազանակիրներն և սրահապանները քաղքին չորս գին կ'ըմպուէին զինով ուսանողներու կողմէ յաղթանակաւ տարուելով:

« Հասարակաց ցնձութեան այս ահազին արտաղկները ինտուկալուհի, տիկին Հօզակի գրկաց մէջ մեղմիկ հեծեծել կ'տար Ֆրանսայի գահուն ապաղայ ժառանգը, և երբ Ֆրանսայի աչքը բացուէր երկու թաղ պիտի տեսնէր որքանի մը խորը: Յանկարծ Ձեր Աեհափառութիւնը սուր ճիկ մ'արձակեց, և Բէրօն մանկաբարձը մահճիկը զլուխն երեցաւ:

« Բծիշկները հեռաւոր սրահի մը մէջ ճաշ կ'ընէին: Պալատը ուր անբաւ բազմութիւն մը խոնելուն՝ անապատ էր, ոչ բարեկարգութիւն ունէր և ոչ պահապաններ: Մանկաբարձ կիներ՝ Ձեր Աեհափառութեան վիճակը քննելէն ետեւ՝ զարմանօք ձայն արձակեց և ձեզ իր գրկաց մէջ առնլով՝ լալազին, և վշտօք մոլորած՝ Լա Բօրդը զըկեց թաղաւորին յայտնելու համար որ թաղուհին կ'ուզէր զինը տեսնել իր սենեակը: Գիտէք, տիկին, որ Լա Բօրդ պաղարիւն և մտացի մարդ մ'էր: Թաղաւորին չմտեցաւ իբրև զարհուրած սպասաւոր մ'որ իր կարևորութիւնը կ'զգայ, և կ'ուզէ որ ինքն ալ զարհուրեցնէ, և ասկէ զատ՝ թաղաւորին տրուելիք լուրը զարհուրելի լուր մը չէր: Աստի Լա Բօրդ զնաց ժպտելով թաղաւորին երեցաւ և անոր աթոռին մօտենալով ըսաւ անոր.

« — Աեհափառ, թաղուհին շատ երջանիկ է և աւելի երջանիկ պիտի լինէր Ձեր Աեհափառութիւնը տեսնելով »:

« Նոյն օրը՝ Լուի ԺԳ իր թագն աղքատի մը թերևս տար, այնչափ երջանիկ կ'զգար ինքզինքը: Աւրախ զուարթ ու թեթեւ թաղաւորը սեղանէն ելաւ ըսելով, Հանրի Գի ըսելիք կերպով.

« — Պարոնայք, երթամ պիտի կինս տեսնելու »:

« Ձեր քովն եկաւ, տիկին, այն միջոցին որ Բէրօն տիկինն երկորդ արքայորդի մը, առաջնոյն պէս գեղեցիկ և ուժեղ անոր կ'ներկայացնէր, ըսելով.

« — Աեհափառ, Աստուած չուզեր որ Ֆրանսայի թաղաւորութիւնը կանանց ձեռքն անցնի »:

« Թաղաւորն առաջին շարժման մէջ այս նորածին աղուն վրայ ցատկեց և պոռաց.

« — Փա՛նք քեզ, Աստուած իմ »:

Կրօնուհին այս տեղս լուց, տեսնելով որ թաղուհին շատ կը տառապէր: Աննա թաղուհին՝ իր թիկնաթուղի վրայ ընկած, գլուխը ծռած, աչերն անթիթ առանց լսելու մտիկ կ'ընէր և իր շրթունքը ջլաձիգ շարժում մը կ'ընէին Աստուծոյ աղօթելու կամ սոյն կնկան զէմ անէծք կարգալու համար:

— Ա՛հ, մի կարծէք որ եթէ միայն մէկ թագածոսանդ մը



կայ 'ի Ֆրանսա — զոչեց կրօնուհին — մի կարծէք որ եթէ թա՛  
 գուհին նոյն տղան երեսի վրայ թողուց զահէն հեռու, մի կարծէք  
 որ այն դէշ մայր մ'էր: Ա՛հ, ո՛չ. . . կան մարդիկ որ զիտեն թէ  
 ինչչափ արտաք թափեց նա, կան մարդիկ որ այս մօր խեղճ ա-  
 բարածին տուած հրատապ համբոյրները համբեցին, փոխարէն  
 այն թշուառ և մթին կենաց որու գատապարտեալ էր Լուի ԺԳ՛ի  
 երկուորեակ եղբայրը պետական պատճառաւ:

— Աստուած իմ, Աստուած իմ — միմնաց թագուհին մեղմօրէն:

— Գիտենք — շարունակեց կրօնուհին աշխուժիւ — որ թագա-  
 ւորը տեսնելով որ երկու զաւակ ունէր, երկուքն ալ տարեկից,  
 համազօր, Ֆրանսայի փրկութեան համար զող զգաց, վախցաւ  
 որ իր պետութեան անխորրութիւնը չվրդովէ: Գիտենք որ Ռիշլիէօ  
 կարտինալը, Լուի ԺԳ՛էն այս խնդրոյն համար կանչուելով՝ նո-  
 բին Աեհափառութեան դահլճին մէջ խորհեցաւ մէկ ժամէն ա-  
 ւելի և այս վճիռն արտասանեց. «Նորածին թագաւոր մը կայ  
 նորին Աեհափառութեան յաջորդելու համար: Աստուած ուրիշ  
 մ'ալ ծնցուց այս սուաջին թագաւորին յաջորդելու համար. բայց  
 այժմ՝ սուաջին ծնածէն պէտք ունինք, պահենք երկրորդը Ֆրան-  
 սայի աշքէն ինչպէս որ Աստուած նոյն իսկ իր ծնողքէն պահած  
 էր»: Իշխան մը, տէրութեան համար խաղաղութիւն և սպա-  
 հովութիւն էր, երկու թագաժառանգ իշխաններ՝ քաղաքային պա-  
 տերազմ և անիշխանութիւն:

Թագուհին յանկարծ սոք ելաւ գունատ և բուռները պրկած:

— Գու պէտք եղածին աւելի գիտես — ըսաւ նա խուլ ձայ-  
 նով մը — քանի որ պետութեան գաղտնեաց հաղորդ ես: Իսկ այն  
 բարեկամներն որոցմէ իմացած ես այս գաղտնիքը, վատեր են,  
 սուս բարեկամներ են: Այսօր կատարուած ոճրին անոնց հետ մեղ-  
 սակից ես: Այժմ, վար սու նայիմ դիմակդ, թէ ոչ պահակաց  
 հրամանատարին պիտի հրամայեմ որ քեզ ձերբակալէ: Ա՛հ,  
 այդ գաղտնիքը գիտ չվախցներ: Չայն ըմպեցիր, պիտի դուրս  
 տաս: Ծոյցդ պիտի ստուի այն. այս վայրկեանէս ո՛չ գաղտնիքդ և  
 ո՛չ կեանքդ այլ ևս քուկդ չեն:

Աննա թագուհին՝ շարժում մը սպառնալեաց միացնելով, եր-  
 կու քայլ բրտ դէպ 'ի կրօնուհին:

— Սորլեյէք — ըսաւ անծանօթ կինը — ձեր երեսի վրայ ձղած  
 բարեկամաց հաւատարմութիւնը, սպառիւք, խոհեմութիւնը գնհա-  
 տել:

Եւ իսկոյն իր գիմակը հանեց:

— Տիկին Շէվրէօզ — զոչեց թագուհին:

— Չեր Աեհափառութեան հետ այս գաղտնիքին միակ աւան-  
 դապահն եմ:

— Ա՛հ — միմնաց Աննա թագուհին — եկուր զիս գրիէ,  
 դքսուհի: Ափսո՛ս, բարեկամներդ սպաննել է այսպէս իրենց մա-  
 հարեր վիշտերուն հետ խաղ բանալը:

Եւ թագուհին իր գլուխը պատառ դքսուհւոյն ուսին վրայ կը թնե-  
 լով, իր աչերէն դառն արտասուաց տղբւրներ թափեց:

— Ո՛րչափ դեռահաս էք տակաւին — ըսաւ դքսուհին դաշն ձայ-  
 նով մը — կ'արտասուէք:

Ե

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒՆԻԲ

Թագուհին տիկին Շէվրէօզի նայեցաւ հպարտութեամբ:

— Ապրծեմ թէ — ըսաւ նա — երջանիկ բառն արտասանեցիր  
 իմ վրայ խօսելով: Մինչև ցարդ, դքսուհի, անկարելի բան մը  
 կարծեր էի որ մարդկային արարած մը Ֆրանսայի թագուհիէն  
 նուազ երջանիկ կարենայ դանուիլ:

— Տիկին, արգարև, վշտաց մայր մ'եղաք: Բայց այս երեկի  
 աղէտից մօտ որոց վրայ քիչ մ'առաջ կ'խօսակցէինք, մենք, մար-  
 տաղանմութեան պատճառաւ իրարմէ զտուած հին բարեկա-  
 մուհիներ, այս արքայական տղէտից մօտ, բոխ, իրաւ է որ քիչ  
 զգալի ուրախութիւններ ունինք, բայց նախանձելի են այս աշ-  
 խարհիս մէջ:

— Որո՞նք են — ըսաւ Աննա թագուհին գառնապէս: — Ի՞նչ



պէս ուրախութիւն բառը կրնաս արտասանել, դքսուհի, դու որ քիչ մ'առաջ կ'խոստովանէիր թէ իմ մարմնոյս և մտքիս դեղեր պէտք են:

Յիկին Շէվրէօզ պահ մը մտածեց:

— Թագաւորներն որչափ հեռու են միւս մարդերէն — մըմաջ նա:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ըսել կ'ուզեմ թէ ռամկէն այնքան հեռացած են որ այլոց համար կենաց ամէն պիտոյքը կ'մոռնան: Ափրիկեան լերան բնակչին պէս որ, ձիւնի առուակներէ զովացած դալարաւէտ սարահարթներու մէջէն չկրնար հասկընալ որ դաշտին բնակիչը ծարաւէն կրնայ մեռնիլ արեւուն տապէն կիրացած երկիրներու մէջ:

Թագուհին թեթեւ մը կարմրեցաւ. դքսուհոյն միտքն հասկըցեր էր:

— Գիտես արդեօք — ըսաւ նա — որ զէշ ըրի քեզ երէսի վրայ թողուլս:

— Ա՛հ, տիկին, կ'ըսեն թէ թագաւորը ժառանգեց հօրն ինձի գէմ պահած ասեղութիւնը: Թագաւորը զիս պիտի ճամբէր եթէ դիտնար որ Բալէ-Բուայալ կ'դանուիմ:

— Ձեմ ըսեր թէ թագաւորը քեզ նկատմամբ նպաստաւոր է, դքսուհի — սրտասխանեց թագուհին — բայց ես, պիտի կարենայի . . . դադանի:

Գքսուհին արհամարհուած ժպիտ մը ցցուց որ իր խօսակցին անհանգստութիւն սուսաւ:

— Այլ սակայն — փութաց ըսելու թագուհին — շատ աղէկ ըրիր ասա դաշտի:

— Շնորհակալ եմ, տիկին:

— Գոնէ մահուան լուրդ սուտ հանելու ուրախութիւնը մեզի տալու համար:

— Իրօք ըսած էին որ մեռեր եմ:

— Ամենուրեք:

— Սակայն իմ տղաքս սուգի չէին մտած:

— Ա՛հ, դքսուհի, գիտես որ արքունիքը ստէպ կ'ճամբորդէ:

շատ քիչ կ'տեսնենք Պ. տ'Ալպէր տը Լիւնը և մեր շարունակ ապրած զանազան մտահոգութեանց մէջ շատ բաներու անտեղեակ կ'մնանք:

— Ձեր Աեհափառութիւնը պէտք չէր հաւտալ մահուանս զոյժին:

— Ինչո՞ւ չէ, ափսո՞ս, մահականացու ենք. միթէ չեն տեսներ որ ես, քու կրտսեր քոյրդ, ինչպէս որ երբեմն կ'ըսէինք, արդէն դէպ 'ի դերեզման կ'ծուիմ:

— Եթէ Ձեր Աեհափառութիւնը հաւտացած էր որ մեռած եմ, պարտաւոր էր զարմանալ իզնէ լուր չառնլուն համար:

— Գքսուհի, մահն երբեմն յանկարծուսս կ'հասնի:

— Ա՛հ, Ձեր Աեհափառութիւնը: Գաղտնիքով բեռնաւորուած հողիները միշտ բացուելու պէտք մը կ'զգան զոր պէտք է զոհ ընել: Յախտեանականութեան համար պատրաստուած օթեաններու մէջ, թղթերու կարգադրութիւնն ալ կ'հաշուեն:

Թագուհին դող ելաւ:

— Ձեր Աեհափառութիւնը — ըսաւ դքսուհին — ստոյգ կերպով պիտի իմանայ իմ մահուանս օրը:

— Ի՞նչպէս:

— Ասան զի Ձեր Աեհափառութիւնը հետեւալ օրը պիտի ընդունի՝ քառապատիկ պահարանի ներքեւ, ինչ որ մնացած են մեր երբեմն ունեցած խորհրդաւոր թղթակցութենէ:

— Միթէ զանոնք չայրեցիր — զոչեց Աննա սոսկումով:

— Ա՛հ, սիրելի թագուհիս — պատասխանեց դքսուհին — մատնիչները միայն արքայական թղթերը կ'այրեն:

— Մասնիչները:

— Այո՛, անտարակոյս. կամ այրելու պէս կ'ընեն, զանոնք կը պահեն կամ կ'ծախեն:

— Աստուած իմ:

— Ընդ հակառակն հաւատարիմները ինամօք կ'պահեն այդպիսի դանձ մը. ապա, օր մը կ'զան իրենց թագուհին դանելու և անոր կ'ըսեն. «Տիկին, կ'պառանամ, կ'զգամ որ հիւանդ եմ, մահուան վտանգ կայ ինձի համար, Ձեր Աեհափառութեան»



գաղանեաց համար յայտնութեան վրանդ կայ . ուստի առէք այս վրանդաւոր թուղթն և դուք անձամբ այրեցէք » :

— Վրանդաւոր թուղթ մը . ո՞րը :

— Իմ մասին մէկ հատ ունիմ , իրաւ , բայց շատ վրանդաւոր է :

— Ո՞ր , գրութի , ըսէ , ըսէ :

— Այն ատմական է . . . որ 1644 օրոստոս 2 թուական կը կրէ , այն ատմական է որով ՚ի Նուաղի-լը-Սէք գնալու կ'ապարկէք ինձ այն սիրական և դժբաղդ տղան տեսնելու համար = Չեր ձեռօրը դրուած են սա խօսքը , տիկին . « Սիրական դժբաղդ տղայ » :

Նոյն պահուն խոր լուծիւն մը տիրեց , թաղուհին անդունդը կ'ընէր , տիկին Շէվրէօղ իր դարանը կ'լարէր :

— Այ՛, դժբաղդ , շատ դժբաղդ — մրմնաց Աննա թաղուհին — ինչ տխուր կեանք վարեց այն հէք որդիս , որ այսպիսի անագորոյն վախճան մ'ունեցաւ :

— Մեռաւ . — գոչեց գրութիւն աշխտ ժիւ այնպէս հետաքրքրութեամբ որու անկեղծութիւնը թաղուհին սրտովին ըմբռնեց :

— Թորացաւ մեռաւ , մեռաւ ընկեցիկ , թառամալ , մեռաւ սիրողի մը կողմէ արուած այն խեղճ ծաղիկներուն պէս զոր սիրութիւնը գրողի մը մէջ թառամելու կ'թողու որպէս զի մարդկան աչքէ անտես ստահէ :

— Մեռաւ — կրկնեց գրութիւն վհատութեան գեմքով մ'որ թաղուհին ու բախտութիւն պիտի պատճառէր եթէ կասկած խառնուելով զայն չմեղմէր : — Ի Նուաղի-լը-Սէք-մեռաւ :

— Անտարակոյս , իր խնամակալին , խեղճ ու պարկեշտ ծառայի մը դիբկը , ուր ինքն ալ երկայն ատեն չապրեցաւ :

— Այդ դիբկին է ըմբռնել . քանի ծանր է այնպիսի սուգ և գաղտնիք մը կրել :

Թաղուհին անհոգ եղաւ և այս երդիծական խորհրդածութիւնը չդիտելու զարկաւ : Տիկին Շէվրէօղ շարունակեց :

— Լաւ ուրեմն , տիկին , քանի մը տարի առաջ տեղեկութիւններ առնելու ելայ , նոյն թիկ ՚ի Նուաղի-լը-Սէք , այն դժբաղդ

մանկան վիճակին վրայ : Իմաց տուին ինձ որ մեռած չկարծուիր այն , և ահա այս պատճառաւ ՚ի սկզբան Չեր Վեհափառութեան ցաւակից չեղայ : Ո՛հ , անտարակոյս , եթէ հաւտայի , երբէք իմ կողմէս այս աղետալի գէպքին ակնարկութիւն մը չպիտի ընէի Չեր Վեհափառութեան իրաւացի վշտաց զրդիւ տալու համար :

— Ա՛րսես թէ որդիս ՚ի Նուաղի մեռած չեն կարծեր :

— Ո՛չ , տիկին :

— Ուրեմն ինչ կ'ըսէին անոր վրայ :

— Ա՛րսէին . . . անշուշտ կ'սխալէին :

— Հոգ չէ , դու ըսէ նայիմ :

— Ա՛րսէին թէ իրկուն մը , 1643ին աստենները , գեղանի և վեհապանծ տիկին մը , ինչպէս որ դիտեր են , թէ և դիմակ և լօգիկ հազեր էր նա , մեծ , անշուշտ շատ բարձր աստիճանի տիկին մը՝ կաթով ճամբուն ծայրն եկեր է , ճիշտ այն ճամբան , գիտէք , ուր նորաստի իշխանէն լուր կ'սպասէի՝ երբ Չեր Վեհափառութիւնը զիս անդ ուղարկելու կ'հաճէր :

— Ապա :

— Եւ թէ խնամակալը տղան այս տիկնոջ քովը տարեր էր :

— Ապա :

— Թէ հետեւալ օրը խնամակալ և տղայ նոյն քաղքէն ելեր զացիր էին :

— Ա՛տենես որ այդ խօսքին մէջ ճշմարիտ բան մը կայ , վասն զի իրօք , խեղճ տղան այն կայծակներու մէկէն մեռաւ որով , մինչև եօթն տարին , ըստ բժշկաց , տղոց կեանքը թեւէ մը կասուած է :

— Ո՛հ , Չեր Վեհափառութեան ըսածը բուն ճշմարտութիւն մ'է . տիկին , ոչ ոք այս բանս քաջ ևս դիտէ քան թէ դուք : Բայց զարմացէք այն այլանդակութեան վրայ . . . :

— Ինչ կայ դարձեալ — մտածեց թաղուհին :

— Այն անձն որ այս ծանօթութիւններն ինձ բերաւ , այն որ տղուն առողջութեան վրայ լուրեր առնելու պացեր էր , այն անձը . . . :

— Միթէ ուրիշ մէկու մը հաղորդե՞ր էիր այդ հոգը : Ո՛հ , գրութի :



— Չեր Աւհափառութեան պէս, ինձի պէս համր անձ մ'էր, դիցուք թէ ես ինքս էի, տիկին: Այս անձը, ըսի, քիչ մ'ատեն Գուրէն մնալով . . . :

— Գուրէն:

— Ճանչեց խնամակարն ու սղան, ներեցէք, կարծեց զանոնք ճանչել, երկուքնին ալ ուրախ, երջանիկ և քաջառողջ կեանք մը կ'վարէին, մին իր թարմ ծերութեամբը, միւսն իր ծաղիկ երիտասարդութեան մէջ: Այս պարապայիս վրայ, կրնաք դատել թէ պտըտած ձայնն ինչ արժէք ունին, այնուհետև հաւատարմութիւն ցոյց տուէք որ և է մէկու աշխարհիս վրայ: Բայց Չեր Աւհափառութեան ձանձրոյթ կ'պատճառեմ: Ա՛հ, այդ չէ իմ դիտարութիւնս, և ձեզնէ հրաժեշտ պիտի խնդրեմ իմ յարգական անձնութեանս հաւատիքը կրկնելէն ետև:

— Սպասէ, դքսուհի, քիչ մը քու վրադ խօսինք:

— Ի՞նչ վրայ, սի, տիկին, ձեր նայածքը մինչև այդ տեղ մի իջեցնէք:

— Ինչո՞ւ համար ուրեմն: Միթէ իմ ամենէն հին բարեկամուհիս չեմ: Միթէ քէն ունիս ինձի դէմ, դքսուհի:

— Ե՛ս, Աստուած իմ, ի՞նչ պատճառաւ: Միթէ Չեր Աւհափառութեան մօտ պիտի գայի՞ եթէ ձեզի դէմ նեղութեան պատճառ մ'ունենայի:

— Դքսուհի, տարիները մեր դիտէն կ'անցնին. պէտք է սպառնացող մահուան դէմ իրարու միանանք սերտիւ:

— Տիկին, այդ անուշ խօսքերով զիս սաստիկ շնորհապարտ կ'ընէք: Միթէ Չեր Աւհափառութիւնը կ'յիշէ՞:

— Միշտ . . . դքսուհի, բարեկամութեան ապացոյց մը:

— Ա՛հ, տիկին, իմ բոլոր կեանքս Չեր Աւհափառութեան է:

— Ապացոյցն ո՞ւր է, նայինք:

— Ի՞նչ ապացոյց:

— Իզնէ բան մը խնդրէ:

— Ինչդրե՞մ . . . :

— Ա՛հ, գիտեմ որ ամենէն անշահախնդիր, մեծ և անկեղծ թիբո մ'ունիս:

— Շատ մի գովէք զիս, տիկին — ըսաւ դքսուհին մտատանջ:

— Երբէք չպիտի գովեմ քեզ որչափ որ արժանի ես:

— Տարիքը, դժբաղդութիւնները շատ կ'փոխեն մարդս, տիկին:

— Աստուած ձայնդ լսէ, դքսուհի:

— Ինչպէ՞ս:

— Այո՛, առջի դքսուհին, այն գեղանի, հպարտ, պաշտեալ Շէվրէօղ ապերախտութեամբ ինձ պիտի պատասխանէր. «Չեզնէ բան մը չեմ ուզեր»: Օրհնեալ լինին ուրեմն աղէտքն, եթէ հասան, քանի որ քեզ փոխած պիտի լինին, և կարելի է որ այժմ ինձ պատասխանես. «Ա՛յ ընդունի՛մ»:

Դքսուհին ակնարկն ու ժպտն ամոքեց. հմայուած էր և այլ ևս միտքը չէր ծածկեր:

— Խօսէ, սիրելիս — ըսաւ թաղուհին — ի՞նչ կ'ուզես:

— Ուրեմն պէտք է որ յայանեմ . . . :

— Առանց վարանման:

— Լաւ ուրեմն, Չեր Աւհափառութիւնն անպատում, անկարելի ուրախութիւն մը կրնայ պատճառել ինձ:

— Ի՞նչ է նայինք — ըսաւ թաղուհին, մտատանջութենէ փոքր ինչ պաղելով:

— Բայց, ամէն բանէ առաջ իմ բարի Շէվրէօղ, յիշէ՛ որ այժմ որդւոյս իշխանութեան ներքեւ եմ ինչպէս երբեմն ամուսնոյս իշխանութեան ներքեւ էի:

— Սիրելի թաղուհիս, ձեզ պիտի խնայեմ:

— Զիս, ինչպէս երբեմն, Աննա անուանէ, զեղեցիկ երիտասարդութեան անուշ մէկ արձաղանքը պիտի լինի:

— Լաւ, իմ յարգելի տիրուհիս, սիրեցեալ Աննաս . . . :

— Միթէ միշտ սպանիական լեզուն կ'խօսին:

— Միշտ:

— Ուրեմն սպանիական լեզուաւ խնդրէ:

— Աւասիկ խնդրո՞ւ. պատիւ բրէք ինձ քանի մ'օր Տանքիէք քաջ մնալու:

— Այդ է միայն խնդիրդ — զոչեց ապշած թաղուհին:

— Այո՛:



— Միայն այդչափ :

— Աստուած իմ, միթէ չէք հաստար որ ասով ամենամեծ բարիքը կ'ընդրեմ ձեզնէ : Եթէ այդպէս է, ըսել է թէ այլ ևս չէք ճանչեր զիս : Միթէ կ'ընդունիք :

— Այո՛, բոլոր սրտովս :

— Ո՛հ, շնորհակալ եմ :

— Եւ երջանիկ պիտի լինիմ — շարունակեց թաղուհին վարանմամբ — եթէ իմ ներկայութիւնս կ'ընայ քեզի օղտակար լինիլ :

— Օղտակար — զոչեց դքսուհին ծիծաղելով : — Ո՛հ, ո՛չ, ո՛չ, ախորժելի, անուշ, զմայլելի, այո՛, հազար անգամ այո՛ կ'ըսեմ : Ուրեմն կ'իտասանա՞ք :

— Կ'երդնում :

Գքսուհին թաղուհւոյն զեղեցիկ ձեռքը բռնեց և համբոյրներով ծածկեց :

— Ըստ ինքեան, բարեսիրտ կին մ'է — մտածեց թաղուհին — և . . . մտքով վեհանձն :

— Չեր ԱԵՀԱՓԻԱՌԹԻՆՆԸ — վրայ բերաւ դքսուհին — կը հաւանի՞ ինձ տասն հինգ օր տալու :

— Այո՛, անտարակոյս : Բայց ինչո՞ւ համար :

— Ասան զի — ըսաւ դքսուհին — գիտնալով որ երեսէ ընկած եմ, Տանրիէրը նորոգելու համար պէտք ունեցած հարիւր հազար սկուտն ոչ ոք ինձ փոխ տալու կ'հաճէր : Բայց երբ իմանան որ Չեր ԱԵՀԱՓԻԱՌԹԻՆՆԸ ընդունելու համար պիտի նորոգեմ Տանրիէրը, Բարիզի բոլոր դրամատէրները պիտի փութան լիաձեռն գրամ տալ ինձ :

— Ա՛հ — ըրաւ թաղուհին զլուխը մեղմիկ շարժելով գիտակցութեամբ — հարիւր հազար սկուտ, հարիւր հազար սկուտ պէտք է Տանրիէրը նորոգելու համար :

— Այդչափ :

— Եւ ո՛չ ոք կ'հաճի քեզի այդ գումարը փոխ տալու :

— Ոչ ոք :

— Ես պիտի փոխ տամ, ես, եթէ կ'ուզես, դքսուհի :

— Ո՛հ, չպիտի համարձակիմ ընդունելու :

— Իրաւունք չունիս :

— Իրա՞ն :

— Թաղուհւոյ խօսքս խօսք . . . Հարիւր հազար սկուտ, ճշմարիտը մեծ բան մը չէ :

— Այնպէս կարծէք :

— Այո՛ : Ա՛հ, դիմե՛մ որ դաղանապահութեանդ արժածը բնաւ պահանջած չես : Գքսուհի, սա սեղանն ինձի մօտեցուր, Պ. Գօլպէրի վրայ թուղթ մը քաշեմ, ո՛չ, Պ. Ֆուքէի վրայ, որ ստելի վեհանձն մարդ մ'է :

— Միթէ կ'վճարէ՞ :

— Եթէ չվճարէ, ես պիտի վճարեմ. բայց եթէ մերժէ, առաջին անգամ մերժած պիտի լինի :

Թաղուհին զրեց թուղթը, զայն դքսուհւոյն տուաւ, և խնդու-թեամբ զանի համբուրելէն ետև՝ ճամբեց :

Զ

ՃԱՆՏԸ ԼԱ ՓՕՆԳԷՆՆ ԻՆՉՊԷՍ ԸՐԱՒ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԱՌԱԿԸ

Բոլոր այդ գաւերը կ'հաւանին. մարդկային միտքը՝ որ այնքան բազմապատիկ է իր յայտնութեանց մէջ, կրցաւ համարձակ բացաւիլ մեր պատմութեան նախորդ երեք զլուխներուն մէջ :

Պարելի է որ քաղաքակաւանութիւն և դատ խօսինք մեր պատրաստելիք պատկերին մէջ, բայց անոնց զսպանակներն այնքան թատեղուն պիտի լինին, որ միայն ծաղիկներն ու նկարները պիտի տեսնուին, ճիշտ այն արտաբերութեաններուն այէս, ուր տեսարան կ'ենէ միայն կոթող մ'որ իր կմախքին մէջ պահուած տղու մը վտիտ թևերուն և փոքրիկ ոստերուն շարժմամբը կ'քալէ :

Աէն-Մանսէ կ'դառնանք, ուր վերատեսուչը իր սովորութեան համեմատ՝ եպիկուրեան ընտրեալ ընկերները կ'ընդունի :



Բաւական ժամանակէ՛ ՚ի վեր տան տէրը փորձանքի ենթակայ գտնուեցաւ : Ամէն ոք պաշտօնէին ձախորդութենէ կ'զգածուի : Այլ ևս մեծ և յիմարական ընկերութիւններ չկան : Գրամական խնդիրը Ֆուքէի համար պատրուակ մ'ենդաւ , և երբէք , ինչպէս որ կ'ըսէ Կուրվիլ ուշմտութեամբ , այսպիսի պատիր պատրուակ մը չէր տեսնուած . զրամի խնդրոյն նշոյլն անգամ չկար :

Պ. Վադէլ՝ տան համբաւն անեղծ պահելու կ'նայի : Սակայն պարտիզպանները , որ մառանները կ'հոգան , վնասարեր յապաղման համար կ'զանդատին : Սպանիոյ ղինին սուաքողները ստէպ թողթեր կ'քաշին և ոչ ոք զանոնք կ'վճարէ : Նորմանտիոյ եղերքը վերատեսչին համար աշխատող ձկնորսները կ'հաշուեն որ եթէ քրենց պահանջը ստանան , պիտի կարենան ծովային դործերէ քաշուիլ : Ձկները՝ որ վերջէն՝ Վադէլի մահը պիտի պատճառեն , բնաւ չեն հասնիր :

Սակայն՝ սովորական ընդունելութեան օրը , Ֆուքէի բարեկամները սովորականէն աւելի բազմութեամբ կ'յաճախեն իր տունը . Կուրվիլ և Ֆուքէ արբան զրաւական խնդրոյ վրայ կ'խօսին , այսինքն արբան Պ. Կուրվիլէն քանի մ'ոսկի՝ փոխ կ'առնու , Բէլիսօն տաքերը ծալած նստեր է , և ճառի մը յորդորակը կ'աւարտէ , որով Ֆուքէ Բարլմէնդի ատենանը պիտի բանար :

Եւ այս ճառը հրաշակերտ մ'է , վասն զի Բէլիսօն իր բարեկամին համար կ'յօրինէ զայն , այսինքն , անոր մէջ կ'բացատրէ ինչ որ իրօք ինքն իրեն համար չպիտի գրէր : Քիչ ատենէն զիւրին ոտանաւորներու վրայ վիճաբանելով՝ պարտիզին խորէն կ'զան Լօրէ և Լա Ֆօնդէն :

Պատկերհաններն ու երաժիշտներն ըստ կարգի սեղանատան կողմը կ'դիմեն : Երբ ժամն ութ զարնէ պիտի ընթրիք ընեն :

Մատակարարը բնաւ կերակուրը չուշացներ : Ժամն եօթն ու կէս է , ամենուն ակործակը բաւական բացուած կ'երևի :

Երբ բոլոր հիւրերը կ'միանան , Կուրվիլ շտապ Բէլիսօնի մօտ կ'երթայ , անոր մտամտօքը կ'ցրուէ և սրահիկ մը տանելով զանի զունները կ'ոտէ :

— Լաւ ուրեմն — կ'ըսէ — Ի՞նչ կայ նոր :  
Բէլիսօն իր մտացի և անուշ զրուխը վեր առնելով ,  
— Ի՞նչ մօրաքեռս զացի և անորմէ քսան հինգ հաղար Ֆրանք փոխ առի — ըսաւ : — Աւասիկ զումարը , զանձային մուրհակի ձեռով :

— Լաւ — պատասխանեց Կուրվիլ — ուրեմն առաջին վճարման համար միայն հարիւր իննսունը հինգ հաղար կ'պակսի :

— Ի՞նչ բանի վճարքն է այդ — հարցուց Լա Ֆօնդէն այնպիսի կերպով մ'որպէս թէ ըսէր . « Պարուխը կարգացլէք » :

— Ահա ցնդած մը — ըսաւ Կուրվիլ : — Ի՞նչ , դու մեզի իմացուցիր որ Գօրպէյի փոքրիկ հողը Պ. Ֆուքէի մէկ պորտապահանջին ձեռօք պիտի ծախուի , դու առաջարկեցիր մեզ որ Եպիկուրոսի բոլոր բարեկամները հանդանակութիւն մը բանան , դու ըսիր մեզի որ Շալօ-Թիէրի տանդ մէկ անկիւնը պիտի ծախէիր հանդանակութեան մասնակից գտնուելու , և այսօր կ'զաս մեզի Պարցնելու . « Ի՞նչ բանի վճարք » :

Ընդհանուր ծիծաղով մ'ընդունուեցաւ այս յանդիմանութիւնն որ Լա Ֆօնդէնն ամօթապարս թողուց :

— Ներէ՛ , ներէ՛ — ըսաւ — ստոյգ է , չէի մոռցած : Ո՛հ , ո՛չ , միայն . . . :

— Միայն չես յիշեր հիմակ — պատասխանեց Լօրէ :

— Այս է ճշմարտութիւնը : Իրօք իրաւունք ուի : Մոռնալու և չյիշելու մէջ , մեծ տարբերութիւն մը կայ :

— Ուրեմն — յարեց Բէլիսօն — դու ալ այդ թանկը պիտի բերես , ծախած հողիկ զինը :

— Ծախած , ո՛չ :

— Միթէ հողդ չծախեցիր — հարցուց Կուրվիլ զարմանօք , վասն զի բանաստեղծին անշահախնդրութիւնը զիտէր :

— Աինս չուղեց ծախել — պատասխանեց այս վերջինը :  
Նոր ծիծաղներ :

— Սակայն Շալօ-Թիէրի գացիք էիր այդ բանին համար — ըսին անոր :  
— Իբաւ է , և ձիով գացի :



- Խեղճ՝ ժան :
- Ութ տարբեր ձիեր , հողիս բերանս եկաւ :
- Պատուական բարեկամ . . . և միթէ այն տեղ հանդստացար :
- Հանգստանամ : Ո՛հ , ի՛նչ աղ որ հանդստութիւն . այն տեղ քաւական դործ ունեցայ :
- Ի՞նչ դործ :
- Աինս կարեր կարեր էր այն մարդուն հետ որու հողս ծախել կ'ուզէի : Այս մարդն իր խոստումը չբռնեց , և զինքը մնամարտութեան կոչեցի :
- Շատ լաւ — բաւ Լօրէ — և միթէ մնամարտեցար :
- Ա՛րեւի թէ ո՛չ :
- Ուրեմն ոչ ինչ չդիտես :
- Ո՛հ , կինս և իր աղակաւանները դործին մէջ մտան . քառորդի չափ սուրը ձեռքս բռնած կեցայ , բայց չվերաւորուեցայ :
- Հասցա հակառակորդ :
- Եւ ոչ հակառակորդս . ասպարէզ չէր իջած :
- Սքանչելի՛ է — դոչեցին ամէն կողմէ — անտարակոյս բարկացած ես :
- Չափազանց բարկացայ , հարբուխ մ'առի . տուն դարձայ և կինս ինձի հետ կոխ ըրաւ :
- Իրան :
- Իրաւ որ : Գլխուս հաց մը նետեց , խոշոր հաց մը :
- Հասցա դու ի՛նչ ըրիր :
- Ես բոլոր սեղանն անոր և հիւրերուն վրայ տապալեցի . ետքը ձի հեծայ և ահա աստ եկայ :
- Ոչ որ կարող էր ծա՛ր կենալ այս կատակաղիցազնական բացատրութեան առջև : Երբ ծիծաղներու մըրիկը փոքր ինչ հանդարտեցաւ ,
- Միթէ բոլոր բերածդ այդ է — ըսին Լա Փօնդէնին :
- Ո՛հ , ո՛չ , պատուական խորհուրդ մ'ընկաւ միտքս :
- Ըսէ :
- Միթէ դիտած էք երբէք որ Ֆրանսայի մէջ ծաղրածու քերթումներ շատ կ'ընտանին :

- Անտարակոյս — պատասխանեց ընկերութիւնը :
- Եւ սակայն — շարայարեց Լա Փօնդէն — քիչ կ'ուպուին :
- Օրէնքը խիտ են այս մասին , ճշմարիտ է :
- Լաւ ուրեմն , հազուադիւտ ասպանքը սուղ ասրանք է — ըսի մտքովս : — Ուստի սկսայ չափազանց վատշուէր փոքրիկ բանաստեղծութիւն մը յօրինել :
- Հօ , հօ , սիրելի բանահիւս :
- Չափազանց զուարթ :
- Հօ , հօ :
- Չափազանց շնական :
- Արճ , կրճ :
- Ինչ լիտի բառեր որ դտայ անոր մէջ գործածեցի — շարունակեց բանաստեղծը պաղութեամբ :
- Ամէն որ ծիծաղելէն կ'աթեւ , մինչդեռ այս բարեսիրտ բանահիւսն այսպէս իր ասպանքին նշանը կ'ընէր :
- Եւ — շարունակեց նա — դուն գործեցի Պօկասի , Արէդէնի և այս տեսակին մէջ ուրիշ գրողէտներուն բոլոր ըրածները գերազանցել :
- Տէր Աստուած — դոչեց Բէլիսօն — բայց դեհէնին արժանի սխտի լինի :
- Այդպէ՞ս կարծես — հարցուց Լա Փօնդէն պարզմտութեամբ — կ'երդնում որ այդ բանն ինձի համար չըրի , այլ միայն Պ. Փուքէի համար :
- Այս ծաղրաբանական վերջաբանը հանդիսականաց դոհունակութեան չափը լեցուց :
- Եւ այս դրո՛ւստքն ութ հարիւր Փրանքի ծախեցի առաջին տխրը — դոչեց Լա Փօնդէն ձեռները շփելով : — Բարեսրտաշտութեան գրուածներն ասոր կէս չինուիք կ'աւանտն :
- Լաւագոյն էր — բաւ Ատրվել ծիծաղելով — երկու բարեսրտաշտական գրուածներ շարագրել :
- Շատ երկայն կ'ընէր և ոչ այնչափ դրօսալի — պատասխանեց Լա Փօնդէն հանդարտութեամբ — իմ ութ հարիւր Փրանքս սա փոքրիկ պարկին մէջն են , ահա ես զանոնք կ'ընծայեմ :



Եւ իրօք իր նուէրն եպիկուրեանց դանձապահին ձեռքը յանձնեց՝  
Ապա եկաւ կարգը Լօրէին, որ հարիւր յիսուն ֆրանք տուաւ .  
միւսներն ալ իրենց զրոյանը սլարսեցին : Ընդ ամենը քառսուն  
հաղար ֆրանք հաւաքուած էր դանձանակին մէջ :

Երբէք ասկից աւելի առատասիւրտ նուէրներ երկնային կշիռ-  
ներու մէջ չհնչեցին, ուր յիմաստիութիւնը բարի սիրտերն և լաւ  
խորհուրդները կ'կշռէ կեղծաւոր բարեպաշտներու շինծու ստակ-  
ներու հետ :

Սկուաները կ'հնչեցնէին երբ վերատեսուչը ներս մտաւ կամ  
լաւ ևս է ըսել սրահին մէջ սահեցաւ : Ամէն ինչ լսեր էր :

Տեսնուեցաւ այս մարդը, որ այնքան միլիօններ շարժեր էր,  
այս հարուստն որ ամէն զուարճութիւն և պատիւ հատուցելու էր,  
այս ահագին սիրտը, այս բերրի զլուխը, որ իբրև երկու ան-  
կուշտ բովեր աշխարհիս առաջին թագաւորութեան նիւթական և  
բարոյական հիւթը լրափեր էր, անսնուեցաւ Ֆուքէն նոյն միջոցին  
որ աշերն արատաւալից սնցաւ դրան սեմէն և իր նուրբ ու սպի-  
տակ մատերն ոսկոյն և արծաթին մէջ մ'էց :

— Աննշան ողորմութիւն — ըսաւ նա սքստաշարժ և այլայլած  
ձայնով մը — իմ պարսպ քսակիս ամենէն պղտիկ ծալքին մէջ  
պիտի աներևոյթ լինիս, բայց դու մինչև եղբր լեցուցիր ինչ որ  
երբէք մէկը չպիտի հատուցնէ, այս է իմ սիրտս : Ընորհակալ  
եմ, բարեկամներս, շնորհակալ եմ :

Եւ որովհետև բոլոր ներկայ գանուողները չէր կրնար գրկել,  
որոնք քիչ մը կ'լային, թէ և փիլիսոփայ էին, գրկեց Լա Փօն-  
դէնն անոր ըսելով .

— Խեղճ մարդ, որ կնկանդ կողմէ ծեծ կերար և խոստովա-  
նահօրդ կողմէ դժոխոց կրակին դատապարտուելու ես ինձի համար :

— Լաւ, բան մը չէ — պատասխանեց քերթողը — թող սլար-  
տատէրներդ երկու տարի սպասեն, ուրիշ հարիւր հատ վէպ պի-  
տի շինեմ, որ երկու տպագրութիւն հաշուելով իւրաքանչիւրին,  
պարտքդ պիտի վճարեն :

Է

ԼԱ ՓՕՆԴԷՆ ԲԱՆԱԿՑՈՂ

Ֆուքէ Լա Փօնդէնի ձեռքը սեղմեց սիրուն սրտի վեղմամբ :

— Սիրելի քերթող — ըսաւ անոր — հարիւր հատ վէպ ևս  
չինէ մեզի համար, ոչ միայն իւրաքանչիւրին բերելէք քառսուն ոս-  
կոյն նկատմամբ, այլ նաև մեր լեզուն հարիւր հաշակերտով ճո-  
խացնելու համար :

— Հօ, հօ — ըսաւ Լա Փօնդէն ընդմիջելով — սէտք չէ կար-  
ծել որ միայն այս խորհուրդն և քառսուն ոսկին բերի սլարոն վե-  
րատեսչին :

— Ո՛հ, բայց — գոչեցին ամէն կողմէ — Լա Փօնդէն այսօր  
չատ դրամագլուխ ունի :

— Օրհնեալ լինի այդ խորհուրդն եթէ ինձ մէկ երկու միլիօն  
ֆրանք բերէ — ըսաւ Ֆուքէ զուարթաբան :

— Ճիշտ այդպէս — պատասխանեց Լա Փօնդէն :

— Հո՛ւս, շո՛ւս — պատասխանեց ընկերութիւնը .

— Զոյո՛շ եղի՛ր — ըսաւ Բէլիսօն Լա Փօնդէնի ականջին —  
մինչև ցարդ մեծ յաջողութիւն ունեցար, նպատակէն անդին մի՛  
նետեր սլաքը :

— Ո՛հ, Պ, Բէլիսօն, և դու որ ճաշակի տէր մարդ ես, ա-  
մենէն առաջ դու պիտի հաւանիս ինձ :

— Խնդիրը միլիօններուն վրայ է — ըսաւ Աուրվիլ :

— Այս տեղ մէկ ու կէս միլիօն ֆրանք ունիմ, Պ, Աուրվիլ :

Եւ իր կուրծքը զարկաւ :

— Սատանան տանի Շաղօ-Բիլէրիի Աասքօնը — սլուաց Լօրէ :

— Պէտք չէր բնաւ զրպանին դալիլ — ըսաւ Ֆուքէ — այլ ըղեղին :

— Ահա — յարեց Լա Փօնդէն — սլարոն վերատեսուչ, դու  
ընդհանուր տեղակալ չես, այլ քերթող մը :



— Ճշմարիտ է — պուացին Լօրէ, Գօնրար և անդ դանուող բոլոր գրադէաները :

— Ըսի որ քերթող մը, պատկերհան մը, արձանագործ մ'ես և արուեստից ու գիտութեանց բարեկամ մը. բայց դու ինքնին խոստովանէ որ դատաւորի պատմութեան կրելու մարդ չես :

— Ա'խոստովանիմ — պատասխանեց Պ. Փութէ ժպտելով :

— Եթէ քեզ Ակադեմիայի անդամ ընէին պիտի մերժէիր, այնպէս չէ :

— Կարծեմ թէ պիտի մերժէի, Ակադեմիային անդամները թող չգժկամակին :

— Լաւ ուրեմն, ինչո՞ւ համար Ակադեմիայի անդամ լինել չես ուզեր և կ'երթաս Բարլմէնդի անդամ լինելու :

— Հօ, հօ — ըսաւ Բէլիսօն — քաղաքականութեան վրայ կը խօսինք :

— Ա'հարցնեմ — շարունակեց Լա Փօնդէն — եթէ դատաւորի պատմութեանը կ'վայէ՞ թէ ոչ Պ. Փութէի :

— Խնդիրը պատմութեանին վրայ չէ — պատասխանեց Բէլիսօն ընկերներուն ծիծաղէն գժկամակելով :

— Ընդ հակառակն պատմութեանին վրայ է — ըսաւ Լօրէ :

— Հանէ պատմութեանն ընդհանուր տեղակալէն — ըսաւ Գօնրար — և Պ. Փութէն կ'դանենք, և այս բանէս չենք զանդատիր, բայց որովհետեւ առանց պատմութեանի ընդհանուր տեղակալ չկայ, ահա կ'յայտարարենք, Լա Փօնդէնի կարծեաց համեմատ՝ որ արեւոյս պատմութեանը խրատիլակ մ'է :

— Tugiant risus leporesque — ըսաւ Լօրէ :

— Ծիծաղներն ու շնորհներն — ըսաւ գիտուն մը :

— Ես — ըսաւ Բէլիսօն ծանրութեամբ — այդպէս չեմ թարգմաներ lepores բառը :

— Եւ ի՞նչպէս կ'թարգմանես — հարցուց Լա Փօնդէն :

— Ահա այսպէս կ'թարգմանեմ. « Կապաստակները կ'փախին Պ. Փութէն տեսնելով » :

Քրքիջներ, որոց մասնակից եղաւ վերատեսուչը,

— Ինչո՞ւ համար նապաստակներ ըսիր — աւարկեց Գօնրար վերաւորուելով :

— Վասն զի նապաստակ պիտի լինի այն որ չպիտի ցնծայ Պ. Փութէն իր ատենական զօրութեան ստորոգելեաց մէջ տեսնելով :

— Հօ, հօ — մրմնային բանաստեղծները :

— Quo non ascendam — ըսաւ Գօնրար — անկարելի կ'երևի ինձ ատենակալի մը պատմութեանը :

— Եւ ինձի ալ առանց այդ պատմութեանին — ըսաւ յամառ Բէլիսօն — Կուրվիլ, դու ի՞նչ կ'ըսես :

— Ես կարծեմ թէ պատմութեանը լաւ է — պատասխանեց այս վերջինը — բայց կ'մտածեմ նաև որ մէկ ու կէս միլիօն ֆրանք պատմութեանին լաւագոյն է :

— Ես ալ Կուրվիլի կարծիքէն եմ — որչեց Փութէ, իր կարծեօրը վիճարանութեան վերջ տալով, որ 'ի հարկէ միս կարծեաց վրայ պիտի ախրատուի :

— Մէկ միլիօն ու կէս — քրթմնջեց Բէլիսօն — անօրէն : Հնդկական առակ մը գիտեմ . . . :

— Պատմէ ինձ — ըսաւ Լա Փօնդէն — ես ալ պէտք է որ գիտնամ :

— Պատմէ, պատմէ :

— Արիայն պատեան մ'ունէր — ըսաւ Բէլիսօն — երբ թշնամիներն իրեն սպառնային՝ անոր մէջ կ'ապաւինէր : Օր մը մարդ մը անոր ըսաւ. « Ամառն այդ տանդ մէջ շատ կ'ապաւնաս, և չես կրնար բոլոր շնորհքդ ցոյց տալ : Ահա օձն որ քեզի մէկ ու կէս միլիօն պիտի վճարէ պատենիդ համար » :

— Լաւ — ըսաւ վերատեսուչը ծիծաղելով :

— Ապա՞ — ըսաւ Լա Փօնդէն, աւելի ուշադիր լինելով առակին քան թէ բարոյական խրատին :

— Արիայն իր պատեանը ծախեց և մերկ մնաց : Անդ մը զայն տեսաւ, անօթի էր, անոր երթկամութիւնը խրատեցեց կտուցի հարուածով մը և զայն լախեց :

— O muthos deloi . . . — ըսաւ Գօնրար :

— Պ. Փութէ որչափ լաւ պիտի ընէ եթէ էր դատաւորական պատմութեանը պահէ :

Լա Փօնդէն այս խրատն իբրև լուրջ ասացուած ընդունեց :



- Կ'մոռնաս Էշիլը — ըսաւ իր կատակաբանին :
- Ի՞նչ ըսել կ'ուզես :
- Ճաղատն Էշիլը :
- Վերջը :
- Էշիլը, որուն գանկէն իբր քար մը բռնեց անդղ մը, թե-  
րևս քու անդղդ, կրիաներու սիրող, և այս գանկին վրայ նետեց  
իր պատենին մէջ կղկտած կրիայ մը :
- Է՛հ, Աստուած իմ, Լա Ֆօնդէն իրաւունք ունի — վրայ  
բերաւ Ֆուքէ մամսալով — ամէն անդղ՝ երբ կրիաներու կ'տենչայ,  
գիտէ անոնց պատեանը հեշտիւ խորտակել. երջանիկ են ուրեմն  
այն կրիաներն որու պատենին համար մէկ ու կէս միլիօն կ'վճարէ  
օձ մը : Թո՛ղ ինձ վեհանձն օձ մը բերեն առակիդ օձին պէս,  
Բէլիսօն, և ես անոր իմ պատեանս կ'տամ :
- Rara avis in teris — գոչեց Գօնրար :
- Եւ սե կարասի ի նման, այնպէս չէ — յարեց Լա Ֆօնդէն :
- Լաւ ուրեմն, այո՛, ես ալ բոլորովին սե և հազուադիւր թըր-  
չուն մը գտայ :
- Մի՛թէ իմ տեղակալութեանս պաշտօնին համար գնորդ մը  
գտար — գոչեց Ֆուքէ :
- Այո՛, պարոն :
- Բայց պարոն վերատեսուչն երբէք չըսաւ թէ պաշտօնը ծա-  
խելու միտք ունի — վրայ բերաւ Բէլիսօն :
- Ներէ՛ ինձ, դու ինքնին այդպէս խօսեցար — ըսաւ Գօնրար :
- Ես ալ վկայ եմ — ըսաւ Կուրվիլ :
- Իր ինձ ըսած աղոթ խօսքերը բռնեք կեցեր է — ըսաւ Ֆու-  
քէ ծիծաղելով : — Լա Ֆօնդէն, նայինք, ո՞վ է այն գնորդը :
- Բոլորովին սե թուչուն մը, Բարլմէնդի մէջ խորհրդական  
մը, լաւ մարդ մը :
- Ի՞նչ է անունը :
- Վանէլ :
- Վանէլ — գոչեց Ֆուքէ — Վանէլ, այս ամուսինն է . . . :
- Ճիշտ, այո՛, անոր ամուսինն է, պարոն :
- Այն սիրական մարդն է ուրեմն — ըսաւ Ֆուքէ հետաքրքր-  
— քնդհանուր դատաւորապէս կ'ուզէ լինիլ :

- Ինչ որ ես այն կ'ուզէ լինիլ — ըսաւ Կուրվիլ — և պիտի  
ընէ ինչ որ դու ըրիր :
- Ո՛հ, այդ բերկրաօրիթ լուր է. պատմէ նայինք գործը,  
Լա Ֆօնդէն :
- Այս շատ պարզ բան է : Ատեն ատեն զինքը կ'տեսնեմ :  
Երբեմն անոր կ'հանդիպիմ. Պասդիլլի հրատարակն ասդին անդին  
կ'չըջէր նա, ճիշտ այն միջոցին որ Սէն-Մանտէ դալու համար  
կառք պիտի բռնէի :
- Անտարակոյս՝ իր կինը կ'ըտեսէր — ընդմիջեց Լօրէ :
- Ո՛հ, Աստուած իմ, ո՛չ — ըսաւ Ֆուքէ պարզապէս — նա-  
խանձոտ չէ :
- Ուստի ինձի մօտեցաւ, գրկեց, Ի՞նչ-Սէն-Ֆէլիքէ գինե-  
տունը տարաւ զիս և իր ցաւերն ինձ յայտնեց :
- Յաւեր ունի :
- Այո՛, իր կինը փառասիրութիւնը կ'գրգռէ :
- Եւ ի՞նչ ըսաւ քեզ . . . :
- Ըսաւ որ Բարլմէնդի մէջ պաշտօնի մը խօսք ըրեր են ի-  
րեն, թէ Պ. Ֆուքէի անունն արտասաներ են, թէ՛ այն ատենէն  
վեր՝ տիկին Վանէլ ընդհանուր տեղակալուհի կոչուելու կ'երա-  
զէ, և ամէն գիշեր կ'մեռնի երբ շերագէ :
- Սատանայ :
- Հէ՛ք կին — ըսաւ Ֆուքէ :
- Կեցիք. Գօնրար կ'ըսէ ինձ միշտ որ գործ տեսնել չգի-  
տեմ. պիտի տեսնէք թէ այս գործն ինչպէս կատարեցի :
- Նայինք :
- « — Գիտես, ըսի Վանէլին, որ Պ. Ֆուքէի վարած պաշտօ-  
նին պէս պաշտօն մը շատ սուղ է :
- « — Վեր ՚ի վերոյ որչափ կարծես, ըսաւ նա :
- « — Պ. Ֆուքէն՝ մէկ միլիօն եօթ հարիւր հազար Փրանք տուին  
մերծեց :
- « — Իմ կինս, պատասխանեց Վանէլ, շուրջ մէկ միլիօն չորս  
հարիւր հազար Փրանք հաշուեց :
- « — Անխի՛կ, հարցուցի անոր :



— Այո՛ , Կիլէնի մէջ կալուածք մը ծախեց , և հողը դրամ բրաւ Ծ :

— Անմիջապէս այդ գումարն ստանալ տղոր քան մ'է — ըսաւ Փութէ արբան վճռապէս , որ դեռ բերանը չէր բացած :

— Կայէ՛ սա խեղճ Վանէլի կնկան — մըմուսց Փութէ :

Բէլիսօն ուսերը բարձրացուց :

— Սաղայէլ մ'է — ըսաւ նա ցած ձայնով Փութէի ականջին :

— Ճիշտ այդպէս . . . աղոր դործ մը պիտի լինի եթէ այն սաղայէլին ստակը դործածեմ՝ հրեշտակի մ'ինձի համար կրած փետր գարմանելու համար :

Բէլիսօն զարմանօք նայեցաւ Փութէին , որու դազափարները կը հաստատուէին , նոյն ժամէն սկսեալ , նոր նպատակի մը վրայ :

— Լաւ ուրեմն — հարցուց Լա Փօնդէն — ինչ կ'ըսէք իմ բանակցութեանս :

— Սքանչելի է , սիրական քերթող :

— Այո՛ — ըսաւ Կուրվիլ — բայց ձի մը գնելու փափաքող մարդը սանձի ստակն անգամ երբեմն չունենար :

— Եթէ Վանէլի ըսածն իրօք ընդունելու ըլլանք թերևս խօսքէն դառնայ — շարունակեց Փութէ արբան :

— Չեմ կարծեր — ըսաւ Լա Փօնդէն :

— Ասալի՛ դիտես :

— Վասն զի իմ պատմութեանս վախճանը չդիտես :

— Ա՛հ , թէ որ վերջը կայ , ինչո՞ւ համար ուրիշ խնդիրներու մէջ կ'զբոյժուի :

— Semper adventum (միշտ պիտի գայ) այնպէս չէ՞ — ըսաւ Փութէ մեծ իշխանի մը ձայնով որ խժգուն բանից մէջ կ'տարուբերէր :

Լատինադէտները ծափ զարկին :

— Իմ խօսքիս վախճանն այս է — դոչեց Լա Փօնդէն — որ Վանէլի այս յամառ թուշտիւր , դիտնալով որ Սէն-Մանսէ կը գամ , աղաչեց զիս որ հետս բերեմ զինքը :

— Հօ , հօ :

— Եւ՛ եթէ հնար է , մեր տիրոջ ներկայացնել :

— Այնպէս որ . . . :

— Այնպէս որ վարն է Պէլ-Էրի գալարաւետ դաշտին վրայ :

— Միջատի մը պէս :

— Այդպէս կ'խօսիս , Կուրվիլ , եղջիւրներուն համար , անշահ կատակարան :

— Լաւ ուրեմն , Պ . Փութէ :

— Լաւ , չվայլեր որ տիկին Վանէլի էրիկը տունէս հեռու հարբուխի հանդիպի . մարդ զրկեցէք որ կանչեն , Լա Փօնդէն , քանի որ ուր լինելը դիտես :

— Ես անձամբ պիտի վազեմ բերեմ :

— Ես ալ քեզի ուղեկից պիտի լինիմ — ըսաւ Փութէ արբան — Ես ալ պարկերը բերեմ :

— Անշահ կատակները մէկդի՛ — ըսաւ խստութեամբ Փութէ . — ծանրութեամբ տեսնե՞ք դործը , եթէ իրօք դործ կայ : Ամենէն առաջ հիւրասէր լինինք : Կերում խնդրէ ինձի համար , Լա Փօնդէն , այն ընտիր մարդէն , և ըսէ անոր որ շատ կ'ցաւ իմ որ զինքը սպասեցուցի , վարը գտնուիլը չզխանալուս :

Լա Փօնդէն արդէն մտնեց էր , բարեբաղդօրէն Կուրվիլ անոր կ'ընկերանար . վասն զի՛ իր հաշիւներովը զբաղած , բանաստեղծը ծուռ ճամբայ մը բռնեց էր և գէպ 'ի Սէն-Մօր կ'վազէր :

Քառորդ մ'ետք՝ Պ . Վանէլ վերատեսչին գահլիճը մտաւ , այն գահլիճն որու նկարագիրն ու մօտաւոր վայրերը ցոյց տուինք այս պատմութեանս սկիզբը : Երբ Փութէ անոր ներս մտնելը տեսաւ , Բէլիսօնը կոչեց և անոր ականջին քանի մը վայրկեան խօսեցաւ :

— Սա կէտը լաւ ըմբռնէ — ըսաւ անոր — բոլոր արծաթեղէն անոթները , բոլոր գոհարեղէնները կառքին մէջ ծրարել տուր : Սև ձիերը պիտի առնես , ոսկերիչը քեզի պիտի ուղեկցի , և կերակուրը պիտի ուշացնես մինչև որ տիկին Պէլիէր գայ :

— Բայց դո՞նէ պէտք է որ տիկին Պէլիէրի իմաց արուի յառաջադրն :

— Անողուտ է , ես այդ դործն իմ վրաս կ'առնում :

— Հա՛տ լաւ :

— Գնա՛ , բարեկամդ իմ :



Բէլիսոն մեկնեցաւ, լաւ չգուշակելով, բայց վստահ լինելով ինչպէս են ամէն ճշմարիտ բարեկամներ իրենց սիրականներուն կամ մայր ներքեւ: Ասոր մէջն է ընտիր հոգիներու զօրութիւնը: Ասակածը միայն ստորին բնաւորութեանց համար է:

Ուստի Վանէլ վերատեսչին առջև խոնարհեցաւ: Ճառ մը պիտի սկսէր:

— Կատեցէր, պարոն — ըսաւ անոր ֆուքէ մարդավարութեամբ:

— Կ'երևի ինձ որ պաշտօնս ստանալ կ'ուզէք:

— Տէր իմ. . . :

— Ի՞նչ կրնաք ապշ:

— Տէր իմ, զինը ձեզի կ'լինայ որոշելը: Գիտեմ որ արդէն այս մասին առաջարկութիւններ եղած են:

— Ըսին ինձ թէ տիկին Վանէլ մէկ միլիօն չորս հարիւր հազար ֆրանք կ'զնհատէ:

— Բոլոր մեր ունեցածն այդչափ է:

— Կարող էք այդ գումարն անմիջապէս վճարել:

— Իմ քովս չէ — ըսաւ Վանէլ պարզօրութեամբ, և նոյն պահուն շուարեալ կ'մնար զիտելով ֆուքէի պարզութիւնը, մեծանձնութիւնը, ինք որ կ'յուսար թէ զիմադրութիւն, նշքութիւն և հաշուագիտի հնարք պիտի տեսնէ: անոր կողմէ:

— Երբ պիտի ստանաք գումարը:

— Երբոր դուք կամենաք, տէր իմ:

Եւ կ'զողար որ ֆուքէ իրեն խաղ չխաղար:

— Եթէ Բարիզ զնալու պէտքը չլինէր անմիջապէս պիտի որոշէի. . . :

— Ո՛հ, տէր իմ. . . :

— Բայց — ընդմիջեց վերատեսուչը — վճարումն ու ստորագրութիւնը վաղն առաջտեանն ձգենք:

— Թող այդպէս լինի — պատասխանեց Վանէլ բոլորովին սառու քար կարելով:

— Ժամը վեցին — պատասխանեց ֆուքէ:

— Վեցին — կրկնեց Վանէլ:

— Երթաք բարեաւ, պ. Վանէլ. ըսէք տիկին Վանէլին որ ձեռքը կ'համբուրեմ:

Եւ ֆուքէ ոտք ելաւ:

Այն ատեն Վանէլ որու արխան աչաց կ'ելնէին և սկսեր էր խելքը թռչնել,

— Տէր իմ, տէր իմ — ըսաւ նա ծանրութեամբ — միթէ ինձ խօսք կ'տամբ:

Ֆուքէ զլուխը դարձուց:

— Ի՞նչպէս չէ — ըսաւ նա — հասցա զո՞ք:

Վանէլ վարանեալ մնաց, գողգողաց և վերջապէս իր ձեռքը կարկառեց: Ֆուքէ իր ձեռքը բացաւ և ազնուութեամբ երկնցուց:

Այս անկեղծ ձեռքը պահ մը կեղծաւոր ձեռքի մը տամկութեամբ թրջեցաւ. Վանէլ աւելի լաւ համոզուելու համար ֆուքէի մատուցը սեղմեց:

Վերատեսուչը մեղմիկ քաշեց իր ձեռքը:

— Երթաք բարեաւ — ըսաւ նա:

Վանէլ ետ ետ քալելով դուռը գտաւ արտորնօք, դաւիթնեքէն սրացաւ և խոյս տուաւ:

Ը

ՏԻԿԻՆ ՊԷԼԻԷՐԻ ՍԵՂԱՆԻՆ ՍՊԸՍՔԻՆ ՈՒ ԱԳԱՄԱՆԳՆԻՐԸ

Այն ինչ ֆուքէ Վանէլին ձամբայ տուաւ, որ պահ մը մտածեց:

— Մարդ ինչ որ ընէ արդէն սիրած կնկան համար քիչ է: Մարդրիտ տեղակալուհի կ'ուզէ լինիլ, ինչո՞ւ համար այս հաճոյքն անոր զընամ:

Այժմ որ ամենէն խղճահար զիտակցութիւնը չէ կարող ինձ բան մը զընալ, մտածենք զիս սիրող կնկան վրայ:

Տիկին Պելիէր այս տեղ պիտի լինի:

Եւ մատուցը գաղտնի դուռը ցցուց:

Ուստի փակուելով ստորերկրեայ նեղ ուղին բացաւ և Վեհաճի ու իր տան մէջ եղած ձամբան զարկաւ արտորնօք:



Հնչակոյն իր բարեկամութեան հոյն ձայն տալու մոռցեր էր, ստոյգ լինելով որ ժամադրութեանց անպատճառ ներկայ կ'գտնուէր:

Իբրոք՝ մարքիզուհին հասեր էր: Ասպատէր նա: Աւերատեսչին հանած շշուկէն իմացաւ դալուստը, վաղեց նա և ֆուքէի դրան տակէն տուած սոմասին ընդունեց:

« Եկուր, մարքիզուհի, քեզի կ'սպասեն ընթերլու »:

Տիկին Պէլիէր, երջանիկ և աշխոյժ՝ Աէնսէնի ծառուղոյն մէջ իր կառքը դնաց դտաւ, և դրանդին վրայ Աուրվիլի կարկառեց ձեռքը, Աուրվիլ՝ որ իր տիրոջ աւելի հաճելի երեւելու համար, դաւթին մէջ անոր դալստեան ակնդէտ կ'սպասէր:

Մարքիզուհին չտեսեր էր Պ. ֆուքէի սև ձիերն որ մխալով և փրփրալով ներս մտեր էին և որ 'ի Յէն-Մանտէ կ'բերէին Բէլիսոնն և նոյն իսկ այն ոսկերիչն որու ծախեր էր աիկին Պէլիէր իր սպասքն ու գոհարեղէնը:

Բէլիսոն ֆուքէի գահլիճը մտցուց այս մարդը, մինչդեռ նա անդ էր սակաւին:

Աւերատեսուչը շնորհակալ եղաւ ոսկերչէն որ հաճեր էր այն ինչքն իրբև աւանդ սրահել թէև ծախելու իրաւունք ունէր: Հաշիւներուն գումարին վրայ նետեց աչքն որ մէկ միլիոն երեք հարիւր հազար ֆրանքի կ'հասնէր:

Յետոյ գրասեղանին առջև նստելով, թուղթ մը դրեց մէկ միլիոն չորս հարիւր հազար ֆրանքի, իր արկղէն 'ի աես վճարելի, հետևեալ օրը կէսօրէն առաջ:

— Հարիւր հազար ֆրանք շահ — գոչեց ոսկերիչը: — Ա՛հ, տէր իմ, այդ ի՛նչ սուստաձեռնութիւն է:

— Ա՛հ, է՛չ, պարոն — ըսաւ ֆուքէ անոր ուսին գպելով — կան քաղաքավարութիւններ որ զին չունին: Գրեթէ ընելէք շահդ այս պիտի լինէր, բայց դեռ ստակիդ սոկոսը կ'մնայ վճարել:

Այս ըսելով իր թեղանիքէն ադամանդեայ կոճակ մը կ'հանէր, զոր նոյն ոսկերիչը ստեղծ հազար հինգ հարիւր ոսկի գնհատեր էր:

— Այս իբրև յիշատակ ընդունէ իմ կողմէս — ըսաւ նա ոսկերչին — և երթաս բարեաւ: դու բարեսիրտ մարդ մ'ես:

— Եւ դուք — գոչեց ոսկերիչը սաստիկ յուզուած — դուք, տէր իմ, վեհանձն իշխան մ'էք:

Ֆուքէ ծածուկ դունէ մը գուրս հանեց ոսկերիչը, ապա դնաց աիկին Պէլիէրն ընդունելու, զոր արդէն բոլոր կոչնականները շրջապատեր էին:

Մարքիզուհին միշտ գեղանի էր, բայց այն օրը կ'շողար:

— Ի՞նչ կ'ըսէք, պարոններ, միթէ այս իրիւն աիկինն անհամեմատ գեղեցիկ չէ: Եւ գիտէք ինչո՞ւ համար:

— Աման զի աիկինը կանանց մէջ ամենէն գեղանին է — ըսաւ մէկը:

— Ա՛հ, վասն զի ամենէն ընտիրն է: Սակայն . . . :

— Սակայն — ըսաւ մարքիզուհին ժպտելով:

— Սակայն այս իրիւն աիկին Պէլիէրի կրած բոլոր գոհարները սուտ քարեր են:

Տիկին Պէլիէր շիկնեցաւ:

— Հօ, հօ — կոչեցին բոլոր կոչնականները — կարելի է ըսել այս բանս աներկիւղ այն կնկան համար որ Բարիզի ամենէն ընտիր ադամանդներն ունի:

— Լաւ, ուրեմն — ըսաւ ցած ձայնով ֆուքէ՝ Բէլիսոնին:

— Լաւ ուրեմն, վերջապէս հասկըցայ — սրտասխանեց Բէլիսոն — և շատ լաւ ըրիք:

— Աւրախ եմ — ըսաւ վերատեսուչը ծիծաղելով:

— Տէր իմ, սեղանը պարարտա է — պուսպ Աագէլ վեհափառութեամբ:

Նականաց խումբն այնչափ ծանրութեամբ որչափ որ սովորութիւն է պաշտօնական հանդէսներու մէջ չզիմեց սեղանատուրը, ուր շքեղ աւեսարան մ'իրենց կ'սպասէր:

Գարաններուն, եւ ուրանիներուն, սեղանին վրայ, ծաղիկներու և լոյսերու մէջ ակնախտիվ կ'շողային չաեսնուած ոսկի և ար-

ծաթ անօթներ. հին ճոխութեան մնացորդն էին զորս ֆլօրէն-

ցայի արուեստագէտներ՝ Մէտիչիներուն հետ ֆրանսա զալով,

փորագրեր, քանդակեր և ծաղկանց ամաններու համար հալեցու-

ցեր էին, երբ ֆրանսա ոսկի կ'գտնուէր, այս հրաշալիքը՝ քաղա-

քային պատերազմներու ասեն զեանափոր սեղանից սրահուէն

ետև՝ ֆրոնտ (պարսատիկ) ըսուած նորաձև կուռին հանդարտ ժա-



մանակներն երևան ելերէ Էին, այն ատեն որ իշխան իշխանի դէմ դուպարելով, զիրար կ'սպաննէին այլ չէին կողոպտեր: Բոլոր այս ստրասքը Պէլիէրի անուան սկզբնաստուերն ունէին:

— Դէն — գոչեց Լա Փօնդէն — ահա Բ մը և Պ մը:

Բայց ամենէն հետաքրքրականը մարքիզուհւոյն առջևն եղած ստրասքն էր, այն տեղն ուր իրեն սահմանած էր Ֆուքէ. անոր մօտ ազամանդներու, սափիրայի, զմրուխտի և հին բազմազոյն քարերու բուրդ մը կ'բարձրանար, նոյնպէս փոքր Ասիոյ յունաց ձեռօք փորագրուած սանդիոնը Միսիայի ոսկի շէնքով, հին Ալէքսանդրիայի հետաքրքրաշարժ մուսիօններն արծաթի վրայ յեռեալ, Խղիպտոսի Ալէօսպատրայի միաձոյլ ասպարանջանները Բալէսիի լայն սկաւառակ մը կ'լեցնէին, և այս սկաւառակը Պէնվէնուդոյի ձեռօք փորագրուած ոսկեղօծ պղնձէ եռոտանիի մը վրայ կ'կենար:

Մարքիզուհւոյն գունատեցաւ տեսնելով ինչ որ տեսնելու բնաւ յոյս չուներ: Խորին լուսթիւն մը, որ աշխոյժ այլայլութեանց գուշակն էր, թմրած և մասյոյզ սրահին մարդկան վրայ կ'տիրէր:

Ֆուքէ և ոչ իսկ նշան մ'ըրաւ բոլոր գունազարդ սպասաւորները գուրս հանելու որ դործօն մեղուներու պէս կ'վազվզէին, ընդարձակ դարաններու և հացկերոյթի սեղաններու բոլորակքը:

— Պարոններ — ըսաւ — այս ձեր աչքին առջև գտնուած սպասքը տիկին Պէլիէրինն էր, որ, օր մը, իր բարեկամներէն մին ներդուրեան մէջ տեսնելով, բոլոր այս ոսկին և արծաթը, այս իրեն առջև փայլող կոյս մը գոհարեղէններուն հետ ոսկերչին զրկեց ծախելու: Բարեկամուհւոյ մ'այս գեղեցիկ դործը ձեզի պէս բարեկամաց պէտք էր որ յայտնուէր և հասկըցուէր: Խմենք ուրեմն տիկին Պէլիէրի կենացը:

Ահազին ցնծութեան ազաղակներ խափանեցին այս խօսքն և խեղճ կիսն անխօս և դրեթէ նուազած աթոռին վրայ ձգեցին, վասն զի բոլորովին ինքզինքը կորոյս, յունաստանի թուչուններուն նման որ Օլէնքիայի ասպարեղին վրայէն երկինքը ձեղքելով կ'անցնէին:

— Եւ ապա — յարեց Բէլիսօն, որ ամէն առաքինութենէ կը յուզուէր, որ ամէն գեղեցկութենէ կ'զմայլէր — խմենք նաև այն

անձին կենաց համար որ տիկին Պէլիէրի այս աղւոր գործն ընելու ներշնչեց. վասն զի այսպիսի մարդ մը սիրուելու արժանի պէտք է որ լինի:

Մարքիզուհւոյն կարգն եկաւ: Ասք ելաւ նա գունատ և զեղածիծաղ, իր բաժակն երկնցուց տկար ձեռքով մ'որուն դողդոջուն մատոնքը Ֆուքէի մատանց շփուեցան, մինչդեռ իր նուազուն աչուքն այս վեհանձն սրտին մէջ այրող բոլոր սէրը փնտուելու կը ջանային:

Ընթրիքն այսպէս զիւցաղնական կերպով սկսելէն ետե՛ շուտ մը հանդէս դարձաւ. ոչ որ այնուհետև խելք ծախելու մտածեց և ամենքը խելացի խօսքեր կ'ընէին:

Լա Փօնդէն Աորնյիի զինին մոռցաւ և թոյլ տուաւ Վադէլի որ զինքը Ռոնի և Շանբանյի զիններու հետ հաշտեցնէ:

Ֆուքէ աբբան այնքան բարեսիրտ երեցաւ որ Աուրվիլ անոր ըսաւ.

— Զգոյշ եղիր, աբբայ, եթէ այդչափ կակղիս քեզ պիտի սուտն:

Ժամերն այսպէս անցան ուրախ զուարթ և զինի բաժակները դառնալով կոշնականաց մէջ: Իր սովորութեան հակառակ՝ վերասետուչ սեղանէն չելաւ մինչև որ վերջին միբղերը չտերին:

Իր բարեկամաց երեսը կ'նայէր Ֆուքէ և կ'ժպտէր, սրտնք զինով էին, ինչպէս որ կ'լինի մարդ երբ գլխէն առաջ սիրտը կ'արբենայ, և առաջին անգամ՝ ժամացոյցին նայեցաւ:

Յանկարծ գաւթին մէջ կառք մը դլորեցաւ, և տարօրինակ բան, նոյն կառքին ձայնը լսելի եղաւ այն աղմկին և երգերուն մէջէն:

Ֆուքէ ականջը տնկեց, ապա աչքը դէպ 'ի նախասենեակը դարձուց: Իրեն այնպէս երեցաւ որ քայլի ձայն մը կ'հնչէր անդ, և այս քայլը, փոխանակ գետինը կոխելու, իր սրտին վրայ կ'կոխէր:

Բնազդումով թողուց այն ոտքը զոր տիկին Պէլիէր իրենին վրայ թութեցուցած էր երկու ժամէ 'ի վեր:

— Պ. Հէրպլէյ, Վանի եպիսկոպոսը — պուայ բարասանը՝ Եւ Արասիի մթին և խոհուն կերպարանն երեցաւ սեմն վրայ,



Երկու ծաղկեայ շամփրակներու բեկորներու մէջէն, որու լարերը կանթեղի մը բոցէն նոր այրեր էին :



Պ. ՄԸԶԱՐԷՆԻ ԸՆԳՈՐԸԳԻՐԸ

Ֆուքէ ուրախութեան աղաղակ մը պիտի ձղէր նոր բարեկամ մը տեսնելուն՝ եթէ Արամիտի սառ գէմը, անուշադիր ակնարկը զինքն իր բոլոր զգաստութեան չմղէին :

— Միթէ մեզ պիտի օղնեն միրզին ուտելու — հարցոց նա սա- կայն — միթէ փոքր ինչ չ'պիտի զարհուրիս մեր յիմարութեանց հանած ժխորէն :

— Տէր իմ — պատասխանեց Արամիս յարդանօք — նախ պար- տաւոր եմ ներում խնդրել որ ձեր զուարթուն ընկերութիւնը կը վրդովեմ. բայց՝ զուարճութենէ ետք՝ զործերու համար ունկնդրու- թեան միջոց մը պիտի խնդրեմ :

Որովհետեւ քանի մ'եպիկուրեանք այս հորձեղ բառին վրայ ի- րենց ականջը անկեցին, Ֆուքէ ոտք ելաւ :

— Միշտ գործերը, Պ. Հէրպլէյ — ըսաւ նա — պէտք է ու- րախ լինինք երբ գործերը ճաշէն ետքը կ'հասնին :

Եւ այս ըսելով՝ արիկն Պէլլէրի ձեռքը բռնեց, Պէլլէր որ անոր կ'նայէր մտատանջութեամբ մը, զանի ամենէն մօտ սրահիկը տարաւ, ընկերութեան մէջ ամենէն զգաստներուն յանձնելով :

Իսկ ինքը՝ Արամիտի թեք մտնելով՝ դէպ 'ի դահլիճը դիմեց :

Արամիս Ֆուքէի դահլիճն որ հասաւ, յարզ և ձե մուցաւ ու նստաւ :

— Գուշակէ — ըսաւ — թէ այս իրկուն զմի տեսայ :

— Սիրելիդ իմ ասպետ, ամէն անգամուն որ սյրպէս կ'սկսիս խօսք մը, ստոյգ եմ որ անախորժ լուր մը պիտի հաղորդես ինձ :

— Այս անգամ ալ չ'պիտի սխալես, սիրելի բարեկամ — պա- տասխանեց Արամիս :

— Սիրտս մի հասցըներ — յարեց Ֆուքէ անվրդով :

— Լաւ ուրեմն, արիկն Շէվրէօզը տեսայ :

— Պառաւ դքսուհին :

— Այո՞ :

— Կամ անոր ստուերը :

— Ո՛չ, սլառաւ մատակ դայլ մը :

— Առաջնից ակոյսի :

— Կարելի է, բայց ոչ առանց ճանկի :

— Լաւ, ինձի դէմ՝ ինչ ունի : Յետին ծայր պատկառոտ չե- ղող կանանց հետ աղահ չեմ : Ասի յատկութիւն մ'է որու միշտ մեծ արժէք կ'ընծայէ սէր ներշնչելու չհամարձակող կիներ :

— Տիկին Շէվրէօզ քաջ գիտէ այդ, գիտէ որ ազահ չես, քանի որ քեզնէ ստակ կորզել կ'ուզէ :

— Լաւ, ինչ պատճառանօք :

— Է՛հ, սլառաւանքը սակաս չեն երբէք : Աւստի իբր :

— Մտիկ կ'ընեմ :

— Կ'երևի թէ դքսուհին Պ. Մազարէնի կողմէ դրուած շատ նամակներ պիտի ունենայ :

— Այդ զարմանք չեն ինձ, եպիսկոպոսն իդատէր էր :

— Այո՞, բայց այս դիրքն եպիսկոպոսին սիրային դործոց հետ յարաբերութիւն չ'պիտի ունենան : Այս դրամական խնդիրներու վրայ է :

— Ուրեմն այնքան հետաքրքրական չեն :

— Միթէ փոքր ինչ ըսածս չես հասկընար :

— Ամենևին :

— Միթէ երբէք լսած չես թէ ամբաստանութիւն մ'եղած է մէկուն դէմ ստակ խորելուն համար :

— Հարիւր անգամ, հազար անգամ : Գործոց զլուխը գտնուե- լէս 'ի վեր, այդ խօսքերը միայն լսած եմ, Պ. Հէրպլէյ : Ինչ- պէս դու, թէև եպիսկոպոս, կ'բանբաստիս իբրև ամբարիշտ . դու, հրացանակիր, կ'բանբաստիս իբրև երկչոտ . իսկ զանձուց պաշտօնէին դէմ յարածամ եղած բանբասանքը սա է թէ գան- ձէն կ'գողնայ :



— Լաւ , բայց մեր խօսքը ճշգեանք , վասն զի Պ . Մաղարէն կը ճշդէ , ինչպէս որ կ'ըսէ դ.քսուհին :

— Նայինք ի՞նչ է ճշգածը :

— Տասն երեք միլիօն Ֆրանքի գումարի մօտ բան մը , որու ինչ բանի գործածելու շատ դժուարին է եղեր քեզի որոշելու :

— Տասն երեք միլիօն — ըսաւ վերատեսուէն իր աթուին վրայ երկննալով , որպէս զի զլուխն աւելի լաւ առաստաղին կողմը վերցնելու համար — տասն երեք միլիօն . . . : Ա՛հ , իբրաի , կ'աշխատիմ դանելու թէ ի՞նչ բանի մէջ զիս ամբաստանած են :

— Մի ծիծաղիր , սիրելիւ իմ սպարոն , ծանր է ինչիբը : Մտոյդ է որ դ.քսուհին ձեռքը նամակներ ունի , և այս նամակները վաւերական պիտի լինին , քանի որ զանոնք հինգ հարիւր հազար Ֆրանքի ծախել կ'ուզէր :

— Այդ դնով շատ ազուր զբարատութիւն մը կրնայ ձեռք ձգել — սրատասխանեց Գուքէ : — Ի՛հ , բայց զիտեմ ինչ ըսել կ'ուզես :

Գուքէ սկսաւ սրտաղին ծիծաղիլ :

— Աւելի աղէկ — ըսաւ Արամիս փոքր ինչ հանդարտելով :

— Այդ տասն երեք միլիօն Ֆրանքի պատմութիւնը միտքս կը գայ . այս , այդ է , կ'յիշեմ :

— Շատ մեծ ուրախութիւն կ'պատճառես ինձ , նայինք ի՞նչ է :

— Երեակայէ , սիրելիւ իմ , որ Պ . Մաղարինին , Ատուած ողորմի հոգւոյն , որ մ'այդ տասն երեք միլիօն վաստակն ըրաւ վաղգլինի մէջ վէճի ներքեւ եղող հողեր ծախելով . մտից առամարէն զանոնք ջնջեց , գումարն ինձի զրկեց , և ապա ինդրեց առաւ իբրև պատերազմի ծախք :

— Լաւ , ուրեմն նպատակը կ'արդարանայ :

— Ա՛հ , կարտինալն իմ հաշուիս անցուց , և ինձ անգորրապիւր մը զրկեց :

— Միթէ այդ ընկալաղիբն ունին :

— Ի՞նչպէս չէ — ըսաւ Գուքէ հանդարտիկ ոտք ելնելով և գաղտակրով ու ոսկւով գրուադեալ երենոսէ լայն գրասեղանի մը գզրոցներուն առջևը դնաց :

— Ամենէն շատ կ'ըմայլեմ — ըսաւ Արամիս խնդաղին — յիշո՛

զու թեանդ վրայ , ապա պաղարինու թեանդ վրայ , և վերջապէս կատարեալ կարգ կանոնին վրայ որ վարչութեանդ մէջ կ'սիրէ , դու , դու որ իսկ և իսկ քերթող մ'ես :

— Այո՛ — ըսաւ Գուքէ — կարգապահ եմ ծուլութեան ողուով որպէս զի վերջէն փնտուելու չեմ : Այսպէս զիտեմ որ Մաղարէնի անգորրապիւր երրորդ գզրոցին մէջ է , Մ գրով , այս գզրոցը կ'բանամ և ձեռքս ինձ պէտք եղած թղթին վրայ կ'գնեմ անմիջապէս : Գիշերն անգամ կրնայի գտնել զայն առանց մամի :

Եւ ապահով ձեռքով մը շոշափեց բայց գզրոցին մէջ զիզուած թղթերու ծրարը :

— Այս բաւական չէ — շարունակեց նա — տեսածի պէս կը յիշեմ այս թուղթը . զիմացկուն , քիչ մ'անհարթ , ծայրը ոսկեզօծեալ թուղթ մ'է , Մաղարէն թուականին վրայ մեղանի կաթիլ մը թափեր էր : Լաւ — յարեց նա — կ'երեւի թէ թուղթը կ'զղայ որ պիտանի է և կ'փնտուի , ուստի կ'պահաւի և կ'հետեւէ :

Եւ վերատեսուէն գզրոցին մէջ նայեցաւ :

Արամիս ոտք ելեր էր :

— Տարօրինակ բան է — ըսաւ Գուքէ :

— Ա՛րեւի թէ լաւ չես յիշեր , սիրելիւ իմ սպարոն , ուրիշ ծրարի մը մէջ փնտուէ :

Գուքէ ծրարն առաւ և վերստին աչքէ անցուց , ապա գոյնը նետեց :

— Մի յամառիր , ուրիշ տեղ մը փնտուէ — ըսաւ Արամիս :

— Անօգուտ է , անօգուտ . երբեք սխալած չեմ , այս տեսակ թղթերը միայն են կարգի կ'գնեմ . ոչ ոք այս գզրոցը կ'բանայ , որու վրայ , ինչպէս կ'տեսնես , ծածուկ պահարան մը շինել տուած եմ և իզնէ զատ ուրիշ մը զայն բանալու դադանիք չգիտէ :

— Ի՞նչ կ'հետեցնես ուրեմն — ըսաւ Արամիս խռովեալ :

— Սա կ'հետեցնեմ որ Մաղարէնի անգորրապիւր գզրոցէս գողցեր են : Տիկին Շէվրէօլ իրաւունք ունէր , սասկետ , տէրութեան զանձէն ստակ խորեր եմ , տասն երեք միլիօն Ֆրանք գողցեր եմ , դող եմ , Պ . Հէրպլէյ :

— Պարոն , պարոն , մի սրամտիր , մի փրփրիր :



— Ինչո՞ւ համար չփրփրիմ, աստեա : Խնդիրը կ'ամէ որ փրկե՞  
փրիմ : Մեծ դատ մը , մեծ վճիռ մը , և քու բարեկամը պարոն  
վերատեսուչը կրնայ 'ի Մօնֆօքօն Ինկէրար Մարիյնի պաշտօնակ-  
ցին , և Սանսլանսէ նախորդին հետեիլ :

— Ո՛հ — ըսաւ Արամիս ժպտելով — ոչ այդչափ շուտ :

— Ինչո՞ւ չէ : Ի՞նչ կարծես որ ըրած լինի տիկին Շէվրէօզ .  
այն զիրերը , վասն զին մերժեցիր , այնպէս չէ :

— Այո՛ , այո՛ , բայց 'ի բաց մերժեցի : Արածեմ թէ զնայ  
Պ . Գօլպէրի զանոնք ծախելու :

— Հիմաի , կ'տեսնես :

— Արածեմ ըսի , բայց կրնամ ըսել թէ ստոյգ եմ . վասն զին  
երբ իղնէ բաժնուեցաւ , անոր ետեւէն մարդ զրի , իր տունը մտաւ ,  
ասպա զաշանի գոնէ մը գուրս ելնելով , Բրուա-տէ-Բըլի-Շան  
փողոցը , պարոն տեսչին տունը զնայ :

— Ուրեմն դատ ունինք , գայթակղութիւն և անպատու թիւն ,  
այս ամենը սիտի ընկնի զլուխս ինչպէս կ'ընկնի շանթը , կուրօ-  
րէն , կոշտաբար , անլթաբար :

Արամիս Գուքէին մօտեցաւ , որ իր աթոռին վրայ կ'զողզողար ,  
բաց զզրոցներուն մօտ , ձեռքն անոր ուսին վրայ դրաւ , և սիրա-  
լիւր ձայնով մ'ըսաւ .

— Մի մտնար երբէք որ Պ . Գուքէի կացութիւնը Սանսլանս-  
տէի և Մարիյնիի կացութեան հետ չկրնար բաղդատուիլ :

— Եւ ինչո՞ւ համար , Աստուած իմ :

— Վասն զին այն պաշտօնէից զասն օրինաւորապէս տեսնուե-  
ցաւ և վճիռն 'ի գործ գրուեցաւ , մինչդեռ քու նկատմամբ չկըր-  
նար նոյնը լինիլ :

— Կորէն կ'հարցնեմ , ինչո՞ւ համար : Ամէն ժամանակ , հարստա-  
հարիչ մը յանցապարտ է :

— Յանցապարտներն որ աստատանարան մը զանելու կ'յաջո-  
ղին , երբէք վտանգի մէջ չեն :

— Խոյս տամ , փախչիմ :

— Ես քեզի այդ չեմ ըսեր , և կ'մտնաս որ այդ տեսակ գա-  
տեր Բարլմէնի առջև կ'տեսնուին , և ընդհանուր տեղակալին

կողմէ կ'հարցաբնուին , և թէ դու ընդհանուր տեղակալ ես : Ար  
նայիս որ՝ եթէ դու ինքնին անձգ գատապարտել չուզես , այն ա-  
տեն . . . :

— Ո՛հ — զոչեց յանկարծ Գուքէ իր բուռնովը սեղանին զար-  
նելով :

— Լսու , ի՞նչ , ի՞նչ կայ :

— Սա կայ որ այլ ևս տեղակալ չեմ :

Արամիս ըսաւ կարգի դեղնեցաւ . այնպէս որ կապտաղոյն երև-  
ցաւ . մատները սեղմեց , որ իրարու դէմ ճարձատեցին , և դա-  
ժան նայուածքով մ'որ Գուքէն շանթահարեց .

— Գու ընդհանուր տեղակալ չեմ այլ ևս — ըսաւ նա խրա-  
քանչիւր վանկ շեշտելով :

— Ո՛չ :

— Քանի՞ ատենէ վեր :

— Չորս հինգ ժամէ 'ի վեր :

— Զոյցը եղիւր — ընդմիջեց Արամիս պաղտթեամբ — կար-  
ծեմ թէ խեղճ գլուխդ չէ , բարեկամդ իմ , ինքզինքիդ եկուր :

— Ես կ'ըսեմ քեզի — վրայ բերաւ Գուքէ — որ քիչ մ'ա-  
ռաջ մէկն եկաւ՝ իմ բարեկամաց կողմէ և մէկ միլիօն չորս հա-  
րիւր հազար Ֆրանք առաջարկեց պաշտօնիս համար , և ես ալ  
այդ պաշտօնը ծախեցի :

Արամիս շփոթած մնաց . իր մտացի և ծաղրաբան գէմքը մթին  
զարհուրանք մը ցցուց որ Գուքէի վրայ աւելի ներդործութիւն  
ունեցաւ քան թէ աշխարհիս ամէն աղաղակներն ու ճառերը :

— Ուրեմն ստակի շատ պէտք ունէիր — ըսաւ նա վերջապէս :

— Այո՛ , պատուոյ պարտք մը վճարելու համար :

Եւ համառօտ պատմեց Արամիսին տիկին Պէլիէրի վեհանձնու-  
թիւնն և այս վեհանձնութեան փոխարէնը վճարելու համար բռնած  
ընթացքը :

— Աւասիկ աղւոր դործ մը — ըսաւ Արամիս : — Քանի՞ նստաւ  
այն քեզի :

— Ճիշտ իմ պաշտօնիս մէկ միլիօն չորս հարիւր հազար  
Ֆրանք :



— Ձոր այսպէս անմիջապէս ընդունեցար, առանց մտածելու :  
 ո՞նի անխոհեմ բարեկամ :

— Գեո. չընդունեցի, բայց վաղը պիտի ընդունիմ :

— Ուրեմն դեռ դորձը լմնցած չէ :

— Պէտք է որ լմննայ, վասն զի ոսկերչին պարտամուրհակ մը տուի վաղը վճարելի իմ արկղէս, ուր դնորդին ստակը պիտի մանկէ ժամը վեցէն ցեօմն :

— Փանօք Աստուծոյ — դոչեց Արամիս ձեռները զարնելով — ոչ ինչ չէ լմնցած, քանի որ զրամը չես ստացած :

— Բայց ոսկերիչը :

— Իզնէ պիտի ստանաս մէկ միլիօն չորս հարիւր հազար Ֆրանսքը կէսօրին քառորդ մնալով :

— Հասկընանք, հասկընանք դորձը, այս առտու ժամը վեցին պիտի ստորագրեմ :

— Ո՛հ, կ'ապահովեմ քեզ որ չպիտի ստորագրես :

— Ասպէտ, խօսք տուի :

— Եթէ տուիր, ետ պիտի առնուս, ուրիշ բան մը չկայ Ընելիք :

— Ո՛հ, ի՛նչ կ'ըսես ինձ — դոչեց Ֆուքէ խորին անկեղծութեան շեշտով մը : — Ի՛նչպէս ետ առնուլ խօսք մ'երբ տուողը Ֆուքէ մ'է :

Արամիս պաշտօնէին գրեթէ խիտ նայուածքին զայրազին նայուածքով մը պատասխանեց :

— Պարսն — ըսաւ — կարծեմ թէ արժանի եղած եմ պատուաւոր մարդ կոչուելու, այնպէս չէ : Ջինսօրի վտառակին ներքեւ, հարիւր անգամ կեանքս վտանգի մէջ դրի, քահանայի զգեստովս մեծագոյն ծառայութիւններ մատուցի դեռ ևս Աստուծոյ, ահ բուսթեան և իմ բարեկամաց : Խօսք մը կ'արժէ ինչ որ կ'արժէ զայն տուող մարդը : Այն խօսքը, երբ պահէ, զուտ ոսկի է, երկսայրի երկամի մ'է, երբ զայն պահել չկամիր : Այն ատեն նոյն խօսքով ինքզինքը կ'պաշտպանէ իբրև պատուոյ զէնքով մը, վասն զի, երբ նոյն խօսքը չկատարեր, այս պատուաւոր մարդը, պատճառն այն է որ մահուան վտանգի մէջ է, վասն զի առելի մեծ փոր-

ձանքներ իրեն կ'սպառնան քան թէ իր հակառակորդին ընելիք վատտակը : Այն ատեն, պարսն, մարդս Աստուծոյ և իր իրաւունքին կ'վերակոչէ :

Ֆուքէ գլուխը ձուեց :

— Ես յամառ և դուհիկի Պրըդօն մ'եմ — ըսաւ նա — իմ միտքս քուկինիդ վրայ կ'սքանչանայ և անկից կ'վախնայ, չեմ Ըսեր թէ հասարակ ճամբան կ'քալեմ, բայց վերջապէս՝ հասարակ մարդիկ բաւական պարզմիտ են և այն ճամբան կ'բռնեն կ'երթան . այդ է իմ միակ առաքինութիւնս, թող տո՛ւր որ անով պարծիմ :

— Այն ատեն վաղը պիտի ստորագրես այդ պաշտօնին վճարումը, որով կարող էիր բոլոր թշնամեացի գէմ դնել :

— Պիտի ստորագրեմ :

— Այն ատեն ձեռքդ ոտքդ կարած անձնատուր պիտի լինիս սուտ պատուոյ զղայման մը համար զոր ամենէն խղճահար մարդիկն անգամ պիտի արհամարհէին :

— Պիտի ստորագրեմ :

Արամիս խորին հառաչ մ'արձակեց, իր բոլորտիքը նայեցաւ այնպիսի մարդու մ'անհամբերութեամբ որ բան մը խորտակել կ'ուզէ :

— Գեո. ևս միջոց մ'ունինք — ըսաւ նա — և յուսամ որ այդ միջոցը դորձ դնելու չպիտի մերժես :

— Անշուշա ո՛չ, եթէ պատուաւոր է . . . բոլոր առաջարկած բաներուդ պէս, սիրելի բարեկամ :

— Աւելի պատուաւոր բան մը չկրնար լինիլ քան թէ դնորդիդ հրամեշտը : Միթէ բարեկամդ է :

— Անտարակոյս . . . բայց . . . :

— Բայց . . . թէ որ ինձի թողութիւն որ դորձը կարգադրէի, չեմ յուսահատիր :

— Ո՛հ, քեզ բոլորովին ազատ կ'ընողմ :

— Որո՞հ հեռ կարգադրեցիր դորձը . ի՛նչ մարդ է այն :

— Չեմ գիտեր թէ Բարլմէնդը գիտես :

— Մեծաւ մատամբ գիտեմ : Միթէ նախադա՛հ մ'է :

— Ո՛չ, պարզ խորհրդական մը :



— Հս , հս :

— Ար վանէլ կ'կոչուի :

Արամիս բոլորովին ծիրանեղոյն եղաւ :

— վանէլ — գոչեց նա ոտք ելնելով — վանէլ , Մարգարիտ վանէլի էրիկը :

— Ճիշտ նոյն ինքն է :

— Բու վաղեմի սիրուհւոյդ :

— Այս , սիրելիդ իմ , կ'փափաքի նա տիկին ընդհանուր տեղակալուհի դասնալ : Այս բանս պարտաւոր էի խեղճ վանէլին , և ասով շահաւոր կ'էլնեմ , քանի որ անոր կնկան հաճոյք պիտի պատճառեմ :

Արամիս շնորհակ Փութէի եկաւ և անոր ձեռքը բռնեց :

— Միթէ գիտե՞ս — ըսաւ — տիկին վանէլի նոր սիրողին անունը :

— Ա՛հ , միթէ նոր սիրոյ մ'ունի , այդ չգիտէի , և ստուգիւ , ս՛չ , չգիտեմ թէ ինչ է անոր անունը :

— Անոր անունն է Պ. Ժան-Պաթիստ Գօլարէր , գանձուց տեսուչ է , Բրուա-տէ-Բրդի-Շան փողոցը կ'ընակի , այն տեղն որ այս իրիւն տիկին Շէվրէօզ գնաց Մաղարէնի նամակները տանելու , զորս ծախել կ'ուզէ :

— Ատուանձ իմ — մըմնաց Փութէ իր քրտնաթոր ճակատը սրբելով — Ատուանձ իմ :

— Հիմակ խելքդ տեղ ըրաւ , այնպէս չէ՞ :

— Ար կորսուած եմ , այս :

— Միթէ կարծես թէ այս պարագայիս մէջ Աեկուտին չափ խոստմնապահ լինելն աւելորդ է :

— Ա՛հ — ըսաւ Փութէ :

— Յամաւ մարդիկ — մըմնաց Արամիս — միշտ այնպէս գիրք մը կ'ընեն որ իրենց վրայ զմայլով դանուի :

Փութէ անոր եկնցուց ձեռքը :

Նոյն պահուն՝ խեցիէ սերճ ժամացոյց մը , ոսկի նկարներով , որ կրակարանին գիմացը սեղանի մը վրայ գրուած էր , աւաւօտեան ժամը վեց զարկաւ :

Գուռ մը հնչեց ներքնագաթին մէջ :

— Պ. վանէլ — ըսաւ կուրվիլ ներս մտնելով զահլճին դռնէն

— կ'հարցնէ թէ արդեօք կրնա՞ք զինքն ընդունիլ , տէր իմ :

Փութէ իր աչքն Արամիսին աչքէն զարձուց և պատասխանեց .

— Ներս մտցո՛ւր Պ. վանէլը :

Ժ

Պ. ԳՕԼՊԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Վանէլ՝ խօսակցութեան այն վայրկենին ներս մտնելով՝ Արամիսի և Փութէի համար ուրիշ բան մը չէր , բայց եթէ կէտն որ խօսք մը կ'աւարտէ :

Բայց նորեկ վանէլի համար Արամիսի ներկայութիւնը Փութէի գահլճին մէջ բոլորովին տարբեր նշանակութիւն մը պիտի ունենար :

Աւտի գնորդը՝ այն ինչ առաջին քայլ մ'ըրաւ սենեկին մէջ՝ այն վանի եպիսկոպոսին կերպարանին վրայ , որ նուրբ և միանգամայն անյողզող էր , զարմանահար ակնարկ մը նետեց որ իսկոյն հետաքննիչ եղաւ :

Իսկ Փութէ՝ իրրև ճշմարիտ քաղաքագէտ մարդ՝ այսինքն՝ ինքն իրեն իշխան , իր կամաց զօրութեամբն արդէն Արամիսի յայտնութենէ գէմբին վրայ յառաջ եկած այլայլութեան հետքը փարատեր էր :

Աւտի ձախորդութենէ նկուն և մանր մունր հնարք փնտուղ մարդ մը չէր նա , գլուխը վեր բռներ և ձեռքը կարկառեր էր վանէլը ներս հրաւիրելու համար :

Առաջին պաշտօնեաց էր , իր տունն էր :

Արամիս վերատեսուչը քաջ կ'ճանչէր : Իր սրտին բոլոր փափուկութիւնը , իր մտքին բոլոր մեծութիւնը զինքը զարմացնող բան մը չունէին : Աւտի նուն ժամուն բաւական համարեց սորվելու և



բան հասկընալու համար նայող մարդու մը գժտարին գերը խազալ, ՚ի հարկին խօսակցութեան մէջ իրապէս մանեւու ազատ լինելով :

Վանէլ յայտ յանդիման այլայլած կ'երևեր : Գահլճին մէջ տեղը հասաւ, ամէն բան և ամենքը բարեւելով,

— Ահա եկայ . . . — ըսաւ նա :

Ֆուքէ գլխի նշմայր մ'ըբաւ :

— Գու ժամասպահ ես, Պ. Վանէլ — ըսաւ նա :

— Տէր, գործերու մէջ կարծեմ թէ ճշգոթ թիւնն առաքինու թիւն մ'է — սպասասխանեց Վանէլ :

— Այո՛, պարոն :

— Ներէ՛ — ընդմիջեց Արամիս, մատով Վանէլը ցոյց տալով, և Գուքէի խօսելով — ներէ՛, միթէ այս սարսնն է որ սաշտօնդ գնեւ կ'ուզէ :

— Ես եմ — սպասասխանեց Վանէլ և զարմայաւ թէ ինչ ամբարտաւանութեամբ Արամիս այս հարցումը կ'ընէր : — Բայց ի՞նչպէս անուանել պէտք է այն որ սրտիւ կ'ընէ ինձ . . . :

— Տէր իմ, անուանէ՛ զիս — սպասասխանեց Արամիս վէտօրէն : Վանէլ խոնարհութիւն ըրաւ :

— Աղէ՛, աղէ՛, պարոններ — ըսաւ Գուքէ — մարդալարական կերպերը ձգենք և շիտակ խնդրոյն գառնանք :

— Տէր իմ, կ'տեսնէք — ըսաւ Վանէլ — ձեր հրամանին կ'ըստս պատեմ :

— Ընդ հակառակն՝ ես կ'սպասեի — սպասասխանեց Գուքէ :

— Ի՞նչ կ'սպասեիք, տէր իմ :

— Կ'կարծէի թէ ինձ բան մ'ունիս ըսելու :

— Հօ՛, հօ՛ — մըմուաց Վանէլ ինքնիրեն — գործին վրայ խորհած պիտի լինի, կորսուեցայ :

Բայց սիրտ առնելով,

— Ո՛չ, տէր իմ, չկայ, բնաւ ուրիշ բան չկայ այլ միայն երէկուան ըսածս, զոր կրկնելու ստարաստ եմ :

— Նայինք, բայէ՛ ՚ի բաց ըսէ, Պ. Վանէլ, միթէ այս տակարարութիւնը քեզ համար քիչ մը ծանր չէ՞, ճիշտն ըսէ :

— Արդարեւ, տէր իմ, մէկ ու կէս միլիօն մեծ գումար մ'է :

— Այնքան մեծ որ մտածեցի որ . . . :

— Մտածեցիք, տէր իմ — գոչեց Վանէլ աշխտովու :

— Այո՛, մտածեցի թէ կարելի է գնելու վիճակի մէջ չես գտնուիր :

— Ո՛չ, տէր իմ . . . :

— Հանդարտէ՛, Պ. Վանէլ, խօսքդ շտտնելուդ քեզ չպիտի պարսաւեմ, ՚ի հարկէ անկարողութիւնդ է սլատաւա :

— Ընդ հակառակն, տէր իմ, զիս պիտի մեղադրէիք և իրաւունք պիտի ունենայիք — ըսաւ Վանէլ — վասն զի անխոհեմ կամ յիմար մարդը միայն պահելու չկրցած խոստումներ կ'ընէ, և միշտ սրայմանեալ գործ մ'իրբև լինցած գործ նկատած եմ :

Ֆուքէ կարմրեցաւ : Արամիս հը՛ճ մ'ըբաւ անհամբերութեամբ :

— Բայց պէտք չէ որ այդ գաղափարներդ ծայրայեղ երևին քեզ, պարոն — ըսաւ վերատեսուչը — վասն զի մարդուս միտքը փոփոխական և շատ ներքի հովերով լի է, երբեմն շատ յարգելի խի, և մարդ ինչ որ երէկ փափաքեցաւ, վաղը կ'զլը՛յ անոր վրայ :

Վանէլ սրալ քրտինք մ'զգաց որ ճակտէն այտերուն վրայ կը վազէր :

— Տէր իմ . . . — թոթովեց նա :

Իսկ Արամիսի դալով՝ երբ տեսաւ որ Գուքէ այնչափ սաղաւթութեամբ վիճաբանութեան մէջ մտաւ, գոհութիւն զգաց, և սեղանի մը մարմարին կը թնելով՝ մոլորաբարէ կոթ ունեցող փոքրիկ ոսկի դանակով մ'սկսաւ խաղալ :

Ֆուքէ շտտն առաւ, յետոյ՝ պահ մը լուռութիւն պահելէն ետև,

— Ահա, սիրելիդ իմ Պ. Վանէլ — ըսաւ նա — հիմակ քեզի պիտի բացատրեմ խնդրոյն վիճակը :

Վանէլ դող ելաւ :

— Գու վեհանձն մարդ մ'ես — շարունակեց Գուքէ — և ինձի պէս պիտի հասկընաս գործը :

Վանէլ երերաց :

— Երէկ կ'ուզէի ծախել :



— Տէր իմ, ոչ միայն երեկ ծախել ուզեցիք, այլ ծախեցիք :

— Լսու, թող այդպէս լինի, բայց այսօր իբրև շնորհ կ'հայցեմ իզնէ ընդունած խօսքն ինձ դարձնելու :

— Այդ խօսքը — ըսաւ Աւանէլ — իբրև անողորբելի արձագանք մ'ընդունեցայ :

— Գիտեմ այդ : Ահա ասոր համար կ'աղաչեմ քեզ, Պ. Աւանէլ, կ'ընեն, կ'աղերսեմ որ ինձ դարձնես . . . :

Քուքէ խօսքը կարեց : Այս շեղ կողերէ՞ խօսքը, որու անմիջական հետևութիւնը չէր իմանար, իր կողորդը պատուեր էր դուրս ելնելու ատեն :

Արամիս՝ միշտ իր գանակովը խողալով՝ Աւանէլի վրայ այնպէս յառած էր աչքն որ կարծես թէ սրտին խորը թափանցել կ'ուզէր :

Աւանէլ խոնարհութիւն ըրաւ :

— Տէր իմ — ըսաւ — շատ յուզուած եմ ինձ ըրած պատիւէդ որով կատարուած իրողութեան մը վրայ խորհուրդ կ'հարցնեք ինձ, բայց . . . :

— Բայց մի ըսեր, սիրելի Պ. Աւանէլ :

— Աւագ, տէր իմ, մտածեցէք մի անգամ որ ստակը բերի, ըսել կ'ուզեմ գումարը :

Էւ խոշոր թղթակալ մը բացաւ :

— Աւասիկ, տէր իմ — ըսաւ — աւասիկ իմ կնոջս մէկ հողը ծախելուս վրայ ըրած պայմանագիրս : Մուրհակը հրամանիս է, պէտք եղած ստորագրութիւնները կ'կրէ, և 'ի տես վճարելի է : Անխիկ գրամ է, գործը լմնցած է, վերջապէս :

— Սիրելիդ իմ Պ. Աւանէլ, այս աշխարհիս մէջ գործ մը չկայ, որչափ որ կարևոր լինի, որ պարտաւորելու համար ետ ձգուած չլինի . . . :

— Ստոյգ է . . . — մրմնաց Աւանէլ անմտօրէն :

— Շնորհապարտ ընելու համար մարդ մ'որ այսպէս բարեկամդ պիտի լինի — շարունակեց Քուքէ :

— Ճշմարիտ է, տէր իմ . . . :

— Էւ այնչափ օրինաւոր բարեկամ մ'ըրած պիտի լինիս, Պ.

Աւանէլ, որչափ որ ըրած ծառայութիւնդ խիստ մեծ պիտի լինի : Լաւ ուրեմն, նայինք, պարոն, ինչ կ'որոշես :

Աւանէլ լուութիւն պահեց :

Նոյն պահուն Արամիս իր դիտողութիւններն ամփոփեր էր : Աւանէլի նեղ գէմքը, խորասոյղ ակնակապիճները, կամարներու պէս կլոր ունքը, Աւանի եպիսկոպոսին յայտներ էին որ նա աղահայ էր և փառասէր : Արք մ'ուրիշ կըբով մը խրամատել, այս է Արամիսի հնարքը :

Տեսաւ որ նկուն, անսիրտ էր Քուքէ, և նոր զէնքով պայքարին մէջ մտաւ :

— Ներեցէք ինձ, տէր իմ, կ'մտնար Պ. Աւանէլի հասկըցընելու որ մեծ վնաս պիտի կրէ եթէ այս վաճառումն հրաժարի :

Աւանէլ եպիսկոպոսին նայեցաւ զարմանօք. չէր յուսար որ նա իրեն օգնական լինի : Քուքէ ևս լուեց եպիսկոպոսը մտիկ ընելու համար :

— Այսպէս — շարունակեց Արամիս — Պ. Աւանէլ իր կնոջը մէկ հողը ծախեց ձեր պաշտօնը զնելու համար, տէր իմ. լսու, այդ գործ մ'է, այդ. 'ի հարկէ մարդ մէկ ու կէս միլիօն ֆրանք չտեղափոխեր, ինչպէս տեղափոխեց Պ. Աւանէլ, աւանց նշանաւոր կորուստի, աւանց ծանր նեղութեանց :

— Այդ իրաւ է — ըսաւ Աւանէլ, որմէ Արամիս՝ իր լուսաւոր աչերով ճշմարտութիւնը սրտին խորէն կ'քաղէր :

— Այնպիսի նեղութիւններ — շարունակեց Արամիս — որ ծախուց կ'վերածին, և երբ մարդ գրամական ծախս մը կ'ընէ, այս ծախքն առաջին տեղը կ'բռնեն տուժարին մէջ :

— Այո, այո — ըսաւ Քուքէ, որ կ'սկսէր հասկընալ Արամիսի դիտաւորութիւնները :

Աւանէլ լուռ ու մունջ կեցաւ, գործը հասկըցեր էր :

Արամիս այս սղաղութիւնն ու զգուշութիւնը դիտեց :

— Բարի՛ — ըսաւ մտքովը — տղեղ երես, խոհեմութիւն կը ծախես մինչև որ գումարն իմանաս, բայց մի երկնչիր, քեզի այնչափ սկուտներ պիտի նետեմ երեսիդ որ 'ի վերջէ անձնատուր պիտի լինիս :



— Պէտք է Պ. Վանէլի ընծայել հարիւր հազար սկուա —  
ըսաւ ֆուքէ իր վեհանձնութենէ դրդեալ :

Աղ որ էր գումարը : Իշխան մ'անդամ այգսիսի սրարդէ մը  
զոհ պիտի լինէր : Հարիւր հազար սկուա , այն ատենը , թագա-  
ւորի մ'աղջկան օժիտն էր :

Վանէլ անշարժ մնաց :

— Անդամ մ'է այս մարդը — մտածեց եպիսկոպոսը . — Ի-  
րեն կլարիկ հինգ հարիւր հազար ֆրանք պէտք է :

Եւ ֆուքէի նշան մ'ըրաւ :

— Ա'բրեի թէ այս գումարէն աւելի ծախս բրած ես , սիրե-  
լից իմ Պ. Վանէլ — ըսաւ վերատեսուչը : — Ա՛հ , զբամն ան-  
դին է : Այո , մեծ զոհողութիւն մ'ըրած պիտի լինիս այդ հողը  
ծախելով : Լաւ , ո՞ր էր խելքս : Հինգ հարիւր հազար ֆրանքի  
մուրհակ մը պիտի ստորագրեմ : Եւ դարձեալ քեզի շնորհատարս  
պիտի մնամ :

Վանէլ ս'չ ուրախութեան ոչ փափաքանայ յայտնի նշան մը  
ցցուց : Իր կերպարանն անդրդուելի մնաց , և գէմքին մէկ ջին  
անդամ չշարժեցաւ :

Արամիս յուսահատ ակնարկ մը զրկեց ֆուքէի : Ապա Վանէլի  
կողմը յառաջանալով , անոր կրկնոյլն վերի կողմէն բռնեց մեծ  
կարեւորութիւն ունեցող մարդոց յատուկ շարժումով մը :

— Պ. Վանէլ — ըսաւ նա — նեղութիւն չէ , զբամն անզափո-  
թութիւն չէ , հողից վաճառումը չէ քու միտքդ զբաղեցնողը ,  
այլ բարձրագոյն գաղափար մ'է : Ա'իմանամ , իմ խօսքիս կէտ  
դի՞ր :

— Այո , տէր իմ :

Եւ ողորմելի մարդը կ'սկսէր գողալ , եպիսկոպոսին աչաց հու-  
րը զինքը կ'լափէր :

— Ուտի ես , յանուն վերատեսչին , քեզի կ'ընծայեմ չէ թէ  
երեք հարիւր հազար ֆրանք , չէ թէ հինգ հարիւր հազար , այլ  
միլիոն մը : Միլիոն մը , կ'լսես :

Եւ զանի ջլաձիգ շարժմամբ ցնցեց :

— Միլիոն մը — կրկնեց Վանէլ բոլորովին գունատ :

— Միլիոն մը , այսինքն՝ ներկայ ժամանակիս նայելով , վաթ-  
սունը վեց հազար ֆրանքի եկամուտ մը :

— Օ՛ն , սարսն — ըսաւ ֆուքէ — այդ չմերժուիր : Ուտի  
պատասխան ատէր , միթէ կ'ընդունին :

— Անկարելի բան . . . — մրմնաց Վանէլ :

Արամիս իր շրթուները սնդեց , և սպիտակ ամպի նման բան մը  
իւր կերպարանէն անցաւ :

Այս ամպին ետեւը կայծակ կ'զուշակուէր : Վանէլը ձեռքին  
չէր թողուր :

— Մէկ ու կէս միլիոնի գնեցիր սաշտօնը , այնպէս չէ՞ : Լա-  
ուրեմն , քեզի այդ մէկ ու կէս միլիոնը պիտի տրուի , մէկ ու կէս  
միլիոն վաստըղած պիտի լինիս Պ. ֆուքէի այցի գալով և անոր  
ձեռքին գտելովդ : Պ. Վանէլ , սրտիւ և միանդամայն վաստակ  
քեզի համար :

— Չեմ կարող — պատասխանեց Վանէլ խուլ ձայնով մը :

— Լաւ — պատասխանեց Արամիս , որ այնքան սեղմեր էր  
կրկնոյր , որ զայն թողլու ատեն , Վանէլ ետէն ընկաւ ուժղին  
— լաւ , հիմակ ակն յայտնի կ'երևի թէ ինչ բանի համար այս  
տեղ եկար :

— Այո , կ'ատենենք — ըսաւ ֆուքէ :

— Բայց — ըսաւ Վանէլ կանգնելու փորձ փորձելով այս եր-  
կու պատուաւոր մարդոց ախարութեան առջև :

— Աարձեմ թէ անդամը ձայնը կ'բարձրացնէ — ըսաւ Արա-  
միս կայսեր մը կերպով :

— Անդամ — կրկնեց Վանէլ :

— Թշուառական ըսել կ'ուզէի — յարեց Արամիս պաղարխնու-  
թիւնը գանձելով : — Շնորհ , սարսն , վաճառման պայմանադիրդ  
հանէ , անտարակոյս մէկ դրպանից մէջ զայն ստորատտ պիտի  
ուեննաս , ինչպէս մարդասպան մ'որ իր հրացանակը կամ դու-  
շոյնը վերարկուին ներքեւ կ'սպահէ թագուն :

Վանէլ քրթմնջեց :

— Բաւական է — պաւսց ֆուքէ : — Նայինք , հանէ այդ պայ-  
մանագիրը :



Վանէլ գրպանը խառնեց գողգողալով . անկից գրասպասը հանեց , և գրասպասէն թուղթ մը գուրս ընկաւ , մինչդեռ Վանէլ միւսը ֆուքէին կ'տար :

Արամիս սոյն թղթին վրայ ընկաւ , որու ձեռագիրը ճանչեր էր :

— Ներնցէք — ըսաւ Վանէլ — այդ պայմանագրին ծրագիրն է :

— Քաջ կ'տեսնեմ — սրտասխանեց Արամիս մտրակի մը հարուածէն աւելի անագորոյն ժպիտ մը ցոյց տալով — և իմ սքանչւոյցմանս պատճառն այն է որ այս ծրագիրը Պ. Գօլպէրի ձեռօք գրուած է : Առէք , տէր իմ , և նայեցէք :

Ծրագիրը ֆուքէի անցուց և այս ալ աչօքը տեսաւ այս իրողութեան ճշմարտութիւնը : Քերթուկներով , վերագիր բառերով , լուսանցքը սև զծերով լեցուն այս սրայմանագիրը , Գօլպէրի դատադրութեան կենդանի ստացոյց մը , ամէն ինչ բացայայտ ըրեր էր զո՛հ ընկող մարդուն :

— Լաւ ուրեմն — մրմնաց ֆուքէ :

Վանէլ , զգեստնալ՝ կարծես թէ խոր ծակ մը կ'փնտռէր անոր մէջ սուղելու համար :

— Լաւ ուրեմն — ըսաւ Արամիս — թէ որ ֆուքէ չկոչուէիք , և եթէ ձեր թշնամին Գօլպէր չկոչուէր , թէ որ ձեր զինացը սու վատ գողը չունենայիք , ձեզի պիտի ըսէի , ուրացէք . . . : Այդպիսի փաստ մ'ամէն խօսք կ'ջնջէ . բայց այս մարդիկ պիտի կարծեն թէ կ'վախնար , ընդհատ պիտի երկնչին ձեզնէ , ահա առէք , տէր իմ :

Գրիչն անոր տուաւ :

— Ստորագրեցէք — ըսաւ անոր :

Ֆուքէ Արամիսին ձեռքը սեղմեց , բայց՝ իրեն ներկայացուած պայմանագրին տեղ՝ ծրագիրն առաւ :

— Չէ թէ այդ թուղթը — ըսաւ Արամիս միամտութեամբ — այլ այս : Միւսը շատ թանկագին է և պէտք է որ պահէք :

— Ա՛հ , ո՛չ — սրտասխանեց ֆուքէ — Պ. Գօլպէրի գրած թուղթն իսկ պիտի ստորագրեմ , և ահա կ'զրեմ . « Գրուածոյն հաւան եմ » :

Եւ ստորագրեց :

— Ա՛ռ նայիմ , Պ. Վանէլ — ըսաւ նա այնուհետեւ :

Վանէլ թուղթն առաւ , ստակը տուաւ և խոյս տալ ուզեց :

— Պահ մը սպասէ — ըսաւ Արամիս : — Միթէ սոոյ՛գ էս որ ստակիդ հաշիւը ճիշտ է : Այդ համբել պէտք է , Պ. Վանէլ , մանաւանդ երբ այնպիսի ստակ մ'է զոր Պ. Գօլպէր կանանց կը տայ : Ա՛հ , Պ. ֆուքէին սէս վեհանձն չէ , այն քու աբժանի Գօլպէրի :

Եւ Արամիս մտրճակին մէն մի բառը , մէն մի տառը հեղելով , իր բոլոր բարկութիւնը և արհամարհանքը կաթիլ առ կաթիլ թափեց այս ապիրատին վրայ , որ կէս քառորդի չափ այս տանջանքը կրեց . ապա զանի ճամբայ գրին , չէ թէ ձայնով , այլ շարժումով մը , ինչպէս որ զեղջուկ մը կ'վանեն , ինչպէս որ ծառայ մը կ'վանան :

Երբ մի անգամ Վանէլ մեկնեցաւ դնաց , պաշտօնեայն և եպիսկոպոսը , իրարու վրայ իրենց նայուածքը յառած , պահ մը լուռութիւն պահեցին :

— Լաւ ուրեմն — ըսաւ Արամիս ամենէն առաջ լուռութիւնը խղելով — ինչ բանի հետ կ'բաղդատես մարդ մ'որ , զբահեալ , զինեալ , կատաղի թշնամոյ մը դէմ պատերազմելու պարտաւորեալ լինելով , իր զէնքը վար կ'նետէ , և իր հակառակորդին շնորհալի համբոյրներ կ'զրկէ : Անկեղծութիւնը , Պ. ֆուքէ , զէնք մ'է զոր ոճրագործները կ'գործածեն բարի մարդոց դէմ և այս զէնքն իրենց կ'յաջողի : Ուստի բարի մարդիկը պարտաւոր են կեղծեօք վարուիլ ապիրատներու հետ : Այն ատեն պիտի տեսնելիք թէ որչափ ուժեղ պիտի լինէին առանց պարկեշտ լինելէն գաղբելու :

— Իրենց գործերն ապիրատի գործեր պիտի անուանէին — սրտասխանեց ֆուքէ :

— Ամենեին , այն ատեն այս բանս ուղղութեան պէտքը պիտի անուանէին : Վերջապէս , քանի որ այս Վանէլին հետ գործը լնցուցիր , քանի որ խօսքդ ուրանալով զանի տապաստ ձղերու բարեբաղդութենէ ինքզինքդ զրկեցիր , քանի որ քեզ ՚ի կուրուստ տանող միակ զէնքն անոր տուիր . . . :



— Ա՛Տ , բարեկամդ իմ — ըսաւ Գուքէ արտմութեամբ — ահա կ'անանիս այժմ այն խրատառու փիլիսոփային որու վրայ անցածն օր : Լա Փօնդէն կ'իսուէր . . . : Ա՛տեննէ որ սղան կ'իսղգուի , և երկայն ճառ մը կ'իսօսի անոր :

Արամիս յայտեցաւ :

— Թո՛ղ փիլիսոփային նմանիմ , այո՛ , խրատառու դաստիարակ եմ , այո՛ . սղան կ'իսղգուի , այո՛ . բայց այդ սղան պիտի ազատենք , և ի՛նչպէ՛ս , հիմակ պիտի տեսնես : Եւ նախ զործոց վրայ խօսինք : Փուքէ անոր երեսը նայեցաւ զարմանօք :

— Մի՛թէ երբեմն Ա՛օի մէջ հանդէս մը կատարելու խորհուրդը չյայտնեցիր ինձ զազանապէս :

— Ա՛Տ — ըսաւ Գուքէ — ազէկ ատեններս :

— Հանդէս մ'որուն ինքզինքը հրաւիրէր էր թագաւորը կարծեմ :

— Ա՛Տ , սիրելի եպիսկոպոս . հանդէս մ'որու ինքզինքը հրաւիրելու համար Գօլպեր թագաւորին խորհուրդ տուեր էր :

— Ա՛Տ , այո՛ , իբրև շատ մեծածախ հանդէս մը , որով կարծէր թէ բոլորովին քեզ պիտի կործանէր :

— Ճիշտ այդպէս : Ճոխ ատեններս , ինչպէս որ քիչ մ'առաջ կ'ըսէի , իմ թշնամեաց ճոխութեանս ցոյցերն երևան հանելու գոռոզութիւնն ունէի , պատիւ կ'սեպէի զարհուրեցնել զանոնք միլիօններ ստեղծելով այն անգն որ միայն սնանկութիւններ տեսեր էին : Բայց՝ այսօր , աէրութիւն , թագաւոր և ես իմ ծախուցս մասնակից ենք , այսօր կ'ծծի մարդ մը պիտի գառնամ , պիտի ցոյց տամ աշխարհի որ տէրութեան եկամուտներն իբրև անդին ոսկի կ'նկատեմ , և վաղուանէ սխտալ՝ իմ ձիերս , սպասքս պիտի ծախուին , տուներս զբաւի պիտի գնեմ , ծախքս պիտի դադրեցընեմ . . . :

— Վաղուանէ սխտալ — ընդմիջեց Արամիս հանդարտութեամբ — պիտի սխտալ , սիրելիդ իմ բարեկամ , այն Ա՛օի ազրոր հանդիսին հօգը տանիլ , որ օրին մէկը ճոխութեանդ իբրև մէկ զիւցազնական շքեղութիւնը պիտի յիշուի :

— Յիմար ես , Հէրպլէյ ասպետ :

— Ե՛ս , դու այդպէս չես մտածեր :

— Ինչպէս : Բայց մի՛թէ դիտէ՛ս թէ հանդէս մ'ինչ կ'արժէ , Ա՛օի մէջ ամենապարզ հանդէս մը : Չորս հինգ միլիօն :

— Սիրելի վերատեսուչս , ամենապարզ հանդիսի վրայ չէ խօսքս :

— Բայց՝ որովհետև այս հանդէսը թագաւորին պիտի արուի — պատասխանեց Գուքէ , որ Արամիսին բուն միտքը չէր հասկընար — չկրնար պարզ լինիլ :

— Ճիշտ այդպէս , անտարակոյս մեծ փառաւորութեամբ պիտի կատարուի :

— Ուրեմն տասն տասն երկու միլիօն պիտի ծախք ընեմ :

— Եթէ պէտք է քսան միլիօն կրնաս ծախս ընել — ըսաւ Արամիս առանց այլայլութեան :

— Ո՛ւսկից պիտի գտնեմ այդ գումարը — զոչեց Գուքէ :

— Այդ իմ դիտնալիք բանս է , պարոն վերատեսուչ , և պահ մ'անհանգիստ մի լինիր : Գումարը՝ հանդիսին յատակագիծը քումարիդ մէջ որոշելէն առաջ՝ պիտի ընդունիս :

— Ասպէտ , ասպէտ — ըսաւ Գուքէ ցնորեալ — ո՛ւր կ'ըջես զիս :

— Այն ընկնելիք անդուղիդ միւս կողմը — պատասխանեց Արամիս եպիսկոպոսը : — Իմ կրկնօրիս փաթթուէ , և մի երկնչիր :

— Ինչո՞ւ համար այդ բանն տելի կանուխ չըսիր ինձ , Արամիս : Եկաւ օր մ'երբ մէկ միլիօնով զիս կրնայիր ազատել :

— Մինչդեռ այսօր . . . մինչդեռ այսօր , քսան միլիօն պիտի տամ — ըսաւ եպիսկոպոսը : — Լաւ , թող տամ . . . բայց ասոր պատճառը պարզ է , բարեկամ , այն ըսած օրդ ինձ պէտք եղած միլիօնը չունէի : Այսօր դիւրաւ պիտի ստանամ ինձ պէտք եղած քսան միլիօնը :

— Աստուած լսէ բերնէդ և զիս ազատէ :

Արամիս , ըստ սովորականին , սխտալ քմծիծաղիլ :

— Աստուած կ'լսէ զիս — ըսաւ նա — թերևս ասոր պատճառն այն է որ բարձրաձայն կ'աղօթեմ :

— Բոլորովին քեզի անձնատուր կ'լինիմ — մրմուաց Գուքէ :

— Ա՛Տ , ես այդպէս չեմ ըմբռներ խնդիրը : Ես ինքզինքս բոլորովին քեզի պիտի յանձնեմ : Ուստի , դու որ յետին ծայր նուրբ :



փափուկ և հնարագէտ միտք ունիս , դու պիտի հրամայես հանդիսին մանրամասն կարգադրութիւնը : Միայն . . . :

— Միայն — ըսաւ Փութէ իբր մարդ որ միջանկեալ խօսքի գինը հասկընալու վարժ է :

— Լաւ , հանդիսին մանր կարգադրութեան զիւար քու վրայ թողլալ զորձադրութեան հսկողութիւնն ինձի կ'վերապահեմ :

— Ինչպէս :

— Ըսե՛լ կ'ուզեմ թէ այն օրը զիս տան հազարապետ պիտի ընենս , գլխաւոր մատակարար մը , տեսալ մը հոգաբարձու , որ կէս մը պահակաց հրամանատարի և կէս մը տնտեսի պաշտօն կ'վարէ . մարդիկը պիտի վարեմ , և զուներուն բանալիները պիտի ունենամ , դու հրամաններ պիտի տաս , իրաւ , բայց այդ հրամաններն ինձի պիտի տաս . իմ բերնէս պիտի անոյնին անոնք պէտք եղած տեղն երթալու համար , կ'հասկընամ :

— Ա՛չ , չեմ հասկընար :

— Բայց կ'ընդունին :

— Ի՞նչպէս չէ , անշուշտ կ'ընդունիմ :

— Իմ ուզածս ալ այդ է : Աւրեմն շնորհակալ եմ , և հրաւիրելոյց ցուցակն ըրէ :

— Եւ զով պիտի հրաւիրեմ :

— Ամենքը :

### ԺԱ.

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿԵՐԵԻԻ ԹԷ ԺԱՄ Է ՊՐԱԺԼՕՆ ԴԵՐԿՈՄՄԻՆ ԴԵՌԿՆԱԼՈՒ

Մեր ընթերցողներն այս պատմութեան մէջ տեսան նոր սերունդին և անցեալ սերունդին արկածներուն զուղահեռապէս ընթանալը :

Ոմանց համար հին փառաց նշոյլը , այս աշխարհիս վշտալի իրաց փորձառութիւնը : Անոնցն է նաև այն խաղաղութիւնն որ սիրտ կը

համակէ և թոյլ կ'տայ արեան անդորրելու սպիններուն բոլորախօն որ երբեմն անսպորոյն վէրքեր եղան :

Այլոց համար կ'զան ինքնահաճութեան և սիրոյ կռիւները , դառն վիշտեր և անպատում խնդութիւններ , կեանք յիշողութեան տեղ :

Եթէ այս պատմութեան եղերական արկածից մէջ ընթերցողը տեղ տեղ զանազանութիւններ տեսաւ , պատճառն այն արդաստուոր երանդներն են որ այս կրկնակի գոյներու պնակէն կ'ժայթքին , ուր երկու պատկերներ մօտ առ մօտ կ'երևին , կ'խառնուին և իրենց մթին ու զուարթագին երևոյթը կ'զաշտաորեն :

Միոյն այլայլութեանց հանդիսան անոր մէջ միւսին այլայլութեանց ծոցը կ'զսնուի : Ծերերու հետ բանապատելէն ետև՝ մարդ կ'ախորժի երիտասարդաց հետ ցնորիլ :

Աստի երբ այս պատմութեան լծերը մեր գրած գլուխը զօրապէս չկցորդեր մեր արդէն գրած գլխին հետ , այնչափ հոգ չպիտի ընէինք , որչափ չբռաւ Ռուստակէլ երբ աշնան երկին մը կ'նկարէր զարնանը նկարելէն ետև :

Այորգորները ընթերցողն որ նոյնն ընէ և մեղէ հետ դայ գանէ Ռատլ Պրաժլօնն այն տեղն ուր մեր վերջին ուրուագիրը զինքը թողուց :

Ռատլ՝ արբշլու , զարհուրած , վշտաբեկ , կամ լաւ ևս ցնորեալ , անկամ և աննպատակ խոյս տուաւ այն տեսարանէն ետք՝ որու վախճանը տեսեր էր Լա Աալիէրի սենեակը : Թագաւորը , Վօնդալէ , Լուիզ , այս սենեակը , այդ այլանդակ արտաքսումը , Լուիզի այն վիշտը , Վօնդալէի սոսկումը , թագաւորին զայրոյթը , ամէն ինչ աղէտից գուշակ էին իրեն համար : Բայց ի՞նչ աղէտ :

Լոնտօնէն գառնալով՝ վասն զի իրեն վտանգ մը կ'իմացնէին , Պրաժլօն առաջին անգամ իսկ այս վտանդին նշանը կ'տեսնէր : Միթէ այս բաւական չէր սիրողը մը համար : Այո՛ , անտարակոյս , բայց այդ բաւական չէր անխւ սրտի մը համար , որ իրենին նման ուղիղ սրտի մը վրայ վտանդի ենթարկուիլը սլարձանք կ'սեպէր :

Սակայն Ռատլ նախանձաւ կամ զէթ երկչտ սիրողներու պէս չչնոց անմիջապէս բացատրութիւն խնդրելու այն տեղ ուր ասոնք



կ' փնտռեն : Չգնաց ըսելու իր սիրուհւոյն . « Լուիզ , միթէ զիս չեն սիրեր . Լուիզ , միթէ ուրիշ մը կ' սիրես » : Արիութեամբ , բարեկամութեամբ ինչպէս նաև սիրով լին մարդ մը , իր խօսքը ջերմեանդութեամբ պահուի , և ուրիշին խօսքին հաստացող մարդու մը պէս , Ռատու ըսաւ իւրովի . « Կիշ ինձի դիր գրեց ազդարար , Կիշ բան մը գիտէ , երթամ պիտի Կիշին հարցնելու թէ ի՞նչ գիտէ , և անոր պիտի ըսեմ տեսածս » :

Ճամբան երկայն չէր : Կիշ երկու օրէ ' ի վեր ' ֆօնդէնպլօէն Բարիզ բերուելով իր վէրքը դարմանելու սկսեր էր և իր սենեկին մէջ քանի մը քայլ կ' առնուր :

Ուրախութեան աղաղակ մ' արձակեց երբ տեսաւ Ռատուին ներս մտնելն իր ջերմաջերմ բարեկամութեամբը :

Ռատու վշտազին ձայն մը հանեց տեանելով Կիշն այնքան դուստար , այնքան նիհարցած , այնքան ախուր : Ախրաւորին ըրած երկու խօսքն ու շարժումը Ռատուին թեւը հեռացնելու համար , այս վերջնոյն բաւական եղան ճշմարտութիւնը յայտնելու :

— Ա՛հ , ահա՛ — ըսաւ Ռատու իր բարեկամին մօտ նստելով — այդպէս կ' սիրես ու կ' մեռնիս :

— Ա՛հ , ո՛չ , չեմ մեռնիր — պատասխանեց Կիշ ժպտելով — քանի որ ոտքի վրայ եմ , քանի որ քեզ իմ գրկացս մէջ կ' սեղմեմ :

— Ա՛հ , կ' իմանամ միտքդ :

— Եւ ես քու միտքդ կ' իմանամ : Գու այնպէս համոզուած ես որ դժբանգդ եմ , Ռատու :

— Ափսոս :

— Ա՛հ , ամենէն երջանիկ մարդն եմ : Մարմինս կ' տառապի , այլ ոչ սիրտս , ոչ հոգիս : Եթէ գիտնայի՛ր . . . : Ա՛հ , ամենէն երջանիկ մարդն եմ :

— Ա՛հ , քաջ է — պատասխանեց Ռատու — քաջ է , բուահան է որ այդպէս տես :

— Լմնցաւ , Ռատու , մինչև մահս պէտք եղածն ունիմ :

— Գո՛ւ , ունիս , այո՛ , անտարակոյս , բայց նէ . . . :

— Մտիկ ըրէ ինձ , բարեկամ , զանի կ' սիրեմ . . . վասն զի . . . բայց դու ինձի մտիկ չես ընել :

— ' Ներում կ' ինդրեմ :

— Միթէ հոգ մ' ունիս :

— Անշուշտ : ' Նախ ' առողջութիւնդ ի՞նչպէս է . . . :

— Այդ չէ խնդիրը :

— Սիրելիդ իմ , կարծեմ թէ իրաւունք չպիտի ունենայիր , գու զիս հարցուփորձ ընելու , գո՛ւ :

Եւ այս քո՛ւն շեշտեց այնպէս որ բարեկամին միտքը լուսաւորէ բոլորովին հիւանդութեանը տեսակին և դարմանին դժուարութեանը վրայ :

— Այդպէս կ' խօսիս ինձ , Ռատու , քեզի գրածիս համար :

— Անշուշտ այդպէս . . . : Միթէ կ' ուզէ՞ս որ խօսակցինք քու ցտաբերդ ու զուարճութիւններդ ինձ պատմելէն ետե :

— Սիրելի բարեկամ , քեզի մտիկ պիտի ընեմ , քեզի , անմիջապէս :

— Շնորհակալ եմ . կ' շտապիմ . . . կ' այրիմ . . . : Լնտոնէն այս տեղ եկայ տեղութեան սուրհանգակներուն սովորաբար ըրած ճամբան կիսովին տեւի շուտ ընելով : Լաւ ուրեմն , ի՞նչ կ' ուզէ իր :

— Բայց ոչ ինչ , բայց եթէ քեզ այս տեղ բերել տալ , բարեկամ :

— Լաւ ուրեմն , ահա եկայ :

— Աղէկ ըրիր :

— Կ' երեակայիմ թէ ուրիշ բան ալ կայ :

— Ճշմարիտը , չկայ :

— Կի՛շ :

— Պատուոյս վրայ :

— Զիս բռնապէս իմ յուսալից երազներէս չկորցեցիր , զիս թագաւորին դժգոհութեան չենթարկեցիր , յուսամ , այս վերագարձով որ իր հրամանաց ներհակ է , վերջապէս սրտիս մէջ նախանձը , այս օձը չգրգռեցիր անշուշտ մի միայն ըսելու համար . « քաջ է , հանգիստ քնացիր » :

— Ես քեզ « Լանգիստ քնացիր չեմ ըսել » , Ռատու , բայց լաւ հասկըցիր միտքս , չեմ կարող և չեմ ուզեր տեւիլն ըսել :



— Ո՛Տ, բարեկամ, զիս ի՞նչ բանի տեղ գրեր ես :

— Ինչպէս :

— Եթէ գիտես, ինչո՞ւ համար կ'սրահես, եթէ չգիտես, ինչո՞ւ համար ինձի խնայ կ'տաս :

— Իբրև է, սխալեցայ : Ո՛Տ, շատ կ'զղջամ, հաւատն, Ռաուլ : Բան մը չէ բարեկամի մը գրել, « Եկուր » . բայց այս բարեկամն իմ գիմացս տեսնեմ, անոր գողգողալը տեսնեմ, անոր սարսուիլը գիտեմ խօսք մ'ըսելու յուսով, և չհամարձակիմ այս խօսքն ըսել . . . :

— Համարձակէ : Ես սիրտ ունիմ, միթէ դու չունիս — գոչեց Ռաուլ յուսահատ :

— Ահա անիրաւ ես, և չես տեսներ որ խեղճ վիրաւորի մը հետ կ'խօսիս . . . որ քու սրտիդ կէսն է . . . : Ե՛Տ, հանդարտէ : Ես քեզի ըսի, « Եկուր » և դու եկար, այս գժբազդ Կիւշիս աւելի բան մի հարցնէր :

— Գու ըսիր ինձ որ գամ, յուսալով որ պիտի տեսնեմ, այնպէս չէ :

— Բայց . . . :

— Վարանմունք պէտք չէ : Տեսայ ես :

— Ա՛Տ . . . — ըրաւ Կիւշ :

— Կամ գէթ, կարծեցի . . . :

— Կ'նայիս որ կասկած ունիս : Բայց եթէ վ'կասկածիս, իմ խեղճ բարեկամն, ի՞նչ կ'մնայ ինձ ընել :

— Լա Վալիէրը վրդովեալ տեսայ . . . տեսայ Մ'ճնդալէն շուարած . . . տեսայ թաղաւորը . . . :

— Թաղաւորը :

— Այո՛ . . . գլուխդ կ'դարձնես . . . վտանգն այդ տեղ է, չարիքն այդ տեղ է, այնպէս չէ, թաղաւորն է :

— Բան մը չեմ ըսեր :

— Ո՛Տ, հազար անգամ աւելի կ'ըսես : Իրողութիւն կ'ուզեմ, կ'աղաչեմ, իրողութիւն : Բարեկամ, իմ միակ բարեկամն, խօսէ : Սիրտս ծակծկուած է, կ'արիւնի, յուսահատութենէ կ'մեռնիմ . . . :

— Եթէ այդպէս է, սիրելի Ռաուլ — պատասխանեց Կիւշ — հիմակ սիրտս կ'հանգարտեցնես, և պիտի խօսիմ, ստոյգ լինելով որ սիրտիչ բաներ պիտի ըսեմ քու յուսահատութեանդ համեմատելով :

— Մտիկ կ'ընեմ, մտիկ կ'ընեմ . . . :

— Լաւ ուրեմն — ըսաւ Կիւշ կոմսը — կրնամ ըսել քեզի ինչ որ գիմացդ ելնող առաջին մարդէն կրնաս իմանալ :

— Առաջին մարդէն . ուրեմն այս խնդրոյն վրայ կ'խօսի՞ն — գոչեց Ռաուլ :

— Հարցնէն առաջ թէ « Բարեկամ, կ'խօսի՞ն » գիտցիր թէ ինչ բանի վրայ կրնան խօսիլ : Կ'երգչու՞մ որ դործն ինքնին անմեղ է, թերևս շրջադայութիւն մը . . . :

— Ա՛Տ, շրջադայութիւն մը թաղաւորին հետ :

— Այո՛, թաղաւորին հետ . կ'երևի ինձ որ թաղաւորը ստէպ ման դալու ելած է կանանց հետ, առանց այս մասին . . . :

— Ես ալ պիտի կրկնէի որ ինձ չպիտի գրէիր թէ որ այս պտոյտը բնական էր :

— Գիտեմ որ մըրկին ատեն, աւելի լաւ կ'ընէր թաղաւորն եթէ պատասպարուէր փոխանակ գլուխը բաց կենալու Լա Վալիէրի գիմացը, բայց . . . :

— Բայց . . . :

— Թաղաւորն ո՛րքան քաղաքավար է :

— Ո՛Տ, Կիւշ, Կիւշ, զիս կ'սպաննես :

— Ուրեմն խօսքը գոցենք :

— Ո՛Տ, շարունակէ : Այդ պտոյտէն ետքն ուրիշ պտոյտներ եղան :

— Ո՛Տ . . . այսինքն, այո՛ . կաղնիին արկածը պատահեցաւ : Այս ըսել կ'ուզես, իբրև որ չգիտեմ :

Ռաուլ ոտք ելաւ : Կիւշ փորձ փորձեց անոր ըրածն ընելու, իր տկարութեան չնայելով :

— Կ'նայիս — ըսաւ — բաւ մ'անդամ չպիտի ըսեմ, չափէն աւելի կամ քիչ ըսի : Ուրիշներ կան որ քեզի տեղեկութիւններ պիտի տան եթէ կամենան կամ կարենան, իմ սլաշտօնս էր քեզի



խնայ տալ, ևս ալ խնայ տուի: Այժմ՝ դու ինքնին գործոց վրայ հսկի:

— Հարցումներ ընել: Բարե, դու իմ բարեկամն չես, դու որ այդպէս կ'իստիս — ըստ վշտաբեկ երիտասարդը: — Առաջին անգամ հարցուփորձ ընելիք անձս չարամիտ մը կամ յիմար մը պիտի լինի. եթէ չարամիտ է, սուտ պիտի խօսի որ զիս տանջէ, եթէ յիմար է, աւելի դէշ պիտի ընէ: Ա՛հ, Աի՛շ, Աի՛շ, երկու ժամ չանցած տասն սուտ և տասն մենամարտութիւն պիտի գտնէի այդ կերպով: Փրկէ զիս, միթէ լուսադոյն չէ՞ որ մարդս իր աղէտը դիմանայ:

— Բայց ես բան մը չգիտեմ — ըսի քեզի: — Ես վերաւորուած էի, տենդով պառկած էի, խելքս դուրս չէր, հազիւ անորոշ յիշատակ մ'ունիմ այս մասին: Բայց՝ ճշմարիտը, շատ հեռուն կ'փնտռենք երբ մեր ուզած մարդը մեր ձեռքին տակն է: Միթէ տ'Արգանեանն իբրև բարեկամ չէն ճանչեր:

- Ա՛հ, իրան է, իրաւ է:
- Աւրեմն անոր գնա՛: Քեզի լոյս պիտի տայ և աչքերդ վերաւորելու չպիտի աշխատի:
- Սպասաւոր մը ներս մտաւ:
- Ի՞նչ կայ — հարցոյ Աի՛շ:
- Չեզի կ'սպասեն, կ'մն, Յախճապակեայ դահլիճը:
- Լա՛ւ, կ'ներեն, Ռաուլ: Քանի քայլելու սկսայ, սրչափ հպարտ եմ:
- Քեզի իմ թևս պիտի ապի, Աի՛շ, եթէ չգուշակէի որ քեզի սպասողը կին մ'է:
- Կարծեմ թէ կին է — սրտասխանեց Աի՛շ ժպտելով:
- Եւ Ռաուլէն բաժնուեցաւ:

Ռաուլ անշարժ, մտախոհ, ճզմնած մնաց նոյն տեղը, իբրև հանքահան մ'որու գլխին վրայ կ'փլի կամարը. վերաւորուած է նա, իր արիւնը կ'հոսի, իր մտածմունքն ընդհատ է, փորձ կը փորձէ ինքզինքին դալ և բանականութեամբը կեանքն աղատել: Քանի մը վայրկեան բաւական եղան Ռաուլին այս երկու յայտնութեանց շացումները փարատելու համար: Արդէն իր խորհրդա-

ճութեանց թելը գտեր էր, երբ՝ յանկարծ՝ դրան ետևէն Յախճապակեայ դահլիճին մէջ Մծողալէի ձայնը ճանչել կարծեց:

— Նոյն ինքն է — դռնեց նա: — Այո՛, իր ձայնն է: Ա՛հ, ահա կին մ'որ կրնար ինձ ճշմարտութիւնը յայտնել, բայց պէտք է որ հարցուփորձ ընեմ այս տեղ: Մինչև անգամ իզնէ կ'թաղչի, անտարակոյս իշխանուհոյն կողմէ կ'ղայ . . . : Իր սենեակը պիտի երթամ զինքը գտնելու: Անշուշտ պիտի բացատրէ ինձ իր երկիւղը, իր փախուստը, անձարակութիւնն որով զիս դուրս հանեցին, այս ամէն բաներն ինձ պիտի ըսէ . . . : Ե՛հ, լա՛ւ, պչրուհի մը, բայց աղէկ աստիճանը դէթ կ'սիրէ, պչրուհի մ'որ, ինչպէս մահն ու կեանքը, իր ցնորքն ունի, բայց դարձեալ Պ. Աի՛շ ըսել կ'տայ որ ամենէն երջանիկ մարդն է: Գոնէ այս Աի՛շ վարդերու մէջ է: Օ՛ն:

Առմտին սենեկէն խոյս տուաւ, և ինքզինքը մեղադրելով որ միայն իր վրայ խօսք ըրաւ Պ. Աի՛շին, Պ. տ'Արգանեանի մօտ հասաւ:

ԺԲ

ՊՐԵՃԼՕՆ ԻՐ ՀԱՐՑՈՒՓՈՐՉԵՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԷ

Հրացանակրաց հրամանատարը սրաշտոնի վրայ էր. իր ութնօրեայ շրջանը կ'կատարէր, կաշիէ աթոռին մէջ թաղուած, բիտորը գետինը մխած, սուրն իր սրնքաց մէջ տեղ դրած, և շատ մը նամակներ կ'կարդար իր պեխն ոլորելով:

Տ'Արգանեան ուրախութեան խանչիւն մ'արձակեց իր բարեկամին որդին տեսնելով:

— Ռաուլ, տղաս — ըսաւ նա — ի՞նչ պատահմամբ թագաւորը քեզ վերակոչեց:

Այս խօսքերը դէշ հնչեցին երիտասարդին ականջին, որ նստելով, սրտասխան տուաւ:

— Ճշմարիտը, չգիտեմ: Այս միայն գիտեմ որ վերադարձայ:



— Հըմ — ըրաւ. ա՛՛Արդանեան իր նամակները ծալելով և խոր-  
հարկի նայուածք մ'իւր խօսակցին ուղղելով — աղայ, ի՞նչ կ'ը-  
սես: Թագաւորը քեզ չիօչեց, և դու ելար եկար: Ես այդ չեմ  
կրնար հասկընալ:

Ռատւլ արդէն գունատ էր, և իր գլխարկը կ'ըլորէր ուշաթափ  
գէմքով մը:

— Այդ ի՞նչ կերպարան է քուկդ, և ի՞նչ սպառն խօսակցու-  
թիւն է այս: Անօրէն, ես ալ Անկլիա գացած եմ, և սարեկիկ  
պէս խնդումներս դարձած եմ: Միթէ բերանդ պիտի բանաս:

— Շատ բաներ ունիմ խօսելու:

— Հո՛, հո՛, ի՞նչպէս է հայրդ:

— Միբեղի բարեկամ, ներում կ'խնդրեմ, ես պիտի հարցնէի  
քեզի այդ բանը:

Տ'Արդանեան իր նայուածքին սրտթիւնը սաստկացուց, որմէ  
ցաղանիք մը չէր խուսափեր:

— Գու ցաւ մ'ունիս — ըսաւ անոր:

— Ի հարկէ, քաջ գիտես, Պ. ա՛՛Արդանեան:

— Ե՛ս:

— Անտարակոյս:

— Ո՛հ, զարմանք մի կեղծեր:

— Չարմանք չեմ կեղծեր, բարեկամդ իմ:

— Միբեղի հրամանատար, քաջ գիտեմ որ ներամտութեան և  
զօրութեան կողմէ ես միշտ քեզնէ պիտի յաղթուիմ: Այս պա-  
հաս, կ'տեսնես որ յիմար մ'եմ, մուն մ'եմ, ո՛չ ըղեղ ունիմ  
ոչ բազուկ, մի՛ անգոսներ զիս, օղնէ ինձ: Միով բանիս, կեն-  
դանի արարածոց մէջ ամենէն թշուառն եմ:

— Հո՛, հո՛, ինչո՞ւ համար այդպէս կ'խօսիս — հարցուց ա՛՛Ար-  
դանեան, իր կամարին կռճակը քակելով և իր ժպիտը մեղմելով:

— Վասն զի օրիորդ Լա Վալիէր զիս կ'խաբէ:

Տ'Արդանեան իր գէմքին գոյնը չփոխեց:

— Քե՛զ կ'խաբէ, կ'խաբէ, ահա մեծ մեծ բառեր: Ո՞վ ըսաւ  
ասոնք քեզի:

— Ամէն մարդ:

— Ո՛հ, թէ որ ամէն մարդ այսպէս կ'ըսէ, անշուշտ ճշմա-  
րիտ բան մը պիտի լինի: Ես, կրակին կ'հասամ երբ մտիւր  
կ'տեսնեմ: Այս ծաղրելի է, բայց այս այսպէս է:

— Այսպէս, կ'հասան — գոչեց Պրաժլոն աշխուժիս:

— Ա՛հ, թէ որ այս բաներուն մասնակից կարծես զիս . . . :

— Անտարակոյս:

— Ես այդ տեսակ գործերու չեմ խառնուիր, քաջ գիտես:

— Ինչպէ՛ս, բարեկամի մը համար, որդւոյ մը համար:

— Ճիշտ այդպէս: Եթէ դու օտար մը լինէիր, քեզի պիտի  
ըսէիր . . . : Ո՛չ, բան մը չպիտի ըսէիր . . . : Բորթոս ի՞նչպէս  
է, գիտե՞ս:

— Պարոն — գոչեց Ռատւլ ա՛՛Արդանեանի ձեռքը սեղմելով —  
յանտ'ն այն բարեկամութեան զոր կ'տածես հօրս համար:

— Ա՛հ, կրո՞ղ, շատ հիւանդ կ'երեւիս . . . հետաքրքրութեամբ:

— Հետաքրքրութիւն չէ, սէր է:

— Լա՛ւ, ահա ուրիշ մեծ բառ մը: Եթէ իրօք սիրահար լի-  
նէիր, սիրելիդ իմ Ռատւլ, շատ տարբեր պիտի լինէր ինչիւրը:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Քեզի կ'ըսեմ որ, եթէ այնչափ ծանր սիրով մը բռնուած  
լինէիր, որ միշտ սրտիդ հետ խօսելիքս հաստայի . . . բայց ան-  
կարելի է:

— Կ'ըսեմ քեզի որ խնդի պէս կ'սիրեմ Լուիզը:

Տ'Արդանեան իր աջօք կարգաց Ռատւլի սրտին խորը:

— Անկարելի, ըսի քեզի . . . : Գու ամէն երիտասարդներուն  
պէս ես, սիրահար չես, խենթ ես:

— Լա՛ւ, եթէ միայն այս լինէր:

— Երբէք իմաստուն մարդ մը դարձող գանկի մ'ըղեղը չուղ-  
ղեց: Անապա մէջ քսան անդամ կորուսի իմ խելքս ասոր մէջ.  
Եթէ մտիկ անդամ ընէիր ինձ չպիտի հասկընայիր ըսածս, եթէ  
ըսէիր ըսելիքս, չպիտի խնամայիր, պիտի խնամայիր, բայց չպի-  
տի հնազանդէիր:

— Ո՛հ, փորձէ՛, փորձէ՛:

— Ուրիշ ըսելիք ալ ունիմ, եթէ բաւական դժբաղդ լինէիր



բան մը գիտնալու, և բառական ապուշ զայն քեզի հաղորդելու համար . . . գու իմ բարեկամս ես, չես ըսեր :

— Ո՛հ, այո՛ :

— Լա՛ւ, քեզի հետ պիտի աւրուիմ : Չպիտի ներէիր ինձ պատրանքդ ջնջելուս, ինչպէս որ կ'ըսեն սիրոյ մէջ :

— Պ. ա'Արդանեան, ամէն բան գիտես, և զիս շփոթութեան մէջ, յուսահատութեան մէջ, մահուան մէջ կ'թողուս : Սոսկալի բան է :

— Է՛հ, է՛հ :

— Գիտես որ չեմ պուար : Բայց որովհետեւ հայրս և Աստուած չպիտի ներէին ինձ հրացանի մը հարուածով գլուխս խորտակելուս, լա՛ւ, ինչ որ կ'մերժես ինձ ըսելու, առջևս ելնողին պիտի պատմել տամ, անոր ըսածը սուտ պիտի հանեմ . . . :

— Եւ զանի պիտի սպաննես : Ի՛նչ աղւոր գործ : Աւելի աղէկ : Ի՛նչ փոյթս է այդ բանը : Սպաննէ՛, աղաս, սպաննէ՛ եթէ հաճոյք կ'զդաս : Ակոսները ցառող մարդոց պէս կ'ըսես և դու . « Ո՛հ, ս'ըքան կ'տառապիմ, երկաթ լինի պիտի խածնեմ » : Ես անոնց կ'ըսեմ . « Խած, բարեկամ, խած, ախաբ անոր մէջ պիտի մնայ » :

— Չպիտի սպաննեմ, պարոն — ըսաւ Ռատու մթին կերպարանով :

— Այո՛, ո՛հ, այո՛, այդ հովերը կ'տունուս դու այժմ, այնպէս չէ՛ : Մահդ աչքդ առնլով պիտի մենամարտիս, այնպէս չէ՛ : Ո՛հ, ի՛նչ աղւոր բան, և ս'ըչափ պիտի ցաւիմ քու վրայ, ճշմարիտը : Ի՛նչպէս բոլոր օրը պիտի ըսեմ . « Աէսամիտ տխմար մ'էր այն փոքրիկ Պրաժլօնը, կրկնակի անբան մը : Իմ կեանքս անցուցեր էի որ շէնքով շնորհքով սուր մը բռնել սորվեցնեմ, և այն չարաճճին դացեր թուչունի պէս ինքզինքը շամփրել տուեր է » : Գնա՛, Ռատու, դնա ինքզինքդ սպաննել տուր, բարեկամ : Չգիտեմ թէ տրամաբանութիւնն ո՞վ սորվեցուց քեզի . բայց, կրո՞ղը տանի զիս, այդ տրամաբանը, պարոն, հօրդ ստակը գողցեր է առանց քեզ բան մը սորվեցնելու :

Ռատու, լուսկայ, գլուխը ձեռացը մէջ ծածկեց և մրմուսաց .

— Ո՛հ, բարեկամ չկայ աշխարհիս երեսը, ո՛չ :

— Ա՛հ, բա՛ — ըսաւ ա'Արդանեան :

— Սիայն հեղնաբաններ կամ անտարբերներ կ'տեսնենք :

— Զբաբանութիւն : Ես՝ թէև կարօն, հեղնաբան չեմ . իսկ անտարբեր . եթէ անտարբեր լինէի, արդէն քառօրդ մը կայ որ քեզ կրողին պիտի զրկէի . վասն զի ուրախութենէ խենդացած մարդ մը տխուր, և տխուր մարդ մը մուտը կրնայիր ընել այդ ընթացքովդ : Ի՛նչպէս, սլասանի, ի՛նչպէս կ'ուզես որ քեզ զգուցնեմ սիրուհիեդ, կ'ուզես որ կանայքն ատել տամ քեզ, կանայք, որ մարդկային կենաց պատիւն ու երանութիւնն են :

— Պարոն, պարոն, ըսէ՛, ըսէ՛, և քեզ պիտի օրհնեմ :

— Է՛հ, սիրելիդ իմ, միթէ պատահամբ կարծես թէ իմ գլխիս մէջ ժովեցի հիւսնին և պատկերհանին գործերը, սանդղին և կենդանադրին խնդիրը, և ուրիշ հարիւր տեսակ առասպելներ որ մարդուս քունը կ'բերեն :

— Հիւան մը, ի՛նչ կ'նշանակէ այդ հիւանը :

— Ճշմարիտ վկայ, չգիտեմ, ըսին ինձ որ հիւան մը կար որ տախտակամածը ծակեր էր :

— Լա Աւալիէրի՛ սենեակը . . . :

— Ա՛հ, չգիտեմ թէ ո՞ր :

— Թագաւորի՛ն սենեակը :

— Լա՛ւ, թէ որ թագաւորին սենեակը լինէր, պիտի ըսէի քեզի, այնպէս չէ՛ :

— Ուրեմն, որո՞ւ սենեակը :

— Ահա ծամ մը կայ որ գլուխս կ'պատուեմ քեզ կրկնելով որ չգիտեմ :

— Բայց պատկերհանն ի՛նչ է, հասլա կենդանադիրը . . . :

— Կ'երեկ թէ թագաւորն արքունեաց մէկ կնոջ կենդանադիրը շինել տուած է :

— Լա Աւալիէրի՛նը :

— Է՛հ, միտակ այդ անունն ունիս բերնիդ մէջ : Քեզի ո՞վ կը խօսի Լա Աւալիէրի վրայ :

— Բայց եթէ այս աղջիկը չէ, ուրեմն ի՛նչ կերպով կ'ուզես որ այդ բանն ինձ վերաբերի :



— Չեմ ուզեր որ քեզ վերաբերի : Բայց դու հարց ու փորձ կ'ընես և ես կ'պատասխանեմ : Գու կ'ուզես եղած բանբասանքն խմանալ, ես ալ ահա քեզի կ'պատմեմ : Անկից օդուս քաղելը նայէ :

Ռատուլ ճակտին զարկաւ յուսահատութեամբ :

— Մեռնելը բան մը չէ — ըսաւ նա :

— Արդէն ըսիր այդ բանը :

— Այո, իբրևունք ունիս :

Եւ քայլ մ'առաւ հեռանալու համար :

— Ո՛ր կ'երթաս — ըսաւ տ'Արդանեան :

— Երթամ պիտի մարդ մը գտնել որ ինձ ճշմարտութիւնը յայտնէ :

— Ո՞վ է այդ :

— Կին մը :

— Նոյն ինք օրիորդ Լա Վալէէր, այնպէս չէ — ըսաւ տ'Արդանեան ժպտով մը : — Ա՛հ, դու շատ նշանաւոր խորհուրդ մը ունիս կ'նայիմ. միթարուիլ կ'ուզէիր, անմիջապէս պիտի լինիս : Ինքն իր վրայ չպիտի չարախօսէ, հաստաի եղիր :

— Կ'սխալիս, պարոն — պատասխանեց Ռատուլ — այն կլինն որու պիտի գիմեմ շատ գէշ պիտի խօսի :

— Վճարալէն, դրաւ կ'գնեմ որ այն է :

— Այո, Վճարալէն :

— Ա՛հ, իր բարեկամուհին : Կին մ'որ այս պաշտօնով բարիքը կամ չարիքը պիտի չափազանցէ : Վճարալէի մի խօսիր, իմ բարի Ռատուլ :

— Բանականութիւնը չէ քեզ զրդողն որ զիս Վճարալէէն հեռացնես :

— Լաւ ուրեմն, կ'խոստովանիմ . . . : Եւ, իրօք, ինչո՞ւ համար քեզի հետ խաղամ ինչպէս կ'խաղայ կատուն մուկին հետ : Ճշմարտը, ինձ հոգ կ'պատճառես : Եւ եթէ կ'փափաքիմ որ այս պահուս Վճարալէի հետ չխօսիս, պատճառն այն է որ զաղանկրդ պիտի յայտնես և զայն չարաչար պիտի գործածեն : Եթէ կարող ես, սպասէ :

— Չեմ կարող :

— Աւելի՛ գէշ : Ռատուլ, կ'հասկընան, եթէ խորհուրդ մ'ունենայի . . . : Բայց խորհուրդ չունիմ :

— Խօսք տուր ինձ որ պիտի ցտիխ իմ վրայ, այս ինձ բաւական պիտի լինի, և թող տուր որ առանձինս այս գործս ընեմ :

— Ա՛հ, այո, գիտեմ աւելի ևս պիտի պղտորես գործը : Սատեղ նստէ նայիմ, սեղանին ստջև, և զրիչն սո :

— Ի՞նչ բանի համար :

— Վճարալէի գրելու և անկից ժամագրութիւն մը խնդրելու :

— Ա՛հ — ըրաւ Ռատուլ զրիչն վրայ ընկնելով զոր հրամանատարն իրեն կ'ապր :

Յանկարծ դուռը բացուեցաւ, և հրացանակիր մը, տ'Արդանեանի մօտենալով,

— Հրամանատարս — ըսաւ նա — օրիորդ Վճարալէն գտրոն է և ձեզի խօսիլ կ'ուզէ :

— Ինձի՞ — մրմնաց տ'Արդանեան : — Թո՛ղ ներս գայ, և պիտի տեսնենք թէ իրօք իր խօսքն ինձի՞ հետ է :

Վճարալէն ներս մտնելով՝ Ռատուլը տեսաւ և զոչեց .

— Պարոն, պարոն . . . ներողութիւն, Պ. տ'Արդանեան :

— Կ'ներեմ քեզ, օրիորդ — ըսաւ տ'Արդանեան — գիտեմ որ իմ հասակիս մէջ զիս փնտռողները պէտք ունին իզնէ :

— Պ. Պրաժլօնը կ'փնտռէի — պատասխանեց Վճարալէն :

— Ի՞նչպէս գիբրաւ կ'գտնուի նա . ինքն ալ քեզ կ'փնտռէր : Ռատուլ, միթէ օրիորդ Վճարալէի հետ չե՞ս ուզեր երթալ :

— Բոլոր սրտով :

— Ուրեմն գնա՛ :

Եւ Ռատուլը գահլճէն գտրս հրեց մեղմիկ, ապա Վճարալէի ձեռքը բռնելով,

— Բարետիրաւ աղջիկ եղիր — ըսաւ նա ցած ձայնով մը — ինչպէ՛ ասոր, և ինչպէ՛ անոր :

— Ա՛հ — ըսաւ նա նոյն ձայնով — անոր հետ խօսողն ևս չպիտի լինիմ :



— Ո՞վ է ուրեմն :

— Իշխանուհին է զանի փնտուել տուողը :

— Ա՛հ , լաւ — զոչեց տ՛Արդանեան — իշխանուհին է : Ժամէ մը խեղճ աղան պիտի բժշկուի :

— Կամ պիտի մեռնի — ըսաւ Մօնղալէ կարեկցութեամբ : — Մնաս բարեաւ , Պ . տ՛Արդանեան :

Եւ զնաց Ռաուլին միացաւ , Ռաուլ որ զունէն հեռու կ'սպասէր , և շուարեր , անհանդիստ կ'երեւէր այս մենախօսութեան վըրայ որմէ չարիք կ'զուշակէր :

ԺԳ

ԵՐԿՈՒ ՆԱԽԱՆՁ

Սիրահարները շատ փափկասիրտ են ամէն անոնց համար որ իրենց սիրականին կ'մօտենան . հազիւ թէ Ռաուլ Մօնղալէի հետ ինքզինքը դառաւ , որ ձեռքը համբուրեց եռանդապին :

— Ա՛յ , վայ — ըսաւ օրհորդը տխրազին : — Անօգուտ համբայրներ կ'զրոշմու ձեռքիս վրայ , սիրելի Ռաուլ , կ'երաշխաւորեմ իսկ որ անոնք շահ անգամ չպիտի բերեն քեզ :

— Ինչպէս . . . ի՞նչ . . . : Կ'բացատրեն միտքդ , սիրելիդ իմ Օր . . . :

— Այս ամենն իշխանուհին քեզի պիտի բացատրէ : Անոր սեռեակը կ'տանիմ քեզ այժմ :

— Ի՞նչ . . . :

— Լուր թի՛ւն , և այդպէս աչքերդ մի բանար զայրազին : Այս տեղ պատուհաններն աչք ունին , սպասերը՝ լայն ականջներ : Կ'աղաչեմ ինձ մի նայիր , կ'աղաչեմ բարձր ձայնով խօսէ ինձ անձրեւին , զեղեցիկ օդին և Անկլիոյ զուարճութեանց վրայ :

— Ա՛ւրջապէս . . . :

— Ա՛հ . . . քեզի ահա իմաց կ'տամ որ տեղ մը , չպիտեմ .

տակայն ուր , իշխանուհին իր աչքը բաց և ականջը տնկած պիտի լինի մեզ տեսնելու և լսելու համար : Գիտես որ փոյթս չէ եթէ վաճառուիմ կամ բանա գրուիմ : Խօսինք , կ'ըսեմ քեզ . կամ լաւ ևս , խօսք չընենք :

Ռաուլ բուռները սեղմեց , սաքը վերցուց և արիասիրտ մարդու մը կերպարանը ցցուց , իրաւ , բայց արիասիրտ մարդու մը պէս որ տանջանաց կ'երթայ :

Մօնղալէ՛ աչքն արթուն , թեթևօտն , գլուխը չորս կողմը դարձնելով՝ առջևէն կ'երթար :

Ռաուլն իսկոյն իշխանուհոյն գահէն մացուցին :

— Աղէ — ըսաւ մտքովը — այսօր պիտի անցնի և բան մը չպիտի իմանամ : Կիշ իմ վրայ շատ դիմաց , իշխանուհոյն հետ խօսքը մէկ ըրաւ , և երկուքնին ալ բարեկամական գառով մը , ինզրոյն լուծուեց կ'յայտադէն : Ինչո՞ւ համար իմ առջևս լաւ լինամի մը չուենամ . . . օրինակի համար , այն օձ վարդը , զիս պիտի խածնէր , իրաւ , բայց չպիտի վարանէի . . . վարանիմ . . . կատկածիմ . . . լաւ ևս է մեռնիլ :

Ռաուլ իշխանուհոյն առջևն էր :

Հանրիէդ՝ ամէն առնէն աւելի չքնադադեղ՝ աթոռի մը վրայ կիսովին ընկած էր , իր փոքրիկ ոտներն սակեթել սնդուսէ բարձրու վրայ դրած . խիտ մետաքսէ պղտիկ կատուի մը հետ կ'իսաղար , որ մտաները կ'խածատէր և իր վզնոցին պալարներէն կը կախուէր :

Իշխանուհին կ'խորհէր , խորունկ կ'մտմտար , Մօնղալէի , Ռաուլի ձայնը պէտք էր այս մտմտութիւնը ցրուելու համար :

— Ձեր վսեմափայլութիւնը զիս ուղեր է — կրկնեց Ռաուլ :

Իշխանուհին գլուխը ցնցեց որպէս թէ քունէն կ'արթնար :

— Բարի լոյս , Պ . Պրածլօն — ըսաւ իշխանուհին — այո՛ , քեզ ուղեցի : Ահա վերադարձար Անկլիայէն :

— Ձեր վսեմափայլութեան ծառայելու համար :

— Շնորհակալ եմ , մեզ առանձին ձգէ , Մօնղալէ :

Մօնղալէ դուրս ելաւ :

— Յուսամ որ քանի մը վայրկեան կ'ընաս նստիւրել ինձ , Պ . Պրածլօն , այնպէս չէ :



— Բոլոր կեանքս Ձեր Վսեմափայլութեանն է — պատասխանեց Ռաուլ յարդանօք, որ իշխանուհւոյն այս քաղաքաւարական ձեռքէն տխուր բաներ կ'գուշակէր, և այս տխրութիւնն անհաճոյ չէր երևեր իրեն, համոզուած լինելով որ իշխանուհւոյն և իր զգացումներու մէջ կերպ մը յարակցութիւն կար: Արդարև՝ իշխանուհւոյն այս սաբօրէն բնաւորութիւնը, քմահաճ կոմքն ու այլանդակ բունաւորութիւնն արքունեաց ամէն մտացի մարդիկ զիտէին:

Իշխանուհին՝ թաղաւորին զգուանքներէն չափէն աւելի փրացեր էր, իշխանուհին՝ իր գեղեցկութեան վրայ խօսել տուեր և թագուհւոյն այնպիսի նախանձ մը ներշնչեր էր որ ամէն կանացի երանութեանց կրծան որդն է. մէկ խօսքով՝ իշխանուհին՝ վերաւոր գոռոզութիւն մը բռնեց իր համար, սիրող սիրտ մ'ըրեր էր:

Յենք արդէն զիտենք թէ իշխանուհին ինչ քրեր էր Ռաուլը կոչելու համար, որ Լուի ԺԳի հրամանաւ հեռացեր էր: Իր գիրն առ Շարլ Բ, Ռաուլը չէր զիտեր, բայց ա'Արդանեան առ ղէկ գուշակեր էր:

Սիրոյ և սնափառութեան այս անմահներ խառնուրդը, այս անլուր գործը, այս ահաւոր նենդութիւններն ո՞վ պիտի բացատրէ: Ոչ ոք, և ոչ իսկ շար հրեշտակն որ կանանց սրտին մէջ պշրասիրութեան ողին կ'վառէ:

— Պ. Պրաժլօն — ըսաւ իշխանուհին պահ մը լուռ կենալէն ետեւ — միթէ գո՞հ դարձար:

Պրաժլօն՝ Հանրիէզ իշխանուհւոյն նայեցաւ, և տեսնելով որ գունատեր էր, վասն զի ըսելիքը կ'պահէր, թէ և ըսելու համար կ'երէր կ'մրկէր:

— Գո՞հ — ըսաւ նա — ի՞նչ բանէ գոհ կամ դժգոհ լինիլս կ'ուզէք, տիկին:

— Բայց քու սարիքդ ու կերպարանդ ունեցող երիտասարդ մը ի՞նչ բանէ գոհ կամ դժգոհ կրնայ լինիլ:

— Ի՞նչպէս շուտ կ'երթայ — մտածեց Ռաուլ ահաբեկ — արդեօք ի՞նչ պիտի շնչէ սրտիս մէջ:

Յետոյ՝ իր իմանալիք բանէ զարհուրելով և այնքան ցանկացած

այլ սոսկալի ժամը յապաղել ուզելով, այն ժամն ուր ամէն բան պիտի իմանար,

— Տիկին — պատասխանեց նա — փափկասիրտ բարեկամ մը ողջ աւողջ թողլով մեկնեցայ, և ՚ի դարձին հիւանդ գտայ:

— Միթէ Պ. Կիշի՞ վրայ խօսիլ կ'ուզես — հարցուց Հանրիէզ անդրդուելի հանդարտութեամբ մը — կ'ըսեն թէ նա քու շատ սիրական բարեկամդ է:

— Այո, տիկին:

— Լաւ, ստոյգ է, վերաւորուեցաւ, բայց այժմ աւելի աղէկ վիճակի մէջ է: Ո՛հ, Պ. Կիշ ցաւակցութեան արժանի չէ — ըսաւ նա շուտ ընդ փոյթ:

Յետոյ՝ իր ըսածն ուղղելով,

— Միթէ ցաւակցութեան արժանի՞ է — ըսաւ նա — միթէ զանդատեցաւ, արդեօք մեզի անյայտ ցաւ մ'ունի:

— Ես միայն իր վէրքին համար կ'խօսիմ, տիկին:

— Շատ լաւ, վասն զի, ուրիշ կողմէ Պ. Կիշ շատ երջանիկ կ'երևի. միշտ ուրախ զուարթ կ'տեսնեմ զինքը: Ըսեմ քեզի, Պ. Պրաժլօն, շատ ստոյգ եմ որ նախագաս պիտի համարէիր անշուշտ անոր պէս մարմնով վերաւորուած լինելու... ի՞նչ է վէրք մը մարմնոյ վրայ:

Ռաուլ գողգողաց:

— Ահա նորէն կ'դառնայ առջի խօսքին — ըսաւ նա: — Ափսոս . . . :

Պրաժլօն պատասխան չտուաւ:

— Ի՞նչ ըսիր — յարեց իշխանուհին:

— Տիկին, բան մը չըսի:

— Բան մը չըսիր, ուրեմն չես հաւանիր խօսքիս, ուրեմն գո՞հ ես:

Ռաուլ մօտեցաւ:

— Տիկին — ըսաւ — Ձեր արքայական Վսեմափայլութիւնն ինձ բան մ'ըսել կ'ուզէ, և իր բնական վեհանախութիւնն իր խօսքը խնայելու կ'զրդէ զինքը: Շնորհ ընէ Ձեր Վսեմափայլութիւնն ինձ շննայելու: Ռեժեղ եմ և մտիկ կ'ընեմ:



— Ա՛Տ — պատասխանեց Հանրիէդ — Ի՞նչ կ'հասկընաս հիմակ։  
 — Ինչ որ Ձեր Վսեմափայլութիւնը կ'ուզէ ինձ հակըցընել։  
 Եւ Ռաուլ՝ այս խօսքն արտասանելու միջոցին, դողաց։  
 — Իրաւի — մրմնաց իշխանուհին — անգութ բան մ'է, բայց  
 որովհետեւ սկսայ . . . :  
 — Այո՛, տիկին, որովհետեւ Ձեր Վսեմափայլութիւնն հաճեցաւ  
 սկսելու, թող հաճի նաև աւարտելու . . . :  
 Հանրիէդ ոտք ելաւ շուտ ընդ փոյթ և իր սենեկին մէջ քանի  
 մը քայլ առաւ։  
 — Ի՞նչ պատմեց քեզի Պ. Աիշ — ըսաւ նա յանկարծ։  
 — Ո՛չ ինչ, տի՛ին։  
 — Ո՛չ ինչ։ Բան մը չըսա՞ւ։ Ո՛հ, ինչպէս կ'ճանչեմ զինքն  
 այս ընթացքէն։  
 — Անտարակոյս զիս խնայել կ'ուզէր։  
 — Եւ ահա ստոր բարեկամութիւն կ'ըսեն բարեկամները։ Բայց  
 Պ. տ'Արդանեան, որու քովէն կ'գաս, անշուշտ քեզի խօսեցաւ։  
 — Աիշին պէս ան ալ բան մը չըսաւ, տիկին։  
 Հանրիէդ անհամբերութեամբ շարժում մ'ըրաւ։  
 — Գոնէ բոլոր արքունեաց իմացածը դու ալ իմացար անշուշտ։  
 — Տիկին, ոչ ինչ չգիտեմ։  
 — Մըրկին տեսարանն ալ չիմացար։  
 — Ո՛չ մըրկին տեսարանը . . . :  
 — Եւ ո՞չ անտառին մէջ առանձին տեսակցութիւնը։  
 — Եւ ոչ անտառին մէջ առանձին տեսակցութիւնը . . . :  
 — Ո՛չ ՚ի Շայօ փախուստը։  
 Ռաուլ՝ որ մանդաղին կարած ծաղկին պէս կ'խոնարհէր, գեր-  
 քնական ճիգ մ'ըրաւ ժպտելու, և զողորիկ անուշութեամբ մը  
 պատասխանեց։  
 — Պատիւ ունեցայ Ձեր արքայական Վսեմափայլութեան ըսել  
 որ ամենեին բան մը չգիտեմ։ Ես հէք մոռացեալ մ'եմ որ Ան-  
 կլիայէն կ'գամ, այս տեղի մարդոց և իմ մէջ այնչափ աղմկալի  
 ալիք կային, որ Ձեր Վսեմափայլութեան ըսած ամէն բաներուն  
 ձայնն իմ ականջիս չկրցաւ հասնիլ։

Հանրիէդ այս գունատութենէ, այս հեզութենէ, այս արիւ-  
 թենէ շարժեցաւ։ Իր սրտին տիրական զգացումը նոյն պահուն  
 խեղճ սիրահարն այսպէս տանջող էակին յիշատակը լսելու սաս-  
 աիկ մէկ փափաքն էր։  
 — Պ. Պրածլօն — ըսաւ նա — ինչ որ քու բարեկամներդ ը-  
 նել չուզեցին, ես կ'ուզեմ ընել քեզի համար, քեզ որ կ'յար-  
 գեմ և կ'սիրեմ։ Ես պիտի լինիմ քու բարեկամը։ Այս տեղ  
 պարկեշտ մարդու մը պէս գլուխդ բարձր կ'բռնես, և չեմ ու-  
 զեիր որ ծաղու ներքև զայն խոնարհեցնես, ութ օրէն, արհամար-  
 հանօք պիտի խօսին։  
 — Ա՛Տ — ըսաւ Ռաուլ երեսը մոխիր դարձած — արդէն խըն-  
 դրոյն մէջ մտաւ։  
 — Եթէ չես գիտեր — ըսաւ իշխանուհին — կ'նայիմ որ կ'գու-  
 շակես. օրիորդ Լա Վալիէրի նշանածն էիր, այնպէս չէ։  
 — Այո՛, տիկին։  
 — Այս պատճառաւ, քեզի ազդարարութիւն մ'ունիմ ընելու,  
 որովհետեւ այսօր վաղը պիտի վճնտեմ օրիորդ Լա Վալիէրն իմ  
 տունէս . . . :  
 — Պիտի վճնտէք — դոչեց Պրածլօն։  
 — Անտարակոյս։ Միթէ կարծես թէ միշտ պիտի ականածեմ  
 թագաւորին արտասուքէն և ողբերէն։ Ո՛չ, ո՛չ, իմ տունս այսու-  
 հետեւ այս տեսակ վարմունքի մ'ապաստանարանը չպիտի լինի։  
 Միթէ կ'երեւաս։  
 — Ո՛չ, տիկին, ներեցէք — ըսաւ Պրածլօն ճիգ մ'ընելով —  
 կարծեցի թէ պիտի մեռնիմ, ուրիշ բան մը չունիմ։ Ձեր Վսե-  
 մափայլութիւնը կ'ըսէր ինձ որ թագաւորը լացեր պաղատեր էր։  
 — Այո՛, բայց ընդունայն։  
 Եւ իշխանուհին պատմեց Ռաուլին Շայօի դէպքը, և ՚ի դար-  
 ձին թագաւորին յուսահատութիւնը. նոյն իսկ իր ներողամտու-  
 թիւնը պատմեց, և այն սոսկալի խօսքն որով նախատեալ իշխան-  
 ուհին, խոնարհեալ պչրուհին՝ թագաւորին բարկութիւնն իջեցու-  
 ցեր էր։  
 Ռաուլ գլուխը ծռեց։



- Ի՞նչ կ'մտածես այս մասին — հարցոյ նա :
- Թագաւորը կ'սիրէ՞ զանի — պատասխանեց Ռաուլ :
- Բայց այնպէս մը կ'խօսիս որպէս թէ չսիրեր :
- Ափսո՛ս, դեռ ևս կ'մտածեմ այն ժամանակին վրայ երբ նա զիս սիրեց, տիկին :
- Հանրիէզ պահ մը սքանչացաւ այս վեհ թերահաւատութեան վրայ, ապա, ուսերը բարձրացնելով,
- Ուրեմն չես հաւտար ինձ — ըսաւ նա : — Ո՛հ, ի՞նչպէս կ'սիրես զանի, Գրե՛, և կ'տարակուսիս որ նա թագաւորը սիրէ, նա՛ :
- Մինչև որ ներհակ ապացոյցը տեսնեմ : Ներեցէք, իր խօսքն ունիմ, գիտէք, և աղնուական օրիորդ մ'է :
- Ապացոյցը . . . լա՛ւ, թնձ պղպէս լինի : Ակո՛ւր :

ԺԴ

ԲԵՆԵԿԵՐԵՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Իշխանուհին՝ Ռաուլին առջևէն երթալով՝ գաւիթն իջաւ լեւալալիէրի բնակած շէնքին կողմը զիմեց, և՛ վերստին նոյն առտու իսկ Ռաուլի ելած սանդղէն վեր ելնելով, կայ առաւ այն սենեկին զբանն առջև՝ ուր երիտասարդը՝ ըստ կարգի՝ այնպէս տարօրինակ ընդունելութիւն մը տեսեր էր Մծնդալէի կողմէ :

Հանրիէզ իշխանուհին իր խորհուրդն ՚ի գործ զնելու համար պատեհ ժամ մ'ընտրեր էր . վասն զի պալատը պարապ էր, թագաւորը, պալատականներն և տիկիկները Սէն-Ժէրմէն դացեր էին, տիկին Հանրիէզ միայն՝ զխնայելով որ Պրաժլոն պիտի դառնայ, և այս վերադարձէն քաղելիք օգուտը մտածելով, անհանազատութիւն մը պատճառեր և առնը մնացեր էր :

Ուստի իշխանուհին ստոյգ էր որ Լա Վալիէրի սենեակն ու թէնդ-Էնյանի բնակարանը պարապ պիտի գտնէր : Իր զբաղմունքն

ձրկնակի բանալի մը հանեց, և իր պատուոյ օրիորդին սենեակը բացաւ :

Պրաժլոն իր աչքը թափանցեց այս սենեկին մէջ և զայն ճանչեց . այս սենեկին իր վրայ ըրած տպաւորութիւնն իրեն սպասող առաջին տանջանքէն մին եղաւ :

Իշխանուհին անոր նայեցաւ, և իր վարժ աչքը կրցաւ տեսնել թէ ինչ կ'անցնէր երիտասարդին սրտին մէջ :

— Գու ապացոյցներ ինդրիցիր իզնէ — ըսաւ նա — ուստի մի զարմանար եթէ ապացոյցներ պիտի տամ քեզի : Այժմ՝ եթէ արիութիւն չունիս անոնց հանդուրժելու, դեռ ժամանակ կայ, եթէ կ'ուզես քաշուինք :

— Շնորհակալ եմ, տիկին — ըսաւ Պրաժլոն — բայց համոզուելու համար եկայ : Խօսք տուիք ինձ համոզելու, ուրեմն համոզեցէք :

— Ուրեմն ներս մտիր — ըսաւ իշխանուհին — և քու ետևէդ դուռը դոցէ :

Պրաժլոն հնազանդեցաւ, և իշխանուհոյն կողմը դառնալով նայուածքն անոր ուղղեց և հարցուփորձ ըրաւ :

- Գիտես ուր ես — հարցոյ Հանրիէզ :
- Բայց ամէն ինչ կ'յորդորէ զիս կարծելու, տիկին, որ օրիորդ Լա Վալիէրի սենեակն եմ :
- Այո՛, անոր սենեակն ես :
- Բայց պիտի զիտել տամ Ձեր Վսեմափայլութեան որ այս սենեակը սենեակ մ'է, և ապացոյց մը չէ :
- Սպասէ :

Իշխանուհին մահճակալին ոտքին կողմը զիմեց, պահպանակը ծալեց, և տախտակամածին կողմը ծռելով,

- Ահա — ըսաւ — ծռէ և դու ինքնին սա կափուլը վերցնուր :
- Այս կափուլը — գոչեց Ռաուլ զարմանօք, վասն զի տ'Սըրբանեանի խօսքն սխտեր էին յիշողութեանը դալ, և կ'յիշէր որ տ'Սըրբանեան այս բառն արտասաներ էր անորոշակի :

Եւ Ռաուլ աչքը փնտռեց, թէ և ՚ի զուր, ճեղք մ'որ բացուածքի մը նշանը լինի, կամ օղակ մ'որով կարող լինի տախտակամածին մէկ մասը վեր վերցնելու :



— Ա՛Տ , իրաւ է — ըսաւ տիկին Հանրիէդ ծիծաղելով — թա-  
գուն զսպանակը կ'մոռնայի . տապանին չորրորդ տախտակը կոխէ  
այն տեղն ուր փայտը կապ մը կ'յօրինէ : Այս է հրահանգս : Գու-  
ինքնին կոխէ , գերկումս , գու ինքնին կոխէ , ահա աստ է :

Ռառւլ՝ մեռելի պէս գունատ՝ բթամատը կոխեց նշանակեալ  
տեղը , և իրօք , նոյն պահուն իսկ՝ զսպանակը դարձաւ և կափուլն  
ինքնին վեր ելաւ :

— Շատ հնարագիտութեամբ շինուած է — ըսաւ իշխանուհին  
— և յայտնի կ'երևի թէ ճարտարագետը գուշակած է , որ փոք-  
րիկ ձեռք մը պիտի շարժէ այս զսպանակը . նայէ ի՞նչպէս այս  
կափուլն ինքնիրեն վեր կ'ելնէ :

— Սանդուղ մը — գոչեց Ռառւլ :

— Այո՛ , և շատ վայելուչ սանդուղ մը — ըսաւ տիկին Հան-  
րիէդ : — Նայէ՛ , գերկումս , այս սանդուղը բազրիք մ'ունի որ  
անկից անցնելու վտանգը յանձն առնող փափուկ անձերը պահ-  
պանելու սահմանուած է , ուստի ես ալ աներկիւղ կ'իջնեմ : Օ՛ն ,  
հետեւէ ինձ , գերկումս , հետեւէ :

— Բայց ձեզ հետեւէլն առաջ , ըսէք , աիկին , ո՞ր կ'տանի  
այս սանդուղը :

— Ա՛Տ , իրաւ է , կ'մոռնայի ըսելու :

— Մտիկ կ'ընեմ — ըսաւ Ռառւլ հազիւ ուրեմն շունչ առնով :

— Արեւի է գիտես որ Պ . Սէնդ-Ենյան երբեմն թագաւորին  
դբան կից կ'ընակէր :

— Այո՛ , աիկին , գիտեմ . իմ շուէս առաջ այսպէս էր , և  
ստէպ պատիւ ունեցեր եմ անոր հին բնակարանն այցի գնալու :

— Ան , թագաւորին հրահանաւ , Սէնդ-Ենյան՝ այն հանդիստ  
և աղբոր սենեակները զորս կ'ձանչես թողուց և այս երկու փոք-  
րիկ խոցերն առաւ որոց կ'տանին այս սանդուղը , և որոնք կրկնա-  
պատիկ փոքր և թաղաւորին սենեկէն տասն անգամ հեռու բնա-  
կարան մը կ'կազմեն , թէև թագաւորին դրացիութիւնն առ հա-  
սարակ ցանկալի է արքունեաց պարոններուն :

— Շատ լաւ , աիկին — վրայ բերաւ Ռառւլ — բայց շարու-  
նակեցէք , կ'աղաչեմ , վասն զի տակաւին շատ բան չհասկըցայ :

— Ան , այնպէս պատահեցաւ — շարունակեց իշխանուհին —  
որ Սէնդ-Ենյանի այս բնակարանն իմ երկու պատոյ աղջկանց և  
մանուորապէս Լա Ալալիէրի սենեկին ներքև գտնուի :

— Բայց այս կափուլն ու այս սանդուղն ի՞նչ կ'նշանակեն :

— Ճշմարիտը , ես ալ չգիտեմ : Կ'ուզես որ Պ . Սէնդ-Ենյա-  
նի սենեակն իջնենք : Արեւի է որ այս հանելուկին մեկնութիւնը  
գտնենք :

Եւ իշխանուհին ինքն անձամբ իջնելով օրինակը տուաւ :

Ռառւլ հառաչելով անոր հետեւեցաւ :

Պրաժլօնի ոտից ներքև ամէն անգամուն որ տախտակը կ'կրն-  
չէր , այս խորհրդաւոր բնակարանին մէջ քայլ մ'ընդ առաջ ան-  
ցած կ'լինէր , բնակարան մ'որ գեռ ևս Լա Ալալիէրի հառաչ-  
ներն և իր մարմնոյն քաղցրադոյն անուշահոտութիւնները կ'պա-  
րունակէր :

Պրաժլօն հասկըցաւ , նոյն օդն ողեսպաւ ծծելով , որ նորատի  
օրիորդն անկից անցած պիտի լինէր :

Ապա այս բուրմունքէն ետք՝ անյաղթելի բայց ստոյգ սպասոյց-  
ներ , Լա Ալալիէրի սիրած ծաղիկները , ընտրած զիբքերը ան-  
սաւ : Եթէ Ռառւլ թեթեւ կասկած անգամ ունենար , այս կաս-  
կածը պիտի փարատէր գիտելով ճաշակի և մաքի յարակցութիւն-  
ները սոյն առարկայից գործածութեան մէջ որ կենաց ընթակից  
են : Պրաժլօնի համար Լա Ալալիէր կենդանի ներկայութիւն մ'էր  
կահ կարասեաց մէջ , կերպասներու ընտրութեան մէջ , տապանին  
նշոյլներուն մէջ անգամ :

Պրաժլօն անխօս և ճզմուած՝ ուրիշ սորվելիք բան մը չունէր ,  
և իր անդամ թաղանթաւորութեան կ'հետեւէր միայն ինչպէս կ'հե-  
տեւի զո՞ր գահճին :

Իշխանուհին , որ փափուկ և ջլուտ կնկան մը պէս անդամ էր ,  
ամենէն փոքր պարզապէս անոր կ'ցուցնէր :

Բայց պէտք է ըսել որ , թէև Ռառւլ կերպ մը թմրութեան  
մէջ ընկեր էր , դարձեալ՝ եթէ առանձին իսկ մնար , այս մանր  
մունք բաներն իր աչքէն չպիտի վրիպէին : Սիրուած կնկան եր-  
ջանկութիւնը , երբ այս երջանկութիւնն ոտիտէ մ'առաջ կ'գայ ,



Նախանձոտի մը համար տանջանք մ'է : Բայց Ռատուլի նման նախանձոտի մը համար, այս սրաին համար, որ առաջին անգամ թոյն կ'կաթէր, Լուիզին երջանկութիւնը նախատալից մահ մը, մարմնոյ և հոգւոյ մահն էր :

Ռատուլ ամէն բան դուշակեց . իրարու վարեալ ձեռներ, իրարու մօտեցած դէմքեր որ հայելիներու առջև ամուսնացած էին, տեսակ մ'անուշ երգում սիրահարներու համար որ երկու անգամ կ'տեսնուին, որպէս զի լաւ տպաւորեն իրենց յիշողութեան մէջ պատկերը :

Գուշակեց այն անստեսանելի համրոյրը թանձր վարագոյններու ետև, որոց կապերը քակուած ընկած էին : Անոնց ստուերին ներքև թաղուն բաղնոցները, ճարտասանութիւնը թարգմանեց տենդային վշտակրութեամբ մը :

Այս սերձութիւնը, անուրջով լի այս փափկութիւնը, այս մանրակրկիտ հոգը սիրեցեալ էակէն որ և է անախորժ բան մը հեռացնելու համար, կամ անոր շնորհալի զարմանք պատճառելու համար, սիրոյ այս իշխանութիւնն արքայական իշխանութեամբ կրկնապատկուած՝ Ռատուլը զարկաւ մահարեւր հարուածով մը :

Ո՛հ, թէ որ նախանձու կսկծալի վիշտերուն դարման մը կայ, նախաշատուած մարդուն ստորնութիւնն է, մինչդեռ ընդ հակառակն՝ եթէ դժոխոց մէջ դժոխք մը կայ, լեզուի մէջ անանուն տանջանք մը կայ, աստուծոյ մ'ամենակարողութիւնն է ոսոխի մը ձեռքն անցած, որ երիտասարդութեամբ, գեղեցկութեամբ և շնորհքով կ'փայլի : Այս միջոցիս՝ նոյն իսկ Աստուած արհամարհեալ սիրողին դէմ զինած կ'երևի :

Ռատուլին վերջին վիշտ մ'ալ վերապահուած էր, Հանրիէդ իշխանուհին մետաքսեայ վարագոյր մը վերցուց, և վարագուրին ետև Լա Վալիէրի կենդանադիրը տեսաւ :

Ոչ միայն Լա Վալիէրի կենդանադիրը, այլ նորատի, զեղանի, գուարթ, հոգւով և մարմնով երջանկութիւն շնչող Լա Վալիէրինը, վասն զի տասն ութ տարուան հասակի մէջ, կեանքն աւերիչ բան չէ, այլ սէր :

— Լուիզ — մրմուսց Պրաթլօն — Լուիզ, ուրեմն իրան է :

Ո՛հ, դու երբէք զիս չսիրեցիր, վասն զի դու երբէք այդպէս ինձ նայած չես :

Եւ իրեն այնպէս երեցաւ որ սիրտն իր ծոցին մէջ խածին :

Հանրիէդ իշխանուհին անոր կ'նայէր, զրեթէ անոր վշտէն նախանձելով, թէ և քաջ դիտէր որ նախանձելու քան մը չունէր, և թէ ինք Վիշին կողմէ կ'սիրուէր, ինչպէս կ'սիրուէր Լա Վալիէր Պրաթլօնի կողմէ :

Ռատուլ Հանրիէդ իշխանուհոյն այս ակնարկը դադարնի դիտեց :

— Ո՛հ, ներէք, ներէք — ըսաւ — պարտաւոր էի, գիտեմ, ինքզինքիս վրայ առելի իշխել, քանի որ ձեր առջև կ'դնուիմ, տիկին : Բայց տար Աստուած, երկնի և երկրի Աստուած, որ այս միջոցիս ինձ գալիք հարուածէն ձեզ պահպանէր : Վասն զի դուք կին էք, և անտարակոյս այսպիսի վիշտ մը չպիտի կարենայիք տանիլ : Ներէք ինձ, ես ողորմելի ազատանի մ'եմ, մինչդեռ դուք երջանիկներու, ամենակարող, ընտրելոյ կարգէն էք որ . . . :

— Պ. Պրաթլօն — ոլատասխանեց Հանրիէդ — սրտիդ պէս սիրտ մը, թաղուհոյ մը սրաին խնամոց և յարգանաց արժանի է : Ես քու բարեկամուհիդ եմ, պարոն, ուստի՝ չուզեցի որ բոլոր կեանքդ նենգութենէ թունաւորի և խայտառակութենէ աղարտի : Ես եմ որ, ամէն կարծեցեալ բարեկամներդ աւելի քաջասիրտ գտնուելով, ի բաց առեալ Պ. Վիշը, Լանտօնէն բերել տուի քեզ, ես եմ որ քեզի վշտալի, այլ սխտանի ապացոյցներ կ'յայտնեմ, որոնք քեզի բժշկութիւն պիտի տան, եթէ արիասիրտ սիրող մ'ես և չէ թէ լալկան Ամատիս մը : Մի շնորհակալ լինիր ինձ, իմ վրայ ևս ցաւ է, և թաղաւորին դարձեալ առաջուան պէս ծառայէ :

Ռատուլ գառնութեամբ ժպտեցաւ :

— Մ՛հ, իրաւ է — ըսաւ — այդ բանը կ'մոռնայի . թաղաւորն իմ տէրս է :

— Ազատութիւնդ, կեանքդ վտանգի մէջ են :

Ռատուլին այցժառ և թափանցիկ մէկ ակնարկը տիկին Հանրիէդի հասկըցուց որ ինք կ'սխալէր, և թէ իր վերջին առարկուածութիւնն այս երիտասարդն ահաբեկող տեսիլէն չէր :



— Ջզոյշ եղիբ, Պ. Պրաժլօն — ըսաւ նա — վասն զի եթէ բոլոր գործերդ չկշռես, բարկութեան պիտի զրգոնես իշխան մ'որ բանականութեան սահմանէն դուրս զայրանալու հակամէտ է, բարեկամներդ և ընտանիքդ մեծ ցաւոյ մէջ պիտի նետես. խոնարհէ, հնազանդէ, բժշկուէ :

— Շնորհակալ եմ, աիկին — ըսաւ : — Ձեր Ասեմափայլութեան սուած խորհուրդը կ'զնհատեմ, և անոր հետեւելու պիտի ջանամ. բայց վերջին խօսք մ'ալ մ'ունիմ, կ'աղաչեմ ձեզ :

— Ըսէ :

— Միթէ անխոհեմութիւն մ'ըրած պիտի լինիմ եթէ այս սանդղին, այս կափուլին, այս կենդանադրին զաղանիքը հարցընեմ, այս զաղանիքն ինչպէս երևան հանեցիք :

— Ա՛հ, աղկից աւելի սլարդ բան մը չկայ, հսկողութեան պատճառաւ իմ նաժիշտներու սենեկին կրկին բանալին ունիմ. ինձ տարօրինակ երեցաւ որ Լա Աալիէր այնչափ ստէպ առանձին սենեակը կ'փակուէր. ինձ տարօրինակ թուեցաւ որ Սէնդ-Էնյան իր բնակարանը փոխէ. ինձ տարօրինակ երեցաւ որ թագաւորն ամէն օր Սէնդ-Էնյանը տեսնելու գայ, թէ և այս վերջինն անոր սրտակից բարեկամն է. վերջապէս՝ տարօրինակ երեցաւ ինձ որ այսչափ բաներ տեղի ունենան տարակայութենէդ ի վեր, որ արքունեաց սովորական ընթացքը փոխուած լինէր :

Ես չեմ ուզեր որ թագաւորն ինձ խաղ խաղայ, ես չեմ ուզեր անոր սիրոյն վարագոյրը լինիլ, վասն զի Լա Աալիէրէն ետք՝ որ կ'լայ, Վօնդալէն պիտի գայ սը կ'ծիծաղի, Գօնէյ-Շարանդ որ կ'երգէ, այս ինձ արժանի դեր մը չէ : Իմ բարեկամութեանս խղճի խայթը փարատեցի, և զաղանիքը վեր հանեցի . . . : Գիտեմ որ քեզ կ'վերաւորեմ վերստին, բայց ներքէ ինձ, պարտք մ'ունէի կատարելու, լմնցաւ, այժմ ամէն բան զխտես, փոթորիկը պիտի ծագի, ինքզինքդ պահպանէ :

— Սպիայն հետևութիւն մը կ'հանէք, աիկին — պատասխանեց Պրաժլօն հաստատամտութեամբ — վասն զի չէք կրնար ենթադրել որ անձայն պիտի ընդունիմ կրած նախատինքս և մատչութիւնս :

— Այս մասին ինչ ընթացք որ յարմար դատես բռնէ, Պ. Ռաուլ : Միայն այս ճշմարտութեան աղբիւրը մի յայտնէր, ահա այս միայն կ'ինդրեմ քեզնէ, ահա իմ ըրած ծառայութեանս փոխարէն այս միայն կ'պահանջեմ :

— Բանէ մը մի վախնաք, աիկին — ըսաւ Պրաժլօն դառն ժպտով մը :

— Ես սիրողներուն բռնած դարբինն որսացի : Գու ալ ինձի պէս ըրած կրնաս լինիլ, այնպէս չէ՞ :

— Այո, աիկին : Ձեր արքայական Ասեմափայլութիւնն ինձ խորհուրդ մը չտար, ուրիշ զրուշութիւն չպատուիրեր բայց միայն զինքը վտանգի մէջ չզնեւ բերան տալով :

— Ուրիշ ինդիր չունիմ :

— Ուրեմն, Ասեմափայլ իշխանուհի, պիտի աղաչեմ ձեզ միայն որ վայրկեան մ'այս տեղ մնամ :

— Առանց ինձի :

— Ա՛հ, չէ : իշխանուհի : Փոյթ չէ, բնելիքս՝ կրնամ ձեր առջևն ընել : Այրիկեան մը կ'ինդրեմ որ մէկուն խօսք մը գրեմ :

— Այդ վտանգաւոր բան է, Պ. Պրաժլօն : Ջզոյշ եղիբ :

— Աչ որ կրնայ իմանալ թէ Ձեր Ասեմափայլութիւնը զիս այս տեղ առաջնորդելու պատիւն ըրաւ : Ասկէ զատ՝ գրելիք զիրս պիտի ստորագրեմ :

— Ուրեմն գրէ, պարոն :

Ռաուլ արդէն իր թղթակալը հաներ և սպիտակ թղթի մը վերայ հետևեալ խօսքը գծեր էր .

« Կոմս ,

« Մի զարմանաք իմ ստորագրութեամբս այս թուղթն այս տեղ գտնելուդ, մինչև որ իմ բարեկամներէս մին, զոր քիչ ատենէն ձեզն պիտի ուղարկեմ, իմ այցելութեանս նպատակը ձեզի բացատրելու պատիւն ունենայ :

« Գերկոմս ՌԱՌԻԼ ՊՐԱԺԼՕՆ »

Այս թերթը բոլորեց, երկու սիրահարներուն սենեկին հետ



հաղորդակցութիւն ունեցող դրան կղպակին մէջ սահեցուց, և ստոյգ լինելով որ այս թուղթն այնքան աչքի կ'զարնէր որ Սէնդ — Էնյան ներս մտնելու աստն անտարակոյս պիտի տեսնէր, իշխանուհւոյն մօտ գնաց, որ արդէն սանդղին վերի աստիճանը հասեր էր:

Իրարմէ բաժնուեցան վերնադաւթին մէջ. Ռաուլ շնորհակալութիւն կեղծեց առ իշխանուհին, Հանրիէդ ցաւելով կամ ցաւել ձեւացնելով սրտաղին այս դժբաղդ սիրահարը զոր այսպէս սոսկալի տանջանքի մը դատապարտեր էր:

— Ո՛հ — ըսաւ նա տեսնելով անոր հեռանալը գունատ դէմքով և արիւնալի աչքով — ո՛հ, թէ որ դիտնայի, այս խեղճ երիտասարդին չպիտի յայտնէի ճշմարտութիւնը:

### ԺԵ

#### ԲՈՐԹՈՍԻՆ ԵՂԱՆԸԿԸ

Որովհետեւ այս երկար պատմութեան մէջ շատ անձեր ներկայացուցինք, իւրաքանչիւրը պարտաւոր է միայն ըստ կարգի և շարակարգութեան պահանջման համեմատ՝ երևան դալ: Հետևապէս մեր ընթերցողներն առ իթ չունեցան մեր Բորթոս բարեկամին հետ գտնուելու ֆօնդէնպլօէն վերադարձէն ՚ի վեր:

Թագաւորէն ընդունած պատիւները բնաւ չէին փոխած այս յարգելի մեծատան անսուտ և սիրաւէտ բնաւորութիւնը, միայն՝ սովորականէն աւելի զլուխ կ'բռնէր, և իր ընթացքին մէջ վեհափառական բան մը կ'նշմարուէր թագաւորին սեղանակից լինելու շնորհը վայելելէն ՚ի վեր: Նորին Վեհափառութեան կերակուրի սրահը Բորթոսի վրայ ներդրածութիւն մ'ունեցեր էր: Պրասիէօի և Բիէրֆօնի կալուածատէրը կ'ախորժէր յիշելու, որ այս մեծահամբաւ հացիկերոյթին ատեն՝ շատ մը սպասաւորներ և բաղմաթիւ սպաններ, կոչնականներուն ետեւը կեցած՝ ճաշին լաւ կերպարան կ'տային և սեղանը կ'զարդարէին:

Բորթոս միտքը դրաւ Պ. Մուսգօնի պատիւ մը շնորհել, իր միւս սպասաւորներուն մէջ կերպ մը դասակարգութիւն հաստատել, և զինուորական տուն մը հիմնել. այս մեծ հրամանատարներու մէջ նորօրինակ բան մը չէր, վասն զի նախորդ դարուն մէջ նոյն պերճութիւնը կ'երևէր Պ. Գրէվիլի, Շօնպէրի, Վիէօլիլի ապարանքը, թող Պ. Ռիշլիէօն, Գօնտէն և Պոյօն-Գիլրէն:

Ինք Բորթոս, թագաւորին և ֆուքէին բարեկամը, սեպուհ, ճարտարագէտ և այլն, ինչո՞ւ համար չպիտի վայելեր մեծ ստացուածոց և մեծ արժանեաց յարակից եղող հաճոյքը:

Բորթոս՝ քիչ մ'երեսէ ընկած լինելով Արամիսէն, որ, ինչպէս դիտենք, Պ. ֆուքէին հետ զբաղած էր, քիչ մը մոռցուած լինելով ա'Արդանտանէն իր պաշտօնին պատճառաւ, Թրուչէնէն և Բլանշէնէն անողտկացած, առանց դիտնալու յանկարծ մտմոռքի մէջ գտաւ ինքզինքը, բայց եթէ մէկն անոր հարցնէր, «Միթէ քեզի բան մը կ'պակսի՞», Բորթոս » անտարակոյս պիտի պատասխանէր. «Այո»:

Բորթոս՝ ճաշէ մ'ետք՝ երբ կ'ջանար յիշելու արքայական ճաշին բոլոր պարագաները, կէս զուարթ, գինիին շնորհիւ, կէս տրտում, փառասիրական խորհուրդներուն շնորհիւ, Բորթոս սկսեր էր միջօրէի քուն մը քաշել երբ իր սենեկապանը ներս մտնելով խմացոյց որ Պ. Պրաժօն իրեն հետ խօսիլ կ'ուզէր:

Բորթոս մօտաւոր սրահը մտաւ, ուր նորատի բարեկամը գտաւ մեր արդէն դիտցած տրամադրութեան մէջ:

Ռաուլ գնաց Բորթոսին ձեռքը սեղմեց, և այս անոր ծանր ընթացքին վրայ զարմանալով՝ աթոռ մը ներկայացուց:

— Սիրելի Պ. Վալօն — ըսաւ Ռաուլ — քեզնէ ծառայութիւն մ'ունիմ խնդրելու:

— Շատ յարմար եկաւ խնդիրդ, նորատի բարեկամդ իմ — պատասխանեց Բորթոս: — Այս առտու ութ հազար Փրանք զրկեցին ինձ Բիէրֆօնէն, և եթէ ստակի կարօտ ես . . . :

— Ո՛հ, ստակի պէտք չունիմ, շնորհակալ եմ, իմ պատուական բարեկամս:

— Շատ լաւ. միշտ ըսած են ինձ որ այս իմ առաջարկածս



Հազուադիւտ ծառայութիւն մ'է, բայց ամենազիւրին է հատուցանելու: Այդ խօսքը զարմանքս պատճառեց, զարմանքս զրդուող խօսքերը մէջ բերել կ'սիրեմ:

— Արչափ բարի սիրտ նոյնչափ ողջ միտք մ'ունիս:

— Շատ բարեսիրտ ես, Ռատու: Կարելի է կերակուր չես կերած:

— Ա՛հ, ո՛չ, անօթի չեմ:

— Իբրևի, շատ սոսկալի երկիր մ'է Անկլեա, այնպէս չէ:

— Ա՛չ այդչափ, բայց . . . :

— Ճշմարիտը, թէ որ այն տեղ զանուած պատուական ձուկ և աղ որ միս պահէր, անտանելի երկիր մը պիտի գառնար:

— Այո . . . ես ալ պիտի ըսէի . . . :

— Քեզի մտիկ կ'ընեմ: Միայն ներէ ինձ որ քիչ մը զովանամ: Աղած բաներ կ'ուտեն Բարիզ, բո՛հ:

Եւ Բորթոս Շանբանցի շէշ մը գինի բերել տուաւ:

Ապա իր բաժակէն առաջ Ռատուինը լեցնելով՝ լեցուն գաւաթ մը խմեց, և գոհ լինելով, վրայ բերաւ.

— Այս պէտք էր ինձ որ ուշագրութեամբ քեզի լսեմ: Աւասիկ բոլորովին քուկդ եմ: Ի՞նչ կ'ընդրես, սիրելի Ռատու, ի՞նչ կ'փափաքիս:

— Կուրաներուն վրայ կարծիքդ ըսէ ինձ, սիրելի բարեկամդ իմ:

— Ի՞մ կարծիքս . . . նախ՝ միտքդ քիչ մը բացատրէ — պատասխանեց Բորթոս ճակատը քերելով:

— Ըսել կ'ուզեմ, երբ կուիւ կայ բարեկամներուդ և օտարներուն մէջ արամադիր ես մասնակցելու:

— Ա՛հ, չափազանց տրամադիր, ինչպէս միշտ:

— Շատ լաւ. բայց ի՞նչ կ'ընես այն ատեն:

— Երբ իմ բարեկամներս կուիւ մ'ունենան, սկզբունքի մը կը հետևիմ:

— Ի՞նչ սկզբունք:

— Այսինքն կորսուած ժամանակն անդառնալի է, և թէ մարդ այն ատեն միայն լաւ կարող է կարգադրել գործ մ'երբ միանգամայն տաք վիճաբանութեան մէջ կ'մտնէ:

— Ա՛հ, իրաւ, այդ է սկզբունքդ:

— Բացարձակապէս: Աւստի՝ երբ կուիւ սկսի, երկու հակառակ կողմերը դէմ առ դէմ կ'բերեմ:

— Չարմանք:

— Քաջ կ'ըմբռնես որ այս կերպով, անկարելի է որ գործ մը կարդի չմտնէ:

— Ես կ'կարծէի թէ — ըսաւ Ռատու զարմանօք — գործն այս կերպ բռնելով 'ի հարկէ . . . :

— Ամենեին այդպէս չէ: Մտածէ որ կենացս մէջ հարիւր ութսուն, հարիւր ինսուսնի չափ մենամարտութիւն ըրած եմ, առանց 'ի հաշիւ առնուլ զաղտնի կուրները:

— Աղւոր թիւ մ'է — ըսաւ Ռատու ակամայ ժպտելով:

— Ա՛հ, այդ բան մը չէ, ես այնչափ քաղցրաբարոյ եմ. . . : Տ'Արդանեան հարիւրաւոր մենամարտութիւններ ըրած է: Իրաւ է որ դաժան է և կծու, ես ստէպ կրկնած եմ այս բանս:

— Այսպէս — վրայ բերաւ Ռատու — կ'կարգադրես ուրեմն բարեկամներուդ քեզի յանձնած գործերը:

— Բնաւ օրինակը չկայ որ հատ մը կարգադրած չլինիմ — ըսաւ Բորթոս հանդարտութեամբ և վստահութեամբ մ'որ Ռատուն ոստոստել տուին:

— Բայց — ըսաւ նա — այդ կարգադրութիւնները դէթ պատուաւոր են:

— Ա՛հ, այդ մասին ապահով եղիւ. այս առթիւ, քեզի միւս սկզբունքս պիտի բացատրեմ: Երբ մի անգամ բարեկամս ինձ կը յանձնէ իր կուրը, տես թէ ինչպէս գործի կ'սկսիմ. անմիջապէս կ'երթամ իր հակառակորդը կ'գտնեմ, այնպէս քաղաքավարութեամբ և պաղարիւնութեամբ կ'ընիմ որ այսպիսի պարագայից մէջ անհրաժեշտ են:

— Արեմն այդ ընթացքիդ պարտաւոր ես — ըսաւ Ռատու զառնութեամբ — գործերու ստոյգ և ապահով կարգադրութիւնը:

— Ես այսպէս կ'կարգեմ: Աւստի կ'երթամ հակառակորդը կը գտնեմ և անոր կ'ըսեմ. « Պարոն, անկարելի է որ չհասկընաս թէ ինչ սաստիճան նախատեցիր իմ բարեկամս »:







- Եթէ կ'ուզես, աւելին ալ կրնաս ըսել:
- Շատ հեշտ է:
- Ահա բոլորովին կարդադրուած գործ մը, այնպէս չէ՝ — ըսաւ Ռաուլ ժպտելով:
- Գործն ինքնին կ'սօսի . . . : Ո՛ւր պիտի սղասես անոր:
- Ա՛հ, ներէ՛, շատ փափուկ գործ է: Պ. Սէնդ-Էնյան թագաւորին մեծ բարեկամն է:
- Ես ալ լսած եմ այդ բանը:
- Եւ եթէ սպաննեմ զինքը:
- Անտաբակոյս զանի պիտի սպաննես: Քեզի կ'ընկնի զինքն զլուշայնել, բայց, այժմ, այդ բաները դժուարութիւն չունին: Եթէ մեր ժամանակն ապրէիր, այն ատեն խնդիրը կ'փոխուէր:
- Սիրելի բարեկամ, իմ ըսածս չհասկըցար: Ա՛ռ զեմ ըսել թէ Պ. Սէնդ-Էնյան թագաւորին մեծ բարեկամը լինելով, գործն աւելի դժուարութեամբ պիտի սկսիս, վասն զի թերևս թագաւորը կանխաւ իմանայ բանը . . . :
- Է՛հ, ո՛չ: Իմ եղանակս քաջ պիտես. « Պարոն, իմ բարեկամս թշնամանցիր, և . . . »:
- Այո՛, պիտեմ:
- Եւ ապա. « Պարոն, ձին վարն է »: Ուստի զինքը կ'առնեմ կ'բերեմ դեռ բերանն ուրիշին չբացած:
- Միթէ յանձն պիտի առնու այդպէս ճամբայ ելնելու:
- Թշուառականը, կ'ուզէի որ պիմադրէր. առաջին անգամ այդպիսի բան մը պիտի տեսնէի: Իրաւ որ այսօրուան երիտասարդները . . . : Բայց, վա՛հ, եթէ պէտք լինի զանի կ'վերցնեմ կը բերեմ:
- Եւ Բորթոս՝ շարժու մը խօսքին միայնելով, Ռաուլն աթուէն վեր վերցուց:
- Շատ լաւ — պատասխանեց երիտասարդը ծիծաղելով: — Ա՛մնայ մեզ խնդիրը Պ. Սէնդ-Էնյանի պարզել:
- Ի՞նչ խնդիր:
- Թշնամանաց խնդիրը:
- Բայց, կարծեմ թէ այդ խնդիրն եղաւ:

- Ո՛չ, սիրելիդ իմ Պ. Վալլօն, մեր այսօրուան երիտասարդաց սովորութիւնը, ինչպէս կ'ըսես, կ'պահանջէ որ նախատանաց պատճառը բացատրուի:
- Չեր նոր եղանակովը, այո՛: Շատ աղէկ, ուրեմն պատմէինձ գործը . . . :
- Գործը սա է որ . . . :
- Ա՛հ, իրաւի, տաղտկալի է այդ, երբեմն պէտք չունէինք ընաւ պատմելու. կ'մնամարտէին մարդիկ, վասն զի կ'մնամարտէին: Ես լաւագոյն պատճառ մը չեմ ճանչեր:
- Իրաւացի է ըսածդ, բարեկամդ իմ:
- Պատճառներդ մտիկ կ'ընեմ:
- Շատ պատճառներ ունիմ պատմելու: Միայն, որովհետեւ պէտք է ճշգրտել . . . :
- Այո՛, այո՛, կրո՛ղ, այս կ'պահանջէ նոր եղանակը:
- Որովհետեւ պէտք է ճշգրտել, որովհետեւ միւս կողմէ, գործը լի է դժուարութիւններով և բացարձակ դաղտնասպահութիւն կ'պահանջէ . . . :
- Հօ՛, հօ՛:
- Բարեհաճիս միայն Պ. Սէնդ-Էնյանի ըսելու, և պիտի իմանայ ըսածդ, թէ զիս նախատեց, նախ՝ սենեակ փոխելով:
- Սենեակի փոխելով . . . լաւ — պատասխանեց Բորթոս, որ սկսաւ իր մատերովը համբել: — Աւերջը՛:
- Երկրորդ՝ իր նոր բնակարանին մէջ կափուլ մը շինել տալուն:
- Ա՛յնքանամ — ըսաւ Բորթոս — կափուլ մը: Արո՛ղ, այդ ծանր գործ է: Ա՛հաւտամ որ այս մասին շատ կատղած պիտի լինիս: Եւ ինչո՞ւ համար, այն թշուառականը կափուլներ շինել տուեր է առանց քեզի խորհուրդ հարցնելու: Ապիտւնէ՛ր . . . անօրէ՛ն . . . : Ես այդպէս բան չունիմ, ես, եթէ ոչ Պրասիէօի թագուստս:
- Պիտի աւելցնես — ըսաւ Ռաուլ — թէ իմ վերջին պատճառս է կենդանագիրը, զոր Պ. Սէնդ-Էնյան լաւ գիտէ:
- Է՛հ, բայց, կենդանագիր կայ . . . : Ի՞նչ, սենեակ փոխել՝



կախուլ մը , և կենդանադիր մը : Բայց , բարեկամդ իմ — ըսաւ Բորթոս — մինակ այս մէկ թշնամանքը բաւական է Ֆրանսայի և Սպանիայի բոլոր ազատորդները զերար ջարդելու յորդորել , և այս ալ պղտիկ բան չէ :

— Այսպէս , սիրելիդ իմ , աւասիկ բաւական զինեալ ես :

— Հետո երկրորդ ձի մը պիտի աանիմ : Ընտրէ մենամարտութեան սեղը . և երբ պիտի սպասես , մարդանք ըրէ և սուր շարժէ , այդ վարժութիւնը հաղուագիւտ գիւրաշարժութիւն մը կ'տայ :

— Շնորհակալ եմ : Աէնտէնի անտաւը , Մինիմի մօտ պիտի սպասեմ :

— Ահա այդ ազէկ մտածեր ես . . . : Պ . Սէնդ-Էնյան ո՞ր կ'դանուի :

— Ի Բալէ-Բուայալ :

Բորթոս խոշոր հնչակ մը շարժեց : Իր սպասաւորն եկաւ :

— Իմ հանդիսաւոր հագուստս բեր — ըսաւ նա — ձիս և փոխնորդ ձի մը :

Սպասաւորը ծռեցաւ և դուրս ելաւ :

— Հայրդ այդ բանը գիտէ՞ — ըսաւ Բորթոս :

— Ա՛հ , հիմակ պիտի զրեմ անոր :

— Հապա տ'Արդանեան :

— Եւ ոչ տ'Արդանեան : Խոհեմ է , կարելի է արդիւք զնէր :

— Սակայն տ'Արդանեան բարեխորհուրդ մարդ է — ըսաւ Բորթոս զարմանօք , վասն զի անկեղծ համեստութեամբ կ'մտածէր թէ ինչպէս իրեն կ'զիմէր Ռաուլ երբ տ'Արդանեան մը կար աշխարհի մէջ :

— Սիրելի Պ . Վալլօն — պատասխանեց Ռաուլ — կ'սպաղաւորիմ , այլ ևս հարցումներ մի՛ ըներ ինձ : Ըսելէքս ըսի : Հիմակ զործի կ'սպասեմ , կ'սպասեմ որ ուժգին և վճռակա՛ն կերպով վարուիս , ինչպէս որ դու այս մասին ճարպիկ ես : Ահա ասոր համար քեզ ընտրեցի :

— Իզնէ զո՞հ պիտի լինիս — պատասխանեց Բորթոս :

— Եւ մտածէ , սիրելի բարեկամ , որ մեզնէ զատ , ոչ ոք պէ՛տք է իմանայ այս մենամարտութիւնը :

— Այսպիսի բաներ միշտ երևան կ'եննեն — ըսաւ Բորթոս — Երբ անտառին մէջ զիակ մը կ'տեսնեն : Ա՛հ , սիրելի բարեկամ , քեզ ամէն ինչ կ'խոստանամ , զիակը պահելու գործէն զատ : Ահա անդ է , կ'նշմարեմ զայն , անխուսափելի է մահը : Իմ սկզբունքս բնաւ չթաղել է : Արթնես թէ մարդասպանի գործ ըրած կ'լինիմ :

— Քաջասիրտ և սիրելի բարեկամ , գործի սկսէ :

— Վստահ եղիւր իմ վրայ — ըսաւ հսկայն շին աւարտելով , մինչդեռ իր սպասաւորը կարասիի մը վրայ կ'պարզէր շքեղ զգեստն ու տանթէ՛նները :

Իսկ Ռաուլ դուրս ելաւ զաղանի ուրախութեամբ մ'ինքնիրեն ըսելով .

— Ա՛հ , խորամանկ թաղաւոր , մատնի՛չ թաղաւոր , ես չեմ կարող քեզի հասնիլ , չեմ ուզեր . թաղաւորները նուիրական անձեր են , բայց քու դաւակիցդ , քու կամակատարդ , որ քեզ կը ներկայացնէ , այդ վատն իր յանցանաց պատիժը պիտի կրէ : Յանուն քեզ պիտի սպաննեմ , և իզնէ ետք՝ Լուիզին վրայ մտածելու կարգը պիտի գայ :

ԺԶ

ՏԵՂԱՓՈՒՌԻԻՆ , ԿԱՓՈՒԼ ԵՒ ԿԵՆԳԱՆԱԳԻՐ

Բորթոս՝ զոհութեամբ ստանձնելով այս պաշտօնն որ զինքը կ'առողջացնէր , իր հանդիսաւոր հագուստն հագնելու համար սովորաբար անցուցած ժամանակէն կէս ժամ նուազ անցուց :

Աշխարհիս սովորութեանց վարժ մարդու մը պէ՛տ նախ իր սպասաւորը Պ . Սէնդ-Էնյանի զրկեր էր որպէս զի հարցնէ թէ տունն է :

Պատասխան տուեր էին թէ Պ . Սէնդ-Էնյան պատիւ ունեցեր էր թաղաւորին ուղեկցիլ 'ի Սէն-Ժէրմէն , ինչպէս նաև բոլոր արքունիքը , բայց կոմսը նոյն միջոցին վերագործեր էր :



Այս պատասխանին վրայ Բորթոս շտապելով Սէնդ-Էնյանի բնակարանը հասաւ, երբ այս նոր իր կօշիկները հաներ էր :

Շրջազայտութիւնը շատ փառաւոր եղեր էր : Թագաւորը՝ հետզհետէ սիրահար և երջանիկ՝ ամենուն համար բարեհամբոյր կ'երևէր, ամենուն հետ աննման քաղցրութեամբ կ'վարուէր :

Ինչպէս որ զիտենք՝ Սէնդ-Էնյան բանահիւս էր, և կարծէր թէ այս տաղանդը շատ յիշատակելի պարագաներու մէջ ցոյց տուած լինելուն՝ ոչ ոք զայն կ'ուրանար :

Իբրև անխոնջ տաղաչափ մը, ճամբուն վրայ քառեակներ, վեցեակներ և շատ մը տաղեր յօրիներ էր՝ նախ թագաւորին ապա Լա Վալիէրի վրայ :

Միւս կողմէ՝ թագաւորին աւուսն ալ բունք և քերթուածներ յօրիներ էր :

Իսկ Լա Վալիէր ամէն սիրող կանանց պէս՝ երկու նուագ շիներ էր :

Ինչպէս որ կ'տեսնենք, Ապոլոնի համար բարեբաստիկ օր մ'էր այն :

Ուստի՝ ի դարձին Բարիզ, Սէնդ-Էնյան՝ որ կանխաւ զիտէր թէ իր ոտանաւորներն ամէն կողմ՝ պիտի պարտին, շրջազայտութեան ժամանակէն աւելի կ'աշխատէր ոտանաւորները յղկել և իմաստները շտկել :

Հետևապէս՝ դորովալի հօր մը պէս՝ որ իր զաւակունքն աշխարհ հանելու կիտին վրայ է, ինքնին կ'հարցնէր թէ արդեօք հասարակութիւնն ուղիղ, անսխալ և շնորհալի պիտի գտնէ իր երևակայութեան այս ծնունդները : Ուստի՝ այս մասին միամիտ լինելու համար՝ Պ, Սէնդ-Էնյան հետևեալ քերթուածն առանձին կ'կարգար և զոր զոյ թագաւորին ըսելով՝ խօսք տուեր էր գրով անոր ընծայելու :

Իբրև, նենգաօրէ աշունդը զէն ըսեր մշտ,  
Ինչ որ քո սրտիդ կ'ընկադրէ մտոր,  
Իբրև, ինչո՞ւ համար այսպէս ի՞մ կեանք անցընե՞մ  
Ատելի սերելով աշունդ որ ըրեն ինչ այդ խաղեր :

Այս քերթուածը, որչափ որ շնորհալի էր, Սէնդ-Էնյանի ջնտիր չէր երևեր, երբ բերանացի խօսքը դրաւոր ոտանաւորի գարձուց : Շատ մարդիկ այս ոտանաւորները սիրուն գտեր էին, և ամենէն առաջ հեղինակը, բայց երկրորդ անգամ աչքէ անցնելուն, նոյն նախապաշարումը չմնաց : Ուստի Սէնդ-Էնյան՝ իր սեղանին առջև նստած՝ մէկ ոտքը միւսին վրայ դրած՝ և քունքը քերելով՝ կ'կրկնէր .

— Իբրև, նենգաօրէ աշունդը զէն ըսեր մշտ . . . :

— Ո՛հ, այս սողը, այս սողը — մըմուաց Սէնդ-Էնյան — անսղիւս է : Արնամ յաւելուլ նաև որ Ռօնսարի կամ ՄալՏէրպի ոտանաւորներուն հօմն ունի, որմէ դօ՛հ եմ : Գծբողգաբար երկրորդն այսպէս չէ : Իբաւունք ունին ըսելու որ ամենէն հեշտ ոտանաւորն առաջինն է :

Իւ. շարունակեց .

— Ինչ որ քո սրտիդ կ'ընկադրէ մտոր . . . :

— Ա՛հ, աւասիկ միտքն որ սրտի կ'վստահի : Ինչո՞ւ համար սիրտն ալ նոյնպէս մտքին չպիտի վստահի : Ճշմարիտը, ես այս մասին արդեւք մը չեմ տեսներ : Թշուաւական, ինչպէս այս կարգակէսներն իրարու հետ կցեցի : Օրինակի համար, երրորդը լաւ է :

Իբրև, ինչո՞ւ համար այսպէս ի՞մ կեանք անցընե՞մ . . . :

Թէև յանդը ճօխ չէ . . . : Ճշմարիտ վկայ, Պուալէ արբան, որ մեծ բանահիւս մ'է, նոյն յանգերը գործածեց իր ողբերգութեանց մէջ, դարձեալ Պ, Գօրնէյլն ալ փոյթ չընէր այս մասին : Բայց ոտանաւորը դժպշի է : Ա՛յիշեմ որ թագաւորն իր ըզունդը կրծեց նոյն պահուն : Իբաւի, այնպէս կ'երևի որպէս թէ օրիորդ Լա Վալիէրի կ'ըսէ . « Ի՞նչ է պատճառն որ քու կողմէդ զիւթուած եմ » : Լաւ ևս էր ըսել, կարծեմ .

Օրհնեալ լինին որի որ կեանքս դատապարտեցին :

Դատապարտեցին . է՛հ, լաւ, աւասիկ ուրիշ մարդավարութիւն մը : Թագաւորը Լա Վալիէրէ գատապարտուած . . . ո՛չ :

— Բայց օրհնեալ լինին որի որ . . . նոսիբն ի՞մ կեանք :

Այս զէշ չէ . թէև նոսիբն ի՞մ կեանք տկար է . բայց, ճշմար



քիտ վիայ, քառեկի մը մէջ ամէն բան զօրաւոր չլինիր: Աւելի  
 «իբեւ» աշուհի . . . : Աւելի սիրել զմի, ինչ մութ է . . . :  
 Մթութիւնը բան մը չէ, քանի որ Լա Վալիէր ու թագաւորը  
 միտքս հասկըցան, ամէն մարդ պիտի հասկընայ: Այո, բայց ա-  
 լասիկ արտուր կողմը . . . վերջին հատուածն է. Որ բնի ինչ այդ  
 խառնէր: Յոգնակի է առ հարկի յանդին համար, և ապա ինչպէս  
 խաղ անուանել Լա Վալիէրի ամօթխածութիւնը: Այս յաջող  
 խօսք մը չէ: Իմ պաշտօնակից թուղթ քերթողներու լեզուն աշ-  
 քէ սլիտի անցընեմ, իմ քերթուածքս մեծ պնուականի ոտանա-  
 ւորներ պիտի անուանեն, և երբ թագաւորն իմանայ որ վատ քեր-  
 թող մ'եմ, քիչ քիչ պիտի հաւտայ:

Եւ այս խօսքն իր սրտին, և իր սիրտն իր մեքին վստահելով  
 կոմսը բոլորովին կ'հանուէր: Իր զգեստն ու իր բաճկոնակն այն  
 ինչ հանելով՝ պարեգօտը գնելու վրայ էր՝ երբոր անոր իմաց  
 տուին Վալլօն տը Պրասիէօ տը Բիէրֆօնի սեպուհը:

— Ի՛հ — ըսաւ — ինչ կ'նշանակէ այս անուններու փունջը .  
 բնաւ չեմ ճանչեր այս մարդը:

— Այս մարդը — պատասխանեց սպասաւորը — ազատորդի մ'է  
 որ պատիւ ունեցաւ ձեզի հետ ճաշելու թագաւորին սեղանը,  
 մինչդեռ Նորին Վեհափառութիւնն 'ի Փօնդէնպլօ կ'գանուէր:

— Թագաւորին հետ, 'ի Փօնդէնպլօ՞ — դռնեց Սէնդ-Էնյան:  
 — Ի՛հ, շուտ, շուտ ներս հրամցուր այդ ազատորդին:

Սպասաւորը հնազանդելու փութաց: Բորթոս ներս մտաւ:

Պ. Սէնդ-Էնյան պալատականի յիշողութիւն ունէր, այն ինչ  
 տեսաւ Բորթոսն որ գաւառաբնակ իշխանը ճանչեց, իր այլան-  
 դակ անուկովը, և զոր թագաւորն այնպէս լաւ ընդունէր էր 'ի  
 Փօնդէնպլօ, առ ոչ ինչ դրելով ներկայ պնուող սպայից ժպիտ-  
 ները: Աւստի դէպ 'ի Բորթոս յառաջացաւ բարեյօժարութեան  
 ամէն նշաններով զոր Բորթոս շատ բնական դատ, ինքն որ հա-  
 կառակորդի մը սենեակը մտնելուն՝ ամենանուրբ քաղաքավարու-  
 թեան դրօշակը կ'սարգէր:

Սէնդ-Էնյան սպասաւորին ձեռք աթոռ մը ներկայացնել տուաւ:  
 Այս վերջինն որ այս քաղաքավարութեան մէջ չափազանցութիւն

մը չէր տեսներ, նստաւ և հազաց: Սովորական մարդավարու-  
 թեան ձևերն երկու կողմէ փոխանակեցին, ապա՝ ըստ որում կոմսն  
 էր այցելութիւնն ընդունողը,

— Սեպուհ — ըսաւ — ինչ բարեպատեհ պարապայի պարտա-  
 ւոր եմ ձեր այցելութիւնը:

— Ես ալ ճիշտ այդ բանն այժմ բացատրելու պատիւը պիտի  
 ունենամ — պատասխանեց Բորթոս — բայց ներեցէք . . . :

— Ի՞նչ կայ, պարոն — հարցուց Սէնդ-Էնյան:

— Կ'նայիմ որ այդ աթոռը կ'կուարեմ:

— Բնաւ, պարոն — ըսաւ Սէնդ-Էնյան — բնաւ ին:

— Այո, կոմս, այո, ճշմարիտը, կ'խորտակեմ աթոռը, և  
 այնչափ որ եթէ աւելի ևս նստիմ պիտի վար ընկնիմ, և այս  
 դիրքը շատ անվայել պիտի լինի այն ծանրակշիւ պաշտօնիս մէջ  
 զոր ինձ յանձնած են ձեր մօտ:

Բորթոս ոտք ելաւ: Ժամանակն էր, աթոռն արդէն քանի մը  
 բթամատ ձգմուէր էր: Սէնդ-Էնյան իր հիւրին համար աւելի  
 հաստատուն նստարան մը փնտռեց:

— Հիմակուան կարասիները — ըսաւ Բորթոս, երբ կոմսն ա-  
 թոռ մը կ'փնտռէր — այժմեան կարասիները ծաղրելի թեթևութիւն  
 մ'ունին: Իմ երիտասարդութեանս ատեն՝ երբ աւելի զօրութեամբ  
 կ'նստէի քան թէ այժմ, չեմ յիշեր բնաւ որ աթոռ մը խորտա-  
 կած լինիմ, եթէ ոչ թեւերովս պանդոկներու մէջ:

Սէնդ-Էնյան այս կատակին վրայ խնդազին ժպիտ մը ցցուց:

— Բայց — ըսաւ Բորթոս հանդստարանի մը վրայ տեղաւոր-  
 աւելով, որ հեծեց այլ առկայ — խնդին այս չէ գժբաղդաբար:

— Ի՞նչպէս գժբաղդաբար: Արդեօք չարազուշակ բանբեր մ'էք,  
 սեպուհ:

— Ազատորդույ մը համար բնաւ չարազուշակ չէ. ո՛հ, ո՛չ,  
 կոմս — պատասխանեց Բորթոս: — Միայն ձեզի ըսելու եկայ որ  
 իմ բարեկամներէս մին անդթօրէն նախատեր էք:

— Ե՛ս, պարոն — դռնեց Սէնդ-Էնյան — ես ձեր բարեկամ  
 ներէն մին նախատած լինիմ: Եւ ո՞ր բարեկամը, կ'աղաչեմ:

— Պ. Ռաուլ տը Պրասլօնը:



— Ես Պ. Ռատու Պրաժլոնը նախատած լինի՛մ — գոչեց Սէնդ-Էնյան : — Ա՛հ, բայց ճշմարիտը, պարոն, այդ անկարելի բան է, վասն զի Պ. Պրաժլոնը զոր հազիւ կ'ճանչեմ, և կրնամ ըսել թէ բնաւ չեմ ճանչեր, Անկլիա է. շատ ատենէ 'ի վեր տեսած չլինելուս, բնաւ զինքը նախատած չեմ լինիր :

— Պ. Պրաժլոն Բարիզ է, կոմս — ըսաւ Բորթոս անվրդով — իսկ նախատելուդ մասին, ես կ'սնդեմ թէ ստոյգ է, քանի որ նոյն ինք ըսաւ ինձի : Այո՛, կոմս, անդ թաբար, մահու չափ նախատեցիք, կ'կրկնեմ բառը :

— Բայց անկարելի է, սեպուհ, կ'երդնում որ անկարելի է :  
— Սակայն — յարեց Բորթոս — չէք կարող անդիտել այս պարադան, քանի որ Պ. Պրաժլոն յայտնեց ինձ որ գործը տոմսակով մը ձեզի խնայուցեր է :

— Ես բնաւ տոմսակ չստացայ, պարոն, ես ձեզի կ'ապահովեմ :  
— Ահա այդ արտաքոյ կարգի բան մ'է — պատասխանեց Բորթոս — և ինչ որ կ'ըսէ Ռատու . . . :

— Ես այժմ պիտի համոզեմ ձեզ որ բան մը չստացայ — ըսաւ Սէնդ-Էնյան :

Եւ հնչակը զարկաւ :  
— Պասդ — ըսաւ նա — իմ բացակայութեանս ատեն քանի նամակ և տոմսակ եկաւ :  
— Երեք հատ, կոմս :  
— Որո՞նք են . . . :  
— Պ. Ֆիէսքի տոմսակը, Ֆէրտէի տիկնոջը, և Լա Ֆուէնգէտի գիրը :

— Ուրիշ կայ :  
— Բոլորն այս է, կոմս :  
— Ճշմարիտն ըսէ այս պարոնին առջև, ճշմարիտը, կ'իմանանք. ես պատասխանատու կ'մնամ քեզի համար :  
— Պարոն, ուրիշ գիր մ'ալ կայ, այս է տոմսակը . . . :  
— Որո՞ւ . . . շուտ, շուտ ըսէ նայինք :  
— Օրիորդ Լա Վալիէրի տոմսակը . . . :  
— Այդ բաւական է — ընդմիջեց Բորթոս խոհեմութեամբ :  
— Շատ լաւ կ'հաւտամ ձեզի, կոմս :

Սէնդ-Էնյան սպասուորը ճամբեց և ինք անձամբ գնաց դուռը գոցելու. բայց երբ կ'վերադառնար, դիպուածով իր առջևը նայելով, մտակայ սենեկին կղզակէն այն երևելի թուղթը տեսաւ զոր Պրաժլոն մեկնելու ատեն անոր մէջ սահեցուցեր էր :

— Ի՞նչ է այս — ըսաւ նա :  
Բորթոս, նոյն սենեկին կռթնած լինելով, գլուխը դարձուց .  
— Հօ, հօ — ըրաւ նա :

— Տոմսակ մը կայ կղզակին մէջ — գոչեց Սէնդ-Էնյան :  
— Կարելի է որ այդ մեր փնտրած տոմսակը լինի, կոմս — ըսաւ Բորթոս — լաւ նայեցէք :

Սէնդ-Էնյան թուղթն առաւ :  
— Պրաժլոնի կողմէ տոմսակ մը — գոչեց նա :  
— Կ'նայիք, իրաւունք ունիմ : Ա՛հ, երբ ես բան մը կ'ըսեմ . . . :  
— Նոյն ինք Պ. Պրաժլոն բերեր է զայն — մրմուռաց կոմսը գունատելով : — Բայց այս անարժան բան մ'է : Բայց այս տեղ ի՞նչպէս մտաւ :

Սէնդ-Էնյան վերստին հնչակը շարժեց, Պասդ նորէն եկաւ :  
— Ո՛վ եկաւ հոս, երբ թագաւորին հետ շրջագայութեան գացեր էի :

— Ոչ ոք եկաւ, պարոն :  
— Անկարելի բան է, անտարակոյս մէկն եկած պիտի լինի :  
— Բայց, պարոն, ոչ ոք կրցաւ մտնել, քանի որ բանալիներն իմ զրպանս էին :

— Սակայն ի՞նչ է հասաւ այս տոմսակը կղզակին մէջ : Անշուշտ մէկը զրած է անդ, ինքնիրեն եկած չէ :  
Պասդ թեւերը բացաւ 'ի նշան բացարձակ տգիտութեանը :  
— Շատ հաւանական է որ Պ. Պրաժլոն դրած է անդ — ըսաւ Բորթոս :

— Ուրեմն ներս մտած է :  
— Անտարակոյս, պարոն :  
— Բայց վերջապէս՝ քանի որ բանալին դրպանս էր, ի՞նչպէս կարելի է — յարեց Պասդ յամառութեամբ :  
Սէնդ-Էնյան տոմսակը ճմրդեց զայն կարգալէն ետև :



- Ասոր մէջ բան մը կայ — մրմուռաց նա մտախոհ :  
Բորթոս պահ մ'իր մտածութեանցը թողուց զանի :
- Ապա իր պատգամաւորութեան խօսքը բացաւ :
- Միթէ կ'հաճիք որ մեր խնդրոյն վրայ խօսինք — Հարցուց նա Սէնդ-Էնյանի ուղղելով խօսքը , երբոր սպասաւորն աներեւոյթ ելաւ :
- Բայց կարծեմ թէ խնդիրն այժմ կ'իմանամ այս այլանդակ կերպով հասած թղթէն : Պ. Պրաժլօն կ'իմացնէ ինձ որ բարեկամ մը . . . :
- Ես եմ իր բարեկամը , ուրեմն ձեզի իմաց տուած բարեկամն ես եմ :
- Միթէ մենամարտութեան կոչելու համար :
- Ճիշտ այդպէս :
- Եւ կ'զանգաւի որ զինքը նախատեսի :
- Անդթաբար , մահու չափ :
- Ի՞նչ կերպով , խնդրեմ : Աւան զի իր ընթացքը շատ խորհրդաւոր է և պարտաւոր եմ ասոր նշանակութիւնը խնդրել :
- Պարոն — պատասխանեց Բորթոս — իմ բարեկամն 'ի հարկէ պատճառ մը պիտի ունենայ : Եւ իր ընթացքին զաւրով եթէ ըսածնուդ պէս խորհրդաւոր է , միայն ինքզինքդ մեղադրէ :
- Բորթոս այս վերջին խօսքն այնպէս վստահութեամբ ըսաւ որ իր վարմունքին նորավարձ մարդ մը , շատ իմաստներ պիտի յայտնէր :
- Խորհուրդ , թող այդպէս լինի : Նայինք սա խորհուրդը — ըսաւ Սէնդ-Էնյան :
- Բայց Բորթոս ծռեցաւ :
- Արժան դատեցէք որ խնդրոյն մէջ չմտնեմ , պարոն — ըսաւ նա — և խիստ բանաւոր պատճառներու համար :
- Այդ պատճառները քաջ կ'ըմբռնեմ : Այո՛ , պարոն , ուրեմն հարեանցի անցնինք : Նայինք , պարոն , ձեզի մտիկ կ'ընեմ :
- Առաջին պատճառը սա է , պարոն — ըսաւ Բորթոս — որ վենեակ փոխեցիք :
- Իբրաւ է , սենեակս փոխեցի — ըսաւ Սէնդ-Էնյան :

- Կ'խոստովանիք — ըսաւ Բորթոս տեսնելի գոհունակութեան զէմքով մը :
- Եւ ինչո՞ւ չխոստովանիմ , բայց անշուշտ , կ'խոստովանիմ :
- Խոստովանեցաք , լաւ — նշանակեց Բորթոս մատին մէկը միայն օղին մէջ վերցնելով :
- Ա՛հ , խնդրեմ , պարոն , ըսէք ինձ թէ իմ տեղափոխութիւնս Պ. Պրաժլօնին ի՞նչ փնտա կրնայ ըրած լինիլ : Պատասխանեցէք , նայինք : Աւան զի ձեր ըսածէն ոչ ինչ չեմ հասկընար : Բորթոս զանի կեցուց :
- Պարոն — ըսաւ ծանրաբար — այս թշնամանքը Պ. Պրաժլօնի առաջին գանդատներէն մին է : Եթէ կ'զանգաւի , ըսել է թէ զինքը վերաւորած էք :
- Սէնդ-Էնյան անհամբերութեամբ ոտքը դետինը զարկաւ :
- Այս բանս պէշ կուտի մը կ'իմանի — ըսաւ նա :
- Պրաժլօն գերկումին պէս աղնուստիրտ մարդու մը հետ զէշ կուլու մը չենք կրնար ունենալ — պատասխանեց Բորթոս . — Բայց վերջապէս տեղափոխութեան մասին բան մը չունիք ըսելու , այնպէս չէ՞ :
- Ո՛չ , ապա՞ :
- Ա՛հ , ապա՞ : Բայց , պարոն , քաջ դիտեցէք որ այս գարշելի անիրաւութիւն մ'է որու չէք պատասխաներ , կամ լաւ ևս ըսեմ , պէշ կ'պատասխանէք : Ի՞նչպէս , պարոն , սենեակ կ'փոխէք , Պ. Պրաժլօն ասոր մէջ նախատինք մը կ'տեսնէ , և ինքզինքդ արգարացնելու չէք աշխատիր : Շատ ազէկ :
- Ի՞նչ — զոչեց Սէնդ-Էնյան , որ այս մարդուն անյողողղ դիրքէն սատիկ կ'սրտմտէր — Ինչ , միթէ պէտք ունիմ Պ. Պրաժլօնի խորհուրդ հարցնել իմ սենեակս փոխելու կամ չփոխելու խնդրոյ վրայ : Օ՛ն անգը , պարոն :
- Պարտաւորիչ է , պարոն , պարտաւորիչ : Սակայն պիտի խոստովանիք ինձ այս բան մը չէ երկրորդ անիրաւութեան մօտ : Բորթոս ծանր կերպարան մ'առաւ :
- Եւ այն կափո՞ւլը , պարոն — ըսաւ — այն կափո՞ւլը :
- Սէնդ-Էնյան չափազանց գունատեցաւ : Իր աթոռն այնպէս աշ



խուժիւ ետ քաշեց որ Բորթոս, թէև միամիտ էր, զիտեց որ հաս-  
րուածը խիստ ծանր էր :

— Կափո՛ւլը — մրմուաց Սէնդ-Էնյան :

— Այո՛, պարոն, բացատրեցէք, եթէ կարող էք — ըսաւ  
Բորթոս զլուխը ցնցելով :

Սէնդ-Էնյան զլուխը ծռեց :

— Ո՛հ, մատնուեցայ — մրմուաց նա — ամէն բան զիտեն :

— Մարդ ամէն բան կրնայ զիտնալ — պատասխանեց Բորթոս,  
որ բան մը չգիտէր :

— Կ'նայիք որ սատաիկ վշտացած եմ — շարունակեց Սէնդ-  
Էնյան — այնքան վշտացած որ զլուխս իմն չէ :

— Յանցապարտ, խեղճ պարոն : Ո՛հ, ձեր գործը լաւ գործ  
մը չէ :

— Պարոն :

— Եւ երբ հասարակութիւնը տեղեկանայ, և դատաւոր կանդ-  
նի . . . :

— Ո՛հ, պարոն — զոչեց կոմսն աշխուժիւ — այդպիսի զաղա-  
նիք մը պէտք է անյայտ մնայ նոյն իսկ խոստովանահօր մը :

— Այդ մասին պիտի խորհինք — ըսաւ Բորթոս — և զաղա-  
նիքն արգարե երևան չե՛նք :

— Բայց, պարոն — վրայ բերաւ Սէնդ-Էնյան — Պ. Պրա-  
ժլօն այս գաղանիքը թափանցելով՝ միթէ կ'ըմբռնէ՞ թէ ինչ մեծ  
վտանգի մէջ կ'ընկնի և ուրիշներն ալ վտանգի կ'ենթարկէ :

— Պ. Պրաժլօն վտանգի մը չենթարկիր բնաւ, պարոն, և  
վախնալիք վտանգ ալ չունի. այս բանս փորձով պիտի տեսնէք,  
Աստուծոյ օգնութեամբը :

— Այս կատաղի մարդ մ'է — մտածեց Սէնդ-Էնյան — ինչ  
կ'ուզէ իզնէ :

Ապա բարձր ձայնով յարեց .

— Օ՛ն, պարոն, այս գործը ծածկենք, պարտը կենք :

— Կ'մոռնա՞ք կենդանագիրը — ըսաւ Բորթոս որտաւի ձայնով  
մ'որ կոմսին արիւնը սառեցուց :

Որովհետև Լա Աւրիէրինն է կենդանագիրը, և ասոր մէջ բնա-  
տարակոյս չլար, Սէնդ-Էնյան աչուները խոշոր խոշոր բացաւ :

— Ա՛հ — զոչեց նա — ա՛հ, պարոն, կ'յիշեմ որ Պ. Պրա-  
ժլօն անոր նշանածն էր :

Բորթոս ահեղ կերպարան մ'առաւ, տղիտութեան վեհափա-  
փառութեամբ :

— Ինձ փոյթ չէ բնաւ և ոչ ձեզի — ըսաւ Բորթոս — որ իմ  
բարեկամն ըսած անձիդ նշանածը լինի թէ ոչ : Կ'ղարմնամ իսկ  
որ այդ անխոհական բառը ձեր բերնէն հանեցիք : Կրնայ ձեր  
գատին փրատ բերել, պարոն :

— Պարոն, դուք անձնովին խելք, փափկութիւն և անկեղծու-  
թիւնն էք : Հիմակ ինդիրն իսկապէս կ'հասկընամ :

— Աւելի լաւ — ըսաւ Բորթոս :

— Եւ խիստ ճարտար, խիստ նուրբ կերպով հասկըցուցիք ինձ  
բանը — շարունակեց Սէնդ-Էնյան : — Շնորհակալ եմ, պարոն,  
չնորհակալ եմ :

Բորթոս զլուխը բարձրացուց :

— Միայն ներեցէք ինձ որ ինդիրը բացատրեմ ձեզի, քանի որ  
ամէն բան զիտեմ . . . :

Բորթոս զլուխը ցնցեց հասկըցնելու համար որ բան մը մտիկ  
չուզեր ընել, բայց Սէնդ-Էնյան շարունակեց .

— Կ'տեսնէք, պարոն, որ չափազանց վշտացած եմ այս եղած  
բաներուն վրայ, բայց դուք եթէ տեղս լինէիք, ինչ պիտի ը-  
նէիք : Կայինք, խօսքը մեր մէջը մնայ, ըսէք ինչ պիտի ընէիք :  
Բորթոս զլուխը վեր վերցուց :

— Երիտասարդ, ինդիրն իմ ընելիքիս վրայ չէ, այժմ իմա-  
ցաք — ըսաւ նա — որ երեք անիրաւութեան գործեր ըրած էք,  
այնպէս չէ՞ :

— Գալով առաջնոյն, տեղափոխութեան, պարոն, և այս տեղ  
ձեզի պէս խելացի և պատուոյ տէր մարդու է խօսքս, երբ ար-  
քունական հրաման մը կ'հրաւիրէր զիս սենեակս փոխելու, կա-  
րո՞ղ էի անսաստել :

Բորթոս շարժում մ'ըրաւ, և Սէնդ-Էնյան չթողուց որ այդ  
շարժումն աւարտէ :

— Ա՛հ, իմ անկեղծութիւնս ձեզ հաճելի է — ըսաւ նա, ըստ  
10



հաճոյս մեկնելով այս շարժումը : — Ա՛յդպէս որ իրաւունք ունիմ :  
Բորթոս պատասխան մը չտուաւ :

— Հիմակ այն արամառիթ կափուլին կ'դառնամ — շարունա-  
կեց Սէնդ-Էնյան՝ ձեռքը Բորթոսին թեկն վրայ կոթնելով . —  
այս կափուլը , չարեայ պատճառը , չարեայ միջոցը , այս կափուլն  
որ ձեր գիտցած նպատակին համար շինուեցաւ : Լաւ , հիմակ խղճի  
մտօք խոստովանեցէք , մի՞թէ կարծէք թէ իմ յօժար կամօքս այս-  
պիսի տեղ մ'ելայ այն կափուլը շինել տուի՞ որ սահմանեալ է .  
. . . : Ա՛յ , ո՛չ , այդպէս չէք կարծեր անշուշտ , և այս տեղ , կ'ըզ-  
գաք , կ'դուշակէք և կ'իմանաք անշուշտ որ իմ կամքէս վեր կամք  
մը մղեցի զիս : Ա՛յնհաստէք այն անզուսպ եռանդը , չեմ ըսեր սի-  
րոյ այս անդիմադրելի յիմարութիւնը . . . : Աստուած իմ . . . բա-  
րեբաղի եմ որ սրտի , զգացման տէր մարդու հետ է խօսքս , թէ  
ոչ , ինչ գայթակղութիւն , ինչ դժբաղդութիւն պիտի գար ա-  
նոր վրայ , խեղճ աղջիկ . . . նոյնպէս այն անձին վրայ որու ա-  
նունը տալ չեմ ուզեր :

Բորթոս սաստիկ շուարելով Սէնդ-Էնյանի ճարտասանութենէ  
և շարժումներէն , մեծ ճիգ կ'ընէր խօսքի այս տարալին ընդունե-  
լու , որոյմէ բան մը չէր հասկընար , և անշարժ , շիտակ կ'ըս-  
տէր , և այս հնարքն իրեն յաջողեցաւ :

Սէնդ-Էնյան այսպէս ճառն սկսած լինելով՝ շարունակեց , իր  
ձայնին նոր ներդործութիւն , իր շարժումին աճեցուն ուժգնութիւն  
մը տալով :

— Իսկ կենդանագրին գալով , վասն զի կ'տեսնեմ որ կենդա-  
նագիրը գլխաւոր ամբաստանութեան կէտն է , նայինք թէ ես  
յանցանք ունիմ : Ա՛յլ փափաք յայտնեց անոր կենդանագիրն ու-  
նենալու , միթէ ես , ո՛յլ կ'սիրէ զանի , միթէ ես , ո՛յլ կ'ուզէ  
զանի , միթէ ես . . . ո՛յլ առաւ զանի , միթէ ես : Ա՛յ , բիւր ան-  
գամ ո՛չ : Գիտեմ որ Պ. Պրաժլօն յուսահատութեան մէջ է ,  
գիտեմ որ անդուժ են այս գժբաղդութիւնները : Հաւտայէք , ես  
ալ սաստիկ կ'վշտանամ , բայց գիմադրութիւնը կարելի չէ : Մի-  
թէ պիտի մարտիք նա , այն ատեն պիտի ամէն ոք ծիծաղի , եթէ  
յաճառի , այն ատեն իր կորուստը պիտի պատճառէ : Պիտի ըսէք

ինձ որ յուսահատութիւնը յիմարութիւն մ'է , բայց դուք զո՞ն  
մարդ էք և ըսածս հասկըցաք : Ձեր ծանր , խոհուն , նոյն իսկ  
շփոթած կերպարանը գիտե՞լով՝ կ'դուշակեմ որ ինդրոյն կարեու-  
րութիւնը ձեր միտքը գրաւած է : Աստի՛ գացէք Պ. Պրաժլօնին ,  
չնորհակալ եղէք , ինչպէս որ ես ալ շնորհակալ կ'լինիմ որ ձեզի  
պէս արժանաւոր անձ մ'իբրև միջնորդ ընտրեցի : Հաւտայէք  
որ ես ալ մշտապէս երախտագիտութիւն պիտի տածեմ այն մար-  
դուն համար որ այսպէս ճարտարութեամբ , զգոնութեամբ խաղաղ-  
ցուց մեր մէջ տիրած երկպառակութիւնը : Եւ որովհետեւ՝ դժբաղ-  
դութիւնն այնպէս բերաւ որ փոխանակ երեք հոգոյ , չորս հոգի  
գիտնան այս գաղտնիքը , լաւ , այս գաղտնիքն որ կ'ընայ ամենէն  
երևելի փառասիրին բաղդը շինել , ուրախ եմ , պարոն , որ ձեզի  
հաղորդ է , սրտիս խորէն կ'ուրախանամ արդարև : Աստի այս ժա-  
մէս ես պատրաստ եմ ձեզի ծառայելու , ինքզինքս ձեր իշխանու-  
թեան ներքև կ'ձգեմ : Ի՞նչ կ'ընամ ընել ձեզի համար , ի՞նչ  
պէտք է խնդրել , նոյն իսկ պահանջել , պարոն , խօսեցէք :

Եւ այն ժամանակուան պաշտականաց ընտանի և բարեկամա-  
կան սովորութեան համեմատ՝ Բորթոսին փաթթուեցաւ և զանի  
գրկացը մէջ սեղմեց զորովային :

Բորթոս թոյլ տուաւ որ վնքը գրկէ անլուր հանդարտութեամբ  
մը :

- Խօսեցէք — կրկնեց Սէնդ-Էնյան — ի՞նչ կ'պահանջէք :
- Պարոն — ըսաւ Բորթոս — վարը ձի մ'ունիմ , շնորհ ընէիք  
հեծնելու , պատուական է , և ձեզի բնաւ խաղեր չպիտի խաղայ :
- Ձի՛ հեծնեմ , և ինչո՞ւ համար — հարցուց Սէնդ-Էնյան  
հետաքրքրութեամբ :
- Բայց երթանք պիտի այն տեղն ուր Պ. Պրաժլօն մեզի կ'ըս-  
պասէ :
- Ա՛յ , արդեօք ինձի հետ խօսիլ կ'ուզէ , կ'իմանամ միտքը ,  
մանր տեղեկութիւններ առնելու միտք ունի : Ափսո՛ս , այդ շատ  
փափուկ ինդիր մ'է : Բայց այս պահուս չեմ կարող գալ , թա-  
լաւորն ինձի կ'սպասէ :
- Թող թողաւորը սպասէ — ըսաւ Բորթոս :



- Բայց Պ. Պրաժլժն ուր կ'սպասէ ինձի :
- Մինիմ, Վէնսէնի մէջ :
- Է՛հէ, բայց մի՛թէ կատակ կ'ընենք :
- Ես չեմ կարծեր :
- Եւ Բորթոս իր կերպարանին դաժան և խիստ երևոյթ մը տուաւ :
- Բայց Մինիմ, մենամարտի վայր մ'է, այնպէս չէ :
- Բորթոս ծանրօրէն իր սուրը քաշեց :
- Աւասիկ իմ բարեկամիս սրին չափը — ըսաւ նա :
- Տէր վկայ, այս մարդը խենթ է — զոչեց Սէնդ-Էնյան :
- Բորթոսի ականջներն իսկ կարմրեցան այս խօսքին վրայ :
- Պարոն — ըսաւ նա — եթէ ձեր սենեակն իբրև հիւր գտնուելու պատիւը չունենայի, և Պ. Պրաժլժնի համար եկած չլինէի, սա պատուհանէն ձեզ վար պիտի նետէի : Բայց զործն ուրիշ անգամի կ'թողում, և սպասելովս բան մը չէք կորանցներ : Մինիմ, պիտի գա՞ք, պարոն :
- Է՛հ . . . :
- Մի՛թէ յօժարակամ պիտի գա՞ք :
- Բայց . . . :
- Ես ձեզ պիտի վերցնեմ տանիմ թէ որ դիմադրէք, զՊՅԶ եղէք :
- Պասզ — զոչեց Սէնդ-Էնյան :
- Պասզ ներս մտաւ :
- Թագաւորը ձեզ կ'կոչէ — ըսաւ Պասզ :
- Ինչիբր կ'փոխուի — ըսաւ Բորթոս — ամենէն առաջ թագաւորին ծառայութիւնն անհրաժեշտ է : Մինչև իրկուն ձեզի անդ պիտի սպասենք, պարոն :
- Եւ իր սովորական մարդավարութեամբը Սէնդ-Էնյանը բարեւելով, Բորթոս դուրս ելաւ, զործ մ'էս կարգի գնելուն վրայ սաստիկ զմայլելով :
- Սէնդ-Էնյան անոր դուրս ելնելը դիտեց. «պա՛ իր բաձկոնն ու զգեստն արտորնօք հագնելով՝ վազեց իր հագուստին անկարգութիւնը շտկելով և ըսելով .
- Ի Մինիմ, ի Մինիմ . . . նայինք թագաւորն ինչ կերպով

պիտի ընդունի այս մենամարտութեան հրաւերը : Անշուշտ այս մենամարտն իրեն համար է :

ԺԷ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՈՍՈՒՆԵՐ

Թագաւորն այս շրջադայութենէ ետք՝ որ այնքան արդիւնաւոր էր Ապոլոնի համար, և որու մէջ ամէն ոք իր հարկը Մուսայից կ'վճարէր, ինչպէս որ նոյն ժամանակի բանահիւսները կ'ըսէին, թագաւորը Պ. Ֆուքէն գտաւ իր ասպարանքը, ուր իրեն կ'սպասէր նա :

Թագաւորին ետեւէն Պ. Գօլպէր կ'գար, որ անոր միացեր էր նրբագութի մը մէջ, որպէս թէ դարանակալ կ'մնար, և իբրև նախանձոտ և հսկող ստուեր մ'անոր կ'հետեւէր. Պ. Գօլպէր՝ իր քսուակուսի գլխով, իր թոյլ և ճոխ հագուստներով, որ փոքր ինչ զինեաւունէն նոր ելնող հոլանտացի իշխանի մը կ'նմանցնէին զինքը :

Պ. Ֆուքէ իր թշնամին տեսնելով հանդարտ մնաց, և այս տեսարանին ժամանակ բարձր մարդու մը դժուարին վարմունքը բռնեց, որու սիրտն արհամարհանօք լի է, և սակայն այս արհամարհանքն իսկ յայտնել չուզէր, առ ահի որ իր հակառակորդին մեծ սպառիւ մ'ըրած չլինի :

Գօլպէր չէր ծածկեր նախատական ուրախութիւն մը : Ինքն այնպէս կարծէր որ Պ. Ֆուքէ ինչ որ ըներ անօրուտ էր և իր դասն 'ի սպառ կորուած էր, թէև տակաւին վերջացած չէր : Գօլպէր այն քաղաքական մարդոց դպրոցէն էր որ միայն ճարտիկութեան վրայ կ'զմայլէին, որ միայն յաջողութիւնը կ'գնահատէն :

Ասկէ զատ՝ Գօլպէր՝ որ ոչ միայն նախանձոտ մարդ էր, այլ և թագաւորին շահուց նախանձախնդիր մէկը, վասն զի ինքնին թուաբանական ուղղութեան ձիրքն ունէր, Գօլպէր իբրև բարուբանք կ'բռնէր, ատող մարդու համար խիստ յաջող բարուբանք



մը , թէ ինք սկստութեան օգուան և արքայական արժանապատուութիւնն ՚ի նկատի ունենալով կ'ատէր և ՚ի կորուստ կ'մատնէր Ֆուքէն :

Ֆուքէի ուշագրութենէ այս սլարադաները բնաւ չվրիպեցան : Իր թշնամոյն հաստ յօնից մէջէն , թէև անոր արտևանունքն անդու կ'ընարթէին , Ֆուքէ աչօքը կ'կարգար Գօլպէրի սրտին խորը . ուստի այս սրտին մէջ բոլոր եղածը տեսաւ , այս է ստեղծութիւն և յաղթանակ :

Սակայն՝ որովհետև ամէն ինչ թափանցելու ատեն՝ ինք անթափանցելի մնալ կ'ուզէր , իր գէմքը սլարդեց , իրեն միայն յատուկ եղող սիրալիք ժպիտով մը ժպտեցաւ և իր ողջոյնը խիստ ազնիւ և միանգամայն զիւրաշարժ կերպով մը տալով ,

— Ահհափառ — ըսաւ նա — ձեր զուարթուն գէմքէն կ'զուշակեմ որ լաւ շրջադայութիւն մ'ըրած էք :

— Արդարև , չքնաղ էր , պարոն վերատեսուչ , չքնաղ : Մեծ կորուստ ըրիր մեզի հետ չգալով , ինչպէս որ քեզ հրաւիրեր էի :

— Ահհափառ , կ'աշխատէի — պատասխանեց վերատեսուչը : Ֆուքէ իր գլուխն իսկ գարձնելու պէտք չունեցաւ , Պ . Գօլպէրին կողմը չէր նայեր :

— Ա՛հ , գե՛ղը , Պ . Ֆուքէ — գոչեց թաղաւորը : — Աստուած իմ , ո՛րչափ կ'փափաքէի դեղը կարենալ ապրելու , բայց օգին , ծառերուն ներքև :

— Ա՛հ , յուսամ որ Ձեր Ահհափառութիւնն իր աթոռէն տալուին ձանձրացած չէ — ըսաւ Ֆուքէ :

— Ա՛հ , բայց գալարուտ դահերը շատ անուշ են :

— Ճշմարիտը , Ահհափառ , այդպէս խօսելով իմ բոլոր բաղձանքս կ'կատարէք : Ես ալ ճիշտ աղերս մ'ունէի ձեզի ուղղելու :

— Արձև կողմէ , պարոն վերատեսուչ :

— Աօի յաւերժհարսանց կողմէն :

— Հո՛ւ , հո՛ւ — ըրաւ Լուի ԺԳ :

— Թագաւորդ ինձ խոստում մ'ընելու հաճեցաւ — ըսաւ Ֆուքէ :

— Այո՛ , կ'յիշեմ :

— Աօի հանդէսը , երևելի հանդէսը , այնպէս չէ՛ , Ահհա-

ֆառ — ըսաւ Գօլպէր իր կարեորութիւնը ցոյց տալու համար խօսակցութեան մասնակից լինելով :

Ֆուքէ , խորին արհամարհանօք այս գիտողութեան պատասխան իսկ չտուաւ : Իրեն համար այնպէս մ'էր որպէս թէ Գօլպէր ո՛չ խորհեր և ոչ խօսեր էր :

— Ձեր Ահհափառութիւնը գիտէ — ըսաւ նա — որ իմ Աօի երկիրս իշխանաց մէջ ամենէն սիրասունն և թագաւորաց մէջ ամենէն զօրաւորն ընդունելու կ'պատրաստեմ :

— Խօսք սուի , պարոն — ըսաւ Լուի ԺԳ ժպտելով — և թագաւոր մը միայն իր խօսքն ունի :

— Եւ ես , Ահհափառ , եկայ ձեզի յայտնելու որ բոլորովին ձեր հրամանաց պատրաստ եմ :

— Միթէ շատ հրաշալի բաներ կ'խօստանան ինձ , պարոն վերատեսուչ :

Եւ Լուի ԺԳ Գօլպէրին նայեցաւ :

— Հրաշքներ , ո՛հ , ո՛հ , Ահհափառ : Այդպիսի խոստում մը չեմ համարձակիր ընելու , կ'յուսամ որ քիչ մը զուարճութիւն պիտի կարենամ պատճառել , թերևս իսկ քիչ մը մոռացում թագաւորիդ :

— Ա՛հ , ո՛հ , Պ . Ֆուքէ — ըսաւ թաղաւորը : — Հրաշք բառին վրայ կ'սնդեմ : Ա՛հ , դու կախարդ մ'ես , մենք քու զօրութիւնդ կ'ճանչենք , զիտենք որ՝ եթէ աշխարհէս ոսկին վերնայ , դու կարող ես դանելու : Աւստի ժողովուրդն ալ կ'ըսէ թէ ոսկի կ'շինես :

Ֆուքէ զգաց որ այս հարուածը կրկին կասարձէ մը կ'եղնէր , և թէ թաղաւորն իր աղեղէն նետ մը , և հատ մ'ալ Գօլպէրի աղեղէն կ'նետէր : Աւստի սկսաւ ծիծաղել :

— Ա՛հ — ըսաւ նա — ժողովուրդը քաջ գիտէ թէ ոսկին ո՛ր հանքէն կ'հանեմ : Թերևս չափէն աւելի գիտէ . և սակայն — յարեց նա հպարտութեամբ — կարող եմ Ձեր Ահհափառութիւնն ապահովել որ Աօի հանդէսը վճարելու համար սահմանաւ ոսկին ո՛չ արիւն և ոչ արատաք պիտի թափել տայ , թերևս քրտինք թափին , և ասոնք ալ պիտի վճարուին :



Լուի քիչ մը շփոթեցաւ : Աւզեց Գօլպէրին նայիլ, Գօլպէր ալ ուզեց պատասխան տալ, սակայն արծուի նայուածք մը, անկեղծ, նոյն իսկ արքունի ակնարկ մը՝ Ֆուքէի կողմէ դալուլ խօսքն իր շրթերու վրայ մարեց :

Թագաւորը նոյն պահուն ինքզինքը գտեր էր : Ֆուքէին կողմը դարձաւ և անոր ըսաւ .

- Աւրեմն հրաւերդ կ'հաստատեն :
- Այո՛, Աեհափառ, եթէ շնորհ ընէք զալու :
- Ո՞ր օրուան համար :
- Ո՞ր օրն որ ձեզի յարմար թուի, Աեհափառ :
- Պատրաստաբան դիւթիչի մը պէս կ'խօսիս, Պ. Ֆուքէ :

Ես անդամ այդպէս չպիտի խօսէի, ես :

— Ձեր Աեհափառութիւնը՝ երբոր կամենայ՝ պիտի ընէ ինչ որ թագաւոր մը կարող է և պէտք է ընել : Ֆրանսայի թագաւորն իր ծառայութեան և իր զուարճութեանց համար ձեռնհաս սպասաւորներ ունի :

Գօլպէր ջանաց վերատեսչին նայելու որպէս զի հասկնայ թէ այս խօսքը նուազ թշնամական զգացումներու վերադարձ մ'էր . Ֆուքէ իր թշնամոյն անդամ չէր նայած : Գօլպէր չկար իրեն համար :

— Աւա. ուրեմն, ութ օրէն, այսպէս կ'ուզես — ըսաւ թագաւորը :

- Աւթ օրէն, Աեհափառ :
- Երեքշաբթի է այսօր, միթէ յառաջիկայ կիրակի կրնայ լինիլ :

— Ձեր Աեհափառութեան շնորհած պայմանաժամը՝ թագաւորիդ և իր բարեկամներու զբօսանաց համար իմ ճարտարապետներու և ձեռնարկիչի շնութեանց զօրապէս պիտի օգնէ :

— Եւ իմ բարեկամներս ըսելով — պատասխանեց թագաւորը — ինչպէս պիտի վարուիս անոնց հետ :

— Թագաւորն ամենուրեք ինքնիշխան է, Աեհափառ, թագաւորն իր ցուցակը կ'շինէ և հրամանները կ'տայ : Իր հրաւիրելու հաճած մարդիկն իմ կողմէ յարդեալ հիւրեր պիտի լինին :

— Շնորհակալ եմ — պատասխանեց թագաւորը, անիւ ձայնով մ'այսպէս անիւ զգացում մը բացատրող անձէն ակործելով :

Այն ատեն Ֆուքէ Լուի ԹԳԻ ն արձակուրդ առաւ, քանի մը դործերու վրայ քիչ մը խօսելէն ետև :

Ֆուքէ տեսաւ որ Գօլպէր թագաւորին հետ առանձին պիտի մնար, հասկըցաւ որ իր վրայ պիտի խօսին, թէ ո՛չ մին և ո՛չ միւսը զինքը չպիտի խնայեն : Աերջին հարուած մը, սոսկալի հարուած մը տալու գոհունակութիւնն իրբև փոխարինութիւն մը երեցաւ այն ամէն չարախօսութեանց զոր իր վրայ պիտի ընէին : Աւստի շուտով վերադարձաւ, երբ արդէն դրան մօտեցեր էր, և թագաւորին ուղղելով խօսքը ,

- Ներեցէք, Աեհափառ — ըսաւ Ֆուքէ — ներեցէք :
- Ի՞նչ բանի ներեմ, պարոն — ըսաւ թագաւորն անուշաթեամբ :

— Ծանր սխալմունքի մը զոր առանց վիտնալու պիտի ընէի :

— Սխալմունք մը, դո՛ւ : Ա՛հ, Պ. Ֆուքէ, պարտաւոր եմ քեզ ներելու : Ի՞նչ բանի կամ որո՞ւ դէմ մեղանչեցիր :

— Ամէն պառաջաձութեան դէմ, Աեհափառ : Ամուռնայի Ձեր Աեհափառութեան հաղորդելու բաւական կարևոր պարագայ մը :

— Ի՞նչ պարագայ :

Գօլպէր սարսուռ մ'զղաց . կարծեց թէ իրեն դէմ յայտնութիւն մը պիտի ընէ : Իր վարմունքն երևան ելեր էր : Եթէ Ֆուքէ բառ մ'ըսէր, ապացոյց մը մէջ բերէր, և իսկոյն Լուի ԹԳԻ պատանեկան անկեղծութեան առջև՝ Գօլպէր թագաւորին շնորհը պիտի կորուսէր : Աւստի Գօլպէր վախցաւ որ յանդուգն հարուած պիտի կորուսէր : Աւստի Գօլպէր վախցաւ որ յանդուգն հարուած մը չլայ իր բոլոր յատակագիծը վեր 'ի վայր չնէ, և արդարև այնքան զեղեցիկ էր տրուելիք հարուածը՝ որ Արամիս՝ քաջ հնարադէտը՝ անշուշտ զանց չպիտի ընէր :

— Աեհափառ — ըսաւ Ֆուքէ համարձակ կերպով մը — քանի որ ինչ ներելու բարեյօժար գտնուեցաք, իմ խոստովանութեանս մէջ լիովին թեթևամիտ պիտի երևիմ, այս առտու՝ իմ պաշտօն ներէս մին ծախեցի :

— Պաշտօններէդ մի՛ն — դոչեց թագաւորը — ուրեմն ո՞րը :



Գօլպէրի դոյնը կապոյտ դարձաւ :

— Ա. Ե. Տափառ . , այն պաշտօնս որ ինձի մեծ պատմութեան և ծանր կերպարան մը կ'տար , այս է ընդհանուր անդակալի պաշտօնս :

Թագաւորն ակամայ ճիկ մ'արձակեց , և Գօլպէրին նայեցաւ :

Գօլպէր՝ որու ճակատն քիբարը կ'հոսէր , քիչ մնաց որ պիտի նուազէր :

— Այդ պաշտօնն որո՞ւ ծախեցիր , Պ . Ֆուքէ — հարցոյց թագաւորը :

Գօլպէր վառարանին շրջանակին կը թնեցաւ :

— Բարլմէնդին մէկ խորհրդականին , Ա. Ե. Տափառ , որու անունն է Պ . Վանէլ :

— Վանէլ :

— Գօլպէր տեսչին մէկ բարեկամը — յարեց Ֆուքէ՝ այս խօսքը բերնէն ձգելով՝ այնպէս աննման անհոգութեամբ , մոռացման և ազիսութեան երևոյթով մը զոր նկարիչ , դերասան և բանասէրս անդամ վրձինով , շարժումով կամ զրջով արտայայտելու հրածեշտ պարտին տալ :

Յետոյ՝ Ֆուքէ խօսքն աւարտելով՝ իր մեծանձնութեամբը Գօլպէրը ճղմելով՝ նորէն թագաւորին ողջոյն տուաւ , և թագաւորին ապշութենէ ու իր մտերմին նուաստութենէ կէս մը վրէժ լուծած դուրս ելաւ :

— Միթէ կարելի՞ է — ըսաւ թագաւորն երբ Ֆուքէ աներևոյթ եղաւ : — Ծախեց այս պաշտօնը :

— Այո՛ , Ա. Ե. Տափառ — պատասխանեց Գօլպէր մասնաւոր դիտմամբ :

— Յիմար է — բերնէն հանեց թագաւորը :

Այս անգամ՝ Գօլպէր պատասխան չտուաւ , իր տիրոջը միտքն ընդնշմարեր էր : Այս միտքն իր վրէժը կ'լուծէր : Իր ատելութեան կ'միանար նախանձը . կործանման յատակադժին պաշտօնանկութեան սպառնալիք մը կ'աւելնար :

Այնուհետև՝ Գօլպէր զրոյց որ Լուի Ժ. Գի և իրեն մէջ ներհակ գաղափարները խոչ ու խուժ չպիտի գտնեն , և Ֆուքէի առաջին վրիպակն որ կրնար իբրև բարոյր ծառայել ՚ի մօտուստ պիտի կանխէր պատկժոյ :

Ֆուքէ իր զէնքը մէկդի նետեր էր : Ատելութիւնն ու նախանձը զայն դեռնէն վերցուցեր էին :

Գօլպէր թագաւորին կողմէ Աօի հանդիսին հրախրուեցաւ . իբրև վստահ մարդ մը բարեկեց , և իբրև պարտաւորող մարդ հրաւերն ընդունեցաւ :

Թագաւորը հրախրելոց ցուցակին մէջ Սէնդ-Էնյանի անունը կ'ընշանակէր , երբ պահակն իմաց տուաւ Սէնդ-Էնյանի գալուստը :

Գօլպէր կամայցուկ մը քաշուեցաւ , երբ արքայական շերտն է կաւ :

### ԺԸ

#### ՍԻՐԸՀԱՐ ՈՍՈՒՆԵՐ

Սէնդ-Էնյան հազիւ երկու ժամէ ՚ի վեր թագաւորէն հեռացեր էր . բայց Լուի Ժ. Գի իր սիրոյն առաջին բորբոքման ատեն՝ երբ Լա Վալիէրը չէր տեսներ , հարկ կ'սեպէր անոր վրայ խօսիլ : Արդ՝ միայն Սէնդ-Էնյանը կար որու հետ այս մասին արձակ համարձակ կարող էր խօսելու . ուստի Սէնդ-Էնյան իրեն համար անհրաժեշտ էր :

— Ա՛հ , դո՞ւ ես , կոմս — դոչեց նա զէնքը տեսնելով , կրկնապատիկ դուարթ լինելով որ Գօլպէրը հեռացեր էր , որու տխուր դէմքը զինքը միշտ կ'տրամեցնէր , և Սէնդ-Էնյանը վերստին կը տեսնէր : — Քանչէր , ուրախ եմ քեզ տեսնելուս , դու ալ մեզի ուղեկից պիտի լինիս , այնպէս չէ՞ :

— Ուղեկից , Ա. Ե. Տափառ — հարցուց Սէնդ-Էնյան : — Եւ ո՞ր կ'երթանք :

— Պիտի երթանք վայելելու վերատեսչին մեզի տուած հանդէսն ՚ի Աօ : Ա՛հ , Սէնդ-Էնյան , պիտի տեսնես վերջապէս հանդէս մ'որու մօտ մեր ֆօնդէնպլօի զբօսանքը միայն տղու խաղեր են :

— Ի վ՛՞ճ , վերատեսուչը ձեզի հանդէս մը պիտի տայ ՚ի Աօ , այս է միայն խնդիրը :



— Այո՛ , այս միայն : Ճշմարիտը շատ սքանչելի կ'դտնեմ՝ քեզ այդ արհամարհոտ դէմքովդ : Մի՛թէ գիտե՛ս , դու որ արհամարհոտ դէմք մը կ'ցուցնես , գիտե՛ս որ երբ իմանան թէ Պ. Ֆուքէն 'ի Աօ կ'ընդունի զիս , ութ օրէն , ամէն մարդ իրար պիտի անցնի որ այս հանդիսին հրաւիրուի : Ուստի՛ կ'կրկնեմ՝ քեզ , Սէնդ-Էնյան , այս ճամբորդութեան դու ալ պիտի ընկերանաս :

— Այո՛ , եթէ մինչև այն օրը , աւելի երկար և նուազ հաճելի ճամբորդութիւն մ'ըրած չլինիմ :

— Ի՞նչ ճամբորդութիւն :

— Գժոխքը , Վեհափառ :

— Օ՛ն — ըսաւ Լուի ԺԳ ծիծաղելով :

— Իրաւի , կատակ չէ , Վեհափառ — պատասխանեց Սէնդ-Էնյան : — Հրաւիրուած եմ անդ , և սառուիլ այնպէս հրաւիրուած եմ որ չեմ գիտեր թէ ի՞նչ միջոց գործածեմ մերժելու համար :

— Միտքդ չեմ հասկընար , սիրելի պարոն : Գիտեմ որ քերթողական եռանդ ունիս , բայց նայէ որ Ապոլոնէն 'ի Ֆէպոս չլլուրիս :

— Լաւ ուրեմն , եթէ Ձեր Վեհափառութիւնը մտիկ ընելու հաճի , թաղաւորիդ միտքն աւելի ևս չպիտի տանջեմ :

— Խօսէ :

— Մի՛թէ թաղաւորդ կ'ճանչէ՞ Վալլօն սեպուհը :

— Ի՞նչպէս չեմ ճանչեր . իմ հօրս մէկ պատուական սպասաւորն էր , և իրաւի , ընտիր կոչնական մը : Վասն զի մեզի հետ 'ի Փօնդէնպլօ սեղանակից եղողին վրայ է խօսքդ :

— Ճիշտ այդպէս : Բայց Ձեր Վեհափառութիւնը մոռցաւ իր մէկ յատկութիւնը յիշել . մարդոց սիրուն սպաննիչ մը :

— Ինչպէ՛ս , մի՛թէ քեզ սպաննել կ'ուզէ Պ. Վալլօնը :

— Կամ զիս սպաննել տալ , որ նոյն բանն է :

— Ո՛հ , կատակ է :

— Մի՛ ծիծաղիք , տէր իմ , ըսածս բուն ճշմարտութիւնն է :

— Մի՛թէ ըսիր որ քեզ սպաննել տալ կ'ուզէ :

— Այս միջոցիս այդպէս կ'խորհի այդ արժանի ազատորդին :

— Անհոգ եղիր , եթէ անիրաւ է քեզ պիտի պաշտպանեմ :

— Ա՛հ , երէ մը կայ :

— Անտարակոյս : Նայինք , պատասխան տուր , որպէս թէ խընդիրն ուրիշի մը վրայ լինէր , իմ խեղճ Պ. Սէնդ-Էնյան , իրաւունք ունի՞ թէ անիրաւ է :

— Ձեր Վեհափառութիւնը հիմակ պիտի դատէ :

— Ի՞նչ ըրիր անոր :

— Ո՛հ , անոր , ոչ ինչ . բայց կ'երևի թէ անոր մէկ բարեկամին ըրած եմ :

— Մի և նոյն բանն է . և մի՛թէ իր բարեկամը չորս ականաւորներէն է :

— Ո՛չ , չորս ականաւորներուն միոյն որդին է , և ոչ այլ ինչ :

— Ի՞նչ ըրիր այս որդւոյն , խօսէ նայիմ :

— Իրաւի , մէկուն օգնեցի որ անոր սիրուհին գողնայ :

— Եւ մի՛թէ այդ բանը կ'խոստովանին :

— Պէտք է որ խոստովանիմ , ըսա որում ստոյգ է :

— Եթէ այդպէս է , անիրաւ ես :

— Ա՛հ , անիրաւ եմ :

— Այո՛ , և ճշմարիտ վկայ , եթէ քեզ սպաննէ . . . :

— Լաւ , ապա՛ :

— Լաւ , իրաւունք պիտի ունենայ :

— Ա՛հ , ուրեմն այդպէս կ'դատէք , Վեհափառ :

— Մի՛թէ այդ ընթացքը վատ կ'դտնես :

— Շատ կարուկ կ'դտնեմ :

— Լաւ և արագ պատաստան , կ'ըսէր իմ Հանրի Գ պապս :

— Ուրեմն , շուտ իմ հակառակորդիս ներողութեան զերը ստորագրեցիք , հակառակորդս որ ինձ 'ի Մինիմ կ'սպասէ :

— Իր անունն ու մաղաղաթ մը սուր :

— Վեհափառ , Ձեր Վեհափառութեան սեղանին վրայ մաղաղաթ մը կայ , իսկ անուան գալով . . . :

— Ի՞նչ է անունը :

— Պրաժլօն դերկոման է , Վեհափառ :

— Պրաժլօն դերկոմանը — գոչեց թաղաւորն իր ծիծաղը խորին ասլշութեան փոխուելով :



Ապա պահ մը լուռ թիւն պահելէն ետեւ՝ երբ իր ճակտէն հոսած քրտինքը կ'սրբէր,

— Պրաժլօն — մրմնաց նա :

— Նոյն ինքը, Վեհափառ — ըսաւ Սէնդ-Էնյան :

— Պրաժլօն, նշանածը Լա . . . :

— Ո՛հ, Տէր Աստուած, այո՛, Պրաժլօն, նշանածը Լա . . . :

— Սակայն Լոնտօն էր նա :

— Այո՛, բայց կրնամ հաւաստել որ այժմ Լոնտօն չէ, Վեհափառ :

— Եւ միթէ Բարի՛ց է :

— Այսինքն ՚ի Մինիմն է, ուր ինձ կ'սպասէ, ինչպէս որ պատիւ ունեցայ Վեհափառութեանդ յայտնելու :

— Ամէն բան զիտէ՛ :

— Եւ ուրի՛շ շատ բաներ ալ : Եթէ կ'փափաքիք ինձ զրած նամակը կարգալ . . . :

Եւ Սէնդ-Էնյան իր գրպանէն հանեց մեր զիտցած տոմսակը :

— Երբոր Ձեր Վեհափառութիւնը տոմսակը կարգայ — ըսաւ նա — պատիւ պիտի ունենամ ըսելու թէ ինչպէս իմ ձեռքս հասաւ :

Թագաւորն յուզմամբ կարգաց զիրն և անմիջապէս հարցուց .

— Լա՛ւ, ուրե՛մն :

— Լա՛ւ, Ձեր Վեհափառութիւնը քաջ զիտէ որ քանդակեալ կղզակ մը կայ, որ եպենոսէ դուռ մը կ'դոցէ, որ սենեակ մը կը զատէ ուրի՛շ սպիտակ և կապոյտ սրբավայրէ մը :

— Անտարակոյս, Լուիզին զարդարանն է այն :

— Այո՛, Վեհափառ : Լաւ ուրեմն, նոյն կղզակին ծակին մէջէն գտայ այդ տոմսակը : Ո՛վ դրաւ զայն այն տեղ : Պ. Պրաժլօնը կամ սատանան : Բայց որովհետեւ տոմսակը սաթ կ'հոտի և ոչ թէ ծծումբ, կ'հետեւցնեմ որ չէ թէ սատանան՝ այլ Պ. Պրաժլօնն եղած պիտի լինի :

Լուիզ զլուխը ծռեց և տխուր մտմտութի մէջ ընկած երեցաւ : Արեւի է նոյն պահուն խղճի խայթի պէս բան մ'իւր սրտէն կ'անցնէր :

— Ո՛հ — ըսաւ նա — այս դաղտնիքն երևա՞ն ելաւ :

— Վեհափառ, այնպիսի ընթացք մը պիտի բռնեմ որ այս դաղտնիքը մեռնի զայն պարունակող ծոցին մէջ — ըսաւ Սէնդ-Էնյան բոլորովին սպանիական մեծաբանութեամբ մը :

Եւ շարժում մ'ըրաւ դուռը համնելու համար . բայց թաղաւորը շարժում մ'ընելով զանի կեցուց :

— Եւ ո՞ւր կ'երթաս — հարցուց անոր :

— Բայց այն տեղ ուր որ կ'սպասեն ինձ, Վեհափառ :

— Ի՞նչ պիտի ընես :

— Հաւանօրէն, պիտի մնամարտիմ :

— Պիտի մնամարտիս — գոչեց թագաւորը : — Պահ մը սպասէ, ինչդրեմ, պարոն կոմս :

Սէնդ-Էնյան զլուխը ցնցեց տղեկի մը պէս որ կ'հետէ երբ որ ջրհորը նետուելու կամ դանակի մը հետ խաղալու կ'արդիւտի :

— Բայց սակայն, Վեհափառ . . . — ըսաւ նա :

— Բայց նախ — ըսաւ թագաւորը — գեւ մութին մէջն եմ :

— Ո՛հ, այդ մասին հարցուփորձ ըրէք զիս, Վեհափառ — պատասխանեց Սէնդ-Էնյան — և ես լոյս պիտի բերեմ :

— Ո՛վ ըսաւ քեզ որ Պ. Պրաժլօն զիտցած սենեակը մտաւ :

— Այս տոմսակը զոր կղզակին մէջ գտայ, ինչպէս որ պատիւ ունեցայ Ձեր Վեհափառութեան ըսելու :

— Ո՛վ ըսաւ քեզ որ նա դրաւ այն տեղը :

— Իրմէ զատ ո՛վ պիտի համարձակէր այդպիսի յանձնարարութեան մը ձեռնարկել :

— Իրաւունք ունիս : Ի՞նչպէս մտաւ քու սենեակը :

— Ա՛հ, այդ շատ ծանրակշիռ է, վասն զի բոլոր դռները դոց էին, և թէ իմ Պասպ սպասաւորս՝ բանալիներն իր գրպանին մէջ գրած էր :

— Լա՛ւ, կարելի է որ սպասաւորդ որսացին :

— Անկարելի բան է, Վեհափառ :

— Ինչո՞ւ համար անկարելի է :

— Վասն զի՛ եթէ որսացած լինէին, խեղճ տղան չպիտի ՚ի կորուստ մատնէին, որմէ վերջէն կրնային պէտք ունենալ, բացէ՛ր ըսց յայտնելով որ անոր օգնութեան դիմած են :



— Այդ իրաւացի է, այժմ միայն մէկ ենթադրութիւն մը կը մնայ ընելու:

— Նայինք, Վեհափառ, եթէ այդ ենթադրութիւնն իմ մտքէս անցածն է:

— Ես կարծեմ թէ սանդղէն վար իջած է:

— Ափսոս, Վեհափառ, այդ աւելի քան հաւանական կ'երևի:

— Բաւական է որ մէկը կափուլին գաղտնիքը ծախած լինի:

— Ծախած կամ տուած:

— Ինչո՞ւ համար այդ տարբերութիւնը:

— Վասն զի, Վեհափառ, կան անձեր որ մասնութեան վարձքէ բարձրագոյն լինելով, կ'բաշխեն և չեն ծախեր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ո՛հ, Վեհափառ, դուք այնպիսի նուրբ միտք մ'ունիք որ անուն տալու շփոթութիւնս ինձ կ'խնայէք զայն գուշակելով:

— Իրաւունք ունիս, իշխանուհին է:

— Ա՛հ — ըրաւ Սէնդ-Էնյան:

— Իշխանուհին որ տեղափոխութեանդ վրայ վրդովեցաւ:

— Իշխանուհին որ իր նաժիշաներուն սենեկաց բանալիներն ունի, և բաւական զօրաւոր է երևան հանելու ինչ որ ոչ ոք, բայց ՚ի ձեզնէ և իրմէ, չպիտի կարենան դսնել:

— Եւ միթէ կարծես թէ քոյրս Պրաժլօնի հետ դաշնակցած է:

— Հէ, հէ, Վեհափառ . . . :

— Այն աստիճան որ բոլոր պարագաներն անոր յայտնած պիտի լինի:

— Կարելի է աւելին ալ:

— Աւելին . . . լմնջուր խօսքդ:

— Թերևս մինչև անոր ուղեկից դանուած է:

— Ո՛ւր, վա՛րը, քո՞ սենեակդ:

— Միթէ անկարելի՞ կ'համարիք այդ բանը, Վեհափառ:

— Ո՛հ:

— Մտիկ ըրէք: Թաղաւորդ գիտէ թէ իշխանուհին որչափ կը սիրէ անուշահոտութիւնները:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Այո՛, այդ սովորութիւնը մերմէս առած է:

— Մանաւանդ աղանաբօսը:

— Ամենէն աւելի այդ հոտը կ'սիրէ:

— Լա՛ւ, սենեակս աղանաբօսի հոտով բռնեմ է:

Թաղաւորը պահ մը մտածեց:

— Բայց — ըսաւ նա, վայրկեան մը լուռ մնալէն ետեւ — ինչո՞ւ համար իշխանուհին Պրաժլօնի կողմը պիտի բռնէր ինձի դէմ:

Այս խօսքն ըսելով, որոց Սէնդ-Էնյան շատ գիւրաւ կրնար պատասխանել սա խօսքով. « Կնկան նախանձ » թաղաւորն իր բարեկամն սրտին խորը կ'զննէր որպէս զի հասկընայ թէ արդեօք վերահասու եղած էր իր հարսին հետ ունեցած սիրային յարաբերութեան:

Բայց Սէնդ-Էնյան միջակ պաշտօնական մը չէր, թէթեւամտութեամբ ընտանեկան գաղտնիքն երևան հանելու վտանգի մէջ չէր ընկնէր, Մուսայից շատ բարեկամ էր և ստէպ կ'յիշէր այն Օվիտիոս Պազօն որու աչքն այնքան արտուք թափել էր Օգոստոսին տան մէջ չզիտեմ ինչ սենեկը քաւելու համար:

Ուստի Սէնդ-Էնյան ճարպիկութեամբ մէկդի թողուց իշխանուհւոյն գաղտնիքը:

Բայց որովհետեւ իր խորագիտութեան մէկ ապացոյցը յայտնէր էր ըսելով թէ իշխանուհին իր սենեակը մտած էր Պրաժլօնի հետ, պէտք էր այս ինքնասիրութեան վաշխը վճարել և սա հարցման պարզապէս պատասխանել. « Ինչո՞ւ համար իշխանուհին Պրաժլօնի կողմը բռնած է ինձի դէմ »:

— Ինչո՞ւ համար — պատասխանեց Սէնդ-Էնյան: — Բայց միթէ կ'իմանա՞ք, Վեհափառ, որ ի՞նչ կու՞նք Պրաժլօն գերկումին մտերիմ՝ բարեկամն է:

— Չեմ՝ տեսներ ի՞նչ վերաբերութիւն կրնայ լինիլ — պատասխանեց թաղաւորը:

— Ա՛հ, ներեցէ՛ք, Վեհափառ — ըսաւ Սէնդ-Էնյան — բայց կարծէի թէ Պ. ի՞նչ իշխանուհւոյն սերտ բարեկամն է:

— Ճիշտ է — պատասխանեց թաղաւորը — հարկ չկայ ուրիշ պատճառ փնտռել, հարուածն այն կողմէն եկած է:

— Եւ այս հարուածին առաջն առնելու համար, միթէ չէ՞ք կարծեր, Վեհափառ, որ ուրիշ մը տալ պէտք է:

— Այո՛, բայց չէ՞ թէ այն տեսակ հարուածէն զօր Ա.էնտէնի անտառն իրարու կ'առն — պատասխանեց թաղաւորը:



— Չեր ԱԵՏափառութիւնը կ'մտնայ — ըսաւ Սէնդ-Էնյան — որ ես ազատորդի եմ, և զիս մենամարտութեան կոչեցին :

— Այդ գործը քեզի չվերաբերիր :

— Բայց ինձի կ'սպասեն 'ի Մինիմ', ԱԵՏափառ, մէկ ժամէն աւելի է, ես եմ ասոր պատճառը, և մեծ անպատուութիւն է ինձ եթէ ինձ սպասուած տեղը չերթամ :

— Ազատորդոյ մ'առաջին պատիւը, առ թաղաւորն հնազանդութիւնն է :

— ԱԵՏափառ . . . :

— Ա'հրամայեմ քեզ որ մնաս :

— ԱԵՏափառ . . . :

— Հնազանդէ :

— Ինչպէս որ կ'հաճի Չեր ԱԵՏափառութիւնը :

— Սակայն, բոլոր այս գործը կ'ուզեմ լուսարանել, կ'ուզեմ իմանալ թէ ինչպէս այսչափ յանդգնութեամբ իմ նախամեծար սրբաւայրս մտեր են. Սէնդ-Էնյան, անոնք որ այս բանս ըրին, պէտք չէ որ քու ձեռօքդ պատժուին, վասն զի քու պատուոյդ դէմ չյարձակեցան այլ իմ պատուոյս :

— Չեր ԱԵՏափառութիւնը կ'աղերսեմ որ իր բարկութիւնը չթափէ Պ. Պրաժլօնի վրայ, որ այս գործին մէջ թերեւս անխոհեմութեամբ վարուեցաւ, այլ ոչ անհաւատարմութեամբ :

— Բաւական է : Ես դիտեմ իրան անիրաւէն զանազանել նոյն իսկ իմ բարկութեանս ժամանակ : Այս մասին խօսք մ'անդամ չպիտի ըսես իշխանուհոյն :

— Բայց ինչ ընելու է Պ. Պրաժլօնի նկատմամբ, զիս պիտի փնտէ, ԱԵՏափառ, և . . . :

— Ես անոր պիտի խօսիմ կամ մարդ պիտի զըլկեմ զիշեր չեղած . . . :

— ԱԵՏափառ, վերստին կ'սրաղատիմ, ներողամտութեամբ վարուեցէք :

— Կոմս, բաւական ատեն ներողամիտ եղայ — ըսաւ Լուի ԺԳ տնքը պոստելով — ժամ է մէկ քանի անձանց ցոյց տալու որ իմ տանս մէջ անձնիշխան եմ :

Թաղաւորն այն ինչ այս խօսքը կ'արտասանէր, որով կ'յայտենէր որ նոր ռեսակալութեան մը հին քինախնդրութեան մը յիշատակը կ'միանար, որ պահակը դրան սեմին վրայ երեւցաւ :

— Ի՞նչ կայ — ըսաւ թաղաւորը — և ինչո՞ւ համար կ'զատուանց կանչուելու :

— ԱԵՏափառ — ըսաւ պահակը — դուք հրաման տուած էք ինձ՝ միանալով ընդ միշտ, Լա Ֆէր կոմսը ներս ընդունիլ երբոր կամենայ Չեր ԱԵՏափառութեան խօսելու :

— Ապա :

— Լա Ֆէր կոմսը դուրսը կ'սպասէ :

Թաղաւորն ու Սէնդ-Էնյան այս խօսքին վրայ՝ իրարու երես նայեցան, և իրենց նայուածքն աւելի մտատանջութիւն քան թէ զարմանք կ'յայտնէր :

Լուի պահ մը վարանեցաւ, բայց գրեթէ նոյն պահուն որոշումն ընելով,

— Գնա — ըսաւ նա Սէնդ-Էնյանի — գնա Լուիզը դաիբ, իմաց տուր անոր մեղի դէմ լարուած որողայթը. մի մոռնար ըսելու որ իշխանուհին իր հալածանքը վերստին կ'սկսի, և թէ այս բանին համար ծառայեցնել կ'տայ այնպիսի անձինք՝ որ լաւ կ'ընէին եթէ չէզոք մնային :

— ԱԵՏափառ . . . :

— Եթէ Լուիզ վախնայ — շարունակեց թաղաւորը — ապահովցուր զինքը, ըսէ անոր որ թաղաւորին սերն անթափանցելի ասպար մ'է : Եթէ նա ամէն բան իմացեր է, թէ և կ'սիրեմ տաքակուսիլ այս մասին, կամ եթէ իր կողմէ յարձակում մը կրած է, ըսէ անոր, Սէնդ-Էնյան — յարեց թաղաւորը բարկութենէ և տենդէ սարսուելով — ըսէ անոր որ այս անգամ՝ փոխանակ զինքը պաշտպանելու, իրեն վրէժը պիտի լուծեմ և այնչափ խափու որ այսուհետեւ ոչ ոք պիտի համարձակի իր վրայ աչք վերցնելու :

— Չեր բոլոր ըսելիքն այս է, ԱԵՏափառ :

— Այս է : Շուտ գնա, և հաւատարիմ մնայիր, դու որ այս դժուրքին մէջ կ'ապրիս սուանց ինձի պէս արքայութեան յոյսն ունենալու :



Սէնդ-էնյան կտոր կտոր եղաւ իր անձնուիրութեան փորձերը ցոյց տալու խոստանալով, ապա թագաւորին ձեռքը բռնեց պապաւ և խնդաղին դուրս ելաւ :

ԺԹ

ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԱԶՆՈՒԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Լուի շուտ մ'այլալուծիւնը փարատեց Պ. Լա Ֆէրի լաւ կերպարան մը ցոյց տալու համար : Քաջ կ'զուշակէր որ կոմսը դիպուածով չէր դար : Անորոշակի կ'զգար այս այցելութեան կարեւորութիւնը, քայց Աթոսի պէս մարդու մը համար, այնպէս ազնիւ մտքի մը համար՝ առաջին տեսքն անախորժ կամ անկանոն բան մը չպիտի ներկայացնէր :

Երբ նորատի թագաւորն առ երեւոյթս հանդարտ լինիլը զգաց, հրաման տուաւ բարապանին որ կոմսը ներս հրամցընէ :

Քանի մը վայրկեան ետք՝ Աթոս՝ հանդիսաւոր զգեստով իր վերայ կրելով այն շքանշանները զոր ինք միայն իրաւունք ունէր Ֆրանսայի արքունիքը կրելու, Աթոս այնպէս ծանր և հանդիսական դէմքով ներկայացաւ, որ թագաւորն՝ իսկոյն կրցաւ դատել թէ սխալած չէ իր նախազգացմանց մէջ :

Լուի կոմսին կողմը քայլ մ'առաւ և ժպտելով իր ձեռքը կարկուտեց Աթոսին, որ յարգալի հակեցաւ անոր վրայ :

— Պ. Լա Ֆէր — ըսաւ թագաւորն արագօրէն — դուք այնքան հաղուաղիւտ եք իմ պալատիս մէջ, որ մեծ բաղդ մ'է ձեզ սենեկը :

Աթոս բարեկեց և պատասխան տուաւ :

— Վ'փափաքէի Ձեր Աւհափառութեան մօտ դանուելու բաղդն ունենալ միշտ :

Այս պատասխանը, այս կերպով յայտնուած՝ ակն յայտնի կը նշանակէր :

« Վ'փափաքէի թագաւորին խորհրդականներէն մին լինիլ որպէս զի զինքը սխալմունքէ հեռացնեմ » :

Թագաւորն այս խօսքին այժը հասկըցաւ, և այս մարդուն առջև հանդարտութեան առաւելութեան հետ իր ստտիձանին առաւելութիւնը սրահել միտքը դնելով՝

— Վ'նայիմ որ ինձի բան մ'ունիք յայտնելու — ըսաւ նա :

— Արդարեւ՝ եթէ չունենայի Ձեր Աւհափառութեան առջև ներկայանալու չպիտի համարձակէի :

— Շուտով ըսէք, սրարն, կ'փափաքիմ ձեզ գոհ բնելու : Թագաւորը նստաւ :

— Աստահ եմ — պատասխանեց Աթոս թե՛մն այլայլութեամբ մը — որ Ձեր Աւհափառութիւնն ինձ հատուցում պիտի տայ :

— Ա՛հ — ըսաւ թագաւորը կերպ մ'ամբարտաւանութեամբ — զանդատանայ ո՞՞ մը կ'գործածէք :

— Գանդառ մը չպիտի լինի — վրայ բերաւ Աթոս — եթէ Ձեր Աւհափառութիւնը . . . : Բայց, շնորհ ըրէք ինձ ներելու, Աւհափառ, խօսակցութիւնը սկիզբէն պիտի սկսիմ :

— Վ'սպասեմ :

— Աւհափառ, կ'յիշէք որ Պրքինկհէմի չուին ժամանակը, պատիւ ունեցայ ձեզի հետ խօսակցելու :

— Այն ատենը, զրեթէ . . . : Այո՛, կ'յիշեմ, միայն, խօսակցութեան նիւթը . . . մոռցայ :

Աթոս գող ելաւ :

— Պատիւ պիտի ունենամ վեհափառիդ յիշեցնել — ըսաւ նա : — Խնդիրն այն ամուսնութեան վրայ էր զոր Պ. Պրաժլօնի կ'ուզէր ընել օրիորդ Լուի Ալիէրի հետ :

— Աւասիկ խնդրը — մոտածեց թագաւորը — « Վ'յիշեմ » — ըսաւ բարձրաձայն :

— Այն ատեն — շարայարեց Աթոս — արքայդ այնքան բարեկեց և վեհանձն կերպով վարուեցաւ ինձի և Պ. Պրաժլօնի հետ, որ Ձեր Աւհափառութեան բերնէն ելած ամէն մէկ խօսքը յիշողութեանէս ելած չէ :

— Ապա . . . — ըսաւ թագաւորը :



— Ապա թաղաւորդ , որմէ օրիորդ Լա Վալիէրը կ'ինդրէի Պ. Պրաժլօնի համար , մերժեց խնդիրս :

— Իրաւ է — ըսաւ Լ. Ի չոր ու ցամաք ձայնով մը :

— Պատճառեւ լով — փոթաց ըսելու Աթոս — որ նշանած օրիորդն օժիտ չունէր :

Լ. Ի ինքզինքը զրպեց համբերութեամբ մտիկ ընելու համար :

— Թէ . . . — յարեց Աթոս — օրիորդը քիչ ինչք ունէր :

Թաղաւորն իր աթոռին մէջ տեղաւորուեցաւ :

— Թէ ազնուական ցեղէ չէր :

Թաղաւորը նորէն անհամբերութեան նշան մը կ'այտնէ :

— Եւ թէ զեղեցիկ չէ — յարեց Աթոս անդ թօրէն :

Այս վերջին նետը՝ սիրահարին սրտին մէջ մղուելով՝ զինքը չափէն աւելի ստատուել տուաւ :

— Պարոն — ըսաւ — աւասիկ կ'նայիմ որ շատ ընտիր յիշողութիւն մ'ունիք :

— Միշտ յիշողութիւնս մեծ է երբ թաղաւորիդ հետ խօսակցուելու մեծ պատոյն կ'արժանանամ — պատասխանեց կոմսն առանց վրդովելու :

— Աերջայէս , այդ ամէն բաներն ըսի , լաւ , ապա :

— Եւ ես չափազանց շորհակալ եղայ Ձեր Ահհափառութենէ , վասն զի այդ խօսքերը կ'ցուցնէին որ Պ. Պրաժլօնի համար պատուաւ որ հողատարութիւն մ'ունէիք :

— Կ'յիշէք նաև — ըսաւ թաղաւորն այս խօսքերը շեշտելով — որ այս ամուսնութեան դէմ մեծ դժկամակութիւն մ'ունէիք :

— Իրաւ է , Ահհափառ :

— Եւ ձեր խնդիրն տկամայ կամօր կ'առաջարկէիք :

— Այո , Ահհափառ տէր :

— Աերջայէս , ես ալ կ'յիշեմ , վասն զի ձերինն չափ ես ես լաւ յիշողութիւն ունիմ , կ'յիշեմ , ըսի , որ սա խօսքն ըսիք . « Ձեմ հաւտար Լա Վալիէր օրիորդին սիրոյն առ Պ. Պրաժլօն » , ինչէն այսպէս ըսիք :

Աթոս այս հարուածն զգաց , բայց չնահանջեց :

— Ահհափառ — ըսաւ — ես արդէն ներողութիւն խնդրեցի :

Ձեր Ահհափառութենէ . բայց այս խօսակցութեան մէջ կան կէտեր որ միայն վախճանին հասկանալի պիտի լինին :

— Ուրեմն տեսնենք վախճանը :

— Աւասիկ : Ձեր Ահհափառութիւնն ըսեր էր ինձ որ Պ. Պրաժլօնի օգտին համար ամուսնութիւնը կ'երկարաձգէր :

Թաղաւորը լռեց :

— Այսօր Պ. Պրաժլօն այնքան դժբաղդ է , որ չէ կարող յայտել և ձեր Ահհափառութենէ այս խնդրոյն լուծումը կ'ինդրէ :

Թաղաւորին դոյնը նետեց : Աթոս սնոր երեսը նայեցաւ անքթիթ :

— Եւ ինչ . . . կ'ինդրէ . . . Պ. Պրաժլօն — ըսաւ թաղաւորը վարանմամբ :

— Ինչ որ մեր վերջին տեսակցութեան ատեն կ'ինդրէի Ձեր Ահհափառութենէ , այս է իր ամուսնութեան համար ձեր հաւանութիւնը :

— Թաղաւորը լռեց :

— Մեղի համար արդելքներու վերարերեալ խնդիրները պարզուած են — շարունակեց Աթոս : — Օրիորդ Լա Վալիէր , թէև անհարուստ , անազնուական , տղեղ , դարձեալ Պ. Պրաժլօնի համար խիստ զեղեցիկ կենակից մը կրնայ լինել , քանի որ նա կ'սիրէ այն նորատի աղջիկը :

Թաղաւորն իր ձեռներն իրարու կցելով սեղմեց :

— Տէր արքայ , կ'վարանիք — հարցուց կոմսն առանց իր հաստատամտութիւնն ու քաղաքավարութիւնը նուազեցնելու :

— Ձեմ վարանիր . . . կ'մերժեմ — պատասխանեց թաղաւորը : Աթոս պահ մ'ինքզինքն ամփոփեց :

— Պատիւ ունեցայ — ըսաւ նա անուշ ձայնով մը — ձեզ զետել տալու , տէր արքայ , որ Պ. Պրաժլօնի գորովն արդիւող ցան մը չկայ , և թէ իր որոշումն անփոփոխելի կ'երևի :

— Իմ կամքս կայ , և կարծեմ թէ այս արդելք մ'է :

— Ամենաձանր արդելք մը — պատասխանեց Աթոս :

— Ա՛հ :

— Այժմ , ներուի ինձ հարցնելու այս մերժման պատճառը : Ահհափառ տէր :



— Պատճառը . . . : Մի՞թէ հարցում կ'ընէք — զոչեց թողա-

տըրը :

— Ինչո՞ւր մը , Վեհափառ :

Թողաւորը՝ իր երկու բուռերը սեղանին վրայ կռթնելով ,  
— Արքունեաց սովորութիւնը կարուսած էք , Պ . Լա Գէր —  
ըսաւ նա զօրեղ ձայնով մը : — Արքունիքը՝ թողաւորին երբէք  
հարցում չեն ուղղեր :

— Իբրաւ է , Վեհափառ , բայց եթէ հարցում չընեն , կ'են-

թաղեն :

— Կ'ենթադրեն . . . ի՞նչ ըսել է այս :

— Գրեթէ միշտ հպատակին ենթադրութիւնը թողաւորին ան-

կեղծութիւնը կ'ենթադրէ . . . :

— Պարո՞ն :

— Եւ հպատակին վստահութեան պահասութիւնը — շարայա-

րեց Աթոս անվեհեր :

— Կարծեմ՝ թէ կ'սխալիք — ըսաւ թողաւորն ահամայ բար-

կութեան բողոքով :

— Վեհափառ , ստիպուած եմ ուրիշ տեղ որոնել ինչ որ

Ձեր Վեհափառութեան մօտ գտնելու կ'յուսայի : Փոխանակ ձեզ-

նէ պատասխան մը ստանալու , ստիպուած եմ ես ինքզինքիս պա-

տասխան մը տալ :

Թողաւորն ոտք ելաւ :

— Կոմս — ըսաւ — որչափ ազատ ժամանակ որ ունէի ձեզի՛ տուի՝  
Այս խօսքն արձակուրդ մ'էր :

բէք չպիտի հաւատամ որ իմ թողաւորս , այն որ ինձ խօսք մը  
ըսաւ , այս խօսքին տակ ներքին միտք մը կ'պահէր :

— Ի՞նչ կ'նշանակէ այդ , ի՞նչ ներքին միտք :

— Կ'բացատրեմ — ըսաւ Աթոս պաղութեամբ : — Եթէ օրի-  
որդ Լա Վալիէրը Պ . Պրաժժօնի տալու մերժելով՝ Ձեր Վեհա-  
փառութիւնն ուրիշ նպատակ մ'ունէր քան թէ դերկոմսին երջան-  
կութիւնը . . . :

— Կ'նայիք , պարոն , որ զիս կ'իշխամանէք :

— Եթէ դերկոմսէն պայմանաժամ մը խնդրելով , Ձեր Վեհա-  
փառութիւնը միայն ուղեց նշանաձն օրիորդ Լա Վալիէրէն հեռա-  
ցընել . . . :

— Պարո՞ն , պարո՞ն :

— Վասն զի ամէն տեղ լսեցի այս բանս , Վեհափառ : Ա-

մենուրեք կ'խօսին Ձեր Վեհափառութեան օրիորդ Լա Վալիէրի  
ունեցած սիրոյն վրայ :

Թողաւորն իր ձեռնոյները պատուեց , զորս , քանի մը վայր-

կենէ 'ի վեր կ'ձմրդէր , ինքզինքը զսպելով :

— Վայ անոնց — զոչեց նա — որ իմ գործերուս կ'խառնուին :

Ես իմ որոշումս ըրած եմ , ամէն քարոսն պիտի ձղմեմ :

— Ի՞նչ քարոսն — ըսաւ Աթոս :

Թողաւորը կայ առաւ յանկարծ , իբրև զսյրային ձի մ'որու

տանձի երկաթը քիմքը կ'ծակէ իր բերնին մէջ դառնալով :

— Կ'սիրեմ օրիորդ Լա Վալիէրը — ըսաւ նա յանկարծ որ-

չափ աղնուութեամբ նոյնչափ զայրոյթով :

— Բայց — ընդմիջեց Աթոս — այդ արդեւք մը չէ որ Ձեր

Վեհափառութիւնը Պ . Պրաժժօնն օրիորդ Լա Վալիէրի հետ

կարդէ : Այդ դժոգութիւնը թողաւորի մ'արժանի է . արժանի է

նաև այս բանիս Պ . Պրաժժօն՝ որ արդէն ծառայութիւններ մտ-

տուցած է և կրնայ իբրև աղնուասիրտ մարդ սեպուիլ : Այսպէս  
ուրեմն , թողաւորը՝ իր սէրէն հրաժեշտ տալով ոչ միայն վեհ-  
անձնութեան , այլ երախտադիտութեան և քաղաքականութեան  
Գործ մ'ըրած կ'լինի :

— Օրիորդ Լա Վալիէր — ըսաւ թողաւորը խուլ ձայնով մը  
— շփեր Պ . Պրաժժօնը :



— Մի՞թէ դուք զիտէք այդ, Աեհափառ — հարցոյց Աթոս խո-  
րազնին նայուածքով մը :

— Գիտեմ :

— Արեմն քիչ ժամանակէ 'ի վեր է, վասն զի եթէ առաջին  
անգամ այս մասին խնդիրս յայտնելուս՝ Ձեր Աեհափառութիւնը  
վերահասու լինէր, այն ատեն անտարակոյս այդ պիտի ըսէիք ինձ :

— Քիչ ատեն կայ իմանալս :

Աթոս պահ մը լուռութիւն պահեց :

— Արեմն չեմ կրնար հասկընալ, Աեհափառ տէր, թէ ին-  
չո՞ւ արդեօք Պ. Պրաժլօնը Լոնտօն զրկեցիք : Այդ արտօն իրա-  
ւամբ զարմանք կ'պատճառէ թաղաւորին պատիրը սիրողներուն :

— Ա՛յլ կ'խօսի թաղաւորին պատոյցն վրայ, Պ. Լա Ֆէր :

— Տէր արքայ, թաղաւորին պատիրը բոլոր իր ազնուականացը  
պատին է : Երբ թաղաւորն իր ազատորդիներէն մին կ'նախատէ,  
այսինքն, երբ անոր պատոյցն մէկ մասը կ'առնու, այս մասը 'նոյն  
խոյն թաղաւորէն կողոպտուած է :

— Պ. Լա Ֆէր :

— Աեհափառ, Պրաժլօն զերկուսը Լոնտօն զրկեցիք օրիսրդ  
Լա Աալիէրի սիրող լինելէն առաջ, կամ քանի որ անոր սիրողն  
եղաք :

Թաղաւորը՝ զայրանալով անոր համար որ կ'զգար թէ Աթոս  
իւր վրայ կ'ախրաստէր, ուղեց զանի ճամբել շարժումով մը :

— Աեհափառ, ամէն բան պիտի ըսեմ ձեզի — պատասխա-  
նեց կոմսը — ասկից այն ատեն դուքս պիտի ելնեմ երբ Ձեր  
Աեհափառութեան կողմէ կամ իմ կողմէ դո՛հ լինիմ : Գո՛հ եթէ  
փորձով հաստատեք որ իրաւունք ունիք, դո՛հ, եթէ ես փորձով  
հաստատեմ որ անիրաւ էք : Ա՛հ, կամայ ակամայ պիտի մտիկ  
ընէք ինձ, Աեհափառ : Ես ծեր եմ, թաղաւորութեան մէջ յա-  
րակցութիւն ունիմ այն ամէն բաներուն հետ որ ճշմարտապէս  
մեծ, ճշմարտապէս զօրաւոր են : Ես ազատորդի մ'եմ որ ձեր  
հօր և ձեր համար արիւնս թափեցի, առանց բան մը խնդրելու  
երբէք ո՛չ ձեզնէ և ո՛չ ձեր հօրմէ : Երկրիս վրայ մէկու մը դէ-  
շու թիւն ըրած չեմ և թաղաւորներ սարատարած եմ : Պիտի

մտիկ ընէք ինձ : Եկայ ձեզնէ համար խնդրելու ձեր մէկ ծառա-  
յին պատոյցն համար, ծառայ մը զոր ստութեամբ մը խաբեցիք  
կամ ահարոթեամբ մատնեցիք : Գիտեմ որ այս խօսքը Ձեր Աե-  
հափառութիւնը կ'զայրացնեն, բայց իրողութիւնները մեզ կ'սպան-  
նեն, այո՛, մեզ. գիտեմ որ իմ համարձակութեանս դէմ պատիժ  
անօրինել կ'խորհիք, բայց ես, ես գիտեմ թէ ինչ պատիժ պի-  
տի հայցեմ՝ Աստուծոյ ձեզի համար, երբ անոր պատմեմ ձեր  
երդմնազանցութիւնն և որդոյս դժբաղդութիւնը :

Թաղաւորը՝ ձեռքը կործքին վրայ դրած՝ մեծաքայլ կ'քալէր,  
զլուխը ցից և աչքը հրացայտ :

— Պարոն — գոչեց յանկարծ թաղաւորը — եթէ ես ձեզի հա-  
մար թաղաւորը լինէի, արդէն պատժուած էիք, բայց ես մարդ  
մ'եմ, և իրաւունք ունիմ երկրիս վրայ զիս սիրողները սիրելու,  
ինչ հազրուակիւս երջանկութիւն :

— Աչ միայն իբրև թաղաւոր, այլ և իբրև մարդ իսկ այս ի-  
րաւունքը չունիք, կամ եթէ կ'ուզէիք անկեղծօրէն վարուիլ, պարտ  
էր իմաց տալ Պրաժլօնի, փոխանակ արտրելու զանի :

— Ճշմարիտը, կարծեմ թէ կ'վիճարանիմ ձեզի հետ — ընդ-  
միջեց Լուի ԺԳ՝ այնպէս վեհափառութեամբ զոր ինք միայն կրնար  
ցոյց տալ յետին աստիճան թէ ակնարկին և թէ ձայնին մէջ :

— Կ'յուսայի որ ինձ պիտի պատասխանէիք — ըսաւ կոմսը :

— Պարոն, քիչ ատենէն պատասխանս կ'իմանաք :

— Իմ միաքս զիտէք — պատասխանեց Լա Ֆէր կոմսը :

— Գուք մոռցաք որ թաղաւորին կ'խօսէիք, պարոն, այդ յան-  
ցանք մ'է :

— Գուք մոռցաք որ երկու մարդոց կեանքը կ'խորտակէիք, Աե-  
հափառ, այս մահացու մեղք մ'է :

— Այժմ, դուքս ելէք :

— Չպիտի ելնեմ մինչև որ այս ևս չըսեմ. դուք Լուի ԺԳ՝ի  
օրդին, դուք զէշ կ'սկսիք ձեր իշխանութիւնը, վասն զի առևան-  
դով և դաւաճանութեամբ կ'սկսիք : Իմ տոհմն և ես, ձեր առջև  
ազատ կ'համարուինք այն սիրալիր յարգանքէն զոր ուխտել տուեր  
էի որդոյս Աէն-Տընիի դամբարանը ձեր ազնիւ նախահարց շի-



ըիմներուն առջև : Գուք մեր թշնամին եղաք , Վեհափառ , այսու-  
աև միայն Աստուծոյ , մեր Տիրոջ , պատասխանատու ենք : Զդու-  
շացէք :

— Միթէ կ'սպառնաք :

— Ո՛հ , ո՛չ — ըսաւ Աթոս տրտմազին — և որչափ մեծախո-  
սութիւն նոյնչափ երկիւղ չունիմ սրտիս մէջ : Վեհափառ , Աս-  
տուած , որու վրայ կ'խօսիմ , իմ ձայնս կ'լսէ , դիտէ որ ձեր  
թաղին անկախութեան և պատուոյն համար , այժմ իսկ պատրաստ  
եմ թափելու ինչ արիւն որ մնացած է երակներուս մէջ քսան  
տարուան քաղաքական և արտաքին պատերազմներէն ետև : Ուստի  
կրնամ հաւատել որ թաղաւորիդ չեմ սպառնար և ոչ մարդուդ ,  
այլ միայն ձեզի , ձեզի կ'ըսեմ : Երկու ծառայ կ'կորուսէք , հօր  
սրտին մէջ հաւատ և որդւոյն սրտին մէջ սէրը սպաննելով : Մին  
չհաւտար այսուհետև արքայական խօսքին , միւսը չհաւտար այսու-  
հետև մարդկան հաւատարմութեան , և ոչ կանանց անարատու-  
թեան : Մին յարգանաց համար մեռած է , միւսը հնազանդու-  
թեան համար : Մնաք բարեա :

Այս ըսելէն ետև՝ Աթոս իր սուրը ծնգաց վրայ խորտակեց ,  
երկու կտորները ծանրաբար դետինը դրաւ , և թաղաւորին ուղղոյն  
տալով , այն միջոցին որ նա կատղութենէ և ամօթապարտութենէ  
հեղձամղձուկ կ'զայրանար , դահլճէն դուրս ելաւ :

Լուի՛ սեղանին առջև խոր մտածութեան մէջ ընկղմած՝ քանի  
մը վայրկեան անցուց որ ինքզինքը գտնէ , և ապա յանկարծ ոտք  
եղնելով՝ ուժղին հնչակը զարկաւ :

— Կանչեցէք Պ . տ'Արդանեանը — ըսաւ նա ահաբեկ պահակ-  
ներուն :

Ի

ՓՈԹՈՐԿԻՆ ԸԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Անտարակոյս մեր ընթերցողներն արդէն աւանձին հարցուցած

են թէ ինչպէս Աթոս ճիշտ պատեհ ժամուն թաղաւորին պալա-  
տը գտնուեր էր , այն որ երկար ատենէ վեր Աթոսի վրայ խօսք  
մ'անգամ լսած չէր : Մեր նպատակը՝ իբրև վիպասան՝ գէպերն  
իրարու հետ շղթայակապ բերել լինելով՝ դրեթէ գծնդակ տրա-  
մաբանութեամբ , պատրաստ կ'գտնուէինք պատասխանելու և այս  
հարցման պիտի պատասխանենք :

Բորթոս՝ իբրև գործոց կարգադրիչ իր պաշտօնին հաւատարիմ  
գտնուելով՝ Բալէ-Բուլայալէն դուրս ելնելուն՝ դացեր Ռաուլը գտեր  
էր ՚ի Մինիմ , Վէնսէնի մէջ , և անոր պատմեր էր մանրամաս-  
նաբար Պ . Սէնդ-Էնյանի հետ ունեցած խօսակցութիւնը . յետոյ  
խօսքին վերջ տուեր էր ըսելով թէ թաղաւորին պատգամաւոր  
ղրկելն իր մտերմին հաւանօրէն գործը պիտի քիչ մը յասպղէր ,  
և թէ թաղաւորին քովէն ելնելուն Սէնդ-Էնյան՝ Ռաուլի կողմէ  
եղած կոչման պատասխանելու պիտի փութար :

Բայց՝ Ռաուլ՝ որ իր վաղեմի բարեկամին չափ զիրահաւան չէր՝  
Բորթոսին պատմութենէ հեռացուցեր էր , որ եթէ Սէնդ-Էնյան  
թաղաւորին քովն երթար , Սէնդ-Էնյան ամէն բան անոր պիտի  
պատմէր , և եթէ Սէնդ-Էնյան ամէն ինչ թաղաւորին յայտնէր ,  
թաղաւորը պիտի արդիւլէր որ նա մնամարտութեան վայրը զըտ-  
նուի : Այս խորհրդածութիւնն ընելէն ետև՝ Ռաուլ թոյլ տուեր  
էր որ Բորթոս այն տեղը կենայ , այն անհաւանական սարապային  
համար որ թերևս Սէնդ-Էնյան դար , և դարձեալ Բորթոսին յատ-  
կապէս ապսպրեր էր որ մէկ կամ մէկ ու կէս ժամէն աւելի չսպա-  
սէ մարգագետնին վրայ , սակայն Բորթոս այս պատուէրին անսաս-  
տելով բոլորովին , ՚ի Մինիմ հաստատուեր էր , որպէս թէ ար-  
մատ բռնել ուղէր , խօսք առնլով Ռաուլէն որ հօրը տունէն իր  
տունը գայ զինքը տեսնէ , որպէս զի Բորթոսի սպասաւորը՝ ուր  
գտնուիլը գիտնայ՝ եթէ Սէնդ-Էնյան ժամադրութեան տեղը գայ :

Պրաժլօն Վէնսէնը ձգեր և շիտակ Աթոսի տան ճամբան բռներ  
էր , որ երկու օրէ ՚ի վեր Բարիզ կ'գտնուէր :

Կոմսն արդէն լուր աւեր էր տ'Արդանեանի մէկ նամակէն :  
Ուստի Ռաուլ իր հօրը տունը կ'հասնէր լի սրտով , որ իր ձեռքն  
անոր կարկառելէն և զրկելէն ետև՝ նշան ըրաւ անոր որ նստի :



— Գիտեմ որ ինչպէս մարդ բարեկամի մը, ինչի կ'զիմես և գու, գերկումս, երբ նա կ'լայ և կ'տառապի. ըսէ՛, ինչ է գալստեանդ պատճառը :

Երիտասարդը խոնարհելով իր պատմութիւնն սկսաւ : Քանի քանի անգամ՝ այս պատմութեան ընթացքին մէջ՝ արտասքն իր ձայնը կարեցին և հատկապէս մ'իւր կողորդին մէջ խեղդելով գաղբեցուց իր նկարագիրը : Սակայն նա խօսքն աւարտեց :

Հաւանօրէն Աթոս կանխաւ գիտէր թէ ինչ պիտի ընէր, վասն զի արդէն ըսինք որ ա'Յրզանեան անոր գրեթէ էր. բայց՝ միտքը գնելով մինչև վերջը պահել այն անյողողղչ հանգարտութիւնն որ իր բնաւորութեան գերբնական կողմը կ'կազմէր, պատասխան տուաւ .

— Ռատլ, ես բոլոր դարձած խօսքերուն հաւատ չեմ ընծայեր, բնաւ չեմ հաւատար վախցած բաներուդ, չեմ ըսեր թէ արժանահաւատ անձինք այս արկածին վրայ ինձ տեղեկութիւն տուած չեն, բայց իմ հողուվս և խղճովս անկարելի կ'համարիմ որ թագաւորն ազատորդի մը նախատած լինի : Ռատի թագաւորին կողմէն ես կ'ապահովեմ քեզ և իմ ըսած իս ասպոյցը պիտի երթամ բերելու :

Ռատլ իբր արբեալ մարդ մ'իւր յատուկ աչօք տեսածին, և երբէք սուտ չխօսող մարդու մ'անվրդով վստահութեան մէջ ծփալով, գլուխը ծռեց և բառական համարեց պատասխանելու .

— Ուրեմն, գացէք, կումս :

Եւ նստաւ գլուխն երկու ձեռքը ծածկելով : Աթոս հագուեցաւ և մեկնեցաւ : Թագաւորին պալատն ըրաւ, ինչ որ արդէն ընթեցողին ըսինք, որ անոր ներս մտնելն և գուրս ելնելը տեսաւ :

Երբ իր տունը վերագարձաւ, Ռատլ՝ գունատ և արտում՝ իր յուսահատ գիրքը պահած էր : Բայց՝ երբ բացող գունդուն ձայնը լսեց, երբ իր հօրը քայլափոխը լսեց որ իրեն կ'մտանար, երիտասարդն իր գլուխը վերցուց :

Աթոս գունատ, գլուխը բաց և ծանր էր. իր վերարկուն և գլխարկը սպասաւորին տուաւ, ձեռքովը զանի ճամբեց և Ռատլի մօտ նստաւ :

— Լաւ ուրեմն, պարոն — հարցուց երիտասարդն իր գլուխը վարէն վեր վերցնելով — այժմ բոլորովին համոզուեցա՞ք :

— Համոզուած եմ, Ռատլ. թագաւորը կ'սիրէ օրիորդ Լա վալիէրը :

— Այսպէս, կ'խոստովանի՞ — գոչեց Ռատլ :

— Բացէ՛ ի բաց կ'խոստովանի — ըսաւ Աթոս :

— Հասկա ինք օրիորդը :

— Չտեսայ զանի :

— Ո՛չ, բայց թագաւորն անոր խօսքն ըրած է : Ի՞նչ կ'ըսէ անոր վրայ :

— Ա՛յլ թէ նա զինք կ'սիրէ :

— Ո՛հ, կ'նայիք, կ'նայիք, պարոն :

Եւ երիտասարդը յուսահատութեան շարժում մ'ըրաւ :

— Ռատլ — վրայ բերաւ կումսը — թագաւորին ըսի, հաւատ ինձ, ինչ որ գու ինքնին կարող է իր անոր ըսելու, և կարծեմ թէ պէտք եղածն ըսի պատշաճ այլ հաստատ ոճով մը :

— Եւ ի՞նչ ըսիք անոր, պարոն :

— Ես ըսի, Ռատլ, որ ամէն ինչ լմնցած է անոր և մեր մէջ, թէ քու ծառայութենէդ բան մը չսպասէ, ըսի որ՝ ես ինքս, հեռու պիտի մնամ : Ա՛մնայ ինձ միայն բան մ'իմանայ :

— Ի՞նչ բան, պարոն :

— Եթէ միտքդ փոխած ես :

— Իմ միտքս, և ի՞նչ առթիւ :

— Այն սիրոյ մասին . . . :

— Աւարտեցէք ձեր խօսքը, պարոն :

— Եւ վրէժխնդրութեան վերաբերեալ. վասն զի կ'վախնամ որ վրէժ լուծելու գիտաւորութեանդ մէջ կ'մնաս :

— Ո՛հ, պարոն, սէրը . . . կարելի է օր մը, աւելի ուշ, պիտի յաջողիմ սրտէս կորզելու : Ա՛յուսամ, Աստուծոյ օգնութեամբն և ձեր խոհական յորդորներուն շնորհիւր : Իսկ վրէժխնդրութիւնը, վատ գաղափարի մ'ազդեցութեան ներքև վրէժխնդրութիւն մտածեցի, վասն զի ճշմարիտ յանցաւորէն վրէժ չպիտի կարենայի լուծել, ուստի արդէն վրէժխնդրութենէ հրաժեշտ տուի :



— Այսպէս, Պ. Սէնդ-Էնյանի հետ կոխ ընելու միտք չունիս ուրեմն :

— Ո՛չ, պարոն : Մենամարտութեան հրաւեր մ'ըրի . եթէ Պ. Սէնդ-Էնյան ընդունի այս հրաւերս, պիտի մենամարտիմ, եթէ անհոգ մնայ, ես ալ պիտի մտնամ :

— Հասցա լա Վալիէրէն :

— Կոմս, դուք ալ կրնաք խղճի մտօք վիայել որ կնիկէ մը վրէժ լուծելու շարտի ելնեմ — պատասխանեց Ռաուլ այնպէս տխուր ժպիտով մը, որ այս մարդուն արտեանունքին ծայրն արտասուր մը բերաւ, այս մարդուն որ քանիցս իր վշտերով և այլոց տառապանօք համակուած էր :

Կոմսն իր ձեռքը Ռաուլին կարկառեց : Ռաուլ զայն բռնեց աշխուժի :

— Այսպէս, պարոն կոմս, լիովին ստոյգ էք որ այն չարեքը զարման չունի — հարցոյց երիտասարդը :

Աթոս ըստ կարգի իր գլուխը ցնցեց :

— Խեղճ տղայ — մըմուսաց նա :

— Կ'կարծէք թէ դեռ ևս յոյս ունիմ, և իմ վրայ կ'ղթար : Ռ՛հ, անհնարին վիշտ կ'զգամ՝ արդարեւ՝ այնչափ սիրած անձս ատելու համար, ինչպէս որ պարտաւոր եմ : Երանի՛ թէ յանցանք մը դործած լինէի անոր դէմ, պիտի երջանիկ լինէի և անոր պիտի ներէի :

Աթոս իր որդւոյն նայեցաւ ակրաղին : Ռաուլին արտաբերած այս քանի մը խօսքը կարծես թէ իր սրտէն կ'բղխէր : Նոյն պահուն՝ սպասաւորը ներս մտնելով Պ. ա'Արդանեանի դալուսան իմացոյց : Այս անունն Աթոսի և Ռաուլի ականջին խիստ տարբեր կերպով հնչեց :

Հրացանակիրը ներս մտաւ անորոշ կերպով մը ժպտելով : Ռաուլ կայ առաւ . Աթոս իր բարեկամին կողմը քալեց այնպիսի կերպարանքով մ'որ Պրաժլօնի աչքէն չվրիպեցաւ : Տ'Արդանեան Աթոսի պատասխան տուաւ աչքը պարզապէս թարթելով, ապա, Ռաուլի մօտենալով և անոր ձեռքը բռնելով,

— Լաւ ուրեմն — ըսաւ նա թէ հօր և թէ որդւոյն ուղղելով խօսքը — պատանին կ'մխիթարես, ինչպէս որ կ'երևի ինձ :

— Եւ դու որ միշտ բարի ես — ըսաւ Աթոս — այս դժուարին պաշտօնը կատարելու համար կ'դաս ինձ օղնելու :

Եւ այս ըսելով՝ Աթոս իր երկու ձեռաց մէջ սեղմեց ա'Արդանեանի ձեռքը : Ռաուլ կարծեց զիտել որ այս սեղմումը խօսքէ դուրս յատուկ նշանակութիւն մը պիտի ունենար :

— Այո՛ — ըսաւ հրացանակիրը՝ իր պէխը քերելով Աթոսին աղատ ձգած ձեռքովը — այո՛, ես ալ կ'զգամ . . . :

— Բարի եկաք, պարոն ասպետ, չէ՛ թէ ձեր տալիք մխիթարութեան համար, այլ ձեզի համար : Մխիթարուած եմ :

Եւ փորձ փորձեց աւելի տխուր ժպիտ մ'ընել քան ամէն արտասուք որոյ թափիլն երբէք տեսած լինէր ա'Արդանեան :

— Շատ լաւ — ըսաւ ա'Արդանեան :

— Միայն — շարունակեց Ռաուլ — դուք եկաք ճիշտ այն միջոցին որ կամը թաղաւորին հետ ունեցած տեսակցութեան վրայ ինձ մանր տեղեկութիւններ կ'տար : Միթէ չէք ներքեր որ կոմսն իր խօսքը շարունակէ :

Եւ երիտասարդին աչքը կարծես թէ հրացանակրին սրտին խորը թափանցելու կ'ջանային :

— Իր տեսութիւնը թաղաւորին հետ — ըսաւ ա'Արդանեան այնպէս քնական ձայնով մ'որ կարելի չէր երկբայիլ իր զարմանքին վրայ : — Աթոս, ուրեմն թաղաւորը տեսար :

Աթոս ժպտեցաւ :

— Այո՛ — ըսաւ նա — տեսայ զանի :

— Ա՛հ, իրան կ'անդիտէիք որ կոմսը Նորին Վեհափառութիւնը տեսած լինէր — հարցոյց Ռաուլ կիսովին վստահ :

— Ճշմարիտը, այո՛, բոլորովին անտեղեկ էի :

— Ուրեմն, հիմակ աւելի հանդարտ եմ — ըսաւ Ռաուլ :

— Հանդարտ, և ի՛նչ բանի վրայ — հարցոյց Աթոս :

— Պարոն — ըսաւ Ռաուլ — ներեցէք ինձ, բայց զխնալով այն բարեկամութիւնը զոր առ իս սածելով կ'պատուէք զիս, կը վախնայի որ փոքր ինչ աշխուժիւ բացատրած չլինէիք Նորին Վեհափառութեան իմ վիշտս և ձեր սրամտութիւնը, և թէ՛ այն աստի թաղաւորը . . . :



— Եւ թէ այն ատեն թագաւորը — կրկնեց տ'Արդանեան : —  
Նայինք , լինցուր խօսքդ , Ռատու :

— Դուք ալ ըստ կարգի ներեցէք ինձ , Պ . տ'Արդանեան —  
ըսաւ Ռատու : — Պահ մը դողացի , կ'խոստովանիմ որ աստ ե-  
կած չլինիք չէ թէ իբրև Պ . տ'Արդանեան , այլ իբրև հրացա-  
նակրաց հրամանատար :

— Յիմար ես , իմ խեղճ Ռատու — գոչեց տ'Արդանեան այն-  
պէս քրքիջ մը ձգելով որու մէջ ուշադիր դիտող մ'աւելի ան-  
կեղծութիւն տեսնել կ'փափաքէր :

— Աւրախ եմ — ըսաւ Ռատու :

— Այո՛ , յիմար , և դիտես թէ քեզի ինչ կ'խօսիմ :

— Ըսէք , պարոն , ձեզնէ եկած խորհուրդը միշտ օգտաւէտ  
պիտի լինի :

— Այո , կ'խրատեմ քեզ՝ որ ողևորութենէդ ետե , Պ . կիչին  
ըրած այցելութենէդ ետե , իշխանուհոյն ըրած այցելութենէդ  
ետե , Բորթոսին ըրած այցելութենէդ ետե , ՚ի Վէնսէն ըրած  
ճամբորդութենէդ ետե , խորհուրդ կ'տամ քեզի որ փոքր ինչ  
հանդէս . դնս պատկէ , քնացիր , և արթննալէդ ետե՝ լաւ ձի  
մը հեծիր և զայն քիչ մը յողնեցուր :

Եւ տ'Արդանեան՝ Ռատուն իրեն քաշելով զանի համբուրեց որ-  
պէս թէ իր որդին լինէր : Աթոս ալ նոյնն ըրաւ , միայն՝ ակն  
յայտնի էր որ հօրը համբոյրն աւելի դորովալի և սեղմումն ա-  
ւելի ուժգին էր քան թէ բարեկամինը :

Երիտասարդը վերստին նայեցաւ այս երկու մարդոց , իր բոլոր  
խելքը թափելով որպէս զի անոնց միտքը հասկընայ : Բայց իբ  
նայուածքը չլրցաւ բան մը թափանցել հրացանակրին ծիծաղկոտ  
դէմքին և Աս Ֆէր կոմսին հանդարտ և անուշ կերպարանին վրայ :

— Եւ ո՞ր կ'երթաս , Ռատու — հարցոյց այս վերջինը , տես-  
նելով որ Պրաժլօն դուրս ելնելու կ'պատրաստուէր :

— Իմ բնակարանս , պարոն — պատասխանեց այս վերջինն իբ  
անուշ և տխուր ձայնովը :

— Աւրեմն այն տեղ կ'բնանք գտնել քեզ , դերկունս , եթէ քե-  
զի խօսելիք մ'ունենանք :

— Այո , պարոն : Միթէ կ'դուշակէք որ ինձ խօսելիք մը պի-  
տի ունենաք :

— Ի՞նչ գիտեամ — ըսաւ Աթոս :

— Այո , նոր մտիթարութիւններ — ըսաւ տ'Արդանեան Ռատու  
կամացուկ մը հրելով գէպ ՚ի դուռը :

Ռատու այս երկու բարեկամաց խնդագին շարժումները տեսնե-  
լով կոմսին սենեկէն դուրս ելաւ , իրեն հետ տանելով միայն  
իր յատուկ վշտաց զգացումը :

— Օրհնեալ լինի Աստուած ըսաւ նա — կրեամ ուրեմն միայն  
իմ վրայ խորհիլ :

Եւ իր վերաբերին մէջ փաթթութեամբ այնպէս որ անցորդնե-  
րէն պահէ իր տխուր դէմքը , դուրս ելաւ իր յատուկ բնակա-  
րանը դնալու , ինչպէս որ Բորթոսին խօսք տուեր էր :

Երկու բարեկամներն երիտասարդին հեռանալը տեսնելին ար-  
դահաստութեան նման զգացումով մը :

Միայն իւրաքանչիւրը տարբեր կերպով բացատրեր էր :

— Խեղճ Ռատու — ըսեր էր Աթոս հառաջ մը հանելով :

— Խեղճ Ռատու — ըսեր էր տ'Արդանեան ու սերը բարձրացնելով :

ԽԱ

Ո՛՛՛ , ՈՂՈՐՄԵԼԻՒ՛՛՛

(Heu! miser!)

« Խեղճ Ռատու » ըսեր էր Աթոս : « Խեղճ Ռատու » ըսեր էր  
տ'Արդանեան : Եւ արդարև երբ այս երկու կորովամիտ մարդիկ  
կ'ցաւէին վրայ , ըսել է թէ Ռատու զժբաղդ մարդ մ'էր :

Աստի երբ առանձին մնաց , անվեհեր բարեկամն և ներողա-  
միտ հայրն իր ետևը թողլով , երբ յիշեց թագաւորին սիրոյ խոս-  
տովանութիւնն որով իր սիրական Աուիլ Աս Վալիէրը ձեռքէն  
կ'զողնար , զգաց իր սրտին խորտակուիլը , ինչպէս որ մեզնէ ա-  
մէն ոք զգացած է այս խորտակումն երբ առաջին պատրանքը  
առաջին սէրը մասնուած տեսած է :



— Ո՛Տ — մրմուռաց նա — ամէն ինչ լմնցաւ : Կենաց մէջ բան մը չկայ : Չկայ սպասելու , չկայ յուսալու բան մը : Կիչ ըսաւ ինձ , հայրս ըսաւ ինձ , տ'Արդանեան ըսաւ ինձ նոյն բանը : Ուրեմն ամէն ինչ երազ է այս աշխարհիս վրայ : Ուրեմն երազ մ'էր այն ապաղան որու կ'ակնկալէի տասն տարիէ 'ի վեր : Մեր սրտերու այս միութիւնը , երանգ մ'էր , այս սիրով և երջանկութեամբ լի կեանքը , երանգ մ'էր :

« Ի՞նչ յիմար եմ որ այսպէս երազեր եմ բարձրաձայն և հրապարակաւ , իմ բարեկամաց և թշնամեացս առջև , որպէս զի իմ բարեկամներս արտմին և իմ թշնամիներս իմ ցաւոյս վրայ ծիծաղին . . . :

« Այսպէս իմ աղէտքս հանրածանօթ հասարակային դայթակղութիւն մը պիտի գառնայ : Այսպէս , վաղը , ամէն մարդ զիս մատուլ պիտի ցոյց տայ նախատանօք :

Ետեւ լ' թէ և իր հօրն և տ'Արդանեանի խօսք տուաւ հանգարտելու , գաղտնի սպառնալեաց խօսքեր արտաբերեց :

— Էւ սակայն — շարունակեց նա — եթէ անուս Աարդ լինէր , և միանգամայն տ'Արդանեանի ճարտարութիւնն ու կորովն ունենայի , շրթերովս պիտի ծիծաղէի , կանայքը պիտի համոզէի որ այն նենգաւորը , իմ սիրովս պատուեալ՝ ցաւ մը միայն կ'թողու ինձ , այս է իր սպարկեշտութեան ցոյցերով խաբուիլս . քանի մը շողորթրթներ զիս ծաղրելով թաղաւորը պիտի փաղաքշէին , ծաղրաբաններուն ճամբուն վրայ դարանամուտ պիտի սպասէի , և քանի մը հասաւ պիտի պատժէի : Մարդիկ իզնէ պիտի երկրնչէին , և երբ երբորդը տապաստ դեպիսը նետէի՝ կանայք զիս պիտի պաշտէին :

« Այո՛ , այս ընթացքն ընտիր ընթացք մ'է , և նոյն իսկ Լաֆէր կոմսը չպիտի գժկամակէր այս բանիս : Միթէ նոյն ինքն իր երիտասարդութեան ժամանակ չէ՞ խաբուած , ինչպէս որ ես խաբուեցայ : Միթէ սիրոյ տեղ գինովութեան չտուաւ ինքզինքը : Շատ անգամ ինձ ըսած է : Ինչո՞ւ համար , ես , սիրոյ տեղ զուարճութեան չպիտի տայի ինքզինքս :

« Որչափ ես այն ևս տառապած էր , թերևս աւելի : Ուրեմն

մարդու մը պատմութիւնն ամէն մարդկան պատմութիւնն է . աւելի կամ նուազ երկայն , աւելի կամ նուազ վշտալի փորձ մը : Բոլոր մարդկային սեռի ձայնն երկար ազադակ մ'է :

« Ի՞նչ փոյթ տառապողին այլոց վիշտը : Ուրիշ կուրծքին վրայ քայուած վէրքը կ'ամոքէ՞ միթէ մերինին վրայ քայուածը : Մեզի մօտ հոսած արիւնը միթէ կ'ցամքեցնէ՞ մեր արիւնը : Այս հանրական անձկութիւնն անհատական անձկութիւնը միթէ կ'նուազէ : Ո՛չ , ամէն ոք իրեն համար կ'տառապի , ամէն ոք իր վշտաց դէմ կը մարտի , ամէն ոք իր յատուկ արատաւքը կ'արտասուէ :

« Եւ դարձեալ , մինչ ցարդ կեանքն ի՞նչ եղած է ինձի համար : Պաղ և ամուլ կրկէս մ'որ այլոց համար 'ի պայքար ելայ իսկ ինձի համար երբէք :

« Երբեմն թաղաւորի մը համար , երբեմն կնկան մը համար :

« Թաղաւորը մասնեց զիս , կինը զիս արհամարհեց :

« Ո՛Տ , դժբաղդս . . . կանայք : Միթէ չ'պիտի կարենամ միոյն ցանցանքն ամենուն քսուել տալ :

« Ի՞նչ պէտք է ասոր համար . . . : Պէտք է սիրտ չունենալ , կամ մոռնալ որ ունինք հատ մը . ուժեղ լինիլ , նոյն իսկ տկարութեան դէմ , միշտ կոթնիլ , մինչև անգամ երբ կ'զգասնք որ տկար ենք :

« Այս նպատակին հասնելու համար ի՞նչ պէտք է : Պէտք է նորահասակ , դեղմնի , ուժով , արխասիրտ և հարուստ լինիլ : Այս ամենն եմ կամ պիտի լինիմ :

« Բայց պատիւը : Ի՞նչ է պատիւը : Տեսութիւն մը զոր ամէն ոք ըստ հաճոյս կ'ըմբռնէ : Հայրս կ'ըսէր ինձ . « Պատիւը , մեր այլոց պարտաւորած յարգն է , մանաւանդ մենք մեզի պարտաւորած բանին յարդը » : Բայց Կիչ , բայց Մանիքան , բայց Սէնդ-Էնյան մանաւանդ՝ ինձ պիտի ըսէին . « Պատիւը կ'կայանայ թաղաւորին կրից և զուարճութեանց ծառայելուն մէջ » : Այս պատիւը զիւրին է և արդիւնաւոր : Այս պատուով կարող եմ իմ տեղս պահել արքունիքը , կարող եմ սենեկին ազատորդին գառնալ , զեղեցիկ և ընտիր զօրագունդ մ'ունենալ իմ ներքև : Այս պատուով կարող եմ գուրս և նախարար լինիլ :



« Այս կնիկան ինձ գրուեալն արատը , այս վիշտն որով իմ սիրատ խորտակեց , ես , Ռատուլս , իմ մանկութեան ընկերուհիս , բնաւ Պրաժլոնի չվերաբերիր , որ լաւ սպայ մը , քաջ հարիւրապետ մ'է , որ առաջին մարտին մէջ փառօք պիտի հռչակուի , և հարիւրապետիկ աւելի պիտի մեծնայ քան որ է այսօր օրիորդ Վա Վալիէր , թագաւորին սիրուհին , վասն զի թագաւորը չպիտի կարգուի օրիորդ Վա Վալիէրի հետ . և որչափ իր սիրուհին հրատարակէ զանի , այնքան պիտի թանձր գործէ այն ամօթապարտութեան կասլը զոր իրբն պտակ անոր ճակատին կ'կայէ , և քանի արհամարհեն զանի , ինչպէս որ ես կ'արհամարհեմ , ես պիտի փառաւորուիմ :

« Ափսոս , միտին քայլեր էինք , նա և ես , մեր կենաց առաջին ամենէն աղոթ սարկները , իրարու ձեռք բռնելով՝ երիտասարդութեան ծաղիկներով լի ու չքնաղ ճամբու մը մէջ , և ահա հիմակ հասանք քառօղի մ'որ նա իզնէ կ'բաժնուի , ուր սարբեր ճամբայ մը պիտի ընթանանք , որ քանի շարունակուի մեզ իրարմէ պիտի զատէ ևս քան զես , և այս ճամբուն նպատակին հասնելու համար , Տէր իմ Աստուած , միայնակ եմ , յուսահատ եմ , վշտահատ եմ :

« Ա՛ դժբաղդս . . . :

Ռատուլ այս շարադուշակ խորհրդածութեանց մէջն էր , երբ իր սարք տանը սեմին վրայ կեցաւ մեքենայէս : Անոց հատեր էր առանց սեանելու անցած փողոյները , առանց դիտնալու թէ ինչպէս եկեր էր , գուար հրեց , շարունակեց ընթացքն և սանդղէն վեր ելաւ :

Այն ժամանակի շատ մը տուններուն պէս՝ Ռատուլի տան սանդուղը մտնի և վերնապատիժները խաւարին կին : Ռատուլ առաջին դատիկոնը կ'ընակէր , կայ առաւ որ զանդակը զարնէ : Օլիվէն երեւցաւ , անոր ձեռքէն սուրն ու վերարկուն առաւ : Ինք Ռատուլ բացաւ դուռը՝ որ նախասենեկէն՝ փոքրիկ սրահի մը վրայ կ'նայէր , և այս սրահիկն ալ՝ երիտասարդի մը համար չափէն աւելի ճոխ զարդարուած էր կահերով և ծաղիկներով զոր Օլիվէն բերեր էր , վասն զի իր սիրոջ ճաշակը դիտնալով՝ գոհ ընելու փութաւ :

ցեր էր , առանց հոգ ընելու եթէ պիտի տեսնէր թէ ոչ այս իր խնամատարութիւնը :

Սրահին մէջ Վա Վալիէրի մէկ կենդանադիրը կար , զոր ինք Վա Վալիէր դժադրեր և Ռատուլին ընծայեր էր : Այս կենդանադիրը՝ մտնի գոյն կերպասէ ծածկուած երկայն աթոռի մը վերեւ կախուած էր . Ռատուլ ամենէն առաջ նոյն կենդանադիրն կողմը զիմեց , և ամենէն առաջ իր նայուածքն անոր վրայ սեւեռեց : Իբրաւ է որ Ռատուլ իր սովորութեան կ'հետեւէր , վասն զի ամէն անգամուն որ տունը դառնար ամէն բանէ առաջ սոյն կենդանադիրն իր աչքը կ'գրասէր : Աստի՛ ինչպէս միշտ՝ այս անգամ ևս շիտակ կենդանադիրն զնաց , երկայն աթոռին վրայ ծունկը դրաւ և կայ տունլով սկսաւ անոր նայել ախրային :

Իր թեկերը կտրծքին վրայ ծալեր էր , գլուխը մեղմիկ վեր բռնէր , աչքը հանդարտ և քողաւոր , և բերանը զառն ժպիտով մը բօթեր էր :

Նայեցաւ պաշտեալ նկարին , ապա իր ամէն ըսածները մտքէն անցուց , էր բոլոր քաշած տառապանքը սիրար վրդովեց , և երկար լուծենէ մ'ետք ,

— Ա՛հ , դժբաղդս — ըսաւ երբորդ անգամ :

Հաղիւ թէ այս երկու բառն արտասաներ էր , որ հառաջ մը և սրտունջ մը լսեց իր ետեւը :

Շուտ մը դարձաւ , և սրահին մէկ անկիւնը տեսաւ կանդուն , զլսիկոր , քողաւոր կին մը զոր ներս մտնելու ասնն բացած դրանն ետին մնացած էր , և այնուհետեւ չէր տեսած՝ զլուխը չդարձնելուն համար :

Ռատուլ այս կնիկան մտտեցաւ , որու ներկայութիւնն ոչ ոք իմացուցեր էր իրեն , բարեկեցիկ և միանգամայն հարց ու փորձ ընելով՝ երբ յանկարծ կտր զլուխը բարձրացաւ , քողը վերնալով դէմքը տեսնուեցաւ , և սպիտակ ու ախոր կերպարան մ'իրեն երեցաւ :

Ռատուլ ետ ետ քաշուեցաւ՝ որպէս թէ ուրուականի մ'ատջելնէր :

— Լուիլ — զոչեց նա սյնակէս յուսակաւոր ձայնով մ'որ կա-



բերի չէր հատալ թէ մարդկային բերան մ'այսողխի աղաղակ մը արձակէր առանց սրտին բոլոր ջիւերը խորտակելու :

ԻՖ

ՎԻՐՔ ՎԻՐԸՅ ՎՐԸՅ

Օրիորդ Լա Վալիէր, վասն զի նոյն ինքն էր, քայլ մ'առաւ ընդ առաջ :

— Այո՛, Լուիզ — մբմուսց նա :

Բայց նոյն միջոցին, թէև խիստ կարճ, Ռատու ինքզինքին դաւլու ժամանակ դտեր էր :

— Գո՛ւ ես, օրիորդ — ըսաւ նա :

Ապա՛ անսահմանելի շեշտով մը .

— Գու՛ անսո դաս — յարեց նա :

— Այո՛, Ռատու — կրկնեց նորասի օրիորդը — այո՛, ես որ քեզի կ'սպասէի ,

— Ներէ՛, երբ ներս մտայ, չգիտէի . . . :

— Այո՛, և սպասելեր էի Օլիվէնի որ չյայտնէ քեզ . . . :

Օրիորդը վարանեցաւ, և որովհետև Ռատու պատասխան տալու չէր փութար, պահ մը լուծիւն յաջորդեց, և այս լուծութեան ժամանակ կարելի էր լսել երկու բախող սրտերու մբմունջը, չէ թէ իրարու ձայնակցութեամբ բայց իրարմէ սուրի բռնութեամբ :

Խօսելու կարգը Լուիզինն էր : Ճիզ մ'ըբաւ նա :

— Խօսելիք ունէի քեզի — ըսաւ նա — անպատճառ պէտք էր որ քեզ տեսնէի . . . ես ինքս . . . մինակ . . . : Բնաւ այս ընթացքս բռնելու չվարանեցայ, թէև պէտք է որ ծածուկ մնայ, վասն զի ոչ ոք, քեզնէ զատ, Պ. Պրածլօն, չախտի հասկընայ զայն :

— Երգարև, օրիորդ — թոթովեց Ռատու շուարած, շնչա-

սպառ — և ես ինքս՝ թէև լաւ գաղափար մ'ունիս իմ վրայ, կը խոստովանիմ . . . :

— Հնոր՛հ կ'ընես նստելու և մտիկ ընելու — ըսաւ Լուիզ՝ և իր ամենաքաղցր ձայնովն ընդմիջեց անոր խօսքը :

Պրածլօն պահ մ'անոր երեսը նայեցաւ, սպա դու խը ցնցելով տրտմացին, նստաւ կամ լաւ ևս աթոռին վրայ ընկաւ .

— Խօսէ՛ — ըսաւ նա :

Օրիորդն իր չորս դին դաղանի նայած մը նետեց : Այս նայուածքն աղաչանք մ'էր և սուրի լաւ դաղանի կ'պահանջէր քան թէ քիչ մ'առաջ ըսած խօսքը :

Ռատու ոտք ելաւ, և գուռը գնալով բացաւ .

— Օլիվէն — ըսաւ նա — ոչ ոք մի՛ ընդունիր :

Ապա Լա Վալիէրի կողմը դառնալով ,

— Մի՛թէ այս էր փափաքդ — ըսաւ նա :

Բան մը չէր կարող բացատրել Լուիզի վրայ այս խօսքին ըբած տպաւորութիւնը, որ կ'նշանակէր, « Կ'նայիս որ ես, ես դեռ ևս փափաքդ կ'գուշակեմ » :

Օրիորդն ըմբոստ արտօսը մը սրբելու համար թաշկինակն աչացը վրայ դրաւ, սպա՛ պահ մը միտքն ամփոփէլէն ետև .

— Ռո՛ու — ըսաւ նա — այդ քու բարի և անկեղծ նայուածքդ մի՛ դարձնէր իղնէ, դու այն մարդոց կարգէն չես որ կին մը կ'ատեն իր սիրտը տալուն, եթէ անգամ այս սէրն իրենց դժբաղդութեան պատճառ լինի կամ իրենց գոռուղութիւնը վերադրէ :

Ռատու պատասխան չտուաւ ամենին :

— Աւ՛սիզ — շարունակեց Լա Վալիէր — շատ ճշմարիտ է եղեր . իմ գատս անիրաւ է, և չգիտեմ թէ ինչպէս սկսիմ խօսքս : Ահա, լաւ ես պիտի ընեմ կարծեմ, եթէ պարզապէս ինձ հասածը պատմեմ : Արովհետև ճշմարտութիւնը պիտի ըսեմ, միշտ իմ ուղիղ ճամբաս պիտի գտնեմ, իմ գիմացրելիք մթոթեան, վարանման և արդիւքներու մէջ, որպէս զի սիրտս սփոփեմ որ կը յորդէ և քու ստիցդ առջև զնդիլ կ'ուղէ :

Ռատու իր լուծիւնը շարունակեց :

Լա Վալիէր անոր կ'նայէր դէմքով մ'որ ըսել կ'ուղէր, « Բաջալերէ՛ զիս, կ'պաղատիմ, բաւ մ'ըսէ՛ » :



Բայց Ռատու լուռ ու մունջ մնաց և աղջիկը ստիպուեցաւ շարունակելու :

— Քիչ մ'առաջ — ըսաւ նա — Պ. Սէնդ-Էնյան եկաւ ինձ թաղաւորին կողմէ :

Օրիորդն աչերը վար առաւ :

Ռատուն ալ իր աչքը դարձուց մեկուսի որ բան մը չտեսնէ :

— Պ. Սէնդ-Էնյան թաղաւորին կողմէ եկաւ ինձ — կրկնեց նա — և ըսաւ ինձ որ ամէն բան դիտես :

Եւ նա ջանաց դէմ առ դէմ նայել անոր որ այնչափ վէրքե ետք այս նոր վէրքն ալ կ'ընդունէր, բայց անկարելի եղաւ իրեն Ռատուն աչաց հանդիպելու :

— Ըսաւ ինձ որ արգարացի բարկութեամբ մը վառուած ես ինձի դէմ :

Այս անգամ Ռատու նորասի աղջկան նայեցաւ, և արհամարհոտ ժպիտ մ'իր շուրթը վեր վերցուց :

— Ո՛հ — շարունակեց նա — կ'սպառախիմ քեզ, մի ըսեր որ բարկութենէ զատ բան զգացիր ինձի դէմ : Ռատու, սպասէ որ քեզի ամէն բան սլատմեմ, սպասէ որ խօսքս աւարտեմ :

Ռատու ճակատն իր կամաց ուժով պարզեցաւ, բերնին բօթն անցաւ :

— Եւ ամէն բանէ առաջ — ըսաւ Լա Վալիէր ձեռներն իրարու կցած, ճակատը վար հակած — ներողութիւն կ'խնդրեմ քեզնէ, որ մարդոց մէջ ամենէն վեհանձն ես, ամենէն ազնիւն ես : Եթէ անդէտ սրահեցի քեզ իմ սրտիս զրացմանց, դէթ երբէք չսխախտի յանձն առնելի քեզ խաբելու : Ո՛հ, Ռատու, կ'սպառախիմ քեզ, ծնրադիր կ'աղաչեմ, պատասխան սուր ինձ, եթէ նախաախնք անդամ լինի ըսելիքդ : Քերնէդ ելած մէկ նախաախնքը նախադաս կ'սեպեմ քան թէ սրտիդ մէկ կասկածը :

— Կ'զմայլիմ վսեմութեանդ վրայ, օրիորդ — ըսաւ Ռատու ինքն իր վրայ ճիւղ ընելով որ հանդարտ մնայ : — Չյայտնել որ կ'խաբէ մէկն ուրիշ մը, անկեղծութիւն է, բայց խաբել, կարծեմ թէ դէշ բան է և բնաւ այդպիսի բան մը չսխախտի ընէիր :

— Պարոն, երկար ատեն կարծեցի որ ամէն բանէ առաջ քեզ

կ'սիրեմ, և որչափ ատեն որ առ քեզ սիրոյս հաստացի, ըսի քեզի որ քեզ կ'սիրէի : Ի Պլուտ, քեզ կ'սիրէի : Թագաւորը Պլուտայէն անցաւ, կարծեցի թէ տակաւին քեզ կ'սիրէի : Կորսանի մ'առջև քեզ կ'ընայի երգնուլ, բայց եկաւ օր մ'որ դրացի թէ սխալեր եմ :

— Լա ուրեմն, օրիորդ, այն օրը, տեսնելով որ ես քեզ միշտ կ'սիրէի, անկեղծութիւնը կ'հրամայէր քեզ ըսել ինձ որ այլ ևս դու չես սիրեր զիս :

— Այն օրը, Ռատու, այն օրն որ սրտիս խորը կարգացի, այն օրն որ ինքզինքիս խոտաւան եզայ որ իմ սիրտս չէիր դրսեւր այնուհետեւ, այն օրն որ ուրիշ ապագայ մը անտայ քան քու բարեկամութիւց, քու սիրութիւց, քու ամուսինդ լինելու ասպոզան, այն օրը, Ռատու, աւանդ, իմ քովս չէիր :

— Գիտէիր թէ ուր էի, օրիորդ, պէտք էր ինձ գրել :

— Ռատու, բնաւ չհամարձակեցայ ընելու այդ բանը, վատութիւն ըրի : Ի՞նչ ընեմ, Ռատու, քեզ այնչափ լաւ կ'ճանչէի, այնչափ քաջ գիտէի որ զիս կ'սիրէիր, որ դու ելայ մտածելով թէ ինչ վիշտ պիտի սրտածառէի քեզ, և այս այնչափ ճշմարիտ է, Ռատու, որ այս սրահուս որ քեզի կ'խօսիմ, քու առջև գլխիկոր, սիրտս ձմլուած, հառաչալի ձօնում, արաստուալի աչք կեցած եմ, ուրիշ վիշտ չունիմ, ինչպէս անկեղծութենէս զատ զէնք մը, քան թէ աչացդ մէջ նշմարած վիշտս :

Ռատու ժպտելու փորձեց :

— Ո՛չ — ըսաւ նորասի օրիորդը խորին համոզումով մը — ո՛չ, սիրտդ ծածկելու նախաախնքն ինձ չսխախտի ընես : Գու զիս կ'սիրէիր, դու, ստոյգ էիր որ զիս կ'սիրես, դու ինքզինքդ չէիր խաբեր, դու քու սրտիդ չէիր ստեր, մինչդեռ ես, ես . . . :

Եւ բարորդին դուռստ, թեւերն իր գլխին վրայ տարածելով Լա Վալիէր ծնկացը վրայ ընկաւ :

— Մինչդեռ դու — ըսաւ Ռատու — դու կ'ըսէիր ինձ թէ զիս կ'սիրես, և ուրիշ մը կ'սիրէիր :

— Աւանդ, այո՛ — գոչեց ողորմելի աղջիկը — աւանդ, այո՛, ուրիշ մը կ'սիրեմ, և այս ուրիշը . . . Աստուած իմ, թող տուր



որ ըսեմ, և այս է միակ արդարացումս, Ռատւ, այս ուրիշը, քան իմ կեանքս աւելի կ'սիրեմ, քան զԱստուած աւելի կ'սիրեմ: Աեբէ՛ իմ սխալանաց կամ պատժէ՛ իմ մատնութիւնս, Ռատւ: Ասա եկայ չէ թէ ինքզինքս պաշտպանելու համար, այլ քեզ ըսելու համար. դիտես թէ ինչ է սէրը. լա՛ս, ես կ'սիրեմ. կեանքս, հոգիս իմ սիրողիս տալու. չտի կ'սիրեմ: Եթէ երբեք զիս սիրելէ դադրի, ցտես սիրտի մեռնիմ. միայն թէ Աստուած ինձ օգնէ, միայն թէ Տէրն իմ վրայ զթայ: Ռատւ, ասա եմ քու կամաց հնազանդելու, ինչ որ է կամքդ. սիրտի մեռնիմ եթէ կամենաս որ մեռնիմ: Ռեբմն, սպաննէ՛ դիս, Ռատւ, եթէ սրտիդ մէջ, կ'կարծես թէ մահտան արժանի եմ:

— Խօսածդ կշռէ, օրիորդ — ըսաւ Ռատւ. — մահ ինդրող կիներ մատնեալ սիրողին միայն արիւնք տալու տրամադիր կինն է:

— Իբրաւուք ունիս — ըսաւ օրիորդը: Ռատւ խորունկ հառաչ մը հանեց:

— Եւ միթէ կ'սիրես, առանց մտնալ կարենալու — զոչեց Ռատւ:

— Առանց մտնալ ուզելու կ'սիրեմ, առանց ուրիշ մը սիրելու փափագ ունենալու — պատասխանեց Լա Վալիէր:

— Լա՛ւ — ըսաւ Ռատւ: — Արդարե՛ բոլոր խօսելիքդ ըսիր ինձ, իմ դիտալու փափագածս յայտնեցիր ինձ: Եւ այժմ, օրիորդ, իմ կարգս է քեզնէ ներսմ խնդրելու, ես քիչ մնաց կենացդ մէջ արդելք մը սիրտի լինէի, ես անիրաւ դանուեցայ, ես միայն ինքզինքս խաբելով՝ քեզ նպաստեր եմ որ զես խաբես:

— Ռ'հ — ըրաւ Լա Վալիէր — ես այդչափ չեմ պահանջեր, Ռատւ:

— Օրիորդ, բոլոր այս բաներու մէջ ես մեղապարտ եմ — շարունակեց Ռատւ — կենաց զժուարութիւններու մէջ քեզնէ աւելի հմուտ լինելովս, պարտաւոր էի քեզ հրահանգել, պարտաւոր էի անստուգութեան չլստահել, պարտաւոր էի սիրտդ խօսել տալ, մինչդեռ հազիւ թէ բերանդ բանալ ատի: Օրիորդ, վերստին կ'կրկնեմ, ներում կ'խնդրեմ քեզնէ:

— Անկարելի է, անկարելի է — զոչեց Լա Վալիէր: — Ի՞մ վրայ կ'ծի՞ծաղիս:

— Ինչպէ՛ս, անկարելի է: — Անկարելի է այս աստիճան բարի, պատուական և կատարեալ լինիլ:

— Զոյոյշ կիցիր — ըսաւ Ռատւ դառն ժպտով մը — վասն զի քիչ մ'ես սիրտի ելնես ըսես որ քեզ չէի սիրեր:

— Ռ'հ, իբրև փափկասիրտ եղբայր կ'սիրես զիս. թող որ այսպէս յուսամ, Ռատւ:

— Իբրև փափկասիրտ եղբայր: Այդ միաբե՛զ հանէ, Լուիզ: Քեզ իբրև սիրահար, իբրև ամուսին կ'սիրելի:

— Ռատւ, Ռատւ: — Իբրև եղբայր: Ռ'հ, Լուիզ, քեզ կ'սիրէի այնպէս որ կաթիլ առ կաթիլ արիւնս, կտոր կտոր մարմինս, ժամ առ ժամ իմ բոլոր էութիւնս քեզի նուիրելու պատրաստ էի:

— Ռատւ, Ռատւ, շնորհ, զթու թիւն:

— Քեզ այնչափ կ'սիրէի, Լուիզ, որ այժմ սիրտս մեռած է, իմ հաւատս կ'երերի, իմ աչքս կ'մարին. քեզ այնչափ կ'սիրէի, որ ալ բան մը չեմ տեսներ ոչ երկրիս վրայ ոչ երկինքը:

— Ռատւ, Ռատւ, բարեկամի՛ իմ, կ'պաղատիմ քեզ, խնայէ զիս — զոչեց Լա Վալիէր: — Ռ'հ, թէ որ զիտցած լինէի . . . :

— Շատ ուշ է, Լուիզ. դու կ'սիրես, դու երջանիկ ես, արտասուայց մէջն այդ խնդութիւնդ կ'նշմարեմ, անկեղծութիւնդ թափած արտասուայ ներքև, սիրոյդ բուրած հառաչանքը կ'զգամ: Լուիզ, Լուիզ, զիս մարդոց մէջ յեախն ըրիր, դնա՛, կ'պաղատիմ քեզ, երթաս բարեա՛ւ, երթաս բարեա՛ւ:

— Ա'պաղատիմ քեզ, ներէ՛ ինձ:

— Ե՛հ, միթէ խնդրածէ՛դ աւելին չըրի՛, միթէ չըսի՛ որ քեզ միշտ կ'սիրեմ:

Լա Վալիէր իր դէմքը ձեռաց մէջ պահեց:

— Եւ քեզ այսպէս խօսիլ, Լուիզ, այսպիսի վայրկենի մէջ այսպէս խօսիլ, խօսիլ ինչպէս որ կ'խօսիմ, ուրիշ բան ըսել չէ բայց եթէ մահտանս վճիռը յայտնել: Երթաս բարեա՛ւ:

Լա Վալիէր իր ձեռքն անոր կարկառել ուզեց:

— Այլ ևս այս աշխարհիս մէջ զիրար չպիտի տեսնենք — ըսաւ նա:



Լա Վալիէր պուալ ուղեց . Ռատւ անոր բերանը դոցեց ձե-  
ոօրը :

Լա Վալիէր այս ձեռքը համբուրեց և մարեցաւ :

— Օլիվէն — ըստ Ռատւ — ա՛ն այս կինն ու իր կտորքը տար,  
որ դրան առջևը կ'ստատէ :

Օլիվէն զանի վերցոյց : Ռատւ շարժում մ'ըրաւ Լա Վալիէ-  
րի կողմը վազելու , որպէս զի անոր առաջին ու վերջին համբոյր  
մը տայ , բայց յանկարծ կանկ առնելով ,

— Ա՛չ — ըստ նա — այս դանձն իմն չէ : Ես Ֆրանսայի թա-  
ղաւորը չեմ գողնալու համար :

Եւ Ռատւ իր սենեակը մտաւ , մինչդեռ սարսաւորը Լա Վա-  
լիէրը կ'տանէր միշտ մարած վիճակի մէջ :

ԻԳ

ՌԵՍԻԼԻՆ ԳՌԵՆԵԿԵՆՕՐ

Էրբ Ռատւ մեկնեցաւ , և երկու բացադանչու թիւններն որ ա-  
նոր ետևէն արձակեր էին մարեցան , Աթոս և ա՛Նրդանեան մի-  
նակ մնացին իրարու դէմ :

Աթոս խոյն ա՛Նրդանեանի եկած ժամանակ ունեցած ետան-  
դուն կերպարանը ցցոյց :

— Լաւ ուրեմն , սիրելիդ իմ — ըստ նա — ի՛նչ ունէիր ինձ  
խնայնելու :

— Ե՛ս — հարցոյց ա՛Նրդանեան :

— Անտարակոյս , դու : Այսպէս սուսնց պատճառի չին զըկեր  
քեզ :

Աթոս ժպտեցաւ :

— Ճշմարիտ է — ըստ ա՛Նրդանեան :

— Ես բնելեք բնեմ , սիրելի բարեկամ : Թաղաւորը կատաճ  
է , այնպէս չէ :

— Բայց պէտք է ինձ խոստովանիլ որ դո՛՛հ չէ :

— Եւ հիմակ եկա՛ր . . . :

— Այո , իր կողմէն եկայ :

— Ուրեմն զիս ձերբակալ ընելու համար :

— Սիրելի բարեկամ , շատ լաւ դուշակեցիր :

— Ես կ'յուսայի որ այսպէս պիտի ընէ , երթանք :

— Հօ՛ , հօ՛ , կրո՛ղ — ըստ ա՛Նրդանեան — սրչափ կ'շտասլիս  
գո՛ւ :

— Ա՛վախեամ որ ոչ չմնաս — ըստ Աթոս ժպտելով :

— Ծամանակ ունիմ : Գէթ հետաքրքիր չէն իմանալու թէ  
ինչպէս դարձաւ դորձը թաղաւորին և իմ մէջ :

— Խնդրեմ պատմէ ինձ , սիրելի բարեկամ , յօժարակամ մտիկ  
պիտի ընեմ քեզ :

Եւ ա՛Նրդանեանի ցոյց տուաւ մեծ աթոս մը , որու մէջ ըստ  
հաճոյս լարուեցաւ հրացանակիրը :

— Ա՛փափաքիմ դորձը պատմել — շարունակեց ա՛Նրդանեան  
— վասն զի խօսակցութիւնը շատ հետաքրքրական է :

— Մտիկ կ'ընեմ :

— Լաւ ուրեմն , ամենէն առաջ թաղաւորը զիս կանչել տուաւ :

— Իմ մեկնելէն ետք :

— Անդղին յետին աստիճաններէն վար կ'իջնէիր՝ հրացանա-  
կրաց ըսածին նայելով : Գացի : Բարեկամ , թաղաւորը կարմիր  
չէր , կապուտակ էր : Գեւ ևս անցած դարձածը չէի գիտեր :  
Միայն՝ դեռիմը՝ երկու կտոր եղած սուր մը կ'սեսնէի :

« — Տ՛Նրդանեան հրամանատար , դո՛՛հեց թաղաւորը զիս տես-  
նելով :

« — Ա՛հ հափա՛ն տէր , պատասխան տուի :

« — Հիմակ գնաց Պ . Լա Ֆէրն որ լիբր մ'է :

« — Լիբր մը , դո՛՛հեցի այնպիսի շեշտով որ թաղաւորն ամի՛ր  
բերան մնաց :

« — Տ՛Նրդանեան հրամանատար , վրայ բերաւ թաղաւորն ակ-  
ռաները սեղմած , մտիկ պիտի ընես և ինձի պիտի հնազանդիս :

« — Իմ պարտքս է , Ա՛հ հափա՛ն տէր :



« — Այն ազատորդին՝ որու համար քանի մը լաւ յիշատակներ կ'պահեմ՝ չուզեցի այս տեղ ձերբակալ ընել տալ և այս նախասխնքն անոր խնայեցի :

« — Հա՛, հա՛, ըսի հանդարտութեամբ :

« — Բայց, ըսաւ նա, երթաս պիտի կառք մը բռնելու . . . :

« Շարժում մ'ըրի :

« — Եթէ դու ինքնին ձերբակալ ընելու կ'գովամակիս, շտաբունակեց թագաւորը, ինձի զրկէ իմ պահակ զօրաց հրամանատարը :

« — Աւհափա՛ս, պատասխանեցի, պահակաց հրամանատարի հարկ չիայ, քանի որ իմ կարգս է ծառայելու :

« — Չէի կամեր քեզ անհաճոյ լինիլ, ըսաւ թագաւորը բարութեամբ, վասն զի դու միշտ ինձի լաւ ծառայած ես, Պ. տ'Արգանեան :

« — Անհաճոյ չէք ինձի, Աւհափա՛ս, պատասխանեցի : Ծառայելու կարգս է, և ուրիշ բան չիայ :

« — Բայց, ըսաւ թագաւորը զարմանօք, կ'երևի ինձ որ կոմսը քու բարեկամք է :

« — Եթէ հայրս անդամ լինէր, Աւհափա՛ս, զարձեալ ես իմ զինուորական ծառայութիւնս պիտի կատարէի :

« Թագաւորն ինձ նայեցաւ, իմ անշքուէրի գէմքս գիտեց և գոհ երեցաւ :

« — Աւրեմն պիտի ձերբակալես Լա Ֆէր կոմսը, հարցուց նա :

« — Անտարակոյս, Աւհափա՛ս, եթէ հրաման ընէք :

« — Լաւ ուրեմն, ահա հրաման կ'տամ :

« Գլուխս ծռեցի :

« — Ա՛ր է կոմսը, Աւհափա՛ս :

« — Պիտի փնտռես զանի :

« — Աւրեմն սուր տեղ որ գանուի պիտի ձերբակալ ընեմ զանի :

« — Այո՛ . . . սակայն նայէ որ իր տան մէջ լինի : Եթէ իր երկիրը կ'գառնայ, Բարիզէն ելիւր և ճամբուն վրայ բռնէ զանի :

« Ողջոյն տուի, և սրովհետեւ անշարժ կ'կենայի,

« — Բան մը կայ, հարցուց թագաւորը :

« — Կ'սպասեմ, Աւհափա՛ս :

« — Ի՞նչ բանի կ'սպասես :

« — Ստորադրեալ հրամանին :

« Թագաւորն ասոր վրայ քիչ մը գովամակութիւն ցցուց :

« Արդարեւ իշխանական նոր հրաման մ'էր տալիքը, բռնական գործը մեղմել էր, եթէ երբէք բռնութեան գործ կայ :

« Գրիչն առաւ ծանրութեամբ և սրանեղութեամբ, և ապա դրեց :

« Հրաման ունի տ'Արգանեան ասպետը, իմ հրացանակրաց փոխհրամանատարը, Լա Ֆէր կոմսը, սուր որ գանէ, ձերբակալ ընելու » :

« Ապա իմ կողմն գարձաւ :

« Անվրդով կ'սպասէի : Անտարակոյս մեծամտութիւն գտաւ իմ հանդարտութեանս մէջ, վասն զի շուտ մը ստորադրեց, ապա հրամանադիրը տալով ինձ .

« — Գնա՛, գոչեց նա :

« — Կ'հնազանդիմ, և աւասիկ եմ » :

Աթոս իր բարեկամին ձեռքը սեղմեց :

— Քալենք — ըսաւ նա :

— Ո՛հ — ըրաւ տ'Արգանեան — անտարակոյս քանի մը մանր մուշր գործեր ունի կարգի գնելու այսպէս բնակարանէդ հեռահալէն առաջ :

— Ե՛ս, բնա՛ :

— Ինչպէ՛ս . . . :

— Տէր Ատուած, չունիմ բան մը, տ'Արգանեան, դու արդէն գիտես, ես երկրիս վրայ միշտ պարզ ուղևոր մ'եղած եմ, թագաւորիս հրամանին աշխարհիս ծայրն երթալու պատրաստ, Աստուծոյս հրամանին այս աշխարհէն հեռանալու պատրաստ : Ի՞նչ պէտք է անկայուն մարդուն : Արկղ մը կամ դողաղ մը : Ինչպէս միշտ այսօր ալ պատրաստ եմ, բարեկամդ իմ : Աւրեմն աստար զիս :

— Բայց Պրաժլօն . . . :

— Ե՛ս զանի իմ ընդունած սկզբանցս մէջ մեծցուցի, և դիտե-



ցիր անշուշտ որ գալի տեսնելով, անմիջապէս գուշակեց պալըստեանդ պատճառը: Պահ մ'անոր միտքը շփոթեցինք, բայց, անհոգ եղիր, կ'յուսայ որ ինձ փորձանք պիտի գայ և հետևապէս շատ չպիտի ահաբեկի: Քալենք:

— Քալենք — ըսաւ տ'Արդանեան հանգարտօրէն:

— Բարեկամդ իմ — ըսաւ կոմսը — որովհետեւ իմ սուրս թագաւորին առջև կոտորեցի և անոր կոտորներն ոտքը նետեցի, կարծեմ թէ զանի քեզի յանձնելու առիթ չունիմ:

— Իրաւունք ունիս, և սակայն, ինչ կ'ուզես որ ընեմ քու սուրբ:

— Քու առջևէդ թէ ոչ ետեկդ պէտք է որ քալեմ:

— Թեւ մանեկով պիտի քալես — պատասխանեց տ'Արդանեան: Եւ Լա Ֆէր կամսին թեւ բռնեց սանդղէն վար իջնելու համար: Այսպէս վերնագաւիթը հասան:

Արիմօ, որ զանոնք նախասենեկին մէջ տեսեր էր, այս եւբը մտատանջութեամբ կ'դիտէր: Մարդկային կենաց այնքան վարժ էր որ կ'հասկընար որ ասոր մէջ դաղտնի բան մը կար:

— Ա՛հ, դու ես, իմ բարի Արիմօս — ըսաւ Աթոս: — Ահա կ'երթանք . . . :

— Աստուծոյ պաշտ մ'ընելու համար — ընդմիջեց տ'Արդանեան և գլխով բարեկամական շարժում մ'ըրաւ:

Արիմօ տ'Արդանեանի շնորհակալ եղաւ երեսը ծռելով, որպէս թէ ժպտիլ կ'ուզէր, և երկու բարեկամներուն ընկերացաւ մինչև դռնակը: Աթոս առաջ հեծաւ, տ'Արդանեան անոր ետեկն ելաւ առանց բան մ'ընելու կառապանին: Այս չուն, որ պարզ էր և առանց ցոյցի՝ դրացիներուն աչքին չզարկաւ: Երբ կառքը քարտափը հասաւ.

— Զիս Պատրիկը կ'տանիս, ինչպէս որ կ'տեսնեմ — ըսաւ Աթոս:

— Ե՛ս — ըսաւ տ'Արդանեան: — Քեզ ուղած տեղդ պիտի տանիմ և ոչ այլուր:

— Ի՞նչպէս կարելի է — ըսաւ կոմսը զարմանօք:

— Տէր վիշտ — ըսաւ տ'Արդանեան — քաջ կ'իմանաս, սիրե-

լիդ իմ կոմս, ես այս պաշտօնս վրաս առի որպէս զի քու հաճոյիցդ համեմատ շարժիմ: Անտարակոյս չես յուսար որ այսպէս կոշտաբար քեզ բանալ նետեմ, առանց մտածելու: Եթէ այս բանս գուշակած չլինէի՝ դործը պահակաց հրամանատարին պիտի թողուի:

— Այսպէս . . . — հարցուց Աթոս:

— Այսպէս, կ'կրկնեմ, ո՛ր որ կամիս անդ պիտի երթանք:

— Սիրելի բարեկամ — ըսաւ Աթոս — սոյդ ընթացքէդ քեզ կ'ձանչեմ:

— Իրաւի՛, կ'երևի ինձ որ այս բանս շատ պարզ է: Աստուպանը Քուր-Լա-Րէնի քաղաքադուռը պիտի տանի քեզ, այն տեղ ձի մը պիտի գտնես, ինչպէս որ պատուիրած եմ պատրաստելու, այս ձիով երեք օթեան պիտի ընես անգաղար, և ես ալ թագաւորին քովը պիտի երթամ՝ այնպիսի ատեն մ'որ անոր ըսեմ թէ մեկներ ես և թէ անկարելի էր քեզ միանալու: Նոյն պահուն Հափր հասած պիտի լինիս, և Հափրէն Անկլիա, ուր պիտի գտնես Մօնզի ինձ ընծայած սիրուն տունը, թող թէ Շարլ թագաւորը մեծ հետաքրքրութեամբ պիտի ընդունի քեզ: Լաւ, այս խորհրդիս ինչ կ'ըսես:

— Զիս Պատրիկը տար — ըսաւ Աթոս ժպտելով:

— Յամաւ գլուխ — ըսաւ տ'Արդանեան — բոյց մտածէ մի անգամ:

— Ի՞նչ:

— Թէ հիմակ քսան տարեկան չես: Բարեկամդ իմ, հաւատ ինձ, ես իմ վրայ դատելով կ'խօսիմ քեզ: Ա՛հ, ո՛չ, չպիտի հանդուրժեմ որ բանտի մէջ տառապիս: Քանի մտածեմ գլուխս կ'դառնայ:

— Բարեկամ — պատասխանեց Աթոս — Աստուած՝ բարեբաղդ գօրէն, զիս թէ խեղճով և թէ մարմնով կորովի ըրած է: Հաւատ ինձ, մինչև վերջին շունչս կորովի պիտի մնամ:

— Բայց այդ կորովութիւն չէ, բարեկամ, յիմարութիւն է:

— Ա՛հ, տ'Արդանեան, զերազոյն պատճառ մ'է: Մի կարծե՛ր թէ քեզի հետ միտք ունիմ վիճաբանելու սա ինդրոյն վրայ թէ







- Լաւ :
- Ինձի պէս խեղճ կալանատու մը պիտի լինի որ բանտը կը բերեն :
- Շատ զարմանալի պիտի լինէր :
- Չեմ հասկընար միտքդ :
- Շուտ ըրէ որ տեսնես թէ սա կառքէն ելնողն ո՞վ է :
- Ճիշտ նոյն պահուն երկրորդ պահնորդ մը տ'Արդանեանը կ'կեցնէր : Պէտք եղած ձեւերը կ'լմնային : Աթոս կրնար տեսնել իր բարեկամին ցոյց տուած մարդն իրմէ հարիւր քայլ հեռու :
- Այս մարդն իրօք վար իջաւ կառքէն նոյն իսկ կառավարչին դրան առջև :
- Լաւ ուրեմն — հարցուց տ'Արդանեան — կ'տեսնեն :
- Այո՛, մոխրագոյն զգեստով մարդ մ'է :
- Ի՞նչ կ'ըսես ասոր :
- Իբրաւ որ չգիտեմ. ինչպէս որ ըսի քեզի, մոխրագոյն զգեստով մարդ մ'է որ կառքէն վար կ'իջնէ. ուրիշ բան չեմ տեսներ :
- Աւրեմն դրաւ կ'դնեմ որ ինքն է :
- Ո՞վ է ինքը :
- Արամիս :
- Արամիս ձերբակալը եղած լինի, անկարելի՛ բան :
- Չեմ ըսեր քեզի որ ձերբակալ եղած է, քանի որ զինքը կառքին մէջ մինակ կ'տեսնեմ :
- Աւրեմն ի՞նչ կ'ընէ աստ :
- Ո՛հ, Պէզմօն կ'ձանչէ, բերդին կառավարիչը — պատասխանեց հրաշանակիբը նենդատ որ դէմքով մը : — Հաւատու վկայ, պատահ ժամուն հասեր ենք :
- Ինչո՞ւ համար :
- Տեսնելու համար :
- Այս հանդիպումին վրայ շատ կ'ցառիմ. Արամիս, զիս տեսնելով, պիտի նեղանայ, նախ զիս տեսնելուն համար, երկրորդ տեսնուելուն համար :
- Լաւ կ'դատես :
- Դժբաղդաբար, զարման չկայ երբ Պասղիլի մէջ մէկուն

- հանդիպի մարդ, եթէ ետ քաշուիլ ու զենք անդամ որպէս զէջտեսնենք, զարձեալ կարելի չէ :
- Քեզի կ'ըսեմ, Աթոս, որ ես ալ իմ խորհուրդս ունիմ. ըսած նեղութիւնդ Արամիսի չտալու ջանալ պէտք է :
- Ի՞նչպէս ընենք :
- Ինչ որ ըսեմ քեզի այն ընենք, կամ աւելի լաւ միտքս բացատրելու համար, թող որ գործն ուղած իս պէս պատմեմ. չպիտի խնդրեմ քեզնէ որ սուտ խօսիս, այդ անկարելի պիտի լինի քեզ :
- Լաւ ուրեմն, այն ատեն :
- Լաւ, մեր երկուքին համար պիտի սուտ խօսիմ, սոյնչափ զիւրին է այս Ասաքօնի բնաորութեան :
- Աթոս ժպտեցաւ : Կառքը կանգ առաւ այն սեղ ուր մեր արդէն նշանակած կառքը կեցեր էր, այսինքն կառավարչին ապարանին դրան առջև :
- Այսպէս մեր խօսքը մէկ է — ըսաւ տ'Արդանեան մեղմիկ իր բարեկամին :
- Աթոս հատանութիւն տուաւ շարժումով մը : Սանդղէն վեր ելան : Եթէ ընթերցողը կ'զարմանայ ասոնց Պասղիլլ մտնելու դիւրութեան վրայ, պէտք է որ յիշէ թէ մտնելու ատեն, այսինքն ամենէն դժուարին վիճակին մէջ տ'Արդանեան իմաց տուեր էր որ քաղաքական կալանատու մը կ'բերէր :
- Ընդ հակառակն՝ երբ երբորդ գուրը հասան, այսինքն երբ լաւ մը ներս մտան, պաշտօնակալին ըսաւ միայն .
- Պ. Պէզմօն սենեակը տար մեզ :
- Եւ երկուքին ալ անցան : Քիչ ատենն կառավարչին սեղանատունը հասան, ուր տ'Արդանեանի աչքին զարնող առաջին դէմքն եղաւ Արամիսինը, որ Պէզմօն մօտ առ մօտ նստեր էր, և պատուական կերակուրի մը գալուստն կ'սպասէր, որու հոտը բոլոր սենեակը բռնեց էր :
- Եթէ տ'Արդանեան սուտ զարմանք ցցուց, Արամիս իրապէս զարմացաւ, զող ելաւ իր երկու բարեկամները տեսնելով, և իր այլալուծիւնը յայտնի էր :



Սակայն Աթոս և Կ'Արդանեան իրենց բարեկերպ կ'տային , և Պէզմո՝ զարմանահար և իր երեք հիւրերուն ներկայութենէ շփոթմելով , անոնց բոլորախօսքը շարունակ կ'դառնար :

— Ա՛հ , զարմանք — ըսաւ Արամիս — Բնչ գիտուածով . . . :

— Մենք քեզի կ'հարցնենք այդ — պատասխանեց Կ'Արդանեան :

— Արդեօք երեքնիս ալ իբրև կալանաւոր կ'ներկայանանք — գոչեց Արամիս սուտ զուարթութիւն մը ցոյց տալով :

— Հէ , հէ — ըրաւ Կ'Արդանեան — իրաւ է որ պատերը սուկալի բանտ կ'հասին : Պ . Պէզմո , գիտես որ անցածն օր զիս ճաշի հրտ իրեցիր :

— Ե՛ս — գոչեց Պէզմո :

— Ա՛հ , կարծես թէ անլուր բան մը կ'ըսեմ : Միթէ չե՞ս յիշեր :

Պէզմոյն գոյնը նետեց , կարմրեցաւ , Արամիսին նայեցաւ , և այս ալ անոր կ'նայէր , և վերջապէս սկսաւ կմկմալ .

— Ճշմարիտը . . . սաստիկ ուրախ եմ . . . բայց . . . պատուոյս վրայ . . . չեմ . . . անհ , ողորմելի՛ յիշողութիւն :

— Ե՛հ , բայց անիրաւ եմ — ըսաւ Կ'Արդանեան իբրև սրգոզած մարդ մը :

— Ինչո՞ւ անիրաւ ես :

— Անիրաւ եմ յիշելուս , ըստ երևոյթիմն :

Պէզմո անոր կողմը վաղեց :

— Մի նեղանար , սիրելի հրամանատար — ըսաւ նա — այս տէրութեան մէջ ամենէն ակար յիշողութիւնն ունիմ : Հանէ զիս իմ աղանդինբուս քովէն և աղանդոյէս , և վեց շաբաթ շարունակ զենուոր չեմ կրնար մնալ :

— Ա երջապէս , հիմակ կ'յիշես անշուշտ — ըսաւ Կ'Արդանեան բնական կերպով մը :

— Այո՛ , այո՛ — պատասխանեց կառավարիչը վարանելով — կ'յիշեմ :

— Թողաւորին պալատն էինք , չգիտեմ Բնչ պատմութիւն կ'ընէիր ինձ Պ . Լուվեբի և Գրանպլէյի հաշիւներուն վրայ :

— Ա՛հ , այո՛ , բոլորովին միտքս եկաւ :

— Եւ Պ . Հերպլէյի բարութեանց վրայ քու մասին :

— Ա՛հ — գոչեց Արամիս կառավարչին աչաց մէջ նայելով — կ'ըսէիր թէ յիշողութիւնդ կա՛րճ է , Պ . Պէզմո :

Այս վերջինը հրացանակրին խօսքը կարեց :

— Ի՞նչպէս ուրեմն ճիշտ է , իրաւօրը ունիս : Աարծեմ թէ տակալին անդ եմ : Բիւր անգամ ներում կ'խնդրեմ : Բայց , սիրելի Պ . Կ'Արդանեան , սա կէտը լաւ նշանակէ , այս թէ ուրիշ ժամբու մէջ , թէ հրախրեալ լինիս թէ ոչ , իմ տանս մէջ իբրև տէր ես , գու և Պ . Հերպլէյ . բարեկամդ — ըսաւ նա Արամիսի կողմը դառնալով — և պարտնը — յարեց նա՛ Աթոսի ողջոյն տալով :

— Ես այդ բաներն արդէն մտածեցի — պատասխանեց Կ'Արդանեան : — Ըսեմ քեզի թէ Բնչ պատճառաւ կ'գայի . այս իրկուն ՚ի Բալէ — Բուայալ գործ մը չունենալով , փափաքեցայ զինիդ ճաշակել , երբ ճամբուս վրայ պարտն կ'ոմնին հանդիպեցայ :

Աթոս բարեկց :

— Պարտն կ'ոմնը , որ հորին Աեհափառութեան քովէն կ'ելնէր , ինձ հրամանադիր մը յանձնեց , որ անմիջական գործադրութիւն կ'սրահանջէ : Այս կողմնն էինք , ուղեցի սառջ երթալ , եթէ ոչ ուրիշ բանի՛ գէթ ձեռքդ սեղմելու և պարտնը քեզի ներկայացնելու համար , որու վրայ այնչափ զովեստով խօսեցար արքունիքը , այն իրկունն երբ . . . :

— Շատ լաւ , շատ լաւ , Պ . Լա Պէր կ'ոմն է , այնպէս չէ՞ :

— Ճիշտ այդպէս :

— Պարտն կ'ոմնը զլխուս վրայ անդ ունի :

— Եւ ձեզի հետ պիտի ճաշէ , այնպէս չէ՞ , մինչդեռ ես , խեղճ որսի շուն , երթամ պիտի իմ ծառայութեանս : Ի՞նչ երջանիկ մահահանգութեան եք , գո՞ք — յարեց նա ժպտելով այնպէս որպէս Բորթոս կարող էր ժպտիլ :

— Այսպէս ուրեմն պիտի մեկնին — ըսին Արամիս և Պէզմո նոյն զուարթազին զարմացմամբ ձայնակցելով :

Այս ձայնակցութիւնը Կ'Արդանեանէ չվրիպեցաւ :

— Իմ տեղս ազնիւ և բարի կոչնական մը կ'թողում — ըսաւ նա :







Արդարև՝ երբ մտերիմը յայտնեց միայն թէ նշանաւոր դաղտ֊  
 նիքն երևան ելեր էր, Լուիզ լալային՝ բարձր ձայներ արձակեց  
 և այնչափ շատ վիշտ ցցուց որ թաղաւորն այս վիշտը շատ ակոր֊  
 ժեղի չպիտի գանէր եթէ սենեկին մէկ ծակէն անոր ականատես  
 լինէր: Սէնդ-Էնյան, իբրև դեսպան դժարեցաւ՝ ինչպէս որ պի֊  
 տի դժարէր իր տէրը, և թաղաւորին դառնալով իր տեսածն ու  
 լսածը պատմեց: Ահա այն անգ պիտի գանենք Սէնդ-Էնյանը՝ որ  
 թէև Լուիզի առջև շատ վրդուլած էր, բայց աւելի վրդուլած  
 կ'երևէր:

— Բայց — ըստ թաղաւորն իր պաշտականին, երբ սա իր  
 պատմութիւնն աւարտեց — ի՞նչ հետևութիւն հանեց Լուիզ: Մի֊  
 քէ ընթրիքէն առաջ պիտի կարենամ դէթ զինքը տեսնել, պիտի  
 գայ արդեօք, թէ ոչ ես անոր սենեակն երթամ:

— Ահհափառ, կարծեմ որ եթէ զինքը տեսնել կ'ուզէք, պէտք  
 է որ ոչ միայն առաջին քայլը դուք առնուք այլ և բոլոր ճամ֊  
 քան ընէք:

— Արեմն ինձի համար բան մը չկայ: Արեմն այս Պրաժլօնն  
 էր սրտին մէջ մեծ անգ ունի — մրմնաց Լուի ԹԳ:

— Ո՛հ, Ահհափառ, այդ անհնարին է, վասն զի օրիորդ Լա  
 Վալիէր միայն ձեզ կ'սիրէ, և կ'սիրէ բոլոր սրտով: Բայց զի֊  
 տէք որ Պ. Պրաժլօն այն խտտաբարոյ տոհմին կ'պատկանի որ  
 հռոմայեցի զիցյազանց խաղը կ'խաղայ:

Թաղաւորը թեթև մը ժպտեցաւ: Գիտէր թէ ի՞նչ մտածելու  
 էր այս մասին: Աթոս իրմէ կ'հեռանար:

— Իսկ օրիորդ Լա Վալիէրի դալով — շարունակեց Սէնդ֊  
 Էնյան — աիկին կասդօնի մօտ մեծցած է, այսինքն առանձնու֊  
 թեան և խտտութեան մէջ: Այս երկու նշանածները պաղտութեամբ  
 իրարու թեթև երգումները ըրած են լուսնի և աստղերու առջև,  
 և կ'նայիք, Ահհափառ, ասոնք իրարմէ զատելու համար աշխարհ  
 իրար կ'անցնի:

Սէնդ-Էնյան կարծէր թէ թաղաւորին ծիծաղը պիտի շարժէ,  
 բայց ընդ հակառակն, պարզ ժպտէն Լուի կատարեալ ծանրու֊  
 թեան անցաւ: Արդէն կ'զգար ինչ որ կամը ա՛րբզանեանի խօսեր

էր, այսինքն խղճի խայթը: Կ'մտածէր որ արդարև այս երկու  
 նորատի սիրտերը զերար սիրեր և հաւատարիմ մնալու երգմներ  
 են, թէ ասոնցմէ մին խօսքը բռնէր էր, և թէ միւսը շատ ու֊  
 զիզ հոգի մ'ունենալով անտարակոյս իր երգմնազանցութեան վը֊  
 րայ կ'ողջար:

Եւ՝ խղճի խայթին հետ՝ նախանձը թաղաւորին սիրտը կ'իթէր  
 ուժգին: Նորէն բաւ մ'անդամ չարատասանեց, և՝ փոխանակ իր  
 մօրը կամ թաղաւորին, կամ իշխանուհոյն մօտ դնալու որ քիչ  
 մը զուարճանայ և աիկինները խնդայիտէ, ինչպէս որ ինք կ'ըտէր,  
 աստիպէր թեթևութիւն մէջ թաղաւորեցաւ, ուր Լուի ԹԳ իր օգոս֊  
 տափառ հայրը՝ այնքան տաղալացեր էր Պարատասի և Սէն֊  
 Մարսի հետ՝ երկայն օրեր և տարիներ:

Սէնդ-Էնյան հասկըցաւ որ թաղաւորը նոյն պահուն զուարճա֊  
 նալու միտք չունէր: Ահրջին միջոցն ալ յանդիմութեամբ բա֊  
 նեցուց և Լուիզի անունն արտասանեց: Թաղաւորը գլուխը վեր  
 վերցուց:

— Այս իրկուն ի՞նչ պիտի ընէ Ձեր Ահհափառութիւնը: Պէտք  
 է իմաց տալ օրիորդ Լա Վալիէրին:

— Ճշմարիտը, կ'երևի ինձ որ արդէն իմաց տրուած է անոր  
 — պատասխանեց թաղաւորը:

-- Լաւ ուրեմն, Ահհափառ:

— Լաւ ուրեմն, մտմտանք, Սէնդ-Էնյան, առանձին մտածենք.  
 երբ օրիորդ Լա Վալիէր լաւ մը ողբայ ողբացածը (խղճի խայթն  
 իր դօրծը կ'տեսնէր) լաւ, այն ատեն, թերևս զիջանի մեղի իր  
 վրայ լուրեր տալու:

— Ա՛հ, Ահհափառ, այս անձնուէր սրտին վրայ կարող էք  
 տարակուսիլ:

Թաղաւորը սրտմութենէ կարմրցած ոտք ելաւ, նախանձն իր  
 սիրտը կ'կրծէր: Սէնդ-Էնյան սկսեր էր իր զիրքը գծուարին  
 գանել, երբոր վարդաղջը բացուեցաւ: Թաղաւորը յանկարծա֊  
 կան շարժում մ'ըրաւ, իր առաջին գաղափարը սա եղաւ թէ Լա  
 կան շարժում մ'ըրաւ, իր առաջին գաղափարը սա եղաւ թէ Լա  
 Վալիէրէն իրեն տոմսակ մը կ'բերեն, բայց սիրոյ բանբերի տեղ՝  
 իր հրացանակրաց հրամանատարը միայն տեսաւ, որ անձայն կե֊  
 ցաւ որմածակին մէջ:



— Պ. ա' Արդանան — ըստ նա : — Ա՛՛՛՛՛ . . . լաւ , ուրեմն . . . :

Տ' Արդանան Ս' նդ - Էնյանի նայեցաւ : Թաղաորին աչքն իր հրացանակին աչաց ուղղութեան հետեւեցան : Այս նայուածքն ամէն մարդ կարող էր հասկընալ , ևս առաւել կրնար հասկընալ Սէնդ - Էնյան : Պաշտականը բարեւեց և գուրս ելաւ : Թաղաորն ու ա' Արդանան մինակ մնացին :

— Միթէ լմնցոցիր — հարցոյ թաղաորը :  
— Այո՛ , Ա. հասփաւ — պատասխանեց հրամանատարը ծանր ձայնով մը — լմնցաւ :

Թաղաորն ուրիշ բառ մը գտաւ ըսելու : Սակայն դուողութիւնը կ'հրամայէր իրեն որ այսչափով դո՛հ չլինի : Երբ թաղաոր մը որոշում մ'ընէ , անիրաւ որոշում մ'անդամ , պէտք է հաստատէ նոյն որոշումն առնելը տեսնողներուն առջև , մանաւանդ պէտք է որ ինքզինքը համոզէ որ իրաւունք ունէր այն որոշումն ընելուն : Այս բանիս համար միջոց մը կայ , գրեթէ անվրիպել միջոց մը , այս է գատապարտիւ լոյն վրայ յանցանք փնտտել :

Լուի Մաղարէնի և Աննա թաղաւորն ձեռք կրթուած լինելով՝ քաջ գիտէր քան ամէն իշխան , իր թաղաորի պաշտօնը : Աստի այս պարագայիս մէջ փորձ փորձեց զայն ապացուցանելու : Պահ մը լուծիւն պահելէն ետեւ , երբ մտովին բրած էր մեր յայտնապէս ըրած խորհրդածութիւնները ,

— Կոմսն ի՛նչ ըսաւ — վրայ բերաւ նա անհողութեամբ մը :  
— Բան մը չըսաւ , Ա. հասփաւ սէր :  
— Սակայն անշուշտ առանց բան մ'ըսելու չթողոյ որ ձերբազալ ընես զինքը :  
— Ըստ որ ձերբազալ լինելու կ'յուսար , Ա. հասփաւ :  
Թաղաորն իր գլուխը բարձրացոյց հպարտութեամբ :  
— Կարծեմ՝ թէ Լա Ֆէր կոմսն իր ըմբոստի գերը չշարունակեց — ըսաւ նա :

— Նախ , Ա. հասփաւ , ի՛նչ կ'անուանէք ըմբոստ — հարցոյց հրացանակիրը հանդարտութեամբ : — Ըմբոստ մը՝ թաղաորին աչքին , միթէ այն մտրոյն է որ՝ ոչ միայն Պաղպղյ ժամելու

չգիմադրեր , այլ և կ'գիմադրէ անոնց որ զինքը Պաղպղյ չեն ուզեր տանիլ :

— Որ չէ՛ն ուզեր տանիլ — գոչեց թաղաորը : — Ի՛նչ կը լսեմ , հրամանատար , միթէ խեղճ ես :

— Չեմ՝ կարծեր , Ա. հասփաւ :

— Կ'ըսես թէ Պ. Լա Ֆէր կոմսը ձերբազալելու դժկամակողներ կային . . . :

— Այո՛ , Ա. հասփաւ :

— Եւ ո՞չք են այդ մարդիկ :

— Անոնք են որոց Ձեր Ա. հասփաւութիւնն այս պաշտօնը յանձներ էր , ըստ երևոյթին — ըսաւ հրացանակիրը :

— Բայց այդ պաշտօնը միթէ քեզի չէ՛ի՞ յանձնած — գոչեց թաղաորը :

— Այո՛ , Ա. հասփաւ , ինձի :

— Եւ ինչպէս կ'ըսես՝ թէ իմ հրամանիս հակառակ՝ միտք ունէիր զիս նախատող անձը ձերբազալ չընելու :

— Իմ բացարձակ զիտաւորութիւնս այդ էր , Ա. հասփաւ , այո՛ :

— Ո՛հ :

— Մինչև անգամ՝ առաջարկեցի անոր ձի մը հեծնել , և այս ձին իրեն համար պատրաստել սուեր էի Քոնֆէրանսի քաղաքապետը :

— Եւ ի՛նչ նպատակաւ պատրաստել սուեր էիր այդ ձին :

— Բայց , Ա. հասփաւ , սա նպատակաւ որ Լա Ֆէր կոմսը Հալլըը հասնի և անկից Անկլիա անցնի :

— Արեմն զիս կ'մատնես , պարոն — գոչեց թաղաորը վայրենի հպարտութեամբ մը վառուած :

— Ի հարկէ :

Այս կերպով ըսուած խօսքերու տալիք պատասխան չկար : Թաղաորն այնպիսի ծանր գիմադրութիւն մը տեսնելուն վրայ զարմացաւ :

— Գէթ պատճառ մ'ունէ՛իր , Պ. ա' Արդանան , երբ այդպէս կ'վարուէիր — հարցոյց թաղաորը վեհափառութեամբ :

— Միշտ պատճառ մ'ունիմ , Ա. հասփաւ :



— Գէթ բարեկամութեան պատճառը չէ՞, միակ պատճառ մ'որ կրնար քեզ անբասիր հանել, վասն զի այս մասին խղճդ դիմեր էի:

— Ե՞ս, Ահհափառ:

— Մի՞թէ ընտրութեանդ չէի՞ ձգած Լա Ֆէր կոմսը ձերբակալ ընելու դործը կամ մերժելու:

— Այո՛, Ահհափառ, բայց . . . :

— Բայց ի՞նչ — ընդմիջեց թաղաւորն անհամբեր:

— Բայց կանխաւ ինաց տալով, Ահհափառ, որ եթէ ես ձերբակալ չընէի, ձեր պահակաց հրամանատարը պիտի ձերբակալէր:

— Մի՞թէ քեզի շնորհ մը չէի՞ ընէր, քանի որ քեզ չէի բռնադատեր հրամանս կատարելու:

— Ինձի կ'ընէիք, այո՛, Ահհափառ, բայց իմ բարեկամս չէիք ընէր այդ շնորհը, ո՛չ:

— Ո՛չ:

— Անտարակոյս, քանի որ իմ կամ պահակաց հրամանատարին ձեռք, իմ բարեկամս միշտ ձերբակալ պիտի լինէր:

— Եւ ահա այդ է քու անձնուիրութիւնդ, պարոն, անձնուիրութիւն մ'որ կ'ընտրէ: Գու զիւր չես, պարոն:

— Ա՛սպսեմ որ Ձեր Ահհափառութիւնն ըսէ ինձ թէ ի՞նչ եմ:

— Լաւ, դու Պարսառո՛ր մ'ես:

— Պարսառիկը վերնալէն 'ի վեր, ուրեմն, Ահհափառ . . . :

— Բայց, եթէ ըսածդ ստոյգ է . . . :

— Ինչ որ կ'ըսեմ միշտ իրաւ է, Ահհափառ:

— Նայինք, ինչ ընելու կ'գաս:

— Եկած եմ թաղաւորիս ըսելու, Ահհափառ, որ Պ. Լա Ֆէր Պատիւյն է . . . :

— Ըստ երևոյթին, քու յանցանքդ չէ:

— Իրաւ է, Ահհափառ, բայց՝ վերջապէս, անդ է, և քանի որ անդ է, կարևոր է որ Ձեր Ահհափառութիւնը զխոնայ:

— Ա՛հ, Պ. տ'Արղանեան, թաղաւորիդ զիմազբաւ կ'կենաս:

— Ահհափառ . . . :

— Ահհափառ . . . :

— Պ. տ'Արղանեան, քեզ կ'իմացնեմ որ իմ համբերութիւնս կ'հասցնես:

— Ընդ հակառակն, Ահհափառ: Եկայ որ զիս ձերբակալ ընել տար:

— Քեզ ձերբակալ ընել տամ, քեզ:

— Անտարակոյս: Իմ բարեկամս Պատիւյն մէջ պիտի ձանձրանայ, և եկայ Ձեր Ահհափառութեան առաջարկելու որ ներէ ինձ անոր ընկերանալու. թող Ձեր Ահհափառութիւնը խօսք մը ըսէ, և ես ինքեմն բանտ կ'երթամ, պահակաց հրամանատարի պէտք չունիմ այս բանիս համար, հաւատի եղիք:

Թաղաւորը սեղանին կողմը վազեց և զրիչ մ'առաւ որ տ'Արղանեանը բանտարկելու հրամանը զրէ:

— Միտ դիր որ ընդ միշտ պիտի մնաս բանտը, պարոն — գոչեց թաղաւորը սպառնական ձայնով:

— Ա՛հա տամ — վրայ բերաւ հրացանակիրը. — վասն զի մի անգամ այդ ալ ուր գործն ընելէն ետե՛ չպիտի համարձակիք այնուհետեւ իմ երեսս դէմ առ դէմ նայելու:

Թաղաւորն իր զրիչը մէկգի նետեց ուժգնութեամբ:

— Կորիք գնա՛ — ըսաւ նա:

— Ո՛հ, ո՛չ, Ահհափառ, թող տուէք որ մնամ:

— Ինչո՞ւ մնաս:

— Ահհափառ, թաղաւորիդ անուշութեամբ խօսելու եկեր էի. դուք բարկացաք, այդ դժբաղդութիւն մ'է, բայց դարձեալ պիտի ըսեմ ձեզի իմ ըսելիքս:

— Հրաժարականդ, պարոն — գոչեց թաղաւորը — հրաժարահանդ:

— Ահհափառ, գիտէք որ իմ հրաժարականս տալու չեմ դժկամակիր, քանի որ 'ի Պլուս, այն օրն երբ Ձեր Ահհափառութիւնը մերժեց Շարլ թաղաւորին՝ Լա Ֆէր կոմսին, իմ բարեկամիս վերջէն տուած մէկ միլիօն ոսկին, իմ հրաժարականս ձեզի մատուցի:

— Լաւ ուրեմն, շուտ ըրէ՛:

— Ո՛հ, Ահհափառ, վասն զի ինչիւն իմ հրաժարականիս վրայ



չէ . Չեր ԱԼՏափառութիւնը գրիչն առաւ որ զիս Պասղէյլ ուս-  
ղարկէ , ինչո՞ւ համար իր կարծիքը փոխեց :

— Տ'Արզանեան , Կասթօնեան զլուխ , միթէ ո՞վ է թաղաւոր-  
ըը , գո՞ւ թէ ես , զրույ՞ք :

— Գժբաղդաբար գուք էք , ԱԼՏափառ :

— Ի՞նչպէս գժբաղդաբար :

— Այո՛ , ԱԼՏափառ , վասն զի , եթէ ես լինէի . . . :

— Եթէ գու լինէիր , Պ . ա' Արզանեանի ըմբոստութեան սկի-  
տի հաւանէիր , այնպէս չէ՞ :

— Այո՛ , անտարակոյս :

— Իրա՞ն :

Եւ թաղաւորն իր ուսերը բարձրացուց :

— Եւ իմ՝ հրացանակրաց հրամանատարիս պիտի ըսէի — շա-  
բունակեց ա' Արլանեան — պիտի ըսէի , անոր նայելով մարդկային  
աչօք և չէ՛ թէ հրափայլ ածուխներով , պիտի ըսէի անոր . « Պ .  
ա' Արզանեան , մոռցայ որ ես թաղաւորն եմ . աթուէս վար իջայ  
ալաատրդի մը նախատելու համար » :

— Պարտն — գոչեց թաղաւորը — միթէ կարծես թէ բարե-  
կամէ կ'արդարացնես անոր լքբութիւնը գերազանցելով :

— Ա՛հ , ԱԼՏափառ , ես աւելի պիտի խօսիմ՝ քան նա — ըսաւ  
ա' Արզանեան — և յանցանքը ձեռը պիտի լինի : Ես պիտի ըսեմ՝  
ձեզի ինչ որ նա , ինք ձեզի չըսաւ , ես պիտի ըսեմ՝ ձեզի . ԱԼՏ-  
հափառ , անոր որդին զոհեցիք , և նա կ'խօսէր ձեզի յանուն պա-  
տուոյ , կրօնի և աւաքինութեան , գուք զանի վանեցիք , վաճառե-  
ցիք , բանտարկեցիք : Ես անորմէ աւելի խիստ պիտի լինիմ , ԱԼՏ-  
հափառ , և ձեզի պիտի ըսեմ . ԱԼՏափառ , ընտրեցէք : Բարե-  
կամներ կ'ուզէք թէ ոչ սպասաւորներ , զինուորներ կ'ուզէք թէ  
ոչ ծունր զնող պարտիներ , մեծ մարդիկ կ'ուզէք թէ ոչ միմոս-  
ներ , կ'ուզէք որ ձեզի ծառայեն թէ ոչ նուաստանան , կ'ուզէք  
որ ձեզ սիրեն թէ ոչ կ'ուզէք որ ձեզնէ երկնչին : Եթէ ցածու-  
թիւնը , խարդաւանանքը , վատթ թիւնը նախադաս կ'սեպէք , ո՛հ  
ըսէք , ԱԼՏափառ , մենք , պիտի մեկնինք , մենք որ ենք միայն ,  
չպիտի ըսեմ հին ժամանակի արխարտութեան օրինակները , այլ

մնացորդները , մենք որ ծառայած և քաջութեան , արժանեաց  
կողմէ գերազանցած ենք թիւնս արդէն ապագայ սերնդին մէջ  
մեծ մարդիկը : Ընտրեցէք , ԱԼՏափառ , և շուտ ընտրեցէք : Ինչ  
մեծ ազնուականներ որ մնացած են , պահեցէք , միշտ բաւական  
սրբալատականներ պիտի ունենաք : Շուտ ըրէք , զիս Պասղէյլ զրկե-  
ցէք իմ՝ բարեկամիս հետ , վասն զի եթէ Լա Գէր կոմսը մտիկ  
ընել չզիտացաք , այսինքն պատուոյ ամենաբարոյր ու գերազնիւ ձայնը ,  
եթէ չզիտաք լսել ա' Արզանեանը , այսինքն անկեղծութեան ամե-  
նէն արձակ և խիստ ձայնը , գուք ուրեմն գէշ թաղաւոր մ'էք ,  
և վաղը խեղճ թաղաւոր մը պիտի գտնաք : Արդ՝ գէշ թա-  
ղաւորները կ'անգոսնաւին , խեղճ թաղաւորները կ'վաճառուին :  
Ահա այս էր ըսելիքս , ԱԼՏափառ , գէշ ըրիք որ զիս մինչև այս  
տեղերը հանեցիք :

Թաղաւորն իր թիկնաթուակն վրայ ընկաւ սաղ և կապտագոյն .  
բացայայտ էր որ եթէ կայծակ մ'իր առջև ընկնէր ասիկէ աւելի  
չպիտի զարմանար . կարծես թէ շունչը կարեր էր և պիտի մա-  
նէր : Անկեղծութեան այս անաչառ ձայնը , ինչպէս ա' Արզանեան  
կ'անուանէր , սրտէն անցեր էր սուրի սէս :

Տ'Արզանեան բոլոր խօսելիքն ըսեր էր : Թաղաւորն բարկու-  
թիւնը անննելով , իր սուրը քաշեց , և Լուի Թ'Գին մօտենալով  
յարդանօր , զայն սեղանին վրայ գրաւ :

Բայց թաղաւորը՝ գայրադին շարժումով մը սուրը քշեց այնպէս  
որ զեպինն ընկաւ և ա' Արզանեանի ոտից առջև գլորեցաւ :

Արչափ որ հրացանակիրն ինքզինքին կ'իշխէր , ըսաւ կարգի գու-  
նատեցաւ , և սրամտութենէ սարսուելով ,

— Թաղաւոր մը կրնայ զինուոր մը սրաշածնէ ձգել — ըսաւ նա  
— կրնայ զանի աքսորել , կրնայ մահուան գատապարտել , բայց  
եթէ հարկւրապատիկ թաղաւոր լինի իսկ , երբէք իրաւունք չու-  
նի զանի նախատելու անոր սուրն անպատուելով : ԱԼՏափառ ,  
Ֆրանսայի թաղաւոր մ'երբէք արհամարհանօք մերժած չէ ինձի  
պէս մարդու մը սուրը : Այս սղծեալ սուրը , ԱԼՏափառ , քաջ  
մտածեցէք , ուրիշ պատեան մը չունի այսուհետև այլ միայն իմ  
սիրտս կամ ձեռքիս : Ես իմն կ'ընտրեմ , ԱԼՏափառ , շնորհա-  
կալ եղիք Աստուծոյ և իմ հատկերութեանս :



Ապա, իր սրին սրանալով.

— Թո՛ղ իմ արիւնս ձեր գլխուն վրայ իջնէ, ԱԼԵՏԱՒԱՌ —  
դոչեց նա :

Եւ արագ շարժումով մը՝ սրին դաստապանը գետինը յենլով,  
անոր ծայրը կուրծքին ուղղեց :

Թագաւորը՝ տ'Արդանեանէ աւելի շուտ ընդ փոյժ սրացաւ,  
թեւը հրացանակրին վզէն անցուց, և ձախ ձեռօք սրին սայրը մէջ  
տեղէն բռնելով՝ պատեանն անցուց լուսի մնջիկ :

Տ'Արդանեան, ձիգ, դունատ և դեռ ևս գողգոջուն՝ թողուց որ  
թագաւորն իր գործը կատարէ բոլորովին :

Այն ատեն Լուի՝ սիրաբը շարժած՝ սեղանին դարձաւ և գրիչն  
առնելով՝ քանի մը սող դրեց, ստորադրեց, և ձեռքը տ'Արդանեանի  
կարկառեց :

— Ի՞նչ է այս թուղթը, ԱԼԵՏԱՒԱՌ — հարցուց հրամանատարը :

— Հրաման մ'է տ'Արդանեանի որ խոյն Լա Ֆէր կոմսը  
բանտէն հանէ :

Տ'Արդանեան արքայական ձեռքը բռնեց և համբուրեց. ապա  
հրամանադիրը ծալեց, իր մորթէ քսակէն անցուց և դուրս ելաւ :

Ոչ թագաւորն և ոչ հրամանատարը վանկ մը չէին արտատանած :

— Ո՛ր մարդկային սիրա, թագաւորներու ուղղեցոյց — մրմուռաց  
Լուի առանձին մնալով — երբ արդեօք պիտի կարենամ կարգալ  
բոլոր խորշերդ ինչպէս կ'կարգամ՝ զբքի մ'երեսները : Ո՛չ, գէշ  
թագաւոր մը չեմ, ո՛չ, խեղճ թագաւոր մը չեմ, բայց տակաւին  
սղայ մ'եմ :

ԻԶ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՍՈՒՆԵՐ

Տ'Արդանեան խօսք տուեր էր Պ. Պէզմօի աղանդերի ժամանակ  
վերադառնալու. տ'Արդանեան իր խոստումը բռնեց : Ընտիր

գինի և ուրիշ բնութիւններ (որով կառավարչին շտեմարանը խիստ  
աղոր լեցուած լինելուն համբաւ ունէր) խմելու վրայ էին, երբ  
հրացանակրաց հրամանատարին մտրակները նրբազաթին մէջ  
հնչեցին և ինքն ալ սեմին վրայ երեցաւ :

Աթոս և Արամիս իրարու հետ մեծ զգուշութեամբ տեսնուեր  
էին, ուստի և ոչ մին միւսին խորհուրդը չէր հասկըցած : Ընթ-  
րեր էին, Պասկէյլի, Ֆօնդէնպլօի վերջին ուղևորութեան, ՚ի Ա.Օ.  
Պ. Ֆուքէի տալիք հանդիսին վրայ երկարօրէն խօսելով : Խօսակ-  
ցութիւնն ընդհանուր ձև մ'առեր էր, և ոչ ոք, Պէզմօէ զատ՝  
մասնաւոր խնդիրներու վրայ խօսք չէր ըրած :

Այս խօսակցութեան ատեն տ'Արդանեան հասաւ յանկարծ,  
թագաւորին հետ ունեցած խօսակցութենէ դեռ ևս դունատ և  
յուզուած էր : Պէզմօ փութաց աթոս մը մօտեցնելու : Տ'Արդա-  
նեան լեցուն դաւաթ մ'ընդունեց և պարսկեց : Աթոս և Արամիս  
միանգամայն տ'Արդանեանի այս այլայլութիւնը նշմարեցին : Իսկ  
Պէզմօ ուրիշ բան չտեսաւ բայց եթէ Նորին ԱԼԵՏԱՒԱՌՈՒԹԵԱՆ  
հրացանակրաց հրամանատարը, որու առջև սկսաւ կտոր կտոր լի-  
նիլ : Թագաւորին մօտենալ, ըստ Պէզմօի՝ ամէն յարգանաց ար-  
ժանի լինիլ էր : Միայն՝ թէ և Արամիս այս այլայլութիւնը դի-  
տեր էր, բայց անոր պատճառը չէր կրնար դուշակել : Աթոս  
միայն կարծեր թէ թափանցած է զայն : Իրեն համար՝ տ'Արդանեանի  
վերադարձը՝ մանաւանդ այս անյողուող մարդուն վրդովը  
կ'նշանակէր. « Այժմ թագաւորէն բան մը խնդրեցի և թագա-  
ւորն ինձ զլացաւ » : Համոզուած լինելով որ ճշմարիտը դուշա-  
կեր էր : Աթոս ժպտեցաւ, սեղանէն ելաւ և տ'Արդանեանի նշան  
մ'ըրաւ, որպէս թէ յիշեցնել կ'ուզէր որ միասին ընթրեւէն բու-  
լբոլին սարբեր բան մ'ունին ընելու :

Տ'Արդանեան հասկըցաւ և ուրիշ նշմայրով մը պատասխանեց :  
Արամիս և Պէզմօ այս անձայն արամախօսութիւնը տեսնելով՝ իրա-  
բու հարցութիւնք կ'ընէին աչքով : Աթոս կարծեց թէ իրեն կ'իյ-  
նար այս անցած դարձած իրերուն բացատրութիւնը տալ :

— Ճշմարտութիւնը սա է, բարեկամներ — ըստ Լա Ֆէր կոմ-  
սը ժպտով մը — որ դու, Արամիս, պետութեան մէկ յանցաւոր



մարդու մը հետ սեղանակից եղար, և դու, Պ. Պէզմո, քու կա-  
լանաւորիդ հետ:

Պէզմո զարմացման և զրեթէ ինդու թեան բայագանչու թիւն մը  
հանեց: Այս սիրական Պէզմո իր բերդին ինքնասիրութիւնն ու-  
նէր: Թող վաստակը, որչափ շատ կալանաւորներ ունենար, այն-  
չափ երջանիկ էր. որչափ այս կալանաւորները մեծազէի լինէին,  
այնչափ ինքն ալ կ'սպարձնեար:

Իսկ Արամիս՝ պարագային յարմար կերպարան մ'ստանլով,

— Ա՛հ, սիրելի Աթոս — ըստ նա — ներէ ինձ, բայց այս  
դէպքը զրեթէ մաքէս անցաւ: Ռատւի և Նա Ալալիէրի մէկ յի-  
մարտ թեան արդիւնքը, այնպէս չէ:

— Աւանդ — ըստ Պէզմո:

— Էս — շարունակեց Արամիս — դու որ մեծազարմ իշխան  
մ'ես, մտնալով որ այժմ միայն պաշտականներ կան, դացած  
թաղաւորը տեսած և անոր երեսին պէտք եղածն ըսած ես:

— Գուշակեցիր, բարեկամդ իմ:

— Այնպէս որ — ըստ Պէզմո, զողալով որ այնչափ ընտա-  
նութեամբ ընթրիք ըրած էր թաղաւորին երեսին ընկնող մարդու  
մը հետ — այնպէս որ, պարոն կոմս . . . :

— Այնպէս որ, իմ սիրելի կառավարիչ — ըստ Աթոս — որ  
իմ բարեկամն Պ. ա՛րզանեան քեզի սիրտի հաղորդէ այն թուղթն  
որ իր մտքով քսակին բացածքէն կ'երեւի և որ անտարակոյս իմ  
բանտարդեղութեանս վերաբերող հրամանագիրն է:

Պէզմո՝ իր սովորական զիրաշարժութեամբ ձեռքը կարկառեց:

Արդարև ա՛րզանեան իր ծոյէն երկու թուղթ հանեց և մին  
կառավարչին ներկայացուց: Պէզմո թուղթը բացաւ և կէս ձայ-  
նով կարդաց, Աթոսին նայելով միանգամայն թղթին վրայէն,  
և ընդմիջեց.

— « Կ'հրամայեմ իմ Պատգիլի բերդին մէջ պահել . . . » :  
Շատ լու . . . » Իմ Պատգիլի բերդին մէջ . . . Պ. Նա քէր  
կոմսը » : Ա՛հ, պարոն, ի՛նչ վշտագին երջանկութիւն է քեզ ու-  
նենալն այս տեղ:

— Համբերատար կալանաւոր մը սիրտի ունենաւ, պարոն —  
ըստ Աթոս իր անուշ և հանգարաւ ձայնովը:

— Էս կալանաւոր մ'որ ամիս մ'անդամ չսիրտի մնայ քովդ,  
սիրելիդ իմ կառավարիչ — ըստ Արամիս, մինչդեռ Պէզմո,  
հրամանագիրն ի ձեռքին, իր բանտարիկեց տուամարին մէջ թա-  
ղաւորին հրամանը կ'արձանագրէր:

— Էս ոչ իսկ օր մը, կամ չաւ ևս, և ոչ իսկ զիշեր մը —  
ըստ ա՛րզանեան թաղաւորին երկրորդ հրամանը ցոյց տալով.

— վասն զի հիմակ, սիրելի Պ. Պէզմո, պէտք է որ այս երկրորդ  
հրամանագիրն ալ արձանագրես, որ կ'սրտաւ իրէ անմիջապէս ար-  
ձակել կոմսը:

— Ա՛հ — ըրտ Արամիս — կ'նայիմ որ իմ ընելիք գործս կը  
ինայես ինձ, ա՛րզանեան:

Էս նշանակական կերպով մը սեղմեց հրացանակին և Աթոսին  
ձեռքը:

— Ի՞նչ — ըստ Աթոս զարմանօք — միթէ թաղաւորն ինձ ա-  
զատտ թիւնս կ'տայ:

— Կարգա՛, սիրելի բարեկամ — պատասխանեց ա՛րզանեան:  
Աթոս հրամանագիրն առաւ ու կարդաց:

— Իբրև է եղեր — ըստ նա:

— Միթէ սրդողեցա՞ր — հարցուց ա՛րզանեան:

— Ա՛հ, ո՛չ, ընդ հակառակն: Թագաւորին գէշ չեմ ուզեր,  
և եթէ կայ թաղաւորներու համար ամենէն գէշ փափարած բան  
մը, այս է անոնց անիրաւութիւն մը գործելը. բայց՝ բաւական  
նեղութիւն քաշեցիր, այնպէս չէ: Ա՛հ, խոտովանէ, բարեկամդ  
իմ:

— Ե՛ս, բնաւ — պատասխանեց հրացանակիրը ծիծաղելով: —  
Թագաւորը՝ ինչ որ ուզեմ կ'կատարէ:

Արամիս ա՛րզանեանի նայեցաւ և զիտեց որ նա սուտ կ'իտ-  
ուէր: Բայց Պէզմո ուրիշ բանի չնայեցաւ այլ միայն ա՛րզանե-  
անի, այնչափ սաստիկ կ'սքանչանար այս մարդուն վրայ որ ու-  
ղածը թաղաւորին կատարել կ'տար:

— Արդեօք թագաւորը կ'արտորէ՞ Աթոսը — հարցուց Արամիս:

— Ա՛չ, ո՛չ յայտնապէս: Թագաւորն այս մասին խօսք մ'ան-  
գամ չըբաւ, բայց կարծեմ թէ կոմսը շատ աղէկ կ'ընէ, միայն  
թէ թաղաւորին իր շնորհակալիքն յայտնել չփափարի . . . :



— Իբրաի , ո՛չ , չեմ փախարիր — սրատասխանեց Աթոս ժպտե-  
լով :

— Լաւ ուրեմն , կարծեմ թէ կոմսը շատ լաւ կ'ընէ — վրայ  
բերաւ տ'Արդանեան — եթէ իր զղեակը վերադառնայ : Բայց  
գարձեալ , սիրելիդ իմ Աթոս , խօսէ , խնդրէ , եթէ ուրիշ սի-  
րած բնակութեան վայր մը կ'ուզես , բոլոր սրտովս գանելու պի-  
տի ջանամ :

— Ո՛չ , շնորհակալ եմ — վրայ բերաւ Աթոս — ինձի համար  
ամենէն ախորժելի բանն է իմ առանձնութեանս դառնալ , սիրելի  
բարեկամ , իմ մեծ ծառերս տեսնել՝ Լուար գետին եղերքը : Ե-  
թէ Աստուած հազայ վշտաց գերազայն բժիշկին է , բնութիւնը մե-  
ծազոյն դարմանն է : Այսպէս , պարոն — շարունակեց Աթոս՝  
Պէզմոնի կողմը դառնալով — աւասիկ ազատ եմ :

— Այո՛ , պարոն կոմս , դէթ այդպէս կ'կարծեմ , կ'յուսամ  
— ըսաւ կառավարիչն երկու թղթերը շարունակ ձեռքին մէջ դար-  
ձնելով — միայն թէ Պ. տ'Արդանեան երբորդ թողիմ մ'ալ չհա-  
նէ իր գրպանէն :

— Ո՛չ , սիրելիդ իմ Պ. Պէզմոն , ո՛չ — ըսաւ հրացանակիրը —  
պէտք է որ երկրորդ հրամանագիրը բռնես և ըստ այնմ շարժիս :

— Ո՛հ , պարոն կոմս — ըսաւ Պէզմոն ուղղելով խօս-  
քը — չդիտես անշուշտ թէ ի՞նչ մեծ կորուստ կ'ընես : Քեզ եր-  
սուն Ֆրանքի պիտի ենթարկէի , զօրապետներու վճարած գումա-  
րին չափ , ի՞նչ կ'ըսեմ , յիսուն Ֆրանքի , եշխաններուն պէս , և  
ամէն իրկուն՝ այս իրկուն բրած ընթրիքիդ պէս՝ պիտի ընթրէիր :

— Կերէ ինձ , պարոն — ըսաւ Աթոս — որ իմ չափաւոր  
կեանքս նախագաս համարիմ :

- Ապա տ'Արդանեանի դառնալով ,
- Մեկնինք , բարեկամդ իմ — ըսաւ նա :
- Մեկնինք — ըսաւ տ'Արդանեան :
- Արդեօք քեզ ուղեկից ունենալու հաճոյքը պիտի վայելեմ  
— հարցուց Աթոս :

— Միայն մինչև դուրը , սիրելիդ իմ — սրատասխանեց տ'Ար-  
դանեան — նոյնպէս ըսեմ թագաւորին ըսածս . « Ծառայելու  
կարգն իմն է » :

— Իսկ դո՛ւ , սիրելիդ իմ Արամիս — ըսաւ Աթոս ժպտելով  
— պիտի ընկերանաս ինձ : Լա Ֆէր՝ Վանի ճամբուն վրայ է :

— Ես , բարեկամդ իմ — ըսաւ եպիսկոպոսը — ժամադիր եմ  
այս իրկուն՝ ի Բարիլ , և եթէ հեռանամ կարևոր գործերու կըր-  
նայ վնաս գալ :

— Ուրեմն , սիրելի բարեկամդ իմ — ըսաւ Աթոս — թոյլ տուր  
որ քեզ համբուրեմ և մեկնիմ : Սիրելիդ իմ Պ. Պէզմոն , մեծա-  
պէս շնորհակալ եմ բարեսրտութեանդ նա մանաւանդ Պասղիլի  
զինիին ճաշակէն ինձ տալուդ համար :

Եւ Աթոս՝ Արամիսը համբուրելէն և Պէզմոնի ձեռքը սեղմելէն  
ետե՛ երկուքէն ալ բարի ճամբորդութեան մաղթանք ընդունելէն  
ետե՛ տ'Արդանեանի հետ մեկնեցաւ :

Մինչդեռ Բալէ - Բուայալի տեսարանին վախճանը Պասղիլի մէջ  
կ'կատարուէր , ըսեն թէ ի՞նչ կ'անցնէր Աթոսի և Պրաժլոնի առնը :

Ինչպէս որ գիտենք Արիմո՛ իր ախրջ ընկերացիք էր Բարիլ  
գալու համար , և ինչպէս տեսանք Աթոսի երթին ականատես Ե-  
ղեր , տեսեր էր տ'Արդանեանի պիտը խածնելը , տեսեր էր իր  
ախրջը կառք հեծնելը , միոյն և միւսին կերպարանը զններ էր ,  
և երկուքն ալ ՚ի վաղուց ճանչելուն՝ կարող եղեր էր հասկընալ  
անոնց գէմբին անյողգողգ զխնակին ներքե , թէ ծանրակշիւ գէպ-  
քեր կ'անցնէին :

Աթոս միանգամ մեկնելէն ետե՛ Արիմոն սկսաւ մտածել : Այն  
առեւ յիշեց թէ ինչ տարօրինակ կերպով Աթոս իրեն մնաս բա-  
րեաւ ըսեր էր , յիշեց այլոյ աննշմարելի բայց իրեն զգալի ե-  
ղող շփոթութիւնն որով լուրջ գաղափարներ և ուղիղ կամք ունեցող  
ատէրը վրդոված կ'երևէր իրեն : Գիտէր որ Աթոս իր վրայ ունե-  
ցած բաներէն զատ բան մը չէր տարած հետը , և սակայն կար-  
ցածեց տեսնել որ Աթոս մէկ ժամու , և ոչ իսկ մէկ օրուան հա-  
մար չէր մեկնէր : Էրկայն բացակայութեան նշան մը կ'երևէր այն  
հրաժարական բարեկն մէջ զոր Աթոս ըսեր էր Արիմոն՝ բաժ-  
նուելու առեւր :

Այս ամենն իր միտքը կ'զար Աթոսի համար ունեցած խորին  
սիրոյ զգացումներուն հետ , այն գատարկութեան և առանձնու-



Թեան սոսկումով որ սիրող մարդոց երևակայութիւնը կ'պաշտօրէ . այս ամենը , կ'ըսենք , բարեկիր Արիմօխն մեծ տրամու թիւն և մտատանջութիւն պատճառեց :

Իր տիրոջ մեկնելէն 'ի վեր անցած զարձամիւն վրայ ծանօթութիւն չունենալով բոլոր սենեակներուն մէջ կ'ըմպաւէր , կերպով մ'իր տիրոջ հետքը փնտռելով , այս մասին՝ այն շան հմտնելով , վասն զի ինչ որ բարի է իրարու կ'անանի , որ անհանգստութիւն չունի իր ատրակայ տիրոջ վրայ , այլ լուի ձանձրոյթ կ'զգայ : Միայն՝ Արիմօ կենդանոյ բնազդով մարդու բանականութեան հետ միացնելով՝ Արիմօ թէ՛ անհանգստութիւն ունէր և թէ՛ ձանձրոյթ կ'զգար :

Զինքն առաջնորդող նշան մը չգտնելով , իր կատկածները հաստատող ո՛չ բան մը տեսած և ո՛չ լսած լինելով , Արիմօ սկսաւ երևակայել թէ՛ ինչ կրնայ լինիլ : Արդ՝ երակայութիւնը լաւ սրտերու հնարքը կամ լաւ ևս տանջանքն է : Արդարեւ՝ երբէք չպատահիր որ բարի սիրտ մ'իր բարեկամն երջանիկ կամ դուարթ ներկայացնէ իր աչաց : Երբէք ուզեւոր ազդանին ուրիշ բան չազդեր տունը մնացող ազանիին այլ միայն սարսափ :

Ուստի Արիմօ՝ մտատանջութենէ սարսափի անցաւ : Բոլոր անցքերն աչքէ անցուց . ա'Արդանեանի զիրն առ Աթոս , զիր մը զըր ստանալով Աթոս այնքան տխուր երեցաւ , ապա Ռատլի այցելութիւնն առ Աթոս , այցելութիւն մ'որու վրայ Աթոս իր շքանշաններն ու հանդիսաւոր զգեստը խնդրեր էր , ապա թագաւորին հետ ունեցած տեսակցութիւնը , տեսակցութիւն մ'որմէ ետք՝ Աթոս այնչափ տխուր վերադարձեր էր , ապա հօր և որդւոյ մէջ անցած բացատրութիւնը , որմէ ետք Աթոս այնքան տրամու թեամբ համբուրեր էր Ռատլը , մինչդեռ Ռատլ այնչափ ցաւօք իր տունը կ'զառնար , վերջապէս պիտը խածնող ա'Արդանեանի զալուստը , որմէ ետք Լա Ֆէր կոմսը կառք հեծեր էր ա'Արդանեանի հետ : Այս ամենը հինգ արարուածով խիստ պայծառ թատրերգութիւն մը կ'կազմէր , նա մանասանդ Արիմօի սուր միտքն ունեցող գատաքննչի մը համար :

Էւ նախ Արիմօ մեծ միջոյններու ձեռք վարկաւ . իր տիրոջը

կրկնոյցին մէջ գնաց գտաւ ա'Արդանեանի դրած նամակը : Այս նամակը գեւ ևս անոր մէջն էր և աւասիկ անոր պարտոնակութիւնը .

« Սիրելի բարեկամ , Ռատլ եկաւ իզնէ տեղեկութիւններ խնդրելու՝ Լոնտօն գտնուած տանն՝ Լա Վալլէրի բռնած ընթացքին վրայ : Էս՝ հրացանակրաց խեղճ հրամանատար մ'եմ՝ որու ականջն անդադար զօրանոցի և փողոցի խօսքեր կ'լսեն միայն : Եթէ իմ գիտցածս Ռատլի յայտնէի , խեղճ տղան պիտի մեռնէր . բայց ես որ թագաւորին ծառայութեան մէջն եմ , չեմ կարող թագաւորին գործերը պատմել : Եթէ սիրտդ կ'զուշակէ ըսելէքս , յառաջ գնա՛ : Այս խնդիրն աւելի քեզ կ'վերաբերի , նոյնչափ Ռատլին քան թէ ինձ » :

Արիմօ գլխէն քանի մը մտղ փետեց , աւելի պիտի փետեր էր թէ իր գիտակն աւելի սուսա լինէր :

— Աւասիկ — ըսաւ նա — հանելուկին բանալին : Նորատի աղջիկը խենթութեամբ բաներ բրած է : Թագաւորին և իր վրայ զարձած խօսքերը ստոյգ են : Մեր նորատի տէրը խարտած է : Պէտք է որ ինանայ այս բանս : Կոմսը թագաւորին գացած և բացէ՛ ի բաց անոր երեսին տուած է : Եւ ապա թագաւորը ա'Արդանեանը զրկած է որպէս զի գործը կարգազրէ : Ա՛հ , Աստուած իմ — շարունակեց Արիմօ — կոմսն առանց սրի եկաւ :

Այս գիտար բարեսիրտ մարդուն ճակատը քրտնեցուց : Այլ ևս ենթադրութիւններ ընելով չանցուց , գլխարկը գլխին վրայ կոխեց և Ռատլի բնակարանը վաղեց գնաց :

Լուիզի մեկնելէն ետեւ՝ Ռատլ իր ցաւը եթէ ոչ իր սէրը զսպեր էր , և բախտաւ լինելով ընդ առաջ նայիլ այն վասնդ գաւոր ճամբուն վրայ ուր զինքը կ'մղէր յիմարութիւնն և ապստամբութիւնը՝ իսկոյն մակարբերէր էր որ իր հայրն արքայական զօրութեան գէմ մաքառեր և ինքն Աթոս այս պիմադրութիւնը հրախրեր էր իր վրայ :

Այս համակրական լուսամտութեան ժամանակ՝ հէք երկտասարդն Աթոսի խորհրդաւոր նշանները յիշեց , յիշեց ա'Արդանեանի անակնկալ այցելութիւնը , և իշխանի մ'ու հպատակի մը մէջ անցած այս պայքարին հետեանքն իր ահաբեկ աչացն երեցաւ :



Տ'Արդանեան՝ որ պաշտօն ունէր, այսինքն իր ծառայութեան մէջ սեւեռած էր, անտարակոյս Աթոսին տունը չէր դար Աթոսը տեսնելու հաճոյքը վայելելու համար. կ'դար անոր բան մ'ըսելու: Այսպիսի տաժանելի ժամանակներ, այս բանը զժբազդու-թիւն մը կամ վտանգ մը կրնար լինիլ: Ռատու գող ելաւ ինքնասէր լինելուն, իր հայրը սիրոյն համար մոռնալուն, մէկ խօսքով՝ երազ մը կամ յուսահատութեան բերկրանքը փնտուելուն, այն միջոցին որ թերես հարկ էր Աթոսին դէմ ուղղուած մօտաւ-լուտ յարձակումը վանել:

Այս զգացումը զինքն ահագողի մէջ ձգեց: Իր սուրը կասեց և ամենէն առաջ իր հօրը բնակարանը վազեց: Ճամբուն վրայ՝ Կքիմօի հանդիպեցաւ, որ հակառակ կողմէն մեկնելով՝ մի և նոյն եռանդով ճշմարտութիւնը փնտուելու կ'վազէր: Այս երկու մարդիկ զերար հասկըցան, և իրենց երեակայութեան թեւադրած նկարագիրն ընելու վրայ էին երբ Ռատու պուսաց:

- Կրիմօ:
- Պարոն Ռատու — զոչեց Կրիմօ:
- Կոմսն աղէկ է:
- Տեսա՞ր զինքը:
- Ո՛չ, ո՛ր է:
- Չանի կ'փնտուեմ:
- Հասցա՞ Պ. տ'Արդանեանը:
- Անոր հետ դուրս ելաւ:
- Ե՞րբ:
- Մեկնելէդ տասն վայրկեան ետք:
- Ի՞նչպէս դուրս ելան:
- Կառքով:
- Ո՞ր կ'երթան:
- Չգիտեմ:
- Հայրս ստակ առան հետը:
- Ո՛չ:
- Ս՞ուր:
- Ո՛չ:

- Կրիմօ:
- Պարոն Ռատու:
- Ես կարծեմ թէ Պ. տ'Արդանեան կ'դար որպէս զի . . . :
- Որպէս զի կամը ձերբակալէ, այնպէս չէ՞:
- Այո՛, Կրիմօ:
- Ես ալ այնքան ստոյգ եմ այս մասին որ ՚ի հարկին կ'երգնում:
- Ի՞նչ ճամբայ բռնեցին:
- Քարափնե բուն ճամբան:
- Պասղիյլի՞ն:
- Ա՛հ, Աստուած իմ, այո՛:
- Շուտ, վաղէնք:
- Այո՛, վաղէնք:
- Բայց ո՞ր վաղէնք — բոստ յանկարծ Ռատու վշտաբեկ:
- Պ. տ'Արդանեանի բնակարանն անցնինք, կարելի է բան մ'իմանանք:
- Ո՛չ, թէ որ եղելութիւնն իզնէ պահեցին հօբս տունը, ամնուրեք պիտի պահեն: Երթանք ՚ի տունն . . . : Ո՛հ, Աստուած իմ, բայց այսօր յիմար եմ, իմ բարի Կրիմօս:
- Ի՞նչ կայ ուրեմն:
- Պ. Վալլօնը մտցայ:
- Պ. Բորթոսը:
- Որ ինձի կ'սպասէ միշտ: Աս՛ղ, քեզի կ'ըսէի, ես յիմար եմ:
- Ո՞վ կ'սպասէ քեզ և ո՞ր:
- Մինիմի մէջ ՚ի Վէնսէն:
- Ա՛հ, Աստուած իմ. . . բարեբաղդօրէն՝ Պասղիյլի կողմն է:
- Շուտ երթանք:
- Պարոն, երթամ պիտի ձիերը թամբել տալ:
- Այո՛, բարեկամիկ իմ, զնա՛:



ԻԷ

ԲՈՐԹՈՍ ԿՂԱՄՈԶՈՒԻ ԱՌԱՆՅ ԲԱՆ ՄԸ ՀԱՍԿԸՆԱԼՈՒ

Այս արժանի Բորթոս՝ Հին աստուածութեան բոլոր օրինաց հաւատարիմ, միտքը զբեր էր Պ. Սէնդ-Լէյյանի սպասել մինչև արևուն մարը մանելը: Եւ՝ որովհետև Սէնդ-Լէյյան չարտի դար, որովհետև Ռատլ մույեր էր կանխաւ այս բանս իր վկային իմաց տալու, որովհետև այս պահպանութիւնը շատ երկայն ու սաւժանելի դառնալու սկսեր էր, Բորթոս քանի մը շնչ գինի և կտոր մը միս բերել տուեր էր, որպէս զի ասնն ասնն շնչ մը պարպելով և պատաւ մը բան ուտելով սփոփի: Աերջին ծայրն, այսինքն վերջին պատախն հասեր էր, երբոր Ռատլ եկաւ Արիմօի ընկերակցութեամբը, և երկուքն ալ սանձարձակ կ'ըջէին:

Երբ Բորթոս այս շտապող երկու ձիաւորները տեսաւ, անկասկած կարծեց որ իր սպասած երկու մարդիկն են, և ստք եղնելով խոտին վրայէն ուր թոյլօրէն նստած էր, սկսաւ իր գաստակներն ու ծոնկերը ձկակել, որ թմբեր էին, ըսելով.

— Նայ: Ինչ կ'նշանակէ աղւոր սովորութիւններ ունենալը: Աերջապէս այն թշուառականը դալու վրայ է: Եթէ քաշուէի, մարդ մը չարտի գանէր և իմ վրայ առաւելութիւն պիտի ստանար:

Ապա՝ մէկ ալլըին վրայ՝ պատերազմական գիրք մը բռնեց, և երկամանց ուժեղ մէկ շարժումով մ'իր հսկայական հասակին աղեղնաձև զիծը ցցոց: Բայց՝ Սէնդ-Լէյյանի տեղ՝ Բորթոս Ռատլը տեսաւ, որ յուսահատական ձևեր ընելէն ետև՝ անոր մօտեցաւ պուալով.

— Ա՛հ, սիրելի բարեկամ, ա՛հ, ներէ՛. ա՛հ, քանի՛ դժբաղդ եմ:

- Ռատլ — ըսաւ Բորթոս զարմանօք:
- Կ'մեղալիք էր զիս — գոչեց Ռատլ Բորթոսը համբուրելով:

— Ե՛ս, և ինչո՞ւ համար:

— Այսպէս քեզ մտնալուս համար, բայց կ'տեսնես որ զլս իս իմն չէ:

- Ա՛հ, վա՛հ:
- Բարեկամ, եթէ իմանայիր:
- Մի՛թէ սպաննեցիր զանի:
- Զո՞վ:
- Սէնդ-Լէյյանը:
- Բա՛րէ, հիմակ Սէնդ-Լէյյանի վրայ ո՞վ կ'մտածէ:
- Ուրիշ ի՞նչ կայ:
- Սա կայ որ Լա Գէր կամեն այս ժամուս ձերբակալ եղած

պիտի լինի:

Բորթոս շարժում մ'ըրաւ որով թերևս պատ մը հիմն ՚ի վեր տապալէր:

- Ձերբակալ եղա՞ւ . . . ո՞վ ըրաւ:
- Պ. ա՛ւրդանեանը:
- Անկարելի բան է — ըսաւ Բորթոս:
- Եւ սակայն այս ճշմարիտ է — պատասխանեց Ռատլ: Բորթոս Արիմօի կողմը դարձաւ այնպէս որ երկրորդէ մը հաստատութեան նշան մը կ'սպասէր: Արիմօ գլխի նշան մ'ըրաւ:
- Եւ ո՞ր տարին զանի — հարցոց Բորթոս:
- Հաւանօրէն ՚ի Պասղիլ:
- Ուսկից հասկըցար:

— Ճամբուն վրայ քանի մը մարդոց հարցում ըրինք, որոնք կառքին անցնիլը տեսեր էին, և ուրիշ մարդիկ ալ նոյն կառքին Պասղիլ մանելը տեսեր էին:

- Հօ՛, հօ՛ — մրմուռաց Բորթոս, և երկու քայլ առաւ:
- Ի՞նչ կ'սրոշես — հարցոց Ռատլ:
- Ե՛ս, ո՛չ ինչ: Միայն չեմ ուզեր որ Աթոս Պասղիլ մնայ: Ռատլ աղնուասիրտ Բորթոսին մօտեցաւ:
- Մի՛թէ գիտես որ այս ձերբակալութիւնը թաղաւորին հրամանաւ կատարուեցաւ:
- Բորթոս երկատարդին նայեցաւ որպէս թէ անոր ըսէր.



« Ի՞նչ փոյթս է այդ » : Այս անձայն խօսքը Ռատւլին այնքան ճարտասան երեցաւ որ աւելի բան մը չհարցուց : Նորէն ձի հեծաւ : Արդէն Բորթոս՝ Արիմօի օղնութեամբը , նոյնն ըրեր էր :

— Մեր յատակադիծը պատրաստենք — ըսաւ Ռատւլ :

— Այո՛ — սրտասխանեց Բորթոս — մեր յատակադիծը , ճիշտ այգպէս , պատրաստենք նայիմ :

Ռատւլ մեծ հաւաչ մը հանեց և յանկարծ կանկ առաւ :

— Ի՞նչ ունիս — հարցուց Բորթոս — տկարութիւն մը :

— Ո՛չ , անկարողութիւն . միթէ մենք երեքնիս Պասպիլյն առնելու չափ մեծամտութիւն ունինք :

— Ա՛հ , թէ որ ա՛րդանեան անդ է — սրտասխանեց Բորթոս — խնդիրը կ'փոխուի , չենք կրնար :

Ռատւլ սքանչացաւ մնաց այս վստահութեան վրայ որ խիստ միամիտ լինելով գիցարհական կ'գառնար : Ռարեմն ասոնք էին այն անուանի մարդիկը , որ միայն երեք կամ չորս հողի լինելով բանակներու կ'գիտակներու կամ գղեակներու վրայ կ'յարձակէին : Այս մարդիկ որ մահուան ահ ազդեր էին , և որ քայքայուն դարէ մ'ետքն ալ ապրելով՝ դեռ ևս աւելի ուժեղ էին քան թէ երկտասարդաց մէջ ամենէն կորովները :

— Պարոն — ըսաւ Ռատւլ Բորթոսին — միտքս բան մը ձգեցիր , պէտք է անպատճառ Պ . ա՛րդանեանը տեսնել :

— Անշո՛ւշա :

— Իր տունը դարձած պիտի լինի՝ հայրս Պասպիլլ առաջնորդելէն ետև :

— Նախ Պասպիլլ երթանք տեղեկանալու — ըսաւ Արիմօ , որ քիչ , բայց լաւ կ'իտօսէր :

Իրօք բերդին առջև հասնելու փութացին : Գիսլուած մը , ինչպէս որ զօրաւոր կամքի տէր մարդոց Աստուած կ'զրկէ , այնպէս բերաւ որ Արիմօ յանկարծ՝ շարժական կամրջէն դուրը դարձող կառք մը նշմարեց : Այն միջոցին էր որ ա՛րդանեան , ինչպէս որ անսանք , թագաւորին քովէն կ'եկնէր :

Ռատւլ բնդուայն իր ձին քշեց որպէս զի կառքին հասնի և անոր մէջ եզոպները տեսնէ : Արդէն ձիերը նոյն մեծ գրան միւս

կողմը կեցեր էին , դուրը գոցուեցաւ , մինչդեռ դադրեացի պահակ մը՝ որ նոյն պահուն պահպանութիւն կ'ընէր , Ռատւլի ձիուն քթին զարկաւ իր հրացանովը :

Ռատւլ շրջան մ'ըրաւ , և բաւական սեպեց իր հայրը տանող կառքին ներկայութիւնը տեսնելը :

— Բռնեցինք — ըսաւ Արիմօ :

— Քիչ մը սպասելով՝ ստոյգ ենք որ պիտի դուրս եկնէ , այնպէս չէ՞ , բարեկամ :

— Միայն թէ ա՛րդանեան ալ կալանաւոր չլինէր — սրտասխանեց Բորթոս — և այն ատեն մեր բոլոր յոյսը սրտապ պիտի եկնէ :

Ռատւլ սրտասխան մը չտուաւ : Ամէն ինչ հաւանական կ'երևէր : Արիմօին խորհուրդ տուաւ որ ձիերը ժան-Պօլը փոքրիկ փողոցը տանի , որպէս զի կարելի եղածին չափ կասկած չզրոյւեն , և ինքն՝ իր սօր աչքովը , ա՛րդանեանի կամ կառքին ելուստը լրտեսեց :

Այս լուրագոյն միջոցն էր : Արդարե՛ք սան վայրկեան հազիւ անցեր էր որ դուրը բացուելով կառքն երեան ելաւ : Ռատւլն աչքը շլանալով շիրջաւ տեսնել թէ կառքին մէջի մարդիկն ո՞յք էին : Արիմօ երդում՝ ըրաւ որ երկու անձ տեսեր էր , և թէ իր աւրն այն երկուքէն մին էր : Բորթոս հետզհետէ Ռատւլին և Արիմօին կ'նայէր , յուսալով որ անոնց միտքը կ'իմանայ :

— Յայտնի է — ըսաւ Արիմօ — որ եթէ կոմսն այս կառքին մէջն է՝ զինքն ազատ ձգած են կամ ուրիշ բանս մը կ'տանին :

— Հիմալ պիտի հասկընանք կառքին բռնելը ճամբէն — ըսաւ Բորթոս :

— Եթէ զանի ազատ ձգած են — ըսաւ Արիմօ — ՚ի հարկէ իր տունը պիտի տանին :

— Ստոյգ է — ըսաւ Բորթոս :

— Կառքն այդ ճամբան չբռնէր — ըսաւ Ռատւլ :

Եւ արդարե՛ք ձիերը Սէնդ-Անդուանի արուարձանին մէջ անհետ եղեր էին :

— Վազենք — ըսաւ Բորթոս — ճամբուն վրայ կառքին վրայ պիտի յարձակինք և Աթոսին պիտի բռնք որ խոյս տայ :



— Աստամբուծիւն — մրմապ Ռաուլ :

Բորթոս Ռաուլին երկրորդ ակնարկ մը նետեց , առաջնոյն արձանի զուգահանր : Ռաուլ սրտասխան ատաւ միայն իր ձիուն կողերը սեղմելով :

Քանի մը վայրկեան ետք՝ երեք ձիաւորները կառքին հասան և այնքան մտանն անոր հետեւեցան , որ ձիերուն շնչաւութիւնը կառքին սնտուկը կ'ըմանար :

Տ'Արզանեան՝ որու միտքը միշտ կ'հսկէր , ձիերուն դափրը լսեց : Այն միջոցին էր որ Ռաուլ Բորթոսին կ'ըսէր որ կառքէն անցնի , տեսնելու համար թէ Աթոսին ընկերացող անձն ո՞վ էր : Բորթոս հնազանդեցաւ , բայց բան մը չկրցաւ տեսնել , վասն զի կաշեայ սպասարանները զոյց էին :

Զայրոյթն ու անհամբերութիւնն երթալով կ'համակէին Ռաուլը : Աթոսի ընկերակիցներու կողմէն այս խորհրդաւոր ընթացքը զիտելով՝ ծայրայեղ միջոցներ 'ի գործ գնելու կ'ստարաստուէր :

Միւս կողմէն տ'Արզանեան բողբոջիւն ճանչեր էր Բորթոսը . նոյնպէս սպասարաններուն կաշիին տակէն Ռաուլն ալ ճանչեր էր և կոմսին հաղորդեր էր իր զիտողութեան արդիւնքը : Առդէին տեսնել թէ Ռաուլ և Բորթոս ծայրայեղ միջոցներու սլիտի ձեռնարկէն թէ ոչ :

Եւ իրօք այսպէս եղաւ : Ռաուլ՝ հրացանակ 'ի բռնի՝ կառքին առաջին ձիուն վրայ սրացաւ և կառապանին սրտու իրեց որ կայ տունու :

Բորթոս կառապանը բռնեց վերցոյց և նստաբանէն վար իջեցոյց :

Արիմօ արդէն կեցած կառքին գանակը բռներ էր :

Ռաուլ իր թեքերը բացաւ սրտալով .

— Պարոն կոմս , սրբոն կոմս :

— Լաւ ուրեմն , գո՞ւ ես , Ռաուլ — ըսաւ Աթոս ուրախութեամբ արբշիւ :

— Քո՞չ է — յարեց տ'Արզանեան քահ քահ խնդալով :

Եւ երկուքին ալ երիտասարդն ու Բորթոսը զրկեցին , որ զիւրենք զբաւեր էին :

— Իմ բարեօրրա Բորթոսս , պատաւական բարեկամդ իմ — զոչեց Աթոս — միշտ գու նոյնն ես :

— Տակաւին քսան տարեկան է — ըսաւ տ'Արզանեան : — Պեցցե՛ս Բորթոս :

— Իրաւի — պատասխանեց Բորթոս փոքր ինչ շփոթած — կարծեցինք որ քեզ ձերբակալ կ'ընէին :

— Մինչդեռ — վրայ բերաւ Աթոս — տ'Արզանեանի կառքով պտոյտ մ'ընելու ելած էինք :

— Մենք Պասոյիլէն ձեզի կ'հետեւինք — պատասխանեց Ռաուլ կասկած և յանդիմանութիւն յայտնող ձայնով մը :

— Ուր գացեր էինք այն բարի Պ. Պէզմօի հետ ընթերելու : Միթէ Պէզմօն կ'յիշէս , Բորթոս :

— Ի՞նչպէս չէ , շատ աղէկ կ'յիշեմ :

— Եւ անդ տեսնեք Արամիսը :

— Ի Պասոյիլէ :

— Ընթերթի :

— Ա՛հ — զոչեց Բորթոս շունչ տանելով :

— Քեզի համար շատ բաներ ըսաւ :

— Շնորհակալ եմ :

— Ամն , ո՞ր պիտի երթանք — հարցոյց Արիմօ , զոր յսկոյցով մը վարձատրեր էր արդէն իր տէրը :

— Ի Պլուա կ'երթանք , մեր տունը :

— Այսպէս . . . շիտա՞ի :

— Շիտակ :

— Առանց սնտուկներն առնելու :

— Ա՛հ , Աստուած իմ , Ռաուլին պիտի ապստղբէի որ իմ բաներս զրկէ կամ ինքն անձամբ բերէ , եթէ պիտի վերագառնայ :

— Եթէ Բարիդի մէջ այլ ևս պատճառ մը չունի մնալու — ըսաւ տ'Արզանեան՝ պողովատի պէս հաստատուն և հաստ. նայուածքով մը , իրեն պէս վշտաղին , վասն զի երիտասարդին վէրքը նորէն բացաւ .

— շատ աղէկ կ'ընէ եթէ հետդ գայ , Աթոս :

— Պատճառ մը չունիմ Բարիդ մնալու — ըսաւ Ռաուլ :

— Ուրեմն մեկնինք — պատասխանեց խեղոյն Աթոս :

— Հապա Պ. տ'Արզանեանը :

— Ա՛հ , ես Աթոսին ընկերացայ որ մինչև քաղաքագուն երթամ , և Բորթոսին հետ պիտի վերագառնամ :



- Շատ աղէկ — ըստ այս վերջինը :
- Եկուր , որդեակ իմ — յարեց կոմսը՝ թեւ մեղմիկ Ռատւին վզէն անցընելով որպէս զի կառքին մօտեցնէ , և վերստին զանի համբուրելով . — Արիմօ — շարունակեց կոմսը — դու կամաց կամաց Բարիզ կ'վերագառնաս քու և Պ. Ալլօնին ձիովը , վան զի Ռատւ և ես այս տեղ ձի պիտի հեծնենք և կառքն այս երկու պարոններուն պիտի թողունք որ Բարիզ դառնան . այսպ' երբ մի անգամ սուներ հասնիս , իմ հանդերձեղէնս , զիրերս պիտի ժողվես և ամենն ալ մեր տունը պիտի զրկես :
- Բայց — զիտեց Ռատւ՝ որ կ'ուզէր կոմսը խօսել տալ — երբ Բարիզ վերագառնաս , ոչ ճերմակեղէն և ոչ լաթ պիտի դանես , որով պիտի նեղութիւն քաշես :
- Ռատւ , կարծեմ թէ երկար ատեն Բարիզ դառնալէք չունիմ : Այս վերջին բնակութիւնս նորէն բնակելու չպիտի յորդորէ զիս :
- Ռատւ զլուխը ծռեց և բառ մ'անգամ չարտասանեց :
- Աթոս կառքէն իջաւ և Բորթոսին հեծած ձին աշտանակեց , և Բորթոս այս փոխանակութենէ գոհ երեցաւ :
- Այն ատեն զիրար զրկեցին , իրարու ձեռք սեղմեցին և մշտատե բարեկամութեան ցոյցեր իրարու տուին : Բորթոս խօսք սուեր էր Աթոսին որ պարասլ ատեն դանելուն ամիս մ'երթայ մնայ իր տունը : Տ'Արզանեան խօսք սուտ օգուտ քաղել իր առաջին արձակուրդէն , այսպ' վերջին անգամ Ռատւը համբուրելով ,
- Տղաս — ըսաւ — ես քեզի պիտի զրեմ :
- Տ'Արզանեանի այս խօսքին մէջ ամէն բան կար , տ'Արզանեան որ երբէք չէր զրեր : Ռատւին սիրան ելաւ արտօտք թափելու չափ : Հրացանակրին ձեռքէն ակամայ ազատելով մեկնեցաւ :
- Տ'Արզանեան Բորթոսը գնաց գտաւ կառքին մէջ :
- Լաւ ուրեմն , սիրելի բարեկամ — ըսաւ նա — ահա օր մը անցուցինք :
- Անտարակոյս — պատասխանեց Բորթոս :
- Անշուշտ շատ յոգնած ես :
- Ո՛չ շատ : Սակայն կանուխկեկ պիտի պառկիմ , որպէս զի վաղը պատրաստ լինիմ :

- Եւ ինչո՞ համար :
- Տէր վիպ , սկսածս տարտելու համար :
- Բարեկամ , զիս զող կ'հանես : Կ'նայիմ որ զայրացած ես : Թշուտ առական , ի՞նչ սկսար որ զեւ լմնցած չէ :
- Մտիկ ըրէ ուրեմն , Ռատւ չմնամարտեցաւ : Պէտք է որ ես մնամարտիմ , ես :
- Որո՞ հեա . . . թաղաւորին հեա :
- Ի՞նչպէս թաղաւորին հեա — ըսաւ Բորթոս սպառ շ կրթած :
- Հասկս , մեծ աղայ , ինչ կարծեցիր , անշուշտ թաղաւորին հեա :
- Ես կ'հաստատեմ որ Պ. Սէնդ-Էնյանի հեա պիտի մնամարտիմ :
- Ահա այդ ըսել կ'ուզէի : Այս սպաւորդիին հեա մնամարտելով թաղաւորին գէմ սուր քաշած պիտի լինիս :
- Ա՛հ — ըսաւ Բորթոս աչքը խաղցնելով — մի՞թէ ստոյգ ես :
- Ի՞նչպէս չեմ :
- Լաւ ուրեմն , ի՞նչպէս կարգադրելու է գործը :
- Բորթոս , երթանք հիմակ լաւ ընթրիք մ'ընելու ջանանք : Հրացանակրաց հրամանատարին սեղանն ակործելի է : Անդ պիտի տեսնես զեղեցիկ Սէնդ-Էնյանը , և անոր կենացը պիտի խմես :
- Ե՞ս — զոչեց Բորթոս սոսկումով մը :
- Ինչպէս — ըսաւ տ'Արզանեան — մի՞թէ թաղաւորին կենդանութեան գինի խմելու կ'մերժես :
- Բայց , կրո՞ղ , ես քեզի թաղաւորին վրայ չեմ խօսիր , ես միայն Սէնդ-Էնյանի վրայ կ'խօսիմ :
- Բայց ես ալ կ'կրկնեմ որ նոյն բանն է :
- Ա՛հ . . . շատ լաւ , ուրեմն — ըսաւ Բորթոս նկուն :
- Հասկըցար , այնպէս չէ՞ :
- Չհասկըցայ — ըսաւ Բորթոս — բայց հոգ չէ :
- Այո , փոյժ չէ — պատասխանեց տ'Արզանեան . — երթանք ընթրելու , Բորթոս :

ՎԵՐՁ

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Պ Է Ա Տ Ո Ր Ի



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

Ա. Երկու հին բարեկամք . . . . .	Երես	3
Բ. Պիտի տեսնենք որ եթէ սահարկա թիւն մը ստոր հեա չլինիր միւսին հեա կընայ լինիլ . . . . .		20
Գ. Արջին մորթը . . . . .		32
Դ. Մայր թագու հոյն սենեակը . . . . .		39
Ե. Երկու բարեկամու հիք . . . . .		51
Զ. Ժան աը Լա ֆոնդէն ինչպէս ըրաւ իր առաջին առակը		59
Է. Լա ֆոնդէն բանակցող . . . . .		65
Ը. Տիկին Պէլէրի սեղանին սպասքն ու ազամանդները . . . . .		73
Թ. Պ. Մազարէնի անգործարարը . . . . .		78
Ժ. Պ. Գօլպէրի ծրարիբը . . . . .		87
ԺԱ. Հեղինակին կ'երեխի թէ ժամ է Պրաժլոն դերկոմսին դասնալու . . . . .		98
ԺԲ. Պրաժլոն իր հարցու փորձերը կ'շարունակէ . . . . .		105
ԺԳ. Երկու նախանձ . . . . .		112
ԺԴ. Բնակարանի այցելութիւն . . . . .		118
ԺԵ. Բորթոսին եղանակը . . . . .		126
ԺԶ. Տեղափոխութիւն, կափուլ և կենդանագիր . . . . .		135
ԺԷ. Քաղաքական ոսոխներ . . . . .		149
ԺԸ. Սիրահար ոսոխներ . . . . .		155
ԺԹ. Թագաւոր և ազնուայեաութիւն . . . . .		164
Ի. Փոթորկին շարունակութիւնը . . . . .		172
ԻԱ. Ո՛հ, ողորմելին . . . . .		179
ԻԲ. Վէրք վերաց վրայ . . . . .		184
ԻԳ. Ռաուլին դուշակածը . . . . .		190
ԻԴ. Երեք կոչնականք կ'զարմանան որ միասին կ'ընթրեն . . . . .		197
ԻԵ. Լուվրի մէջ ինչ կ'անցնէր Պասղիլլի ճաշի ժամանակ		203
ԻԶ. Քաղաքական ոսոխներ . . . . .		212
ԻԷ. Բորթոս կ'համոզուի առանց բան մը հասկընալու . . . . .		222

Յ Ա Ն Կ Գ Ր Ո Յ

ՏՊԱԳՐԵԼՈՅ Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԵՏԵԼԱՆ Ի ՋՄԻՒՌՆԻԷ

	Գ. հեթանոս	Գ. հեթանոս
Ադահն. կատակերգութիւն	6	Գարուս մէկ զաւակին խոս-
Ադնէս . . . . .	8	տովանանքը. 2 հատոր . . . . .
Ահամայ բժիշկ . . . . .	4	Գիմակ. հանդէս կիսամետայ
Աղքատ երկասարդի մը վէպը	10	Ելեկարարանութիւն
Աղօթագիրք. Հասարակ կազմ	8	Եղիշէ . . . . .
Կիտակաշի . . . . .	11	Եղծ զբարարտութեան
Ռսիկոզ . . . . .	20	Երեք հրացանակիրք. 3 հատոր
« լուշտպաս . . . . .	30	Երկասիրութիւնք երկուց ըն-
« » ար-		կերակցայ . . . . .
Ճաթաղօժեալ և ոսիկոզ-		Երկրարանութիւն
ձեալ շրջանակօք . . . . .	50	Էլիլա . . . . .
Փղակիրայ . . . . .	127	Էվանէ վէ խաթմա իշին առաւելը
Ամուրիի մը երաջները. մամ-		Ընդ հանուր կանոնք Ս. Մեսրոպ-
լոյ սակ . . . . .		եան վարժարանիս Ջմիւռնիոյ
Ամօրի . . . . .	20	Ընթերցարան. Բ տիպ . . . . .
Այրբենարան. Է տիպ . . . . .	1 1/2	Ընթերցարան Ս. Յ. Պալա-
Այտա. ողբերգութիւն . . . . .	4	պանեանի
Անդէրա Գաճիօլի . . . . .	2	Թշուառք. 10 հատոր . . . . .
Անձէլօ. լատարերգութիւն	6	Թուարանութիւն
Ատաստանարան սիրայ Մէ-		Ժէնրվիէվ. Բ տիպ . . . . .
դասդասեայ . . . . .	3	Ժօղէֆ Պալաուօ. 8 հատոր
Ատրայոյ Հայոյ Ատուած-		Իվանօէ. 3 հատոր . . . . .
պաշտութեան առաջնութեանը		Իրաւունք. լրացիր . . . . .
Առաջնորդ Հայ ընթերցանու-		Լէօկա՛՛ Ափիօն ծխողի մը սէրը
թեան . . . . .	4	Լուի Ժէ. . . . .
Առողջարանութիւն		Լուսարանութիւն
Առ պարոն Պլըշ Սարդիս		Լուքրէյիա Պօրճիա . . . . .
Ասաղաքանութիւն		Լօթօ Ֆրաթէրնօ
Արեւելեան Մանուլ. 4 տա-		Խթան ընդդէմ արայոլայ
րուան . . . . .	363	Ծաղիկ. 3 հատոր . . . . .
Արիաձք Սրբայ Հայուհոյն	1 1/2	Կանոնագիր Ս. Մեսրոպեան
Արիի Արարատեան . . . . .	28	վարժարանին որ ՚ի Ջմիւռնիա
Բուսարանութիւն		Կատակերգութիւն սխալանայ
Գաղանիք Փարիզի. 8 հատոր	120	Կենդանարանութիւն
Գաղանիք Փարիզի վիստա-		Կիւ լիվէրի ճանբորդութիւնք
նութեան թատրերգութիւնը	14	Կիւնահրեարըն Տօթաւ . . . . .
Գանկարանութիւն		Կոմիտասին ցուցակը . . . . .
Գարուն Հայաստանի. հանդէս		Կրայիէլլա . . . . .
Գէորդ Ռաշինդթն . . . . .	3	Հաղար ու մէկ զիշերներ.
Գիրք խօսակցութեան Տաճ-		6 հատոր. Բ տիպ . . . . .
կիւրէն և Հասկոնէն	4	Հար ընթերցարան Ջմիւռնիոյ



Հայու մը ուղիղ դատողու-  
 թիւնները  
 Հասկարաղ աղջիկը . Բ Կիսի . 3  
 Հեղարան . Գ Կիսի . . . 2  
 Հերքումն կարծեաց . Բ Կիսի . 3  
 Հռովմայ արարողութիւնք . 2  
 Հռովմէական սրբոց և  
 Հրատէլասայ պատմութիւնը  
 Չայնարանութիւն  
 Չղողբանութիւն  
 Մադնիսարանութիւն  
 Մաթիլա . 4 Հատոր . . . 80  
 Մանր ուսմունք Բրիտանի-  
 աիան հաւատոյ . Գ Կիսի . 4  
 Մանսն Լէսքո . . . . 12  
 Մարդ . . . . . 2 1/2  
 Մէսմէրաբանութիւն  
 Միլլէթի նի սէվ  
 Միութիւն սահմանադրական .  
 վեցամսեայ շրջանը . . . 26  
 Միքրո-Մէզաս, Ժանօ և  
 Բօլէն, Ճերմակ ու Սև . 5  
 Մոխթաար Բրիտանիա-  
 կան վարդապետութիւն . 3  
 Մոսպր սուրբ Մեսրոպեան  
 վարժարանին Չմիւսնիոյ .  
 Ա տետրակ . 3  
 Բ Ե . 6  
 Մանուկարանութիւն  
 Մօնթէ-Բրիտոյ կոմս, 6  
 Հատոր . Բ Կիսի . . . 90  
 Յայտարարութիւն կանոնայ  
 Մեսրոպեան վարժարանի  
 Յաւերժահարան . Հանդէս  
 Յորդոր մահուան և ըրիզիզին դէմ  
 Նախախնամութեան պաշտօնիքը 2  
 Նասրէտտին խօսքի ծաղ-  
 րաբանութիւնք . Բ Կիսի . 2  
 Նարեկ . Բ Կիսի . . . . 20  
 Նարեկ սկիզբ . . . . 30  
 Նմանաբոժութիւն  
 Նօդր-Տամ Փարիզի . 3 Հատոր 45  
 Շաթոպրիան  
 Շիշմանեան զիշերթի վարժարան

Պատիժ  
 Պրածնի գերկոմս . 12 Հատոր 144  
 Ջերմաբանութիւն  
 Ռաֆայէլ . . . . . 17  
 Սարգիս մէմուհ Ֆէնիք տէ-  
 ֆաթիք . Ա և Գ Հատոր 40  
 Բ Ե . 30  
 Սերբիշիկ . կատակերգութիւն 3  
 Սիպէլ  
 Սօն Ապէնտէրաժն սէր կիւ-  
 զէշթի օլան վուդուաթ . 5  
 Վալէրիա և Լը Պարայուլիէ 9  
 Վէրթէր . . . . . 11  
 Վիկթորիա . . . . . 17  
 Տեղեկագիր տարեկան ընթացից  
 թաղական խորհրդոյ Զմիւս-  
 նիոյ . 1865  
 Տեսարան Հանդիսիցն Հայ-  
 կայ, Արամայ և Արայի  
 Տէր իմ Յիսուս . . . . 10  
 Տիւսօ Գրեթին տէփօղիթօ  
 մաղաղալարը  
 Տամարակալութիւն գործնական 28  
 Տուալարն վէ սուրբ Հա-  
 ղարթութիւնուն պայտէլէրի  
 Տրամաբանութիւն  
 Տօրա . սիրային վէպ մի . 20  
 Բուզնամէ 1864 տարւոյն 6  
 Բօլէնի խորհրդածութիւնք  
 Փամէլայի առաքինութիւնք 7  
 Փայտեայ խաչը . . . . 2 1/2  
 Փօլին . . . . . 10  
 Քաթէրին Հօուարաթ թատր-  
 երգութիւն . . . . . 9  
 Քանի մը խօսք մեր աղբին  
 արդի վիճակին վերայ  
 Քերականութիւն Հայերէն  
 լեզուի . . . . . 12  
 Քիմիաբանութիւն  
 Քսան տարի ետք . 4 Հատոր 60  
 Քրիստոնէական վարդապե-  
 տութիւն . Գ Կիսի . . . 4  
 Օսմանեան պատմութիւն . 18  
 Օրացոյց Տէտէեան



1913  
1914  
1915  
1916

2013



